

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1894

Ա Պ Ր Ի Լ

1894 № 4

ՎԵՑՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երես

1 ԳՈՒՐԲԱԽԱՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	507	Որդիական սեր:
2 ՇԱՆԹ	525	Ես պատրանքը սիրեցի (բանաստ.):
3 ԿՈՐՈՒՆԿՈՒՄՅՈՒՆՆԵՍՆ	527	Կարմիր Զատիկի գիշերը:
4 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	535	Դպրոցական նամակներ:
5 ՇԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷԲՍԱՆԳՐ	543	* (բանաստեղծ.):
6 ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳԻՍ	544	Հող. և անձն. իրաւ. հին Հալաստ.
7 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	558	Բաֆֆիի շիրիմի մօտ (պատմածք):
8 ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԼՈՐԳ	560	Բանաստ. անուն. խնդիրը (վերջ):
9 ՎԱՐԳԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ	576	Մեծ ձեռն. խնդիր. և բանաստեղծ:
10 Ա. Ա.	587	Երիցիանի «Ամենայն հայոց կաթող.
		և Կողկատի Հալք XIX-րդ դար.:
11 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՓ	594	Ժամանակակից Տեսութիւն. — Շխակ.
		ընտրութիւն. կանոնադրութիւն:
12 ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ	607	Կոնդակ Ալըղիանին:
13 ՂԱԶԱՐԵԱՆ, ԵՐՈՒԱՆԴ	610	Ստիլ և դաղթականութիւնը:
14 ԱՐՇԷՆ ԵՐԷՅ	616	Գիւղական քանոնադր. քարոզը:
15 ՍԵԴՐԱԿԵԱՆ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊ.	622	Ո՞ր Հաւաստաց:
16 ՂԱԶ. Մ.	629	Գիւղական քանոնների խնդիրը:
17 ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	638	Հալ. տնայնարարներ և գիւղ. քանոն.
18 Ն., ՕՐՕՐ	642	Քանոն. Ղարաբ. և Պարսկաստան.:
19 Թ., ԶԵՐԵՆՈՎ, Ն.	645	Նամակներ. — Եկատիրի խոսքից և
		Եստիկից:
20 ԽՄԲ.	649	Ջանաղան լուրեր:

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՆԻ

Типография М. Д. Ротмiana, Гол. пр., д. № 41.

1894

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1894

Ա Պ Ր Ի Լ

1894 № 4

ՎԵՑՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1894

Дозволено цензурою. Тифлисъ, 26 Апрѣля, 1894 г.

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԷՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴՈՒՐԲԱՆԵԱՆԻ

188* Թւականի ամառայ սկզբում բաղբի բերմամբ ես ընկնում եմ Ն. քաղաքը և առ ժամանակ սենեակ եմ վարձում քաղաքի ծայրին, մի խարխուլ տան մէջ: Իմ սենեակը ունէր երկու պատուհան. մինը նայում էր դէպի փողոց, միւսը դէպի դաշտ: Ես չէի սիրում դէպի փողոցը նայող պատուհանի մօտ նստել, որովհետեւ փողոցը նեղ ու կեղտոտ էր, տները համարեա աւերակների կոյտեր էին ներկայացնում, անցորդները, բոլորն էլ, առանց բացառութեան, ցնցոտիների մէջ փաթաթւած, թշառ արարածներ էին: Պատուհանի մօտից անցկենալիս՝ նրանք կանգ էին առնում, անօթի և զարմացող աչքերով երկար ու բարակ դիտում էին, թէ ինչպէս մենակ ման էի գալիս իմ սենեակում, ինչպէս թէյ էի խմում, կակուղ և սպիտակ հացը ժամանակ-ժամանակ խաճոտելով: Այդպիսի րոպէներին ես ոչինչ չէի կարողանում ուտել... ինձ թւում էր, թէ այն սպիտակ հացը, որ դրել եմ առաջիս, նրանցից եմ զողացել... այդ պատճառով դէպի փողոցը նայող պատուհանը մեծ մասամբ վարագուրած էր մնում: Իսկ այն պատուհանը, որ նայում էր դէպի դաշտ, համարեա միշտ բաց էր մնում. իմ առաջ հեռու հեռու տարածւած էի տեսնում մի ընդարձակ, կանաչազարդ տափարակ: Այն դժի վրայ, որտեղ տափարակը հորիզոնի հետ միանում էր, կողք-կողքի շարւած էին մօտ տասը փոքրիկ բլուրներ... նրանց շուրջը՝ ոչխարների, կովեր, ձիաներ արածում էին միշտ... դաշտի զանազան անկիւններից իմ ականջին էին հասնում խաղացող մանուկների զլարթ ձայները... ես սիրում էի այդ պատուհանի մօտ նստել և,

կարօտադին աչքերով ընդարձակ հորիզոնը ընդգրկելով, բնութեան հետ սրտալից խօսակցութիւններ անել:

Առաւօտները, արեգակի ծագելուց մի ժամ առաջ, զուրս էի գալիս սենեակից, դաշտ էի գնում զբօսելու... արտօտալիկը և ծիծեռը, իրանց երամներովը միասին, ողջունում էին ինձ այնտեղ արծաթահնչիւն մեղեդիներով... Թրթռում էին իմ շուրջը, սաւառնում էին գլխիս վրայ... Թեթևացնում էին իմ մենակութեան թախիծը: Արեգակի ծագելուց մօտ մի ժամ անցած՝ ես տուն էի վերադառնում, բնութեան սուրբ կրծքից մխիթարութեան կաթը արդէն ծծած լինելով: Տանը շտապով թէյ էի խմում, գնում էի քաղաք և մինչև երեկոյ զործերով էի զբաղւում: Երեկոյին, երբ տուն էի վերադառնում, ինձ ընդ առաջ էր վազում իմ անխարդախ բարեկամ—Ագրաջէլը, տան տիրոջ շունը և ամեն կերպ աշխատում էր ցոյց տալ, թէ շատ էր կարօտել ինձ... զուգէ սպիտակ հացի կտոր տանքներին ևս կարօտել էր, որովհետև հիանալի ակտրժակ ունէր: Քնելուց առաջ սովորութիւն ունէի կրկին դաշտ գնալ, զբօսել:

Ագրաջէլը շատ անգամ ցանկութիւն էր յայտնում ընկերանալ ինձ, բայց ես նրան այդ պատճառով չէի արժանացնում. այն ժամանակ, միայն ձախ ականջը տնկած պահելով՝ նա տխուր կերպարանք էր ստանում. նրա տխրութեան աստիճանացոյցը երկար, բրդոտ պոչն էր: Եթէ Ագրաջէլը պոչը փոքրին պինդ կպցնէր, նշանակում էր, որ նա իսկապէս վշտացել էր. իսկ եթէ պոչը միայն կախւած էր մնում, առանց ձօժանակի նման ձօժելու, նշանակում էր, որ Ագրաջէլը ինձ ասում էր՝ «լաւ, մենակ ես ուզում գնալ, գնա... ես այնպէս, քաղաքավարութեան համար միայն կամենում էի քեզ հետ ընկերանալ: Ինչո՞ւ համար, դաշտում զբօսելիս, խուսափում էի իմ շորքոտանի բարեկամի ընկերութիւնից... ուշ գիշերին, երբ անխելի քայլերով ման էի գալիս արօտների մէջ, շատ մօտից լսում էի լորերի, կաքաւների զրոյցները... իսկ բլուրների խորքերից ականջիս էր հասնում բուէճների սարսուռ տաճող մշուոցը... այդ բոլորը իմ վրայ տարօրինակ տալանորութիւն էր անում... իմ երեւակացութիւնը լարւում էր... հրաշալի տեսարաններ էին բացւում իմ հոգու աչքերի առաջ... ես մոռանում էի, թէ դաշտում մի նակ թափառում եմ. մոռանում էի, թէ ստամոքս ունիմ. . ինձ

Թուում էր, թէ ես ուրիշ էակ եմ, իմ մարմինը իմ ընկերն է... Ազրայէլը այդպիսի բռնութիւններէն չէր կարող ինձ որ և է զւարճու-
թիւն պատճառել. ընդհակառակը Թռչնիկներին էր վախեցնում,
խլուրդների բռնների մօտ երկար ու բարակ զննողութիւններ էր
անում... կամ թէ չէ, յանկարծ Թռչկոտելով՝ ականջիս ծայրն էր լի-
ղում և յիշեցնում էր ինձ այն անբաղդ միտքը, թէ նա և իմ ֆի-
զիկական «ես»-ը՝ եղբայրներ են: Ֆիզիկական «ես»-ից փախչելու
ցանկութիւնը միայն դրդում էր ինձ մերժել Ազրայէլի ընկերակ-
ցութիւնը:

Իմ տանտէրը շատախօս ծերունի էր. երբ ազատ էի լինում,
նրա հետ զրոյցներ էինք անում: Այն օրը, երբ ինձանից սենեակի
վարձն էր ստանում, նա դառնում էր աւելի շատախօս, ամեն կերպ
աշխատում էր զբաղեցնել ինձ անցեալի պատմութիւններով: Մե-
զանից մի տուն հեռու ապրում էր մի տարօրինակ անձնաւորու-
թիւն. նրան անւանում էին կօշիակար Համբարձում: Նա համարեա
ոչ ոքի հետ չէր խօսում, ապրում էր բոլորովին մինակ: Ունէր եր-
կու խարխուլ տնակներ. մինում ինքն էր ապրում, միւսը զոցած էր
մնում. որովհետև ոչ ոքի քրեհով չէր ապլիս: Նրա կինը վաղուց
մեռել էր, ինքը կը լինէր մօտ 50 տարեկան: Բակումը ունէր փոք-
րի՛ պարտեզ, որտեղ կային մի քանի վարդի թփեր: Իմ տանտէրը
պատմում էր, թէ ամեն մի զարնան՝ երբ վարդերը նոր էին բաց-
ւում, Համբարձումը քաղում էր նրանց և առաւօտեան շատ վաղ՝
մի-մի զոյգ հարւանների բաց պատուհաններից աննշմարելի կերպով
ներս էր դրում: Նա ունէր երեք զանազան գոյնի շներ, մինը միւ-
սից մեծ. այդ շները նա խլել էր երեխաների ձեռներից, երբ վեր-
ջինները կամենում էին խեղդել նրանց: Երեկոներին տուն վերադառ-
նալիս՝ յաճախ տեսնում էի հետևեալ տեսարանը. Համբարձումը
նստած էր լինում պարտիզի խորքում, քարի վրայ. երեք շները, ետևի
Թաթերի վրայ բարձրացած՝ կարգով անշարժ նստած էին լինում
նրա առաջ: Նրանց սրածայր դնէրը ուղղակի Համբարձումի դէմ-
քին էին նայում. ուրախ էին նրանք, թէ ոչ, այդ նկատում էր
սև, սպիտակ և շագանազոյն պոչերից, որոնք խոտերի վրայ անդա-

դար աջ ու ձախ էին ձօժում: Համբարձումը, երկու ձեռների մատները չռած, օդի մէջ զանազան շարժողութիւններ էր անում, շներին՝ զանազան նախադասութիւններ էր ասում և ամեն մի նախադասութիւնից յետոյ՝ կարճ-կարճ երգեր էր երգում: Նրա ջօրինած երգերի խօսքերը ինձ անհասկանալի էին. յիշում եմ միայն, որ «չ» տառը չափազանց շատ էր կրկնւում: Նրա երգերից երկու տող միայն մնացել է իմ յիշողութեան մէջ. այսպէս էր.

— «Ձանչո՛ւ աչն, չան լալն

«Բինչի նաչն, չին ջիլին»:

Հնախոյնների լուրջ ուշադրութիւնն եմ հրաւիրում վերոյիշեալ դեռ անբացատրելի տողերի վրայ:

— Ի՞նչ մարդ է կօշկակար Համբարձումը, միանգամ հարցնում եմ իմ տանտիրոջից:

— Ս'օ, բացազանչում է նա, ձախ ձեռի ցուցամատը ճակատին մօտեցնելով. Համբարձումը, շարունակում է, բարի, բայց սարօրինակ մարդ է: Փոքր ժամանակը ինձ հետ Մկրտիչ վարժապետի մօտ է սովորել... նրա կինը երեցփոխ Պաբրիէլ աղայի մի հատիկ սիրուն աղջիկն էր... Համբարձումին կամենում էին քահանայ ձեռնադրել... նա չկամեցաւ... հը՛... կօշկակար դառաւ...

— Ինչո՞ւ չկամեցաւ քահանայ լինել:

— Ինչո՞ւ... որովհետեւ չքաւոր ծխականների հետ ունեցած մի քանի քահանաների անբարեխիղճ վարմունքները նրա մէջ ծնել էին մի տեսակ օտարոտի զգանք դէպի քահանայական պաշտօնը... դա երկար պատմութիւն է... եթէ կամենաք, Համբարձումի հետ կը ծանօթացնեմ ձեզ, ինքը թող պատմէ. բայց դժւար թէ այդ չաջողի. յիշում եմ... հը՛, երբ 28 տարեկան Համբարձումը, քահանայութիւնից հրաժարւելով, սկսում է կօշկակարութիւն սովորել, Պաբրիէլ աղան շատ բարկանում է, մի քանի անգամ Համբարձումին փայտով ծեծում է. տեսնելով, որ նա միաքը չէ փոխում, իր աղջկան էլ նրանից խլում է, չէ թողնում որ միասին ապրեն. զաւակ չունէին... Համբարձումը ոչոքին չէր դանգաւորում. զարմանալի մարդ էր. ամեն բան հնազանդութեամբ տանում էր. բայց սիրական կնոջից բաժանւելը ազդում է նրա «այստեղի» վերայ (տանտէրս մատը դնում է ճակատի վերայ). նրա ուղեղը փոքր առ

փոքր կորցնում է առաջնայ կանոնաւոր դործունէութիւնը: Կնոջից գեռ չբաժանւած՝ Համբարձումը յաճախ ոգևորւում էր և մեզ ասում, թէ մտադիր է օրինակելի արհեստանոց բաց անել, բայց կնոջ հեռանալուց յետոյ, նա իր արհեստը լաւ չսովորած, սկսում է ինքնագլուխ կօշկակարութիւն անել. այն էլ շատ օտարոտի կերպով. նոյնը շարունակւում է մինչև այսօր... հարեւանների կօշիկներն է կարկատում, փողի մասին ոչինչ չէ խօսում. ով ինչքան ուզի, այնքան կը տա: Նրա կինը աշխատում էր զաղանի կերպով այցելել նրան. շատ լաց էր լինում. բայց երկար չապրեց, մեռաւ. Համբարձումին թոյլ չտւեցին ներկայ գտնւելու կնոջ թաղման. այն միջոցին, երբ անբախտ կնկայ մարմինը գերեզման էին մոցնում, Համբարձումը, տախը նստած, արագ էր խմում, շների հետ մասալահաթ էր անում:

Հարեւանները փող տալիս են նրան...

—Շատ քիչ, շատ քիչ. պէտք է խոստովանեմ, որ իմ կօշիկներն էլ նա կարկատել է. փոխարէնը տւել եմ նրան երկու անգամ քթից ներս քաշելու «թամբաքու»... ինչ արած. այդ տեսակ մարդ է. ամբողջ շաբաթը իր շների հետ սև հացից ջոկ ոչինչ չէ ուտում. կիրակիները միայն մի-մի հատ մեծ ձուկն է առնում, իր և շների համար տաք կերակուր է պատրաստում. պատահում է նոյնպէս, որ նա արագ է խմում, այսպէս ասած, հարբում է. ինչ էք կարծում. ինչ է անում նա այդ միջոցին. հա, հա, ինչքան էլ մոռնէք, չէք իմանալ. այն ինչ է անում. շներին, լաւ կերակրելուց յետոյ, փակում է տան մէջ, դուռն էլ կողպեքով գոցում է. յետոյ կօշկակարութեան գործիքների պարկը ուսին գցած՝ փողոցից փողոց սկսում է ման գալ, մարդկանց ոտներին մոտիկ տալ. եթէ ծակ քթով կօշիկ տեսնէ, խսկոյն կօշիկի տիրոջ շինքից բռնելով, առանց խօսելու նստացնում է նրան քարի կամ գետնի վերայ, հանում է կօշիկը նրա ոտից, փողոցում կարկատում է, նորից տիրոջ ոտն է անցնում, յետոյ... գործիքների պարկը ուսին գցելով, կրկին շարունակում է ճանապարհը. վայ նրան, ով կը կամե՛հա՛ց փող տալ նրան. այն ժամանակ Համբարձումը, առանց մի խօսք արտասանելու, հանգիստ շարժողութիւններով մօտենում է փող առաջարկողին, երկու ձեռով նրա բերանն է բաց անում, փուլը նրա մէջ դնելով՝ կրկին

երկու ձեռով փակում է, յետոյ... հա, հա, թիկունքից հրելով՝ բարի ճանապարհ է նրան մաղթում... ամբողջ քաղաքը ճանաչում է, սիրում է կօշկակար Համբարձումին... որովհետև նա կեանքումը ոչորի մազի չափ վնաս չէ տել. բայց օդուտ տել է, պէտք է ճշմարիտը ասել, այժմ էլ տալիս է:

—Ի՞նչպէս:

—Տեսնում էք մեր տան դէմ ու դէմ այն փոքրիկ, հնացած տունը, ծինելոյցը քանդուած է արդէն ..

—Ո՞ր տունը:

—Ա՛յ, այս կողմից նայիր. երկու պատուհան ունի միայն, ձախակողմեան պատուհանի երկու ապակիները ջարդուած են, թղթեր է կպցրած, Համբարձումն է կպցրել, տեսնում էք:

—Այո, այո, ինչպէս չէ, ձախ անկիւնը դէպի գետին է իջած. տան շուրջը թափթփած կիրի կոյտեր են դիզւած, անց է:

—Հէնց այդ է. նրա մէջ ապրում է վարպետ Սարգիսը. մի ժամանակ նա յայտնի դերձակ էր, այժմ շատ է ծերացել, ականջները լաւ չեն լսում, աչքերն էլ... Համբարձումը այդ ծերունուն իր աչքի լոյսի նման պահպանում է, կերակրում է, շորերը լւանում է. շատ անգամ վարպետ Սարգսի սենեակում ժամերով փակուած, նրա հետ ինչ որ խօսում է, երգեր է ասում:

—Մի՞թէ վարպետ Սարգիսը ազգականներ չունի:

—Ձունի... բոլորն էլ քաղաքից հեռացել են, ուստի գիւղերում փող են աշխատում. վարպետ Սարգսի կեանքը մի փոքր նման է Համբարձումի կեանքին. նա էլ ինձ հետ միասին էր սովորում. առաջին աշակերտն էր, յետոյ վարժապետ է լինում. բայց շուտով թողնում է այդ պաշտօնը, դերձակութիւն է սովորում. տեսնում ես այդ տունը, նոր շինած ժամանակը նա սիրուն էր. վարպետ Սարգիսը իր արդար վաստակովն է նրան շինել. նրա կինը վերին աստիճանի մարդասէր տանտիկին էր. նրանք մի զուստր և երեք որդի ունէին... մարդ և կնիկ գիշեր-ցիւրիկ աշխատելով՝ հաց, շոր, գիրք էին երեխաներին մատակարարում և իրանց բախտաւոր էին համարում, տեսնելով փոքրիկ հարազատների գոհ դէմքերը: Բայց մի անբախտ շաբթում, միմեանցից փոխւելով, երկու որդի և մի զուստր մեռնում են. ողջ է մնում միայն միջակ որդին—Վասակը:

սխ... պէտք էր տեսնել մօր կսկիծը... ինչ ասեմ... մարդկային լեզուն շատ անգոր է մայրական կսկիծը արտայայտելու. ինչ և իցէ. ժամանակը կամաց-կամաց փոխուում է, նոր զերծակներ են զուրս գալիս, վարպետ Սարգսի գործը սկսում է կաղալ. նրա բաղդից՝ բարի մարդիկ են գտնուում և Վասակին իրանց հաշուով Պետերբուրգի համալսարանն են ուղարկում: Պետերբուրգից երկու անգամ տուն է գալիս, զարգարուն շորեր հագած: Հօր և մօր ուրախութիւնը այդ միջոցներին աննկարագրելի էր դառնում. նրանք ուղղակի սրտաւրում էին իրանց մի հատիկ աննման որդի Վասակին: Երրորդ անգամ Պետերբուրգ գնալով՝ Վասակը այլ ևս ետ չէ գալիս. այն օրից անհա 14 տարի է անցել, ոչոք նրան մեր քաղաքում չէ տեսել, նրա հայրը և մայրը երկար տարիներ սպասում էին, թէ Վասակը կը գայ, նրանց օջախը կը վերականգնէ. բայց իզուր... մայրը, որդու կարօտը քաշելով, անցեալ տարի մեռաւ. հայրն էլ սրտի ցաւ է ստացել. շատ չի ապրիլ, բայց Վասակին շատ էին սիրում. շատ-շատ էին սիրում:

Բայց ո՞ր է նա, միթէ ոչինչ յայտնի չէ:

—Ի՞նչպէս չէ. մեր քաղաքում մի նոր բժիշկ կայ, Պետերբուրգումն է սովորել. Վասակի հիւանդ մօրը նա էր բժշկում. երբ առաջին անգամ զեղ պէտք է զրէր, վարպետ Սարգսի ազգանունը լսելով՝ հարցնում է, թէ Պետերբուրգում ազգական ունի, թէ ոչ և իմանում է, որ Վասակը նրա որդին է. լաւ մարդ է այդ բժիշկը. հիւանդին շատ էր ափսոսում. նա պատմում էր, թէ Վասակը, ուսումը աւարտելուց յետոյ, ռուս իշխանուհու վերայ է պսակել, շատ է հարստացել և «ծնողներս մեռած են» անուն է հանել:

—Ինչո՞ւ:

—Ո՞վ է իմանում. երեւի ամաչել է, ժամանակ ժամանակ մի պարոն նրա անունով վարպետ Սարգսին փող է բերում:

—Ի՞նչպէս է վարպետ Սարգսի ազգանունը:

—Սրտումեան:

—Սրտումեան, ի՞նչպէս, մի՞թէ այն զեղատեսիլ երիտասարդը...

—Ի՞նչ է, ճանաչում էք:

—Անձամբ չեմ ճանաչում, բայց պատկերը ուրիշի մօտ տե-

սեւ եմ. շատ գեղեցիկ դէմք ունի... Նրա մասին մի ժամանակ շատ էին խօսում. մի ինչ-որ ուռւս իշխանուհի նրա վրայ սիրահարւում է, Վասակը նրա հետ պսակւում է, մեծ օժիտ է ձեռք բերում: Պետերբուրգի բարձր շրջաններում ընդունւած լինելով՝ «Ժամանակի հերոսի» անուն է ժառանգում... ուրեմն նրա հայրն է վարպետ Սարգիսը...

—Նրա, նրա... քիչ... քիչ...

Մեր վերոյիշեալ խօսակցութեան ժամանակ՝ սենեակիս դուռը բաց էր թողած... իմ ամենավերջին հարցին տանտէրս դեռ չէր պատասխանել, երբ «կաղ, կաղ» ձայներ ենք լսում... մին էլ տեսնես սպիտակ սագերի մի ստւար խումբ, վզերը տնկած, հանդիսաւոր քայլերով ներս է մտնում... նրանք տանտիրոջ անտեսութեան զարդն էին կազմում: Տանտէրս ցատկում է տեղից, «քիչ-քիչ-քիչ» պղաւելով՝ Հռոմ քաղաքի փրկիչների այդ համարին սերնդի հետ հեռանում է իմ մօտից:

Սրտիս վրայ ծանր քար էի զգում... Ինչպէս միշտ, այնպէս և այս անգամ, դուրս եմ գալիս սենեակից, դաշտ եմ գնում զբօսնելու: Կէս գիշերը արդէն անցել էր, երբ դանդաղ քայլերով տուն եմ վերադառնում... սենեակիս պատուհանի մօտ մեծ քար էր դրած. նրա վրայ նստելով՝ մի փոքր հանգստանում եմ. մոլթ գիշեր էր... երկնակամարը ամպամած... ժամանակ-ժամանակ քաղաքի կենտրոնից խուլ ձայներ են գալիս... շները շատ քիչ էին հաջում... մեր փողոցում մարդիկ վաղուց քնել էին... միայն վարպետ Սարգսի պատուհանից լոյս էր նշմարւում... մի անյայտ զօրութիւն զրդում է ինձ մօտենալ այդ պատուհանին և ներս նայել. տեսնում եմ մի փոքրիկ սենեակ, կանթեղի պլպլուն լուսով լուսաւորւած. կանթեղը կախ է տւած անկիւնում, առատաղից, Քրիստոսի խաչելութիւնը ներկայացնող հնացած պատկերի առաջ. պատկերի ոտին, յատակի վրայ երեւում է անորոշ ձևի, անորոշ գոյնի մի առարկայ. ժամանակ-ժամանակ նա շարժւում է, տատանւում է. նրանից ինչ որ երկար ու բարակ երբեմն բարձրանում է, երբեմն ցած ընկնում. դա ինչ բան է. իմ հետաքրքրութիւնը սաստիկ լարւում է. աչքերիս բիբերը լայն-լայն բաց արած՝ մեծ ուշադրութեամբ սկսում եմ գննել այդ անորոշ առարկան...

ահան, կանթեղի լոյսը վերջապէս ընկնում է նրա վրայ... ողորմելի... մարդ է դա. սպիտակ մօրուքով ծերունի է դա. ինքը, վարպետ Սարգիսն է դա. ծնկերի վրայ չոքած, մի գիրք ձեռին, Քրիստոսի խաչելութեան առաջ՝ աղօթքներ է նա կարդում. աջ ձեռը ծակատին տանելով՝ երբեմն-երբեմն երեսն է խաչակնքում. ծերունու շըլթունքները շարժւում են. գրքի թերթերը թերթւում են. նա շատ անգամ, առանց գրքին նայելու, աչքերը խաչաձ Քրիստոսին առած, անգիր է ասում աղօթքները. ահա... աղօթքը վերջացրեց... գիրքն է համբուրում, աթուռի վրայ է դնում. երկու ձեռները դէպի Քրիստոս պարզելով՝ գլուխն է խոնարհեցնում. Քրիստոսի ոտներն է համբուրում... տեա, տեա... ծերունու ուսերը ցնցւում են... արցունքներ են թափւում աչքերից, արցունքներ են հոսում խոր ընկած թշերի վրայով. ծերունին կամենում է տեղից բարձրանալ. բայց մի ծունկը յատակից հաղիւ բարձրացնելով՝ հակառակ կողմն է նա թէք ընկնում... նա այժմ ոտի վրայ է կանգնել. դէմքը դէպի իմ կողմն է դարձրել. նրա աչքերը լաւ չեն տեսնում, այդպէս էր ասում իմ տանտէրը, ուրեմն ինձ չէ նշմարում... ան, ինչպէս մաշած է նրա դէմքը... ինչքան դեղին է նա... նիհար է նա... անհաւասար քայլերով իր անկողնուն է մօտենում... օ, հրաշալի տեսարան... ծերունու աչքերից անմեղութեան հոգին է միայն մոխի տալիս. ծերունու հայեացքը ամեն ինչ օրհնում է, ամեն ինչ փայփայում է. նրա թառամած թշերի ծալ-ծալ խորշոմների մէջ խաղաղութեան ճառագայթներ են սփռւած... պըլ-պըլ-պըլ... պլպլպլ... պլպլպլ... կանթեղը մարում է: Ճակատս ծերունու տան պատին կպցրած՝ երկար ժամանակ արձանացած մնացել էի. վերին աստիճանի նուրբ, անշօշափելի, եթերային մի զգացմունք տիրապետել էր իմ ամբողջ կազմածքին. սիրտս ալեկօծւել էր... աշխարհ գլխիս խռովել էր... շուրջս էի նայում, մարդիկ էի փնտռում մօտիս, որ գրկեմ, անհուն սէր, գութ, փայփայանք բաժանեմ ցամաքած սրտերին... բայց իմ շուրջը միայն խաւար էր...

Մի երեկոյ դէպի դաշտ նայող պատուհանի մօտ նստած՝ գիրք էի կարդում. մայր մտնող արեւի կարմրագոյն ճառագայթները ամ-

բողջ դաշտը արիւնի ծով էին դարձրել, բայց հս նրանով չէի զմայ-
լում: Ես Աղասիի ողբն էի կարդում: Ինքս ինձ մոռացել էի. սիրտս
թնդում էր. աչքերիս աղբիւրակներից արցունքների երկձիւղ շի-
թեր էին ցայտում: մինը կոկորդս էր ողողում. նրան հա կուլ էի
տալիս. միւսը թշերիս վրայով էր սողսողում: վերջիններին չէի կա-
րող չորացնել, կամքս քարացել էր: Ընթերցանութիւնը նոր էի
վերջացրել, երբ աչքիս պոչովը մի ինչ որ շաք եմ նշմարում պո-
տուհանի առաջ. մեքենայաբար դուրս եմ նայում և մնում եմ ապ-
շած. այնտեղ արձանի նման անշարժ կանգնած էր կօշկակար Համ-
բարձումը և անթարթ ինձ էր մտիկ տալիս. նրա աչքերը նոյնպէս
արտասուալից էին: Ես բոլորովին շփոթւում եմ, չեմ կարողանում
խօսք արտասանել. մի րոպէ լուռ միմեանց ենք մտիկ տալիս. յան-
կարժ, արագ շարժում գործելով, նա մօտենում է պատուհանիս,
խռպոտ ձայնով հարցնում է.

— Ինչո՞ւ ես լաց լինում:

Ես ոչինչ չեմ գտնում նրան պատասխանելու, լուռ եմ:

— Մեր Վասակին ճանաչում ես. նա էլ գրքեր էր կարդում:

— Այո, լսել եմ նրա մասին:

— Լսել ես... չեմ տեսել... աւելի լաւ. դու էլ նրա նման
ես, ո՞ր են քո ծնողները, ինչո՞ւ նրանցից հեռացել ես...

— Իմ ծնողները վաղուց մեռած են:

— Պողահատիկ սիրո՞ւմ ես, առ... առ...

Ինչ որ տերեւների մէջ փաթաթած՝ ինձ է տալիս, ես առ-
նում եմ:

— Կօշիկներդ հնացած չե՞ն, ծակ չունե՞ն, տուր կարկատեմ:

— Ոչ, նրանք դեռ նոր են:

— Լաց մի լինիլ. եթէ էլի պողահատիկ ուզես, ինձ ասա, կը բե-
րեմ, կօշիկներդ...

Դէպի աջ նայելով՝ յանկարծ նա իր խօսքը կտրում է և արագ
քայլերով ինձնից հեռանում: Միւս պատուհանի վարագոյրը բարձ-
րացնելով՝ նրա ետեւից եմ նայում. շտապ քայլերով վարպետ
Սարգսի տունն է մտնում: Ես մեքենաբար բաց եմ անում նրա
տւած տերեւների ծրարը... միջումը լիքը ելակ էր... մի-մի հատ
առնում եմ և սկսում եմ ուտել... հինգ րոպէ դեռ չէր անցել,

երբ սենեակիս դուռը բացուում է, Համբարձումը ներս է մտնում, թեկոց բռնելով՝ վճռական ձայնով ասում է.

— Գնանք վարպետ Սարգսի մօտ:

Իսկոյն զլխարկս հագնում եմ և առանց խօսք ասելու հետևում եմ նրան:

Վարպետ Սարգսի տան դուռը բաց անելով՝ Համբարձումը ինձ ներս է մղում, յետոյ ինքն է մտնում և դուռը պինդ փակում: Ես տեսնում եմ ինձ մի փոքրիկ, բաց մաքուր սենեակում: Աչքս ընկնում է Քրիստոսի պատկերի վերայ, որի առաջ կանթեղը վառում էր: Սենեակում կար մի հասարակ սեղան, երկու աթոռ, երկաթի անկողին, որի վերայ ծերունին էր պառկած. փոքրիկ սնդուկ, վերան՝ երկու գիրք, երկու մկրատ, մի փայտի կանգուն: Դռան աջ կողմում փոքրիկ պահարան, ձախ կողմում վառարան. սեղանի տակին մի սպիտակ կառու, չորս ոտները պարզած, պառկել էր, երևի քնում էր:

Ինձ տեսնելիս՝ վարպետ Սարգիսը աշխատում է պառկած տեղից վեր կենալ, բաց ացի նրան չէ յաջողում. Համբարձումը վազում է նրա մօտ, երկու ձեռներով զրկում նստացնում է նրան և, իմ վերայ ցոյց տալով, ասում է.

— Ուս նա է, նոյնպէս կարգացողներից է, ասու, ինչ որ կամենում ես, կը գրէ. ծերունու չորացած իրանը, աւելի ձիշտ ասած՝ կմախքը ծածկւած էր ձիւնի նման սպիտակ շապկով, որի օձիքը չէր կոճկւած. ես տեսնում էի ջղերի զանգւած դառած նրա անմիս և շատ բարակ վիզը, խոր ընկած կուրծքը, կարող էի մի առ մի համարել և նրա որոշ-որոշ դուրս ցցւած կողերը: Այլ ձեռքի չորս մատները իբրև հովանի ունեւերին մօտեցնելով՝ անմեղ ժպիտը երեսին՝ նա մի բոպէ կարօտալի աչքերով ինձ է զննում. յետոյ բարակ, քնքոյշ ձայնով հարցնում է.

— Իմ սիրական զուակի, հայր ունիս:

— Ոչ, հայրս վաղուց վսխճանւած է:

— Մայրդ:

— Նոյնպէս վսխճանւած է:

— Եղբայր, քոյր, ի հարկէ կունենաս:

—Չունիմ՝ ոչ եղբայր, ոչ քոյր, ազգականներ գուցէ ունիմ, բայց չեմ իմանում, որտեղ են նրանք:

—Իմ սիրական զաւակ, ուրեմն դու օրք ես. Աստուծ որբերին երբէք չի մոռանալ:

—Լաց մի լինիլ, սիրական զաւակ. ի՞նչ արած, ես էլ շուտով կը մեռնեմ... Վասակս որբ կը մնայ, բայց... Աստուծ քեզ էլ, որդուս էլ, աշխարհի բոլոր որբերին էլ անօգնական չի թողնիլ...

—Ի՞նչ պէտք է գրել, դու ան ասա, կտրում է նրա խօսքը Համբարձումը:

—Ի՞նչ պէտք է գրել. դու իմանում ես էլի... սիրական զաւակ, անունդ... հա... այնտեղ թուղթ կայ... գրիչ էլ... գրիր... Վասակս թող փող չուղարկէ ինձ... ափսոս է... երեւի բերնից կտրում է, ինձ է ուղարկում... ես... գրիր... որ... կարօտ չեմ... Համբարձումը...

—Լաւ, Համբարձումի պոչից մի բռնիլ. պարոն կարդացող, գրիր, որ Վասակը փող չուղարկէ հօրը, ասում են թէ շատ հարստացել է, ինչքան հօրը ասում եմ այդ, չէ հաւատում ամենեւին... լաւ, թէկուզ թագաւոր լինի, իր համար է, գրիր, որ փող հարկաւոր չէ, թող չուղարկէ էլի... ինչքան գրում ենք, դարձեալ ուղարկում է... ստացւած փողերը բոլորը ան, սնդուկի մէջ պահւած է... գրիր... Նամակը գրում եմ, տալիս եմ Համբարձումին և շուրջս եմ նայում... Տերունին նորից պառկել է... նա հիւանդ էր... աչքս ընկնում է գրքերի վերայ. սկսում եմ նրանց զննել. մինը Գրիգոր Նարեկացին էր. միւսը՝ «Հիւսիսափայլ» ամսագրի 1858 թւականի առաջին վեցամսեակը... նրա միջում ծալած թուղթ էր դրած այնտեղ, որտեղ Հալ-Մեհի-Վանտիմիւրի որդիական սէրն էր նկարագրուում: Ես նրան վաղուց կարդացել էի. բայց այժմ էլ ուրախութեամբ կը կարդայի: Եթէ գիրքը ձեռս ընկնէր... այդ պատճառով սկսում եմ նրան ուշադրութեամբ աչքի անցնել:

—Հը՛, ի՞նչ ես նայում, զառնում է ինձ Համբարձումը: Նա, նամակը պահելուց յետոյ, ձեռները մէջքին դրած՝ կանգնել էր մօտիս և ուշադրութեամբ զննում էր իմ շարժողութիւնները:

—Հալ-Մեհի-Վանտիմիւրի պատմութիւնը նորից կամենում եմ կարդալ:

—Առաջ կարդացել ես:

—Այո, բայց այժմ մոռացել եմ:

—Հը՛, մոռացել ես... ի հարկէ կը մոռանաս. գիտունները սիրում են մոռանալ... բայց մենք չենք մոռանում... լսիր, ես քեզ պատմեմ... Հալ-Մեհին տասնը վեց տարեկան պարսիկ աղջիկ էր. ապրում էր Խապահանում. մի օր նրա հայրը անհետանում է... Հալ-Մեհին երկար ժամանակ չէր կարողանում իմանալ, թէ հայրը որտեղ էր... սաստիկ տանջւում էր... վերջապէս իմանում է, որ նրա հօրը բռնաւորները անարդարութեամբ բանտարկել էին մի բերդի մէջ, որ շինած էր Տիգրիս գետի կառաղի ալիքների մէջտեղում... և անունը մեռած էին հանել, որովհետեւ ժողովուրդը նրան շատ էր սիրում: Հալ-Մեհին չորս ամիս շարունակ Տիգրիս գետում լող տալ է սովորում. մի մութ գիշեր Տիգրիսի կառաղի ալիքները պատռուելով՝ մենակ բերդի ստորոտն է դուրս գալիս. բարձր պատուհանից ծերունի հօրը պարանով ցած է իջեցնում. գրկում է նրան, ջուրն է լնկնում, ալիքների հետ կուլելով՝ միւս ափին է հասցնում և այդպէս սիրական հօրը ազատում է... բռնաւորները նրանց երկուսին էլ բռնում են, կախում են. տեսնում ես, ինչպէս են սիրում իրանց հօրը ուրիշները, և ոչ թէ մեր Վասակի նման...

Այդ միջոցին ծերունին անկողնի մէջ շարժւում է, խուլ հազը երկար ժամանակ ցնցում է նրան. նրա հազը կտրւելուց յետոյ՝ Համբարձումը շարունակում է.

—Հալ-Մեհի-Վանտիմիրի համար յետոյ արձան են կանգնեցնում. տապանադիրը նրա հետ (մատով պառկած ծերունուն է ցոյց տալիս) անդիր ենք իմանում. յաճախ երգում ենք, նա շատ է սիրում:

—Ես կը ցանկանայի լսել այդ երգը, ասում եմ նրան:

Նա, մի րոպէ ցած նայելուց յետոյ, ձախ ձեռը ձախ թշին է մօտեցնում և աչքերը պառկած ծերունու վերայ զցած՝ խըղդուկ ձայնով երգում է.

«Աշխարհումն շատ փոքր ապրեց այս Հալ-Մեհին,

«Բայց լաց ու կոծ անարժան են նորա վերջին.

«Վեհանձնաբար ազատելով իր ծնողը,

«Արհամարհեց նոցն իսկ մահու ահ ու դողը.

Ով որ գիտէ իւր հօր համար կեանքը դնել, } կրկնում է:
 Ասուածներին նա դասակից ունի լինել:

Այդ երգի եղանակը շատ տխուր էր, շատ սրտաճմլիկ. Համբարձումի արտասանած ամեն մի խօսքի միջից՝ խօսում էր նրա վերին աստիճանի զգածած հոգին: Վերջին երկու տողերը երգելիս՝ Համբարձումի ձայնը սկսում է զոզոզալ. ես շեշտակի նրա դէմքին եմ նայում. նա արտասւում էր. չկամենալով ինքս ինձ զսպել՝ նոյնը անում էի և ես: Յանկարծ Համբարձումը թռչում է տեղից, խլում է ինձնից զիրքը, խրում է նրան ծերունու բարձի տակ և, թիկունքը ինձ դարձնելով, անկողնի մօտ կոր ի գլուխ անշարժ նստում է... սենեակում տիրում է կառուրեալ լռութիւն. ժամանակ ժամանակ միայն ծերունու տնքոցն է լսւում... անլսելի քայլերով ես դուրս եմ գալիս սենեակից:

Հետեւեալ օրից սկսած՝ ես սկսում եմ յաճախել վարպետ Սարգսի տունը և շուտով դառնում եմ նրա և Համբարձումի մտերիմ բարեկամը: Ամեն անգամ, երբ գնում էի ծերունու մօտ, նա ինձ իր մօտն էր նստեցնում, ճակատիցս համբուրելով՝ ասում էր, թէ իր Վասակի կարօտը ինձանից էր աւնում: Մի երեկոյ նրա մօտ գնալով՝ շատ յուզւած եմ գտնում նրան. անծանօթը նորից եկել էր, որդու անունով նրան փող էր բերել:

— Սիրական զաւակ, ասում է նա ինձ վերին աստիճանի խըղճալի ձայնով, այդ պարոնի ամեն մի անգամ իմ շէմի վերայ ոտք կոխելը՝ ինձ համար սոսկալի տանջանք է. կրկին իմ միտն է գալիս սիրական որդիս. կրկին տանջում է ինձ սաստիկ կարօտը, կրկին սաստկանում է իմ սրտի ցաւը... աղօթքը, միայն աղօթքը հանգիստ է տալիս իմ մաշւած հոգուն. բայց մարմինս և՛ս աւելի քայքայւում է, հողային կեանքը ևս աւելի անտանելի է դառնում, մահը և՛ս աւելի նախանձելի է թւում:

— Հայրիկ, չեմ կարծում, որ Վասակը քեզ մոռացած լինի:

— Ո՛չ, որդի, նա մոռացած չէ. եթէ մոռանար, փող չէր ուղարկել... վատ մարդիկ նրան փշաքրել են... ասում են... ամաչում է ինձ հայր անւանել... սուտ է... իմ որդին այդպիսի բան չի անի... բայց... նրա զրկած փողերը անբաղդ են...

—Ինչո՞ւ:

—Անցեալ տարի Նազլուս, Վասակի մայրը, հիւանդ պառկած էր... բժիշկը ասում էր, [թէ շուտով կը լաւանայ... բայց ինչպէս ուրբաթ երեկոյ Վասակից փող ստացանք՝ իսկոյն միւս առաւօտ... Նազլուս... մե... մեռաւ... մեռաւ... մենակ թողեց ինձ...

—Երևի Ասուած աչկայէս է կամեցել, հայրիկ, բայց դու պէտք չէ իզուր տանջւիս, քո անցեալի ուրախ չիշատակներովը պէտք է հոգեպէս մխիթարւիս:

—Անցեալի չիշատակ... ուրախութեան ժամե՛ր... ո՞ր են նրանք... եղբւր ես, չե՞մ եղել, ոչինչ չեմ չիշում... իմ աչքի առաջ գիշերցերեկ վիտուում են անցեալի անգոյն պատկերները... անորոշ են նրանք, աղօտ են... մերթ պսպղում են, մերթ մառախուղի քողերով փաթաթւած՝ աներևութանում են իմ երեակայութեան աչքերից... այն դառը բաժակը, որ նախախնամութիւնը վիճակել էր ինձ կաթիլ-կաթիլ խմելու՝ ես արդէն խմել եմ, անմուռնչ հնազանդութեամբ... այժմ, իմ վշտահար հոգին, քայքայւած մարմնի մէջ մորմոքելով՝ անմարմին աշխարհի կեանքին է միայն փափազում. մարդոց համար օր և գիշեր չենք ոյճ սիրտս հացեղով երկնքից, հեղութիւնը միայն անբաժան ընկեր ունենալով ինձ, ես այժմ սպասում եմ, արդեօք ե՞րբ կը հնչէ իմ երկրային կեանքի վերջին ընկեր. ե՞րբ նախախնամութիւնը ինձ կը վերափոխէ դէպի անմարմինների աշխարհը:

—Ինչո՞ւ աչկայէս ես խօսում, հայրիկ. գուցէ շուտով Վասակը քեզ տեսութեան գայ, դու նորից կ'ուրախանաս, նա քո դառը ժամերը կը քաղցրացնէ...

—Ոչ, սիրական զաւակ, ոչ, ես յոյս չունիմ այդ բախտաւորութիւնը տեսնելու...

Նոյն գիշերը, ժամը 2-ին՝ մի մարդ սաստիկ բաղխում է իմ պատուհանը. տեղիցս վեր թռչելով՝ հարցնում եմ.

—Ո՞ր է:

—Շուտ արա, շորերդ հագիր, մեզ մօտ արի, լսում եմ Համբարձումի սաստիկ յուզւած ձայնը: Իսկոյն հագնւում եմ, դուրս եմ

ցատքում պատահանից, փեղկերը նորից ծածկելով՝ վազում եմ վարպետ Սարգսի մօտ՝ Համբարձումը այնտեղ էր. ծերունին անկողնում անշարժ պառկած էր. մօտենում եմ նրան, մի քանի խօսք եմ ասում... նա ինձ չէ լսում, չէ տեսնում. նրա կիսաբաց աչքերի խնժորիկները ժամանակ-ժամանակ շարժւում էին. շունչը դառել էր կարճ և արագ. ականջս դեմքին մօտեցնելով՝ զըզ-զըզ, զըզ-զըզ ձայն եմ լսում նրա կրծքից. մի օր առաջ ասած նրա խօսքերը՝ «ես յոյս չունիմ այդ բախտաւորութիւնը տեսնելու» հա մտքովս էին անցկենում. մահը արդէն շրջապատել էր իմ անմոռաց բարեկամի— վարպետ Սարգսի անկողինը...

Դուռը բայում է, Համբարձումը և մի անձանօ թ պարոն ներս են մտնում. վերջինը բժիշկն էր. Ծերունուն զննելուց յետոյ՝ նա, առանց մեղ նայելու, կարծես ինքն իրան ասում է.

—Ամեն բան վերջացած է. երկու ժամ... և նա բոլորովին կը հանգստանայ:

Համբարձումը, աչքերը ծերունու դեմքին յառած, անկողնու մօտ արձանացել էր: Նրա աչքերը չոր և փայլուն էին: Բժիշկը, մի քանի նկատողութիւններ անելուց յետոյ, դուրս է գալիս սենեակից: Ես լուռ ու մունջ նստում եմ աթոռի վրայ. գլխումս մառախլապատ խաօս էր... սրտումս ոչ մի պարզ, որոշ զգացմունք չէի զգում. այնտեղ մի տեսակ խուլ մրմուռ էր սկսել. չեմ իմանում ինչքան ժամանակ այդպէս նստել էի. ինձ ուշքի է բերում ծերունին. մահու տագնապում գիտակցութիւնը արդէն կորցրած լինելով՝ նա հետեւեալ կցկոտուր խօսքերն էր բերնից թռցնում.

—Սերոբէք... արքայութիւն էք տանում... հրեղէն կօշիկներ... այն ո՞վ է... Նազլու... դժւ ես... ո՞ր են ողբերքը... երեսներիդ ղուրբան... ո՞ր է Վասակս... ինչո՞ւ ձեր միջումը չէ... ծօ... անբաղդ որդի... անբաղդ... մարդիկ... Համբարձում... դու սուրբ ես... փող... սիրական զաւ... ծօ... ութը զաւ... տասնըութը ձեռներ... աղօթում են... կը գամ... կը գամ...

Առաւօտեան, ժամը 6-ին՝ սալապան Սիմօնը, որի մի ոտը փայտից էր շինած, կանգնած էր վարպետ Սարգսի դռան: Նա լաց էր լինում, աղաչում էր, որպէս զի ծերունու դագաղը նրա սայլովը հանգստարան տանենք. վարպետ Սարգսից նա շատ լաւութիւն

էր տեսել. այժմ ցանկանում էր իւր վերջին յարգանքը մատուցանել նրան: Համբարձումը, ես, Սիմոնը և նրա որդին՝ վարպետ Սարգսի դագաղը զետեղում ենք սալլի վրայ: Համբարձումը դագաղը շինել էր տւել հասարակ տախտակներից. տախտակները հանել էր տւել իր տան յատակից: Բրդոտ ձին, գլուխը շարժելով, պոչը թափ տալով, մեր անմոռաց բարեկամի դիակը հանգստարան էր տանում. ես և Համբարձումը բաց զխով հետևում էինք սալլին: Հանգստարան մտնելիս՝ «ուշ-ուշ» լսում էինք եկեղեցու զանգակի տխուր զողանչիւնը: Վարպետ Սարգսի դագաղը իջեցնւմ են գերեզման. ես և Համբարձումը նրա վրայ մի-մի բռն հող ենք գցում. բահերը շարժում են. հինգ րոպէում մեր անմոռաց բարեկամի գերեզմանի վրայ հողի բլրակ է բարձրանում: Քահանան և տիրացուն, աղօթքներ մրմռալուց յետոյ, շտապ-շտապ հեռանում են. ցրւում են և միւսները. Համբարձումը և ես միայն գերեզմանի մօտին մնում ենք արձանացած: Երկար լռութիւնից յետոյ՝ ես առաջարկում եմ նրան տուն գնալ. նա ոչինչ չէ պատասխանում: Ծանօթ լինելով նրա օտարութիւն բնաւորութեան հետ՝ ես քաջլերս ուղղում եմ դէպի հանգստարանի դուռը. քսան քաջ չէի արած՝ երբ Համբարձումի ուժեղ ձայնն եմ լսում.

— Կարդացող, կանչում է ինձ. ես շուռ եմ գալիս դէպի նա:

— Գնա, բղաւում է, գնա... քո բոլոր մեծ ու փոքր, հաստ ու բարակ գրքերի թերթերը շուռ տուր, փնտռիր, գտիր և ինձ պարզիր. ինչո՞ւ համար խաւար Պարսկաստանում Հալ-Մեհի-Կանտի-միրը «հօր համար» իր կեանքն է զոհում. իսկ ձեր Պետերբուրգում կարդացած Վասակը «իւր համար» ծնողների կեանքն է հալ ու մաշ անում... եթէ դրա պատճառը դու ինձ չկարողանաս հասկացնել՝ այն ժամանակ քո բարեկամութիւնը ինձ համար աւելորդ բեռը կը համարեմ. գնա:

Այդ խօսքերից յետոյ, Համբարձումը վեր է առնում բլրակի մօտից զլիարկը և, ձեռին բռնած, ոլոր-մոլոր քաջլերով գնում անհետանում է հանգստարանի խորքերում:

Տխուր, բաց և վերին աստիճանի փայփայող հայեացքով ես հետևում էի Համբարձումի քաջլերին. մի զօրեղ զգացմունք զրդում էր ինձ առանց ոտների թռչել, նրա վզովը փաթաթել, անբացա-

տրելի արցունքներով նրա խորշոմազարդ թշերը ողողել... բաց
զսպում եմ ինքս ինձ. այլև ող կրճքից «սխ» քաշելով՝ կոր ի գլուխ
տուն եմ գնում:

Վարպետ Սարգսի մեռնելուց յետոյ՝ Համբարձումը երկու ծրար
է ինձ յանձնում. մինի վրայ գրած էր. «հասցնել իմ Վասակին».
միջում նրանից ստացւած փողերն էին. այդ ծրարը ես Պետերբուրգ
եմ ուղարկում: Միւս ծրարը անմոռաց ծերունին ինձ էր նւիրել.
միջում երկու գիրք կար — Գրիգոր Նարեկացին և Հիւսիսափայլը:

Մի երեկոյ Վասակը, իր փառաւոր առանձնարանի բաց պա-
տուհանի մօտ կանգնած, շանկանիս գինուց տաքացած գլուխը քա-
մու գէմ տւած՝ զովանում էր. այդ միջոցին սպասաւորը արծաթի
մատուցարանի վրայ նրան մի հաս ծրար է մատուցանում: Վասակը
վեր է առնում ծրարը, առանց շտապելու բաց է անում նրան և,
ճրագին մօտենալով՝ պատրաստւում է կարդալ միջի նամակը. նա
դեռ երեք խօսք էր միայն կարդացել, երբ, սաստիկ գունաթափե-
լով, նամակը մատների միջից բաց է թողնում և երկու ձեռները
աչքերին տանում... Ինչո՞ւ համար Վասակը երկու ձեռները աչքե-
րին տարաւ... ոգելից ըմպելիքն էր նրա գլուխը ցաւացնում. թէ...
նրա խղճի կուրացած աչքերը նորից լոյս տեսան...

ԵՍ ՊԱՏՐԱՆՔԸ ՍԻՐԵՑԻ

Շ Ա Ն Թ Ի

Շուրջիս նիւթի ցամքած կեանքէն զայրացկոտ՝
Կանչեցի ես իդէալըս կենսածին.

Բայց ետեւէս կըծու ծաղրով անամօթ
«Է՛, ան միայն գրքի մէջն է» պուացին,
Ես ալ գիրքը ինծի ընկեր ընտրեցի.

Ես պատրանքը սիրեցի:

Մենութեան մէջ լուռ մըթնած սենեակիս՝
Զիրագործող երազներու մէջ թաղւած՝
Հեռու ու վեր սաւառնեցաւ միշտ հոգիս,
Հոն, ուր կեանքիս գոհար յոյսերն են մտնած,
Ես, մօր մը պէս, անուրջներս զըզւեցի,

Ես պատրանքը սիրեցի:

Երբ գեղեցիկ, թարմ աղջիկը ժլպոտեցաւ,
Սիրտըս դողաց յուզումով մը ներդաշնակ.
Սիրեցի ալ, միայն ոչ աչն, որ անցաւ,
Այլ անոր նուրբ, յափըշտակիչ դէմքի տակ
Նոր էակ մը, որ մըտքէս հոն անցուցի.

Ես պատրանքը սիրեցի:

Հայրենիքի հուր կարօտը բընածին
Երբ բռնընկղուց յուզւած լանջըս տենդօրէն,

«Դուն Հայրենիք, դուն հող չունիս» հրճեցին,
 Ես դառնացայ. բայց ակ ուժգին այդ օրէն
 Իմըս չեղող Հայրենիքըս պաշտեցի.

Ես պատրանքը սիրեցի:

Ինձի համար այն ժամերը թանկ եղան,
 Երբ ներշնչւած ըստեղծեցի, միշտ անդոյ,
 Բայց անձնուրաց, վեհ հակներ սիրեկան.
 Երբ իրական աշխարհին մէջ միշտ դժգոհ
 Իդէալի կեանքը երգել ուզեցի.

Ես պատրանքը սիրեցի:

1893 թ. մարտ 13, Պոլիս:

ԿԱՐՄԻՐ ԶԱՏԿԻ ԳԻՃԵՐԸ

(ՊԱՏԿԵՐ Բ. Короленко-ից)

Նուէր «Մուրճ»-ի ընթերցողներին

Ազատ թարգմանութիւն ԳՐԻԳՈՐ ՎԱՆՅԵԱՆԻ

187* աւագ շաբաթ օրն էր.

Երեկոյի մթնշաղը արդէն տարածել էր իւր թւերը խաղաղած երկրի վերայ: Յերեկանից տաքացած և հիմա՝ դարնանային իրիկ-նադիմի թեթև շշուշով հովացած երկիրը շնչում էր լիասիրտն: Այդ շշուշից ահա փառահեղ, վառվռուն և ասողալից երկնքի հետ խաղալով, դուրս էին ծորում սպիտակաւուն թուխպեր, ինչպէս բուրւառի ծխի քուլաներ, որոնք բարձրանում էին առաջիկայ տօնին զիմաւորելու:

Հանդարտ էր: Մ. փոքրիկ նահանգական քաղաքը, որ ամբողջովին զովացել էր մթնշաղ երեկոյի հովով, լռել էր, սպասելով այն պանծալի բոսիւնին, երբ մայր-եկեղեցու զանգակատան բարձունքից պիտի հնչէր առաջին հարւածը: Բայց քաղաքը քնած չէր: Խոնավ մթութեան հովանու տակ, լռիկ, անմարդի փողոցների սոււերների մէջ նկատելի էր մի ամոք-սպասողական դրութիւն: Երբեմն միայն անցնում էր ուշադած, վաստակաբէկ բանւորներից մինը, որին տօնը հանդիպել էր համարեա՞ ծանր, անհամբոյր աշխատանքի մէջ. երբեմն գոգոռում էր կառապանի սալլակը—և դարձեալ տիրում էր անմրմունջ հանդարտութիւն... Կեանքը փողոցից փախուստ էր տւել տները, փարթամ պալատները, համեստ խրճիթները և այնտեղ պահւել:

Թէ քաղաքի, թէ գաշտերի և թէ բոլոր երկրի վրայ լսել էր վերահաս յարութեան տօնի անտեսանելի շշուշը:

Լուսինը չէր բարձրանում և քաղաքը մնացել էր այն բլրակի սուերի տակ, որի վրայ նկատուում էր մի մեծ, մռայլ շինութիւն: Այդ շինութեան տարօրինակ, ուղղաձիգ և խիստ զծերը մռայլ նկարում էին աստղալից երկնի երեսին, մթին գոները լուսին տալով հազիւ հազ որոշում էին սուերածածք պատի միջից և անկիւնի չորս աշտարակները զուրս էին ցցել երկնքում սրածայր գազաթներով:

Բայց ահա մայր-եկեղեցու զանգակատան բարձունքից զուրս թռաւ մտահոգ գիշերւայ զգացուն օդի մէջ առաջին դողդոջ հարւածը... երկրորդը... երրորդը... Մի բուլեից յետոյ զանազան տեղերում, զանազան ձևերով հնչում, դողդոջում և երգում էին զանգակները և այդ հնչիւնները հիւսւելով կազմում էին մի զօրեղ, ինքնուրոյն ներդաշնակութիւն և տատանում էին հանդարտ, կարծես շրջան էին առնում եթերի ծալքերում:

Այն մթին շինութիւնից, որ սուերով ծածկել էր քաղաքը, նոյնպէս լսեց խռպոտ, կերկերուն մի զողանջիւն, որ կարծես խըղձալի անզօրութեամբ հե-հեում էր զօրեղ ներդաշնակութեան յետևից համակու եթերային բարձրութեան մէջ:

Ձայնը լսեց... Հնչիւնները հալւեցան օդում, իսկ գիշերային հանդարտութիւնը սկսեց աստիճանաբար իւր դահը բարձրանալ, միայն դեռ երկար, մթնշղի մէջ նշմարւում էր մի անորոշ, սուկացծող արձագանք որպէս անտեսանելի օդաձիգ լարի դողդոջ: Տների ճրագները մարում էին, և կեղեցիների պատուհանները վառվում: Աշխարհը 187* դարձեալ պատրաստուում էր համբաւելու եղբայրութեան, սիրոյ և խաղաղութեան հին նշանաբանը:

Մռայլ շինութեան մթին գոների ախրը ճրուռացին: Ձին-ւորների մի խմբակ մթութեան մէջ հրացանները չլսիչլսիւցնելով զուրս եկաւ գիշերապահներին փոխարինելու: Նա մօտենում էր շինութեան անկիւններին առժամանակ կանգ առնելով պահակատեղերի մօտ: Այդ մթին մարդկային խմբից չափած-կշռած քայլերով զուրս էր գալիս մի կերպարանք, իսկ նախկին պահապանը կարծես խորասուզւում էր այդ անորոշութեամբ մթին առող խմբակի մէջ:

Ապա խումբը դարձեալ առաջ էր շարժուում պտտելով բանտի բարձր պատերի շորս կողմը:

Արեւմտեան կողմը կանգնած պահապանին փոխարինելու դուրս եկաւ մի երիտասարդ նորակույ: Նորա շարժմունքներից դեռ ևս չէր անհետացել գիւղական անտաշութիւնը, մատաղ կերպարանքը դեռ ևս պահպանել էր լարւած ուշադրութեան արտայայտութիւն, որ նկատելի է առաջին անգամ պատասխանատու պաշտօն ստանձնող անձանց դէմքին: Նա երեսը պատին դարձրեց, հրացանը չխկացնելով երկու քայլ արաւ և մի կիսաշրջան կատարելով, կանգնեց ուս-առ-ուս պահապանի մօտ: Հին պահապանը, իւր գլուխը թեթեւութեամբ նորեկի կողմը դարձնելով, սկսեց սովորական կարգով նրան խրատներ կարդալ:

— Անկիւնից անկիւն, լաւ նայիր, չքնես, չնիրհես, արագ-արագ ասում էր և նրա մոխրագոյն աչքերում թափանցում էր ինչ որ մի տեսակ առանձին տխրութիւն:

— Հասկացար, հարցրեց տանապետը:

— Такъ-то чино (այո):

— Ի՛է, լաւ նայիր, ասաց նա խտրութեամբ. ապա տոնը փոխելով, շարունակեց աւելի մեղմօրէն:

— Հա՛, ոչինչ, Ֆադէկ, մի՛ վախիր, հօ կնիկարմատ չես, սատանայից հօ վախենալու չես...

— Ինչո՞ւ միայն սատանայից, միամտաբար պատասխանեց Ֆադէկը և ապա մտազբաղ աւելացրեց, — համա, ախպեր, սիրոս ինչ որ վատ բան է նախագուշակում:

Այս պարզ, միամիտ, համարեա մանկական խոստովանութիւնը ծիծաղ բարձրացրեց զինւորների խմբի մէջ:

Տես, ահա, բարեկամ, գիւղը շատ հեռու չէ, ասաց տանապետը մի արհամարհական ցաւակցութեամբ և կտրուկ հրամայեց:

— Ружья вольно! шагомъ маршъ! ¹⁾ պահապան ²⁾ խումբը

¹⁾ Հրացաններն ազատ, քալեցէք:

²⁾ Караулъ—մենք թարգմանում ենք—պահապան, իսկ часовой—պահնորդ:

քայլերի հաւասարաչափ բաղխումով ծածկեց անկիւնի յետևը և այդ բաղխումը շուտով լռեց: Պահնորդը ուսին դրեց հրացանը և սկսեց հանդարտ մանգալ պատի մօտով:

Բանտի մէջ՝ զանգակի վերջին հարւածի հետ՝ սկսեց մի շարժումներ: Վաղուց բանտի մռայլ և թախծալի գիշերը այդպիսի շարժումն չէր տեսել. Տօնական շնորհաւորութիւնը կարծես ազատութեան համբաւ լինէր բանտի բնակիչների համար: Արգելարանների սև դռները մինը միւսի յետևից բացւում էին: Մարդիկ մոխրագոյն վերարկուներով, գունաւոր, ճակատագրական կտորը մէջքին, երկար շարքերով գնում էին նրբանցքի միջով զոյգ-զոյգ և մոնում բանտի եկեղեցին, որ վառվում էր ճրագների լուսով: Նոքա գալիս էին աջ կողմից, ցածրից բարձրանում էին սանդուխտով և բարձրից ցած էին իջնում: Խուլ աղմուկի միջից երբեմնապէս լսւում էր հրացանի զրնգոց և կապանքների սահուն չխչխկոց: Մոխրագոյն խաժամուժը մոնելով ընդարձակ եկեղեցին, լցւում էր վանդակով շրջափակած տեղերը և այնտեղ լսւում էր: Եկեղեցու պատուհաններում նոյնպէս նկատելի էին երկաթեայ ամուր վանդակներ:

Բանտը դատարկւել էր: Միայն անկիւնի չորս աշտարակներում՝ չորս մենաւոր բանտարկեալներ մռայլ թափառում էին իրանց խցերի մի անկիւնից միւսը: Ծրբեմն նոքա ականջները դէմ էին անում դռանը և ազահութեամբ կլանում էին եկեղեցուց դուրս թռչող երգի բեկորները:

Մէկ էլ ընդհանուր արգելարաններից մինում, թախտի վրայ պառկած էր մի հիւանդ: Վերակացւին յայտնեցին այդ յանկարծահաս հիւանդի մասին. նա մօտեցաւ հիւանդին, երբ կալանաւորներին տանում էին եկեղեցի, և խոնարհւելով նայեց նորա աչքերին, որ վառւում էին մի տարօրինակ փայլով և մի անմիտ արտայայտութեամբ ուղղւած էին տարածութեան գիրկը:

— Իւանով, լսիր, Իւանով, կանչեց վերակացուն հիւանդին:

Կալանաւորը ուշք չդարձրեց. նա մրմնջում էր ինչ որ մի անորոշ-անհասկանալի բան. ձայնը խուլուտ էր, բորբոք շրթունքները դողդոջում էին ճգնութեամբ:

—Վաղը հիւրանոց տանելու կարգադրեց վերակացուն և արգելարանի դրան առաջ թողնելով նրբանցքի պահապաններից մինին, դուրս եկաւ։ Պահապանը ուշադրութեամբ նայեց ջերմող հիւանդին և գլուխը շարժեց։

—Եյ փախստական, փախստական, քո հաշիւը վերջացաւ, ասաց վերակացուն, և տեսնելով, որ այլևս այստեղ անելու բան չ'ունի, անցաւ նրբանցքով դէպի եկեղեցին և սկսեց լսել ժամերգութիւնը՝ շուտ շուտ գետին կռանալով երկրպագութեան։

Դարտակ արգելարանը երբեմնապէս աղմկում էր հիւանդի անորոշ բացականչութիւններով։ Դա մի շափահաս, զօրեղ և ամրակազմ մարդ էր։ Նա զառանցում էր մօտիկ անցեալը և նրա կերպարանքը արտայայտում էր մի դառն տանջանք։

Բաղդը այդ փախստականի հետ մի անպիտան խաղ խաղաց։ Հայրենիքի վառվառն կարօտով տոգորւած, նա կտրեց հազարաւոր վերստեր. անցնելով վայրենի լեռների և տալգանների ¹⁾ վրայով, կրեց հազարաւոր նեղութիւն և զրկանք, առաջնորդւած այն յուսով, «թէ մէկ տեսնեմ... մի ամիս, մի շաբաթ... ապրեմ մերոնց մօտ... իսկ այնուհետև... թէ կուզ... նոյն օրին ընկնեմ»։ Հայրենիքից հարիւր վերստ հեռու, նա ընկաւ այս բանտը...

Բայց ահա լուեց անորոշ զառանցանքը. փախստականի աչքերը լայն բացեցան, կուրծքը սկսեց շնչել հաւասարաչափ, միաբարախ... նրա տաք գլխում երևան եկան աւելի բերկրաւիթ ցնորքներ...

Սոսափում է դալգան... նրան ծանօթ է այդ հաւասարաչափ, մոգեկան և ազատ սոսափիւնը. նա սովորել էր որոշել անտառի ձայնը, ամեն մի ծառի խօսակցութիւնը։ Մեծափառ սոճիները հնչում են իրանց խիտ, մթին կանաչով բարձր, բարձր... եղևնիները փսփսում են ձագական և խուլ... ուրախ, պայծառ սաղարթը շարժում է ճկուն ճուղը. բարդին զողգոջում և ճքճքում է հրաշալի, երկչոտ տերևներով... Սուլում է ազատ թռչունը. առակը աշխույժ շատախօսութեամբ թռչկոտում է քարոտ ձորակի մէջ և տալգայի

¹⁾ Таѣга — ալդպէս են կոչւում Սիբիրի խիտ, անմարդակոխ և ճահճուտ անտառները։

հետախուզները ¹⁾—կրկնան կաշաղակների երամը—թուլում են տեղերով, որտեղից խիտ տալգայի միջով անցնում է փախստականը:

Կարծես տալգայի քամու ազատ հոսանքը բուրեց հիւանդի երեսին: Նա բարձրացաւ, խորը հոգոց հանեց: Աչքերը ուշադիր արտայայտութեամբ առաջ են նայում... բայց յանկարծ նոցա մէջ ինչոր գիտակցութեան նման մի բան ցոլաց... Սովոր փախստականը իւր առաջ մի արտասովոր բան տեսաւ.—բաց դուռ:

Զօրեղ բնազդումը ցնցեց ամբողջ մարմինը, որ խախտուել էր հիւանդութիւնից: Զառանցանքի նշանները արագ անյայտանում կամ խմբում էին այն մտապատկերի շուրջը, որ լուսեղ փայլով թափանցել էր այդ խոօսի մէջ. մենակ եմ... բաց է դուռը...

Միտուէից նա կանգնած էր յատակին: Բորբոք զլսի բոլոր ջերմը կարծես թափեց նրա աչքերը, որոնք նայում էին մի տեսակ հաւասարաշափ, յամառ, սարսափելի...

Ինչոր մէկը դուրս գալով եկեղեցուց, վայրկենաշափ բաց արաւ նրա դուռը... հեռաւորութիւնից մեղմացած երգի կանոնաւոր ալիքները հասան փախստականի ականջին և դարձեալ խլացան: Նրա դժգոյն կերպարանքի վրայ երևաց մի տեսակ թմրութիւն. աչքերը մթնեցան և մտքին ընկաւ հին, ցնորալի, փայփայած պատկերը. հանդարտ գիշեր... եղևնու սոսափ, որ թուխ ձղներով հովանաւորում է հայրենի գիւղի հին մատուռը... հայրենակիցների խումբը... գետի ափի ճրագները և այս երգը... Նա շտապել, փախել էր հէնց նրա մանր, որ այս բոլորը լսէ այնտեղ, իր տանը, հայրենի գիւղում... մինչդեռ, նրբանցքի մէջ, եկեղեցու դրան առաջ դեռ ևս եռանդով աղօթում էր վերակացուն:

Երիտասարդ նորակույժ հրացանն ուսին շրջում է պատի մօտով. նրա առաջ տարածւում է հարթ, ձիւնից նոր բացւած, հե-

¹⁾ Միբիւրի փախստականները պատմում են, որ խուլ տալգայի մէջ կաշաղակները երամով ուղեկցում են խիտ անտառից անցնող փախստականին: Այն ժամանակ՝ երբ օրէնքով այդ փախստականներին սպանելը արգելւած չէր. Բուրիաթ որսորդները նոցա հետևում էին կաշաղակների երամի կրկնուցով:

ռուն կորչող դաշտավայրը: Թեթև քամին վազում է դաշտի վրայով, խշխշացնում է աղշպանքը, սուլում է հին տարաշխոտների ջով և զինւորի հոգու մէջ արթնացնում է հանդարտ, տխուր մ'ամուսնք:

Երիտասարդ պահնորդը կանգ առաւ պտտի մօտ, հրացանը ցած դրեց և ձեռքերը դնելով նրա բերանին, իսկ զլուխը ձեռքերի վրայ, խոր մտածմունքի մէջ ընկաւ:

Նա դեռ ևս պարզ չէր կարողանում երեակացիլ, թէ ինչու այս եղ է, տօնի այս հանդիսաւոր գիշերին, հրացանը ձեռին, պատի մօտ, անմարդի դաշտավայրի առաջ:

Առհասարակ նա դեռ իսկական գիւղացի էր—ուամիկ. դեռ շատ բան, որ գիտէն զինւորները, նա չէր հասկանում, ուստի և իզուր չէր, որ նրան «գիւղացի» էին կանչում բարկացնելու համար: Երէկ չէ միւս օրը նա դեռ աղատ էր, տան, արտերի և իւր աշխատանքի տէրը... Իսկ հիմա, անըմբռնելի, անորոշ, անբացատրելի սարսափը հետեւելով երիտասարդ, անտաշ գիւղական գաւակին ամեն մի քաղափոխում, ամեն մի շարժմունքին, միշտ յիշեցնում էր նրան ծառայութեան խտուրթիւնը:

Բայց այդ րոպէին նա մենակ էր... դաշտավայրի դատարկ տեսքը, որ փռւում էր նրա առաջ և աղշպանքի մէջ ծածանող քամու շշուոցը նրան շնչում էին մի տեսակ անուշ նիրհ և երիտասարդ նորակոյի առաջ հանդէս են գալիս հայրենի պատկերները: Նա ևս տեսնում է հայրենի գիւղը, որի վրայից վազում է միւսնոյն քամին, և ճրագներով լուսաւորած եկեղեցին, և այն մթին եղևնիները, որ նրա վրայից շարժում են կանաչ կառարները:

Երբեմն նա կարծես թէ ուշքի է գալիս և այն ժամանակ նրա մոխրագոյն աչքերում արտափայլում է տարակուսանք. այս ինչ բան է... դաշտ... հրացան... պատ... Մի վայրկեան նա չիշում է իրականութիւնը, բայց գիշերայ քամու անորոշ շշնոցը դարձեալ հանդէս է բերում ծանօթ պատկերներ, և զինւորը հրացանին յենած՝ դարձեալ նիրհում է:

Պահնորդի կանգնած տեղից ոչ հեռու, պատի ծայրին երեւում է մի մթին իր.—Դա մարդու զլուխ է: Փախստականը նայում է դաշտավայրի ծայրում դժւարութեամբ նշմարող անտառի

սահմանագծին: Մայր-գիշերուայ ազատ, թարմ շունչը ազահաբար ծծելով, նրա կուրծքը լայնանում է: Նա ձեռքերով ցած է իջնում և հանդարտ սուրում է պատի վրայով:

Ձանգակների ուրախ հնչիւնը զարթեցնում է գիշերային խաղաղութիւնը: Բանտի կեղեցու դուռը բացւեց.— դրանը թափոր պիտի լինի: Ներդաշնակ երգեցողութիւնը ալիքներով դուրս հոսեց եկեղեցուց: Ձինւորը ցնցւեց, կանգնեց շիմ-շիտակ, ցած առաւ գրակը, որ երեսը խաչ հանէ, և այդ դուրսեան մէջ նա պապանձւեց:

Փախստականը գեանին հասնելով, արագութեամբ վազեց աղ-շորանքի մէջ:

— Կաց, կաց, սիրելի բարեկամ,— կոչում է պահնորդը սարսափահար բարձրացնելով հրացանը... Ահա, հասաւ նրա գլխին այն սարսափը, որից նա սարսուում էր, — անձեւ, սարսափելի, ի դէմս այդ մոխրագոյն կերպարանքի:

«Ծառայութիւն, պատասխանատուութիւն», վայրկենաբար մոռ-ծեց զինւորը և, բռնելով հրացանը, նշան դրեց փախստականին: Հրացանի ոտը քաշելուց առաջ նա մի խղճալի տեսքով պլշեց աչքերը...

Իսկ քաղաքի վրայով դարձեալ սլանում, շրջան է առնում եթերի մէջ ներդաշնակ, երգեցիկ և դալլալիկ հնչիւնը, և բանտի հին զանգակը դարձեալ զարկւում և զողանջում է մի կերկերուն ձայնով որպէս գնդակահար թռչնակի հոգոց: Իսկ պատի տակից ներդաշնակ հոսում են դէպի հեռու դաշտավայրը հանդիսաւոր շարականի առաջին հնչիւնները. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Եւ յանկարծ ամեն բան խլացնելով պատի տակից որոտաց հրացանի հարւածը, նրան յեռեկեց թոյլ, անօգնական մի ճիչ դառն կսկիծով, և ապա, մի վայրկեան ամեն ինչ լռեց:

Միայն անմարդի դաշտավայրի հեռաւոր արձագանքը տխուր արտունջով կրկնում էր հրացանի հարւածի վերջին արձագանքը:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

(Շարունակութիւն ¹⁾)

III

ԼԵՒՈՆԸ ՍՄԲԱՏԻՆ

Սիրելի Սմբատ! խիստ վատ տպաւորութիւն է անում վերաս
քո բերած ճառը: Ինչ նեղ աշխարհայեացք, ինչ սահմանափակ
գլուխ! Նորա այն միաքը, թէ դպրոցի հոգին կարգուկանոնն է, ինձ
հիմնովին սխալ է թւում: Դպրոցի հոգին կրթութիւնն է, ոչ թէ
կարգուկանոնը: Սա միայն մի միջոց է, որ անհրաժեշտ է կանոնաւոր
դաստիարակութեան համար: Ախալ կը լինի կարծել, թէ կարգա-
պահութիւնը և կրթութիւնը նոյնանիշ հասկացողութիւններ են:

Յետոյ ճառախօսի արամաբանութիւնը տես—պէտք է երախ-
տագէտ և համեստ լինել, որովհետեւ ազգը մեզ հաց և ուտում է
տալիս: Եւ ինչպէս է հասկանում նա համեմատութիւն ասածը?
Իհարկէ, ոչ այլ կերպ, քան Արիստոֆանը, յունաց այս տաղան-
դաւոր կատակերգ-երգիծաբանը և ծաջրացեղ ետադիմականը. «պա-
տանիները, ասում է նա, փողոցով ուսումնարան գնալիս լուռ էին
լինում, անկարգութիւն չէին անում. դպրոցում նստում էին ըստ
պատշաճին, ոտ ոտի վրայ չէին դնում և երգում էին այն երգերը,

¹⁾ Տես «Մուրճ» 1894 թ. № 3:

որ հայրերն էին երգում. ճաշի ժամանակ՝ բոխկ չէին վերցնում, որովհետև բոխկը մեծերի համար է, բարձր չէին ծիծաղում...¹⁾ Ահա դորա համեստութեան իդէալը! Ո՛չ. չուզեցինք այդ տեսակ համեստութիւն! Ընդհակառակը. թող պատանիները իրանց կենսական ոյժերը չբթացնեն և չնմանին մեքենայի: Թո՛ղ նոքա խաղան, աղաղակեն, բարձր ծիծաղեն, նոր երգեր երգեն և չկրկնեն միայն հայրերի երգածը: Թո՛ղ իւրաքանչիւր ոք Գեօթէի նման իրաւունք ունենայ ասելու. «ես մարդ եմ, և կրեցի այն բոլորը ինչ որ յատուկ է մարդուն»: Թո՛ղ զարգանան մարդու մէջ այն յատկութիւնները, որ դարձնում են նորան աշխոյժ, եւանդուն, առողջամիտ, պարտաճանաչ!

Ձեր ճառախօսի յայտնած իւրաքանչիւր միտքը սխալ է և վնասակար: Օրինակ, նորա կարծիքը բնական գիտութիւնների մասին: Ի հարկէ, ծիծաղելի կը լինէր Եւրոպայում, եթէ մէկը վեր կենար այժմ և բնագէտներին քարկոծէր: Բայց մեր մէջ դեռ շատերը կան, որ բնական գիտութիւնը սատանայական գիտութիւն են համարում: Ես զարմանում եմ: Մարդուն, որ բնութեան մէջ մի հիւլէ է, կարելի է ուսումնասիրել, իսկ մեծ բնութիւնը ո՞չ?

Եւ տես թէ ինչպէս է վերաբերում նա մեր այն գործիչներին որոնք կազմում են մեր հասարակութեան ամենաառողջ տարրը: «Խոքա փառամոլ, եսամոլ, թեթեւամիտ, մեծ խօսող կորած մարդիկ են»: Շատ անգամ ես մտածել եմ ինչ է այն բանի անունը, որ այդ ճառախօսի նման մարդկանց ուղեղը թունաւորում է, աշխարհահայեացքը աշխարհակում և աշխարհի ծաղրածուններ դարձնում նոցա? Ես եկել եմ հետեւեալ եզրակացութեան. այն բանի անունը հոգեկան դատարկութիւն է: Նոցա մէջ չկայ լոյս, նոքա չունին իդէալ, եռանդ և հասարակական գործունէութեան բուռը պահանջ. սորանից նոքա եզրակացնում են. ուրեմն այն յատկութիւնները չկան և ուրիշների մէջ, և եթէ չկան, ուստի ինչ որ անում են, շինծու է, կեղծ է, փառքի համար է, շահի համար է!... Իրանց չափով չափում են ուրիշներին:

Ձեր վերակացուի մասին էիր գրել: Դէ, ի հարկէ, դպրոցի

¹⁾ Արիստոփան. «Ամպեր»

գլուխը, կունենայ համապատասխան ձեռքեր, բնական է, որ նա ա-
նուամ է այն, ինչ որ թեկադրում է հրամանատարը: Աստ պաշ-
տոնեայի հյու ստորադրեալները նման են այն շներին, որոնք իրանց
տիրոջ պէքին նայելով կատարում են նոցա կամքը և զիտեն թէ
ինչպէս պէտք է շորժեն, որ տիրոջ հաճոյանան, ում վրայ հաջին,
որ տիրոջ պտորժելի լինի, ում առաջ պոչները շարժեն, որ տի-
րոջ պէքին քաղցր երևան: Սպասիր, Սմբատ: Շուտով մթնոլորտը
կը վարակէ և ձեր դռնապանին և արաքնոց մաքրողներին:

Հիմա գանք մեր դպրոցին: Մեր ուսումը արդէն կանոնաւոր
սկսած է: Ուսուցիչները և աշակերտները միմեանց փոխադարձ
ուսումնասիրում են: Առ այժմ աշակերտները գոհ են դասաւան-
դութեան եղանակից և այն յարաբերութիւնից, որ ցոյց են տրւում
դէպի նոցա: Մենք նոցա հետ պուք» ով ենք: Սա նորութիւն է նոցա
համար: Առաջ այսպէս չէին վարւում: «Դու, Պետրոս», «էյ, դու,
Կիրակոս, դասդ պատասխանիր»: Առաջ այսպէս էին դիմում աշա-
կերտին մեր վարձապետները, թէպէտ շատ անգամ պատահում
էր, որ աշակերտի մօրուքը ուսուցչի մօրուքից կարճ չէր լինում:
Սակայն դա նոցա մանկավարժական սկզբունքներից մէկն էր: Նոքա
կարծում էին, որ ուսուցչի հեղինակութիւնը բարձր պահելու հա-
մար անհրաժեշտ էր աշակերտների հետ «դու»-ով խօսել: Ի հարկէ,
սա չնչին բան է, բայց բնորոշ է տարբեր ուղղութեան պատկանող
մանկավարժների համար:

Մի բան, որ հիմա աչքի է ընկնում, դա հետեւեալն է: Մեր
վարչութիւնը ամենայն ճիգ և աշխատանք է գործ դնում ուսում-
նարանի առողջապահական դրութիւնը բարւոքելու: Ահա այդ նպա-
տակով գործ դրած միջոցները:

Նախ, առողջապահական գասախօսութիւններ, որ պիտի կար-
գայ մեր ուսումնարանի բժիշկը: Հէնց երէկ աշակերտների բազմու-
թեան առաջ նա կարդաց իւր առաջին գասախօսութիւնը, որի
նիւթն էր «առողջ հոգին առողջ մարմնի մէջ»: Առաջ ես չէի ըն-
դունում այդ աֆորիզմը: Միթէ քիչ կան, մտածում էի ես, առողջ
և հաստափոր վաշխառուներ և սրիկաներ, և, ընդհակառակը, միթէ
սակաւ են հասարակական հիւանդոտ, բայց նշանաւոր գործիչներ:
Բայց այժմ համոզեցի, որ խօսքը աղնութեան կամ անաղնու-

Թեան, խելքի կամ անխելքութեան մասին չէ: Առողջութիւնը չէ կարող մարդուն աւելի խելօք և առաքինի դարձնել, ոչ էլ տկարութիւնը՝ աւելի չար և յիմար:

Խօսքը մարդո՛ւ ներքին եռանդի և հոգու տրամադրութեան մասին է: Առողջապահական բարեկարգ վիճակը կարեւոր պայման է ընդունակութիւնների կանոնաւոր զարգացման համար: Այն ուսումնարանը, որ անգիտանում է սաների առողջապահական դրութիւնը, յանցաւոր է և պատասխանատու հասարակութեան առաջ: Երկրորդ միջոցը—մարմնամարզութիւնն է: «Եթէ մեզ, ասում են աշակերտները, նախօրօք չհասկացնէին, գուցէ շատերը մեզանից խոյս տային այդ տեսակ վարժութիւններից: Բայց հիմա մենք գիտենք մարմնամարզութեան նշանակութիւնը և ինքներս ուրախութեամբ ենք կատարում մեր վարչութեան պատուէրը: Մենք պարզ տեսնում ենք, որ բացօդեայ կանոնաւոր շարժումները կազդուրի, ներգործութիւն են անում մարդու վերայ: Մարմնամարզութեան դասից յետ մարդ աւելի լի կրճքով է շունչ առնում, աւելի աշխոյժ է դառնում, և աւելանում է տշխատելու եռանդը»:

Խաղալու համար մեր ուսումնարանը ունի բաւականին լայն բակ: Բայց տեսուչը կամենում է աւելի ևս ընդարձակել նրան, որովհետև այդ անելու հնարաւորութիւն կայ:

«Թող աւելի շուտ աշակերտները յոգնեն վազվզելուց, քան թէ մի քանի քայլ անելուց յետ՝ իրանց առաջ պատնէշ տեսնեն», ասաց մեր տեսուչը մի շաքաթ առաջ: Հասկանալի է այժմ թէ ինչու հիմա վերցնում են այն չինական տգեղ պարիսպը, որ քաշել էր դպրոցի վարչութիւնը տասը տարի առաջ և որը ծածկում էր հասարակութեան աչքից շինութեան երեսը: Այսպիսով բակը աւելի ևս լայնանում է, և ուսումնարանը իւր բոլոր գեղեցկութեամբ անցորդների առջև է:

Ինձ համակրելի է թւում այստեղ յարմարութեան և գեղեցկութեան ներդաշնակութիւնը:

Վերակուրի և հանդերձեղէնի մաքրութիւնը ենթակայ է խիստ վերահսկողութեան:

Սակայն դեռ կան բաներ, որ կարօտ են վերանորոգութեան. հիւանդանոցը և դասարանները: Այդ մնաց դալ տարի, ո՛րովհետև

ձմեռը առաջներիս է: Գրադարանը և Ֆիզիկանոցը աղքատ են և անխնամ թողած: Սոցա հարստացնելը և կարգի բերելը այժմ մանկավարժական ժողովի հոգսերից մէկն է դարձել:

Մեր ուսումնարանը և մեր կեանքը նորոգւում են:

Ներողութիւն, սիրելի Սմբատ, որ նամակս աւելի չեմ կարող երկարացնել. վաղւայ համար պատրաստելու դասեր ունիմ:

Քո Լ. և ո՞ն:

P. S. Հայ մի բան էլ: Ես մոռացայ գրել մեր այսօրւայ զբօսանքի մասին: Ճաշից յետ բոլոր աշակերտները գնացին քաղաքից դուրս զբօսնելու. ես էլ հետները: Երբ մօտեցանք անտառին, մեր վերակացու պ. Ստեփաննանը ասաց սաներին. «Գէ՛հ, այժմ աղատ էք»: Նոքա էլ աղատ թռչունների պէս սկսեցին թռչկոտել, աթուրմա խաղալ, երգել, սուլել և բարձր ծիծաղել...

Նոյնը:

IV

ՍՄԲԱՏՐ ԼԵՒՈՆԻՆ

Իմ անգին բարեկամ! Հազար երանիքեզ! Ձեր ուսումնարանը վերանորոգւում է, մերը քանդւում: Փանդւում է մեր ուսումնարանը, և ոչ ոք չէ մտածում նորոգելու մասին: Շինութեան ամեն մի անկիւնը անհամապատասխան է այն բանին, ինչին յատկացրած է: Բակը խիստ փոքր է հարիւրաւոր աշակերտների համար: Դասարանները՝ ցած, մութ և ցուրտ: Ուսուցչանոցում մի հատ աթոռ չկայ նստելու համար: Գրադարանը անկարգ դրութեան մէջ, գրքերը այս ու այն կողմ թափւած և փոշիով սրտած: Սեղանատուներ՝ կեղտոտ, յատակի վրայ ջրեր են թափւած, իսկ անկիւններում ոսկոր և հացի փշրանք: Ննջարանը չէ վառւում, չնայելով, որ արդէն սկսել են աշնան սառը քամիները: Հիւանդանոցում՝ յատակի արանքներից փչում է ցուրտ, քամի և մկան զարշնլի հոտ: Երթեւեկ աշակերտները զալիս են դպրոց ցնցոտիների մէջ փաթաթւած, մատները կօշիկներից դուրս պրծած. ամառով են մօտենում զրատախառնին, որովհետեւ պատասխան զարաիկի տակից դուրս է եկել սպիտակը: Կիրակուրը աղքատիկ է և անմաքուր: Մինչև այժմ

երկու անգամ՝ ճաշ են տուել որդեգիրներին՝ որթնած ծիրանից պատ-
րաստուած: Պատահում է, որ դուրս ենք գալիս սեղանատնից չկշտա-
ցած: Յանուն մեր բարեկամութեան, աղաչում եմ, չափազանցու-
թիւն չհամարես այս բոլորը, այլ մերկ իրականութիւն:

Ուսուցիչը երբեմն ստիպւած է լինում գրաւոր դասը դարձ-
նել բանաւոր, որովհետեւ մէկը չ'ունի մատիտ, միւսը կորցրել է
գրիչը, երրորդը և չորրորդը չ'ունին թանաք...

Մեր այս չարաբաստիկ դրութեան պատճառը մեր տեսչի եր-
կու յատկութիւններն են. «եօլա տանել» և «խնայողութեամբ
վարել»:

—Սեղանատան մատակարարին հարկաւոր է փոխել. նա կեղ-
տոտ է, — յայտնում է վերակացուն:

—Հազիւ ենք ծարել դրան, այն էլ այնպիսի էժան զնով.
եօլա տարէք, — պատասխանում է տեսուչը:

—Դասագիրքը պէտք է փոխել. ես ուրիշ դասագրքով պիտի
անցնեմ առարկաս, — յայտնում է ուսուցիչը:

—Մինչև հիմա հին դասագրքով էին անցնում. եօլա տարէք,
պատասխանում է տեսուչը, — ազգի փողի հետ խնայողաբար վար-
ւեցէք:

—Գրադարանը աղքատ է. ընթերցանութեան ամենակարևոր
գրքերը չկան, — յայտնում է դաստիարակը:

—Դեռ եօլա տարէք, տեսնենք, — պատասխանում է տեսուչը:
Ահա այսպիսի կոմեդիա է կատարւում մեր դպրոցում:

Առն բան պէտք է եօլա տանել և խնայողաբար վարել ազգի
փողի հետ: Միայն ինքը տեսուչն է, որ չէ կարող եօլա զնալ և,
փոխանակ երկու հազարի, պահանջում է տարեկան չորս հազար
մանէթ, չնայելով, որ ոչ կին ունի, ոչ որդի:

Յետոյ, սիրելիս, «դու» և «դուք»-ի մասին ես գրում: Այդպիսի
կոչականներ գոյութիւն չ'ունին մեր ուսումնարանում: Այստեղ սո-
վորական գործածելի կոչականներն են. «էյ, թարաքամա», «էյ,
ապուշ», «չիմար», «լիրք», «անզգամ», «արջի քոթոթ» և այլն այլն:

Սակայն այս բոլորը դատարկ բաներ են մեր տեսչի համար:
Նորա իդէալն է — կարգապահութիւն և կրօնական-բարոյական կըր-
թութիւն:

— Կարգապահութիւն, պարոններ, կարգապահութիւն! Համեստութիւն, պարոններ, համեստութիւն!

Սիրելի բարեկամ! Անցեալ կիրակի մի թշառ դէպք տեղի ունեցաւ մեր ուսումնարանում, որ ինձ շատ վշտացրեց: Նա բնորոշ է մեր դպրոցի կարգ ու կանոնի համար: Հինգերորդ դասարանի մի աշակերտ իրան թոյլ էր տուել համեմատել եկեղեցու սեղանը թատրոնի բեմի հետ, ասելով թէ այնտեղ «շատ բաներ չի շեցնում են թատրոնը»:

Մեր վերակացուն, ոչ այն, որի մասին գրել էի անցեալ անգամ, այլ ուրիշը, իսկոյն յայտնում է տեսչին այդ խօսքերը: Բայց տեղը եկաւ, մի քանի խօսք այս վերակացուի մասին: Սա մի հնացած մարդ է, իւր պաշտօնում փտած, մօտ 60 տարեկան, երբեմն կաթոլիկ, այժմ լուսաւորչական: Ախ, մի տեսնէիր նրան! Ինչ բարի աչքեր, ինչ քաղցր ժպիտ, ինչ հայրական ձայն! Բայց այս արտաքին բարութեան և հեղութեան տակ, եթէ իմանայիր, ինչպիսի նենգ, շողքորթ, գծուծ հոգի է թագնւած: Օ, սաները նորան լաւ են ճանաչում. իզուր չեն անունը կնքել «աղւէս»: Եթէ նա սիրալիր դէմքով մօտեցաւ քեզ և հարցրեց, օրինակ, առողջութիւնդ, իմացիր, որ բանդ վատ է, և ոտիդ տակը փորւած: Եթէ մի խումբ աշակերտներ մտերմական խօսակցութիւն են ունեցել, կարող ես հաւատացած լինել, որ նրան յայտնի է, թէ ինչի մասին են խօսել: Այդպիսի դէպքում նա կամ ինքն է ականջ դնում կամ նրան լրտեսում են կորած և թշուառացած աշակերտները, որոնց թիւը, բարեբախտաբար, շատ քիչ է մեր դպրոցում:

Ահա մեր այս փարիսեցին, առանց նախապէս յանդիմանելու յանցաւորին, եթէ այստեղ յանցանքի մասին խօսք կարող է լինել, խեղճ աշակերտի արտասանած անմեղ խօսքերը հասցնում է տեսչի ականջին: Նա այդ անում է այն պատճառով, որ լրտեսելը նորա սովորութիւնն է, և այն նպատակով, որ արժանանայ տեսչի քաղցր նայեցեցին և շնորհակալութեան:

Մեր պատուելի աշակերտի խօսքերը համարեց «սրբապղծութիւն» և ասողին—առնբարիշտ, անպարկեշտ և անուղղելի: Նա զայրացաւ, ոտները գետնին տուեց, զոցեց ականջները, խլացրեց խղճի ձայնը: Նա դարձաւ Դրակոն, սահմանած պատիժը եղաւ Դրակոնի պատիժ: Նա

Նոյն երեկոցեան սաների սիրելի ընկերը այլ ևս չկար մեր մէջ: Տեսուչը կանչել էր նորան և ասել. «դու արձակած ես»: Ապա պատուիրել էր «աղւէսին» ճանապարհ դնել նորան: Երբ նա ստացաւ քարոտողարից իւր վկայականները և եկաւ մեզ մնաք բարով ասելու, մենք չկարողացանք զսպել մեր արտասուները:

Այս բանը իմացաւ ուսուցչական խումբը և անարգ լռութիւն պահեց: Ոչ բողոք, ոչ միջամտութիւն: Ուսուցիչները չպահանջեցին որ մանկավարժական ժողով գումարելի՝ աշակերտի յանցանքը քննելու համար: Նոքա միայն լաւը կարող էին ասել արձակած աշակերտի մասին, սա ճանաչւած էր թէ առաջադէմ թէ գերազանց վարքի տէր:—Նոքա մի աստիճան ևս ընկան սաների աչքում: Ելին նշանակութիւն կ'ունենայ մանկավարժական ժողովը եթէ նա խաղալիք է Դրակոնի նման մարդու քմահաճութեանը?

Ել ինչպէս յարգեն սաները նոցա, երբ նոքա լռեցին այն ժամանակ, երբ որ քարերը պատրաստ էին աղաղակելու!

Ափսոս տղայ, նա զնաց ընդ միշտ: Բոլոր սաների մէջ նա աչքի էր ընկնում իւր ընդունակութիւններով, իւր սրամտութեամբ, իւր պարզ և անկեղծ բնաւորութեամբ: Միշտ հիացնում էին սաներին նորա պիտրձերը. «դքա մանր երգիծաբանական ոտանաւորներ էին՝ սլաքները ուղղւած Դրակոնի, վերակացունների և ուսուցիչների դէմ: Եթէ նա կանոնաւոր կրթութիւն ստանար, ապագայում մենք կ'ունենայինք մի տաղանդաւոր երգիծաբան»:

Ընկերները բարեխօսեցին, աղաչեցին—չօգնեց, ոչինչ չօգնեց: Դրակոնի սիրտը քար էր դարձել. նա մնաց անողոր:

Ուր պիտի գնայ այժմ այդ պատանին? Աղքատ ծնողների զաւակը հազիւ էր կարողացել յաջողացնել իւր ուսման գործը: Նա եկել էր հեռու գաւառից, պատրաստուել էր առանց ուսուցչի առաջնորդութեան և միայն օգնութեամբ մի քանի ընկերների մօտէլ էր երրորդ դասարանը: Ընդունւելուց յետ եկեղեցի էր գնացել, մո՛ւ վառել, ծուներ իջել, աղօթել: Երկու տարի մնաց ուսումնարանում, և այսօր փալասի նման դէն զցեցին այդ ընդունակ աշակերտին:— Ինչ լուր պիտի տանէ նա իւր պառաւ մօրը? Կը դիմանայ նա իւր որդու անբախտութեանը? Ինչպիսի մարդկանց շրջան է սպասում նորան?...

Ասում են, որ մեր Դրակոնը նոր ծրագիր է պատրաստում սաների կրօնական-բարոյական դիրքը բարձրացնելու համար:

Ք ո Ս մ բ ա տ :

(Վը յարունակւի)

*
* *

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Յրեր են գալիս, և օրեր գընում,
Մեզ միշտ բերելով ցաւեր նորանոր.
Եւ նա է կեանքի յարատե կըռուում
Անվախ մարտնչում, որպէս քաջ զինուոր,

Ով ջերմ յոյսերով սիրտը բորբոքած՝
Ուխտել է լինել մշակ աշխարհի.
Ապրել—սուրբ գործի հերոս անձնուրաց,
Մեռնել—մարտիրոս սուրբ զաղափարի...

1894 թ. 20 մարտի. Մոսկւա:

ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱԴՈՒՆՔԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ԹՐԶԱՆ ԱՌԱՋԻՆ)

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹)

V

Հալկազանց ժամանակ ծագած իրաւունքները: Յաղթութեամբ կամ ուժով առած երկիրները: Նրկրի և կալածքի իրաւունքը: Հարկի ծառայութիւնը: Իրաւունք գերիների վերայ, լուծ: Հալկազանց ցեղերի ներքին չարարերութիւնները: Ծառայութիւնը հպատակութիւնն է: Այդ իրաւունքների բացաարութիւնը Արշակունիսանց ժամանակ: Ծառայութեան տեսակները նոյն ժամանակամիջոցում. սեպականութիւն, ստրուկ, սպառաւոր, գեղջուկ: Հալկազանց ժամանակ ծագած երեք տեսակ՝ տէրութեան, իշխանութեան և սեպականութեան՝ իրաւունքները:

Ինչպէս տեսանք, Հալկազանց ծնունդները հէնց սկզբից ամեն մէկը որոշ երկիր էր բռնել. ցեղապետների կարգադրութեամբ դորանք իրար մէջ սահմաններ էին որոշել: Իրանց բռնած տեղերը իրանցն էին համարում և իբրև ժառանգութիւն այդ ունեցածը անցնում էր յետագայ սերունդներին:

¹) Տես «Մուրճ» 1894 թ. № 1, 2 և 3.

Այդ ծնունդները հետզհետեւ իրանք էլ նոր ցեղերի էին փոխւում: դրանց մէջ լինում էին թէ հարազատ և թէ մերձաւոր ցեղեր: Ազնականները, ցեղապետները և ծնունդների զլուխ կանգնածները հարազատներիցն էին: Երկիրը ժառանգելու իրաւունքը մնում էր թէ հարազատ և թէ մերձաւոր ցեղերի ձեռին: Բայց, բացի ժառանգութեան իրաւունքից, կար և կալւածքի իրաւունք: Հէնց առաջի քայլափոխում Հայկը հնազանդեցրեց տեղացոց, շինեց «տուն բնակութեան կալւածոց» և այդ տեղերը տւաւ Կադմոսին: Արմենակի բնակութեան տեղն էլ նստած կային տեղացիք, և Արմենակը իր բռնած տեղը նոյնպէս կալւածք է անւանում:

Արժանի է ուշադրութեան, որ Հայկազունը միայն իրանց այս բռնած տեղերն էին կալւածք անւանում, ուր իրանցից առաջ բնակւած էին տեղացիք, կամ օտար ցեղի մարդիկ. և որովհետեւ ցեղերը հետեւում էին մէկը միւսի վերայ բռնաւալու, յայտնի բան է որ Հայկազունը էլ էին բռնանում այն տեղացոց վերայ, որոնք իրանց հնազանդւել էին և իրանց վերաբերեալ օտար էին. հէնց այդ պատճառով դրանց բնակւած տեղը իրանց կալւածքն էին համարում: Թէ ինչ յարաբերութիւններ էին ծագում Հայկազանց և օտարածիւնների մէջ, երբ առաջիկները բռնանում էին վերջիների երկրի վերայ, կը տեսնենք Խորենացու հետեւեալ հատւածներից:

Արամի օրով, օրինակ, Մեղացի՞ Նիւքարը... «զսահմանս Հայոց ծառայեցոյց ամս երկուս... Արամ... զՆիւքարն... ձերբակալ արարեալ... և զաշխարհն նորա... ի ծառայութեան հարկի կալաւ» (Նոր. եր. 96): Միւս տեղ ... «Բարշամ անուն՝ սաստկագոյն նեղեալ հարկաց խստութեամբ՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր սունէր... Արամը սրան հալածում է...¹⁾ իսկ զմեծ մասն դաշտացն Ասորես-

¹⁾ Արամը պատահում է Հալատտանի սահմաններում մեղացի երիտասարդներին, որոնց առաջնորդում էր Նիւքար ոմն, Մադէս կոչմամբ—սա... երկու տարի ծառայեցրեց իրան մեր երկիրը: Արամը... գերի բռնելով նոյն ինքն Նիւքարին... իսկ նորա աշխարհը... հարկի տակ դրեց (40). Նա գտնում է իւր երկրի մի ապականիչ, Բարշամ անունով, ... Սա իւր շրջակայքը սաստիկ նեղացնելով խտտ հարկերով, անապատ էր դարձնում բոլոր այն տեղերը... Արամը երկար ժամանակ հարկի տակ պահեց Ասորեստանի դաշտերի մեծ մասը (42). ալստեղ դուրս է գալիս նորա (Արամին)

տանի կալաւ ի ծառայութիւն հարկի... Արամ բազում ժամանակս (Խոր. 47): Պատահէ նմա (Արամին) Պաշապիս, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց... զՊոնտուն և զՈվկիանուն: Որում ի դիմի հատեալ վանէ... Եւ ինքն թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւրմէ, և բիւր մի ի զօրաց իւրոց ի վերայ աշխարհին... Ընդ նմին օրինակի ի տեղեացն աշնոցիկ մինչև ցբուն իւր սահմանն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որ երկրորդ և երրորդ անլանեցան Հայք, այլ և չորրորդ (Խոր. եր. 48, 49):

Այս օրինակներից երևում է, որ երբ օտարն էր բռնանում հայոց սահմանների վերայ, նա հարկով էր ծառայեցնում, կամ նեղում այդ տեղի բնակիչներին կամ ժողովրդին:

Երբեմն այդպիսի հարկով նեղացնելը այն աստիճան խիստ էր լինում, որ այդպիսի տեղերը անապատ էին դառնում: Հաւանական է, որ այդպիսի տեղերում օտարը իր ուժի չափ տեղացիներից առնում էր նոցա կայքը, անունները և կարելի է մինչև անգամ՝ դրանցից գերիներ էլ էր վերցնում: Հայերը նմանապէս բռնանալով օտարի երկրի վերայ, դրանց հարկի ծառայութեան տակ էին պահում: Սիսական և Կադմեան ցեղերը, որոնց Արամը յանձնել էր արևելեան և հարաւային նւաճած կողմերը, հաւանական է, որ այս եղանակով էին վարւում այն տեղերի օտարածիկների հետ:

Երկրորդ, երրորդ և Չորրորդ Հայք անւանեալ տեղերի վերայ առաջ ուրիշներն էին բռնացած: Հայերը դրանց վանելով, դրանց տեղն են բռնում: Հայ բնակիչը կամ հայ շէնը ամայի տեղերում է նստում, իսկ զօրքը կողմնապետի առաջնորդութեամբ մնում է այդ տեղերը պահպանելու: Խորենացին ցեղը և գաւնդը շատ տեղ չի զանազանում, վասն որոյ գունդ, ցեղ և կամ զօրք մեր կարծիքով միևնույն նշանակութիւնը պիտի ունենային: Ուրեմն զօրքը կամ ցեղի հարազատ մասը կողմնապետի առաջնորդութեամբ կալաւքի

առաջ պատերազմով... Պաշապիս... որ տիրապետել էր սոյն աշխարհին, երկու մեծամեծ ծովերի — Պոնտոսի և Ովկիանոսի — մէջ գտնւած բոլոր երկրին: Գալով սորա վերայ, Արամը քչում է նորան (դէպի ասիական ծովի մի կողմին)... և թողնելով իւր ազգից մի ոմն Մշակ անունով 10,000 զօրքով այն աշխարհին վերակացու... Այս կերպով, աշտեղից մինչև իւր բուն սահմանները, որոնք կոչւեցան Երկրորդ, երրորդ, յաւ Չորրորդ Հայք:

իրաւունք էր ձեռք բերում, բռնանալով նոր երկրի վերայ. իսկ իրանց շէնն էլ այդ ամայի տեղերը բռնելով՝ ժառանգում էր:

Հետեւապէս այդպիսի նոր տեղերի վերայ բռնանում էին Հայ-կազեաններին հարազատ ծագումն ունեցողները և, ինչպէս Վաղմուսը և Արմենակը, այդպիսի տեղերը իրանց կալածքն էին համարում:

Այլ էր լուծը: Ահա ինչ է գրում Խորենացին դորա մասին: Տիգրանը ...աւրանց կացեալ զլուխ, և արութիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց. և զլնդ լծով կացեալսս՝ լծատերս և հարկապահանջս կացոյց բազմաց (Խոր. եր. 75) Լուծը հարկի ծառայութիւնը չէր: Հարկով ծառայեցնում էին օտար ցեղը, երբ նորա երկիրն էին գրաւում և իբրև գերի չէին վերցնում նրանց: Բայց Տիգրանի ժամանակ մի ամբողջ ազգ և կամ ցեղ գերի բերին: Յաղթողի յարաբերութիւնը իրանց վերաբերեալ այլ էր և, կարծես, լուծ խօսքով էր որոշւում: Այդ գերութեան մասին մի թեթև զաղափար տալու համար, այստեղ առաջ կը բերենք Խորենացու հետեւեալ հատւածը: «Իսկ զԱնոյշ զառաջին կիսն Աշդահակայ և զբազումս ի սերմանէ Աշդահակայ աղջկունս՝ հանդերձ պատանեկօք և այլ բազում գերեօք, որչափ թէ աւելի քան զբիւր մի, բնակեցուցանէ յարևելեաց ուսոց մեծի լերինս՝ մինչև ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Դաժգոյնք, և որ այլք առեգերը գիտոյն դաստակերութք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէպ ամրոցին Նախճաւանու. և զերիս աւանսն զԽրամ և զՋուղայ և զԽոշակունիս: Իսկ ի միւս կողմանէ գետոյն զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդանական, մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանայ» (Խ. եր. 86, 87) ¹⁾

«Լուծ» մեր լեզուով նշանակում էր ծանր բռնութիւն, չարաչար

¹⁾ Իսկ Անուշին, Աժդահակի առաջին կնոջ և նորա ազգից ուրիշ շատ աղջիկներ պատանիներով և ուրիշ գերիներով, տասն հազարից աւելի, Տիգրանը բնակեցրեց մեծ սարի արևելեան կողմում մինչև Գողթնի սահմանները, այսինքն Տամբատի, Ոսկիողի, Դաժգոյնքի մէջ, և գետի ափի մօտ ուրիշ գիւղերի մէջ, որոնցից մին է Վրանջունիք, մինչև Նախիջևան ամրոցը: Նոցա տալիս է նոյնպէս երեք քաղաքներ, Խրամ, Ջուղայ և Խոշակունիք, իսկ գետի միւս կողմից տալիս է բոլոր դաշտը, որը սկսւում է Աժդանականից մինչև նոյն Նախիջևան ամրոցը: (Խ. ծ. վ. Ս. եր. 73—74):

նեղութիւն և ալլն և մինչև անգամ անասուններին էր վերաբերում: Յատնի բան է, յաղթողը կարող էր գերիներին աւելի խիստ և չարաչար նեղել և լուծի տակ պահել, քան թէ նրանց, որոնք թէև յաղթւած էին, բայց գերի չէին ընկած: Ասորիները յաղթեցին Հայերին և հաւանական է որ սրանց հարկի ծառայութեան տակ դրին և ոչ թէ լուծի, որովհետև հաջերը շարունակում էին իրանց առաջնորդներով կամ նահապետներով կառավարել: Արամը և Արան Նինոսից և Շամիրամից երկրորդական պատիւ ունէին ստացած: Արայ Գեղացիկի որդի Արան՝ Շամիրամի կողմից կարգւած էր մեր աշխարհի վերակացու (Ն. 66): Անուշաւան մեր երկրի հարկը ժողովելով՝ կառավարելու իրաւունքն էր ստացել (էջ 67) և ալլն:

Այնու ամենայնիւ ասորիները, ինչպէս երևում է Վանայ արձանագրութիւններից, շատ էին նեղում հայերին, մինչ հայ ցեղապետները և առաջնորդները սրանց ժամանակ կառավարողներն էին: Պարոյրը, ինչպէս գիտենք, անկախութեան հասաւ և մեր նախարար էր անւանւում:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ յաղթողը յաղթւածի երկրի, աշխարհի կամ սահմանների վրայ մի տեսակ երկրի կամ կալւածքի իրաւունք էր ստանում, որով հարկի ծառայութեան տակ էր պահում այդ յաղթւած ժողովրդին:

Իայց գերի բերած ժողովրդին լուծի, այսինքն չարաչար հարստահարութեանց, տակ էին պահում:

Այսպէս վարւում էին Հաչկազունք օտարների հետ, երբ դրանց յաղթում էին, դրանց երկրի վրայ կալւածքի իրաւունք էին ստանում, իսկ երբ գերի էին բերում, լուծի և ստրկութեան տակ էին պահում:

Դառնանք և քննենք Հաչկազանց ներքին կեանքը: Յեղապետներին և գլուխ կանգնածներին վերաբերեալ միւս ցեղակիցները, կարելի է կարծել, հպատակներ էին: Տիգրանը, օրինակ, «յուդարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծ ամբօխիւ ի Հայս, յաւանն զոր շինեաց իւրով անւամբ Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ» (Ն. եր. 86): Սիսակը հօրից ստացաւ «ծառայս անձինս բազումս»: Սիսակը և Տիգրանուհին գլուխ կանգնեցան ոչ թէ յաղթւած, այլ իրանց ժո-

դովրդի վերայ, որը ծառայութեան պարտականութեամբ էր կապ-
ւած սրանց հետ: Նիւթերի սակաւութիւնը մեզ թոյլ չի տալիս
մանրամասն կերպով պարզել այդ յարաբերութիւնը Հայկազանց
հարստութեան ժամանակ: Այս պատճառով հարկ ենք համարում
մի հայեացք ձգել թէ ինչ էին նշանակում «հարկի ծառայութիւնը»,
«ծառայութիւնը» և «լուծը» Արշակունեաց ժամանակ: Կարծում ենք
այդ առարկաները աւելի կը պարզեն, երբ կը քննենք դրանց յա-
ջորդող կերպարանափոխած աստիճանները և յետագայ եղածների
օգնութեամբ կը հետեւենք նկարագրել այդ առարկան:

Արշակունեաց ժամանակ կար «ծառայութիւն», «ծառայութիւն
վաստակի», «հարկի ծառայութիւն», «ստրկութեան ծառայութիւն»
«սպասաւորութիւն» և այլն: Ծառայութիւնը կամ վաստակի ծառայու-
թիւնը՝ հպատակութիւնն էր: Այդպիսի ծառայութիւնը մի տեսակ
պաշտամունք էր, զլիսաւորապէս կրօսերից մեծին, կամ թագաւո-
րին: Հետեւեալ օրինակները կարող են աւելի պարզել այդ:

Աղձնեաց բռեշխ Վաղինակ Սիւնին ...հանդերձ աշխարհաւն
և ամենայն ուժովն կայր բղեաշին Վաղինակ ի ծառայութիւն ար-
քային հանապազ» (Փ. եր. 19) ...«մի ոմն ի նախարարաց մեծամե-
ծացն, Մերութան անուն Արծրունի... չոգաւ եկաց առաջի թագա-
ւորին պարսից Շապուշ, և զներ ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւի-
տեան ծառայ լիցի նմա» (Փ. եր. 118): Հայերը նեղանալով իրանց
թագաւորից ցանկանում էին Շապուհին ծառայել չզի ինա ձեռս
տացցեն, և զնա պաշտեսցին և նմա միամտութեամբ ծառայեսցին և
տացեն նմա աշխարհս հայոց (203): Նախարարները գրում են Յազկեր-
տին՝ «և հարքն մեր և հաւքն հարցն մերոց կային ի ծառայութեան
վաստակս և սիրով կատարէին ամենայն հրաման բանին նորա և
յայնց ժամանակաց մինչեւ քո հարենի աթուղ» և մենք զայն ծա-
ռայեսցաք, բայց քեզ լաւազոյն քան զաւաջնոյն (Եղիշէ 84. 85):
Կոստանդինը թագաւորեցնում Խոսրովին և գրում է՝ «մեզ ծառա-
յեսցիք միամտութեամբ (Խորենացի երես 283): Ներսէսի ձեռքով
Արշակը պաշման է կապում նախարարների հետ՝ «թագաւորն վա-
րեսցի ուղղութեամբ և նոքա ծառայեսցին միամտութեամբ» (Խո-
րենացի, երես 342): Այս օրինակներից մենք տեսնում ենք, որ ծա-
ռայութիւնը այն յարաբերութիւնն էր, որ ծագում էր տիրոջ և

Հպատակի մէջ: Ծառայութիւնը կարող էր լինել և յաւիտենական: Նախարարները, բզեշխները, իբրև Հպատակներ, ծառաներ էին համարուում: Ծառայութեանը կարելի էր ենթարկել աշխարհով և ուժով: Հպատակի գլխաւոր պարտականութիւններից մէկն էր միամըտութեամբ ծառայելը: Հպատակի պահանջն է, որ տէրը վարել ուղղութեամբ: Օտար տէրերին ծառայելը աւելի ծանր էր, մանաւանդ հեթանոսներին: Յունաց կայսրը գրում է պարսից թագաւորին «Թէ կարացես յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն ես ի թիկունս ոչ եկից նոցա»: Շապուհը գերելով երկիրը և յետ դառնալով «յերկրին հայոց ոստիկանս և վերականգնու թողին ի ծառայութիւն մօտնել զմնացորդս երկրին»: Արշակը ցաւ համարեց ծառայել քրիստոնեայ թագաւորին «և ոչ յօլովեց իշխել և մօտնել ընդ լծով հեթանոսաց» (Ն. 347): «Թող ծառայեսցուք թագաւորին յունաց, կայցուք ի հնազանդութեան իշխանութեան թագաւորին յունաց» (Փ. 127):

Սուրբ Ներսէսը պատասխանեց զանազան դասակարգերի ներկայացուցիչներին, որոնք ցանկութիւն յայտնեցին փոխանակ Արշակին, ծառայել պարսից թագաւորին թէ «... Զի ամենեքեան դուք կեցեալ էք ցազգէդ Արշակունեաց, ոմանք ի ձէնջ գաւառատեարք լեալք ի նոցանէ և ոմանք մեծամեծ աշխարհաց, ոմանք աւագ աւանաց գեղից և զանձուց տեարք լեալ էք և պէսպէս դաստակերտաց, զի թէպէտ և առ արարիչն Աստուած յանցաւոր իցեն պիղծ ազգն Արշակունեաց, սակայն զձեզ կեցուցեալ զամենեսեան և յաղբոց թոթափեալ է, զան գործով, զան պառուով, զան իշխանութեամբ, զան գործակալութեամբ, և դուք... կամիք անկանել հեթանոսաց ի ծառայութիւնն... գուցէ բարկացեալ Տէր Աստուած ձեր, և խլեսցէ զձեզ արմատանի, և մատնեսցէ զձեզ հեթանոսացն ի չար ծառայութեան, սորկութեան մինչև յաւիտեանս, և ոչ երբէք բարձրի լուծն ծառայութեան ի ձէնջ: Եւ բողոքէք դուք առ տէր, և նա ոչ լսիցէ ձեզ, վասն զի անձամբ անկաք դուք ի ծառայութիւն հեթանոս տէրանց և անասուած անգէտ մարդկան» (Փ. 137, 138): Օտար տէրերին ծառայելը նկարագրում է մութ գոյներով և կարող է դառնալ մինչև անգամ լուծ: Օտարը ստիպմամբ է ծառայութեան տակ ձգում: Նախարարները գլեցին Յազկերտին թէ՛ «սիրով

էինք կատարում քո ամեն հրամաններդ և վաստակի ծառայութեան տակ էինք: Սուրբ Ներսէսը ասում էր, որ Արշակունեաց ծառայելով մերոնք պատուի, իշխանութեան գործակալութեան և այլ իրաւունքների էին արժանացել, բայց փոխելով այդ ծառայութիւնը՝ կարող են ընկնել հեթանոսաց չար ստրկութեան ծառայութեան տակ:

Ասածներիցս մենք տեսնում ենք, որ ծառայութիւնը գլխաւորապէս տիրոջ և հպատակի մտքով է հասկացւում, միայն թէ եթէ տէրը օտարն է՝ այդ տեսակ ծառայութիւնը կարող է մինչև անգամ փոխարկւել չար ստրկութեան ծառայութեան. ծառան կամ հպատակը հողի, կալւածքի, սեպհականութեան իրաւունքից զուրկ չէր: Նա մինչև անգամ կարող էր, նախարար, բզեշխ և ազատ դասակարգի մարդ լինել:

Բայց այլ էր սպասաւորութեան ծառայութիւնը, ուր մարդը, ինչպէս կը տեսնենք, իր հողով, կայքով և անձնաւորութեամբ պատկանելիք էր տիրոջը: Այլ էր ևս հարկի ծառայութիւնը: Այդ դէպքում, ուղիղ է, ծառան զրկւած չէր իւր հողից, կայքից և այլն, նաև դորա անձնաւորութիւնը պատկանելութեան առարկայ չէր, բայց դա ենթարկւած էր տիրոջ կամայականութեան. հարկով ծառայեցնում էին այն երկիրները, որոնք սրով էին գրաււած, կամ զրաււած էին յօժարութեամբ և այլն:

Վերջին Արշակունիների ժամանակ երկիրները կարող էին լինել «քսակագին», «պարզեական» և «հայրենիք»: Երկրի տէրը ժողովրդից կարող էր առնել պողի տասանորդ, մուտ, ռոճիկ և այլ տեսակ հարկեր, և այդ տեսակ յարաբերութիւնները հարկի ծառայութիւններ էին անւանւում: Ուր ժողովուրդը հարկի ծառայութեան տակ էր, դորա երկիրը տիրոջն էր համարւում: Մի օրինակ բերելով այստեղ կը բաւականանք «Հարկանէր և Յնգեղ տունն զբազումս և հանէր ընդ սուր, բայց աշխարհն զի ոստան արքունի լեալ էր վաղ, բնակիչք զաւառին և ինքեանք կային ի հարկի ծառայութեան» (Փ. 177):

Ուրեմն ծառայութիւն նշանակում էր հպատակութիւն. երբ այդ հպատակութիւնը օտար տիրոջն էր վերաբերում՝ վաստակի ծառայութիւն էին ասում:

այդ Երբ տէրը յաղթութեամբ էր ձեռք բերել իր հպատակի երկիրը և կամ այդ երկիրը պարզեցական և քսակագին և կամ հայրենիքն էր, նա ունենում էր և իրերի իրաւունք. իսկ ժողովուրդը հարկի ծառայութեամբ էր պարտաւորւում:

Աւելի վատթար էր ստրկութեան ծառայութիւնը. այս ծառայութիւնը լծագիր է դարձնում մարդուն: Սպասաւորութեան ծառայութեան մէջ մարդը իւր կաշքով, ունեցածով, հողով և անձամբ պատկանելիք էր:

Մի սովորական երևոյթ էր Հին-Հայաստանում ունենալ մարդու վերայ սեպհականութեան իրաւունք: Մարդու կեանքը, նորա ընտանիքը, կաշքը և այլն կարող էին պատկանել միւսին: Ահա և մի քանի օրինակներ: Արշամը տալիս է Հերովդէին խնդրած զործաւորները՝ հազարաւոր արհեստաւորներ (Խ. 196): Պակարոսը Ռշտունեաց նահապետ Պարզափրանին «խոստանալ հինգ հարիւր կին զեղեցիկ և հաղար քանքար ոսկոյ» (Խ. 135), եթէ վերջինս նորան օգնի իր նպատակին հասնելու համար: Աղանից թագաւորը «խնդրեաց զմանկականն սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեան 1000 երգ, առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ» (էջ 402):

Տրդատը հրամանագրում է, որ եթէ մէկը չերկրպագի մեհենաց ճև տուն և կեանք և արարք և ստացւածք և զանձք այնոսիկ լիցի, որ զայնոսիկ ի մէջ ածցէ» (Ագ. 35):

Հէնց այստեղից մենք տեսնում ենք, որ զանազան պատճառներից էր կարող մարդու անձնաւորութիւնը պատկանելութեան առարկայ դառնալ: Մարդու կարող էին պարզեւել և տալ: Յանցանքների պատճառով դորան կարող էին պատկանելութեան առարկայ շինել և այլն: Գլխաւորապէս այդ տեսակ սեպհականութեան իրաւունքը առաջ էր դալիս գերի բերելու սովորութիւնից: Գերութիւնը մի սովորական երևոյթ էր թէ Հայկազանց ժամանակ և թէ ևս առաւել Արշակունեանց ժամանակ:

Կռիւները հէնց կարծես գերի առնելու համար էին մղում: Կռիւների ժամանակ աւերում էին մէկը միւսի երկիրը. կոսո-

րում էին՝ գլխաւոր չափահաս արանց, իսկ մնացածներին, ում կարող սնում էին, գերի էին տանում իրանց աշխարհը:

Մուշեղը, օրինակ, «զամենայն երկիրն դաւառացն Ատրպատճայն աւերէր, և առնոյր գերէր բազում գերութիւն»։ ինչնը նա անում էր Նուշերական աշխարհում, որպէս և Կորդւաց, Տմորեաց, Մարաց երկիրներում, Արցախում, Աղանքում, Կազբից, Վրաց երկիրներում և Աղձնիքում (Փ. 175—178)։ «Ձայր ի չափ հասեալ առհասարակ կոտորեն, և զայլ ամենայն ի գերութիւն վարէին (Փ. 48)։ Տիգրան զգերութիւն Հրէից նստուցեալ ի յԱրմաւիր և ի յաւանին Վարդգիսի» (Խ. 131)։ Թագաւորները թէ իրանց էին յատկացնում գերիներին և թէ ընծայում էին վաստակաւոր և պատերազմներում քաջութիւն ցոյց տուող մարդկանց:

Տրդատը, օրինակ, մասն էր հանում պատերազմից բերած աւարներէր։ «նաև $\frac{1}{5}$ ևս հանէր յամենայն մեծամեծ աւարացն, և մեծամեծ պարգև քրմացն շնորհէր» (Աղ. 27)։ Արտաշէսը երուազից գերի բերած ծառաներին պարգևում է Սմբատին՝ «Եւ ապա աւար առեալ զգանձսն երուազայ և զծառայս անձինս 500—բերէ Արտաշիսի։ Եւ Արտաշէս պարգևէ Սմբատայ զծառայսն երուազայ» (Խ. 185)։ Այսպիսով գերիները դառնում էին թէ թագաւորի և թէ մասնաւորաց սեպհականութիւն։ Գերիների նստելու տեղը՝ գիւղ, դաստակերտ և ձեռակերտ էր անւանում։ Մարաց գերութիւնը Տիգրանը գլխաւորապէս նստացրեց դաստակերտներում։ Սմբատը երուազից գերի բերածներին նստացնում է Բագարան անւանեալ ձեռակերտում։ «Յայնժամ Սմբատայ զծառայսն երուազայ զոր գերեացն ի Բագիրանէ, տարեալ բնակեցուցանէ... ինչն անուն Բագարան կոչեցեալ զձեռակերտն» (Խ. 186)։ Վարդգէսի աւանին վերայ գիւղ անունը աւելացաւ, երբ այդտեղ նստացրին Հրէից գերութիւնը։ «Այս երուանդ... զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի, շինեաց դաւանս զայս, յորում և Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութիւն Հրէից, որ եղև քաղաքագիւղ վաճառօք» (Խ. 205)։

Քննելով այս առարկան, կը տեսնենք, որ հէնց գեղերը և դաստակերտներ եկեղեցուն, նախարարներն էին, թագաւորին և այլոց էին պատկանում։ Յայտնի բան է, որ այդ տեսակ սեպհականու-

Թիւնը ծագում էր մարդու վերայ ունեցած սեպհականութիւնից: Վահնունիք Երակլի պատկերը տարան «ի Տարոն, իւրեանց սեպհական գիւղն Աշտիշատ (Խ. 123). և ցասուցեալ ընդ Վահունիսն թէ ընդէր չիւրեանց սեպհականքն իշխեցին կանգնեցին զպատկերն Երակլի... ընկենու (Տիգրանը) զնա ի քրմութենէ, և զգիւղն յարքունիս առնու, յորում պատկերին կանգնեցան» (Խ. 123): Խոսրովը «ետ զբուն գահոյից գեղն նահապետի Մանավազենից, եպիսկոպոսին Աղբիանոսի, զՄանավազակերտ ամենայն սահմանօքն և գաւառակաւ հանդերձ» (Փ. 9): Դանիէլ քորեպիսկոպոսին նախարարները գտան «ի գիւղն եկեղեցւոյ ի Թեւն» (Փ. 33): Դղակ մարդպետը գալիս է «ի մեծ ի գիւղն ընջին (?) արքունի, որում Արդեանան կոչին» (Փ. 171): Ամատունիք պատուին Արտաշիսէ գիւղիւք և դաստակերտօք» (Խ. 201): Տիրանը տալիս է Գնէլին «զկալածս գիւղից և դաստակերտաց» (Խ. 308): Տրդատը տալիս է Մամգունին «յաւիտենական իշխանութեամբ զգիւղս և զգաստակերտոս և զամենայն իշխանութիւն ազգին Սլկունեաց (Խ. 249):

Ուրեմն մենք տեսնում ենք, որ գեղերը, դաստակերտները իբրեւ սեպհականութիւն, կալւածք՝ յաւիտենական պատկանելիք էին համարւում: Գիւղերը և դաստակերտները գիտնով, սահմանով և սպասաւորներով պատկանելութեան առարկայ էին դառնում: Տրդատը, օրինակ, նւիրում է եկեղեցուն «զգեօղն (Թորդան) ամենայն դաստակերտօքն և գեանովքն հանդերձ սահմանօքն» (Ագ. 356): «Եւ զդաստակերտն և զպասաւորսն քրմովին հանդերձ և նոցին գեանովքն և սահմանօք ի ծառայութիւն նւիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան (Ագ. 454):

Միւս կողմից մենք տեսնում ենք, որ ոչ միայն գեղջուկը այլ և սպասաւորները դասակարգ էին կազմում: Օրինակ, Վասակ սպարապետը խողեց «զԹադաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն յերկրին Մարաց, հանդերձ սպասաւորօքն» (Փ. 126.) և այլն: Բայց հաւանական է, որ դոքա միւսնոյն դասակարգի մարդիկ էին: Նշելէն գեղջուկը վշտացեալ է նկարում. «ոչ երեւէր աւելի տէր քան զծառայ և ոչ ազատ փափկացեալ, քան զգեղջուկ վշտացեալ (Նղ. 130. 131): Վաղարշակը «հրաման տայ քաղաքացեաց մարդկան արդոյ և պատիւ լինել քան զգեղջկաց, և գեղջկաց պատուել զքաղաքացիս

որպէս զիշխանս (Խ. 117): Ուրեմն գեղջուկը վշտացեալ է, դորա գետինը իրան չէ. զա պարտաւոր է պատուել քաղաքացուն իշխանի տեղ և այլն: Անտարակոյս գիւղացիք սեպհականութիւն էին եկեղեցու, նախարարների, թագաւորների և այլն: Սորանք գերիներից էին ծագում: Հաւանական է, որ սորանց վրայ տէրը կեանքի և մահու իրաւունք էլ ունենար: Կարելի է կարծել, որ բերած գերիները սկզբում ստրկութեան կարգումն էին պահուում: Թովմայ Արծրունին ասում է, որ Տիգրանը գերի է բերում Աթահակի որդիներանցը և կացուցանում է ի կարգի ստրկութեան: Սոքա զփոյթ հպատակութիւն ցուցեալ, կարգէ ի գործ ծառայութեան և յետոյ առաջացնում է մինչև ի գահ նախարարութեան: (Թովմ. Արծ. 38):

Ձենք սխալիլ, հիմնելով վերոյիշեալների վերայ, ասել որ գերիները՝ նաև ստրուկ, սպասաւոր և գեղջուկ անունն էին ստանում և ամենավատթաւ դրութեան մէջ էին Հին-Հայաստանում: Մեծ բարեպաշտութիւն էր համարւում գերիներ տալու, դրանց գերեզարձ անել և այլն: Սուրբն Ներսէս, օրինակ, «բազում նեղելոց և տառապելոց գերեաց փրկութիւն և գերեզարձ առնէր, զորս ահիւ քարոզութեան փառացն Քրիստոսի զկէս և զայլսն զնովք փրկանօք ազատէր և յիւրաքանչիւր տեղիս դարձուցանէր» (Փ. 65). Յակովբ եպիսկոպոսը հետևում է համոզել Մանածխհր Ռշտունուն ազատել գերի առած ռամիկներին, սա ևս առաւել չտրանում է և հրամայում է՝ ծով նետել ութ գերի առած սարկաւազներին (Փ. (285):

Այժմս մեզ հասկանալի կը լինի Հայկազեանց ժամանակ ծագած իրաւունքները:

Մենք տեսնք, որ երկիրը ժառանգելու իրաւունքը պատկանում էր թէ հարազատ և թէ մերձաւոր ցեղերին: Միայն Հայկազեաններից հարազատ ծագումն ունեցողները յաղթւածի երկրի, աշխարհի կամ սահմանների վրայ մի տեսակ երկրի կամ կալաւածքի իրաւունք էին ստանում: Երով հարկի ծառայութեան տակ էին պահում յաղթւած ժողովրդին: Արշակունեաց ժամանակ էլ, ուր ժողովուրդը հարկի ծառայութեան տակ էր, նորա երկիրն էլ տիրոջն էր համարւում. և այս իրաւունքը զարգանալով՝ վերջին Արշակունեանց ժամանակ երկիրները լինում էին հայրենիք, պարգեւտկան և քսակազին և երկրատէրը որոշ տեսակի հարկ էր առնում:

ժողովրդից, այսինքն նորան հարկի ծառայութեան տակ էր պահում: Շէնը կամ Կլանը և մերձաւոր ցեղերը զուրկ էին այս իրաւունքից: Ընդհակառակը շէնը մինչև անգամ ցեղից հարազատ ծագումն ունեցողների ձեռաց (այսինքն առաջնորդութեան) տակ էր: Շէնը, մերձաւոր ցեղ էլ դառնալով, միայն իր ժառանգած երկրի և ոչ թէ յաղթածի երկրի վրայ էր իր իրաւունքը պահպանում: Թէ մերձաւոր ցեղերը և թէ հարազատ ցեղերը և ծնունդները ունէին իրանց առաջնորդները, գլուխ կանգնածները. և Հայկազանց ներքին կեանքի մէջ կար մի տեսակ տիրոջ և ծառայի կամ տիրոջ և հպատակի իրաւունքը: Արշակունեանց ժամանակ էլ ծառայութիւնը այն յարաբերութիւնն էր որը ծագում էր տիրոջ և հպատակի մէջ: Նախարարները, բղշխները և իշխանները, իբրև հպատակներ, թագաւորի ծառաներ էին համարուում, մինչև անգամ ամենայն աշխարհով և ուժով: Մառան զուրկ չէր կալածքի և սեպհականութեան իրաւունքից: Մօտաւորապէս և Հայկազանց ներքին յարաբերութիւնները միմեանց հետ այդ տեսակ էր: Այլ էր լուծը: Գերի բերած ժողովուրդը Հայկազունք լուծի, այսինքն չարաչար հարստահարութեանց, տակ էին պահում: Այդ տեսակ մարդը տիրոջ սեպհականութիւնն էր: Արշակունեանց ժամանակ էլ կային պատկանելի մարդիկ, որոնց ստրկութեան և սպասաւորութեան տակ էին պահում:

Պրանց կեանքի և մահու և հողային իրաւունքը իրանց տիրոջն էր պատկանում: Այդ վշտացեալ մարդիկը, որոնք պարտաւոր էին քաղաքացիներին իշխանների տեղ ընդունել, քաղաքական աշխարհում ոչ մի դեր չէին կատարում և ստրուկ, սպասաւոր և գեղջուկ անուններով էին յայտնի: Հետեւապէս, Հայկազանց ժամանակ երեք տեսակ իրաւունք էր առաջ եկել: Նախ տիրոջ իրաւունքը իր ծառայի կամ հպատակի վրայ: Տիրանութիւնն զաւառը ստանալով ի ծառայութիւն, այդ զաւառի ժողովրդի վրայ ունէր տիրոջ իրաւունք: Այս տեսակ իրաւունքը մեր մատենագիրները տէրութեան իրաւունք են անւանում: Հպատակները կամ ծառաները զուրկ չէին կալածքի և սեպհականութեան իրաւունք վայելելուց:

Կալւածքի կամ իրերի վրայ իրաւունք վայելողը կարող էր այդ երկրի ժողովուրդը հարկի ծառայութեան տակ պահել: Բայց ժողովուրդը այդտեղ գերի, ստրուկ, սպասաւոր և գեղ-

ջուկ չէր. և տէրը դրանց վրայ կեանքի և մահու կամ դրանց հողի վրայ իրաւունք չունէր: Այդտեղ տէրը կարող էր ժողովրդից որոշ տեսակների հարկեր առնել: Սա իշխանութեան իրաւունք էր:

Վերջապէս կար լուծը: Գերիները ամբողջ ցեղերի սեպհականութիւնն էին: Բայց Հայկազանց ժամանակ զիւղերը և դաստակերտները արդէն մասնաւորների պատկանելիութիւն դարձած ենք տեսնում. վասնորոյ կար գեղջուկը և սպասաւորը, այսինքն իրաւազուրկ և տէրերին պատկանելի մարդիկը: Սրանք տէրերի սեպհականութիւնն էին:

Ահա Հայկազանց ժամանակ ծագած տէրութեան, իշխանութեան և սեպհականութեան իրաւունքները:

(Վերջը չաջորդ համարում)

ՐԱՖՖԻԻ ԺԻՐԻՄԻ ՄՕՏ

† 24 Ապրիլի

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Եւ մութ անապատում երեցաւ
հրեղէն սիւնը, որ առաջնորդում էր
ամբոխին դէպ՝ Եւստեաց երկիրը:

Հին Արաբներ:

Նա, որ մեղ նոր կեանք պատրաստեց
Տւեց զգալ մեր ցաւ ու վէրք,
Նա, որ մի նոր սերունդ ստեղծեց,
Հալածելով խաւարի հետք.

Նա, որ այնքան վառ ու շքիչ
Փայլ էր տալիս Հայ կամարին
Եւ իբրեւ ջինջ լոյս-համաստեղ
Ուղեցոյց էր շեղուողներին.

Նա, որ իբրեւ մի մարգարէ
Գուշակում էր հայ ապագան,
Սերմում էր հայ խոպան դաշտում
Սուրբ սերմերը գիտակցութեան.

Եւ, լցնելով հայ դպրութեան
Դերկ ու աղքատ պահարանը,

Մեզ տանում էր կենդանութեան
Նւիրական քաւարանը.—

Այժմ, աւանդ, նա մեռած է,
Թէև անմահ՝ մեր սրտերում,
Եւ հողաբլուր մի ծածկոց է
Միայն նրան պատըստարում.

Եւ, կարծես թէ, այս անգամ էլ,
Առանձնացած, այդ վեհ տաղանդ
Շիրիմի մէջ աղօթում է,
Որ մենք պահենք իւր սուրբ աւանդ:

24 ապրիլի 1894 թ. Թիֆլիս:

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Գ. ՂԱՐԱԶԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹)

VII

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ
ՄԻԻՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ:

Բանւորների պարտադեր ապահովացումը պէտք է ընդհանրանայ հին և նոր աշխարհների մէջ, պէտք է ի վերջոյ իշխէ ամբողջ աշխարհին, զուշակութիւններ են արել արդէն մի քանի հրապարակախօսներ: Սակայն մեծ խնդիրները այնքան էլ հեշտ չեն իրագործւում կեանքի մէջ, ինչպէս կարծում են պ. պ. հրապարակախօսները: Նկատողութեան պէտք է առնել զանազան ժողովուրդների կուլտուրայի, քաղաքական հասունութեան, ցեղային և տէմպերամէտի տարբերութիւնները, ինչպէս որ ուղիղ նկատում է պրոֆէսոր Վուարէնը: Յետամնաց երկիրների ժողովրդների համար դեռ ժամանակ կը պահանջւի ըմբռնելու հաստատութեան օգտակարութիւնը և թէ իրագործելու կեանքի մէջ:

Բացի Գերմանիայից, եւրոպական մի քանի երկիրներում արդէն փորձեր են կատարւում ապահովացնող պարտադիր հաստատութիւններ հիմնելու: Ֆրանսիայում մի քանի օրինագծեր են

¹) Տես «Մուրճ» 1894 թ. № 1, 2 և 3:

արդէն մշակել: Անգլիայում նորերս 1893 թւի նոյեմբերին համայնքի պալատը առանց քւէարկութեան ընդունեց մի բիլլ, որը պատասխանատուութեան տակ է դնում բոլոր գործատէրերին բանւորների հետ պատահած դժբախտ դէպքերի համար: Աւստրիայում կառավարութիւնը ներկայացրեց պալատին հիւանդութեան և թէ դժբախտ դէպքերի դէմ ապահովացման երկու օրինագծեր միաժամանակ: 1886 թւին ստորին պալատում անցաւ վերջին օրինագիծը: Յաջորդ տարիներին Գերմանիայի օրինակին հետեւելով սիւտէմի միւս ճիւղերն ևս հիմնեցան: Շւէյցարիայի մի քանի մասերում խնդիրը արդէն վաղուց արծարծւած է: Բալ-Վիլլ կոչւած կէս կանտոնում կանտոնական խորհուրդը երկարատեւ վիճաբանութիւններից յետոյ ընդունեց հիւանդութեան դէմ ապահովացման մի օրէնք, որը գլխաւորապէս գերմանական օրէնսդրութեան ազդեցութեան տակ էր մշակւած: Սակայն 1887 թւին սեպտեմբերին կանտոնի ընտրողները ձայների մեծամասնութեամբ մերժեցին կանտոնական բարձրագոյն խորհուրդի այդ օրէնքը: Ժընեւում 1888—89 թւականներին, այն ժամանակ երբ դեռ մենք ուսանում էինք այդ քաղաքում, շատ լաւ յիշում ենք, որ կանտոնի բարձր խորհուրդը քննութեան առաւ հիւանդութեան դէմ պարտադիր ապահովութեան մի օրինագիծ, որը կազմել էին Ժընեւի կանտոնի ռադիկալ լիբերալ» կոչւած առաջադէմ կուսակցութեան պարագլուխները: Այդ օրինագիծը, որ գերմանական օրէնքի հետեւողութեամբ էր մշակւած, ներկայացնում էր այս վերջինի հետ այն տարբերութիւնը, որ օրէնքով ապահովագրւելու պարտադիր էր անում 18 տարեկան հասակից ոչ թէ միայն բանւորներին, այլ երկու սեռից բոլոր ազգայիններին առանց խտրութեան: Պետութեան դրամական մասնակցութիւնը որոշւած էր մինչ 150,000 ֆրանկ, այսինքն ամեն մի բնակչի վրայ մօտ 1 ֆր. 50 ս. ¹⁾:

Օրինագիծը բազմաթիւ հակառակորդներ ունեցաւ բարձրագոյն խորհուրդի մէջ, այնպէս որ պրոէկտը բազմակողմանի ուսումնասիրութեան առնելու համար՝ ուղարկւեց վերջապէս կանտոնի պետական խորհուրդին: Հետեւանքների մասին տեղեկութիւններ չունենք:

¹⁾ Կանտոնն ունի մօտ 100,000 բնակիչ:

Միևնոյն ժամանակ Արգովի և Նելշատէլի կանտոնները զբաղ-
ւած էին հիմնելու առաջինը հիւանդութեան դէմ ապահովացնող
մի օրէնք, իսկ երկրորդը մի ուրիշ օրէնք, որով սահմանուում էր
պարտադիր ապահովագրութիւն զժբախտ դէպքերի դէմ:

Արգէն նկատելի է, որ գլխաւորապէս հիւանդութեան դէմ
ապահովացման վրայ է ուշադրութիւն դարձնում. իսկ եթէ դժ-
բախտ դէպքերի դէմ ապահովացման խնդիր առաջ չէ գալիս, շատ
անգամ պատճառն այն է, որ շէշցարական կառավարութիւնը
սխալ էր վաղուց ի վեր միջոցներ ձեռք առնել ստեղծելու մի ընդ-
հանուր օրէնք, որ ընդգրկէր ամբողջ Հելվէտական հողը: Բայց որ-
պէս զի հնարաւոր լինէր սահմանել պարտադիր ապահովութիւն
ամբողջ երկրի համար, անհրաժեշտ էր Ֆէդերական դաշնադրու-
թեան վերաքննութիւն: 1874 թւի սահմանադրութիւնը չէր պա-
րունակում ոչ մի այնպիսի յօդաւած, որ իրաւունք տար Ֆէդերա-
կան մարմիններին միջամտելու այս նիւթի մէջ: Միւս կողմից ան-
շարմար էր և անկարելի թողնել կանտոնների վրայ ապահովացման
օրէնքներ կազմելու հոգսը:

Կանտոնների մեծ մասը չափազանց փոքր են, ասում է 1889
թւի նոյեմբերի Message fédéral կառավարութեան պաշտօնական
օրգանը, այնպէս որ նրանք առանձին տառանձին չեն կարող բաւա-
կանութիւն տալ ապահովացման մի այնպիսի էական պայմանին,
ինչպէս է օրինակ ֆնասների բաժանումը որքան կարելի է աւելի մեծ
թւով անհատների մէջ. առանց հաշւի առնելու այն նշանաւոր
դժւարութիւնները, որ առաջ կը դան բազմաթիւ բանւորների դրու-
թիւնը կարգի բերելիս, երբ սրանք ստիպւած կը լինին մէկ կան-
տոնից միւս կանտոնը անցնել գործ որոնելու:

Յիւրիսի «Kaufmännische Gesellschaft»-ի բիւրօի տեղա-
կադիրն էլ ասում է թէ «ոչ ոք լսել անգամ չէ ուզում կանտոնա-
կան ապահովագրութեան մասին: Բայց և այնպէս փորձեր են լի-
նում մի քանի կանտոններում, ինչպէս Արգովինում, Ժընեւում և
Բազէլլում հիմնել բանւորական ապահովութիւն պետութեան
աջակցութեամբ»: Վերջապէս, 1889 թւին նոյեմբերի 23-ին Ֆէ-
դերական խորհուրդը առաջարկութիւն է անում Ֆէդերական վե-
հաժողովին՝ մոցնել սահմանադրութեան մէջ այս յօդաւածները՝

«Կոնֆեդերացիան իրաւունք ունի մոցնել օրէնսդրական ճանապարհով պարտադիր ապահովացումն ընդդէմ պատահարքներին:

«Ունի նմանապէս իրաւունք օրէնքներ սահմանել հիւանդութեան դէմ ապահովացման վերաբերեալ և պարտադիր դրձնել բոլոր վարձկաններին անդամակցելու տչպիսի ապահովող արկղներին»:

Ֆեդերական խորհուրդը յիշեալ երկու տեսակ ապահովացումների մէջ սերտ կապ գտնելով՝ անհրաժեշտ համարեց այդ երկուսն էլ միաժամանակ ընդունել տալ օրէնսդրութեան մէջ: Խորհուրդի նոյն կարծիքին համամիտ էր արդիւնագործների մեծամասնութիւնը:

«Թող թոյլ տրւի ասել, գրում էր այդ առթիւ Ֆեդերական յայտագրի խմբագիրը, որ եթէ պալատները այդպէս եռանդուն պաշտպանութիւն ցոյց տւին պարտադիր ապահովութեան յօդուածը ներմուծելու օրէնսդրութեան մէջ, նրանք իրաւամբ հանդիսացել են ժողովուրդի մոքերի և իղձերի ճշմարիտ արտայայտող: Մեզ անհնար է և աւելորդ կը լինէր մէկ-մէկ թւել այն բոլոր ընկերութիւնների, ժողովների և լրագիրների անունները, որոնք Ֆեդերական կառավարութեան այս խնդրի մէջ միջամտելու համար նպաստաւոր կարծիք են յայտնել: Մենք բաւականանում ենք իրողութիւնը հաստատել, որ բոլոր քաղաքական կուսակցութիւնները, բոլոր բանւորները և ծառայողները ընդհանուր միաձայնութեամբ պահանջել են պարտադիր ապահովութիւն սահմանել և թէ այս խնդրի լուծումը ազգաբնակչութեան բոլոր դասակարգերից շատ կարեւոր է ճանաչւած»:

Վերջապէս 1890 թիւ հոկտեմբերի շվէյցարական 26 կանտոնների ժողովուրդը կոչւած էր քուէարկելու դաշնակցական սահմանադրութեան 34-երորդ յօդւածին իբր յաւելւածք հետևեալը. «Կոնֆեդերացիան կը մոցնի օրէնսդրական ճանապարհով ապահովացումն ընդդէմ պատահարքների և հիւանդութեան, հաշւի առնելով արդէն զօջութիւն ունեցող օժաւդակ արկղները»: «Նա կարող է ընդհանուր պարտաւորութիւն դարձնել մասնակցելու ապահովացնող հաստատութիւններին կամ մասնաւորացնել այդ՝ որոշեալ կատեգորիաներին պատկանող քաղաքացիների նկատմամբ»: Քուէարկութեան հետևանքն եղաւ. — 283,228 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 62,200-ի յօդւածն ընդունեց: Դրական ձայն տւեցին 18 կան-

տոն և 5 կէս կանտոն, իսկ բացասական ձայն միայն մի կանտոն և մի կէս կանտոն՝ Վալէ և Ապպէնցելլ Ռօդ-ինտէր.)։ Վերաքննութեան առաջարկութիւնը ոչ մի հակառակորդ չունեցաւ պետութիւնների խորհրդարանում, իսկ երկուսը դէմ եղան միայն Ազգային խորհրդարանում։

Թէ ժողովրդական քւէարկութիւնը և թէ երկու պարլամենտների դէպի խնդիրը ցոյց տաւ՝ սիրալիր վերաբերումը պարզ ապացուցանում են, որ Ֆեդերական խորհրդի յոյսերը և թէ նրա հասարակական պէտքերի վրայ հիմնած առաջադրութիւնը իրականութիւն ստացան։

Այս համառօտ պատմական նկարագրով ցոյց տրւեց, որ Շէյցարիայի օրէնսդրութեան մէջ պարտադիր ապահովութեան սկզբունքը արդէն ընդունւած է։ Մնում էր այսուհետև դժւարն իրագործել, այսինքն սկզբունքը մարմնացնել կէանքի մէջ՝ կազմակերպելով գործնականապէս նոր հաստատութիւնը իր մանրամասնութիւններով. սկզբունքի իրագործման դժւարութիւնները և արգելքները պէտք է վերանայն բնականաբար, քանի որ սկզբունքը միաձայնութեամբ ընդունող Ֆէդերական պարլամենտները անտարակոյս նոյն միաձայնութեամբ և ոգևորութեամբ կը գործադրեն նրան կէանքի մէջ։

Գանք այժմ Ռուսաստանին ¹⁾։

Ներուպական օրէնսդրութիւնը և նրա մէջ տեղի ունեցող փոփոխութիւնները համեմատական չափով միշտ ազդեցութիւն են թողել ռուսաց օրէնսդրութեան վրայ. այդ կարելի է ասել նաև մասամբ գործարանական-արդիւնագործութեան օրէնքների վերաբերեալ Ռուսաստանում։

Դեռ ևս 1859 թ. ելլմտից մինիստրութեան նախաձեռնութեամբ կազմած մի առանձին յանձնաժողով, վերաքննելով արդէն գոյութիւն ունեցող գործարանական կանոնադրութիւնը, մշակել է նոր կանոններով մի պրօէկտ բանւորներին դժբախտ դէպքերում վարձատրութեան վերաբերեալ. բաց այն ժախնակ գործը առաջ չգնաց։

¹⁾ Ռուսաստանի մասին խնդրի վերաբերմամբ տեղեկութիւններ քաղել ենք ռուսական թերթերից, գլխաւորապէս „Рыс. Вѣд.“ համարներից և „A. Gibon, Les accidents du travail et de l'industrie“ գրքից։

1861 թվին օրէնք հրատարակեց, որը պարտաւորացնում է հանքային գործատէրերին կենսաթոշակ տալ արքունի լեռնային աշխատանքներում բանող բոլոր ֆլասւածներին: 1862 թվին հրատարակեց միմանրամասն կանոնադրութիւն ճովային տեսչութեան տակ գտնւող արհեստանոցում ֆլասւած բանւորների թոշակատուութեան վերաբերեալ: Վերջապէս 1878 թվին բարձրագոյն հաստատուած է երկաթուղիների պատասխանատուութեան վերաբերեալ յայտնի օրէնքը ճամբորդների (պասաժիր) և բանւորների հետ պատահած դժբախտութիւնների համար: Վերջին օրէնքով պատասխանատուն (défendeur, отбѣтчикъ) պարտաւորւում է իր անմեղութիւնը ապացուցանել, այնուամենայնիւ օրէնքը նրան միշտ մեղսակից է ընդունում ամեն անգամ աղէտ պատահած դէպքում:

Բացի այս մասնաւոր օրէնքներից, 1889 թվին նախկին ելւմտից մինիստրը զժբախտ դէպքերի դէմ ապահովացման մի ընդհանուր օրինադիւմ ներկայացրեց պետական խորհուրդին, որը էական կէտերին վերաբերեալ բազմաթիւ նկատողութիւններ անելով՝ վերադարձրեց մինիստրութեան՝ փոփոխութեան ենթարկելու համար: Վերջերս, ինչպէս մայրաքաղաքի լրագիրները հաղորդեցին, ելւմտից այժմեան մինիստրը նոյն օրինադիւմը բոլորովին կերպարանափոխած ներկայացրել է ի հայեցողութիւն պետական խորհուրդի, որը պիտի քննութեան առնէր 1893/94 թ. ձմեռւայ սեսիայում: Վերջին օրինադիւմը գործատէրը ազատւում է պատասխանատուութիւնից միայն այն դէպքերում, երբ կապացուցւի, որ դժբախտութեան պատճառները եղել են բացառապէս կամ ինքը ֆլասւածը, կամ force majeure-անդիմադրելի բաղդը, կամ կողմնակի անձինք:

Կարեւոր եմ համարում առաջ բերել օրինադիւմի գլխաւոր հիմունքները, այնպէս, ինչպէս որ մայրաքաղաքի կիսապաշտօնական թերթերում հրատարակւած ենք գտնում:

Գործարանների, զաւօդների, մանուֆակտուրայի, երկաթուղային և այլ մեխանիկական արհեստանոցների տէրերը, ամեն տեսակ լեռնային մշակութիւնների, ինչպէս և կառուցանելի աշխատանքների (строительная работа) ձեռնարկողները (արքունական, քաղաքային և զէմստւային հիմնարկութիւնները, ընկերութիւնները և թէ մասնաւոր անձեր) պարտաւոր են իրանց բան-

ւորների հետ կամ ծառայողի հետ պատահած դժբախտութեան, մահւան և առողջութեան այլ և այլ վնասներ (պրոֆեսիական հիւլանդութիւններ) առաջ բերող դէպքերում վարձատրել նրանց կամ նրանց ընտանիքներին կրած վնասների համար: Այս պատասխանատուութիւնից ազատուում են յիշեալ ձեռնարկութիւնների տէրերը միայն այն դէպքերում, երբ նրանք կապացուցանեն, որ դժբախտութեան պատճառները եղել են. 1) անդիմադրելի (արտաքին կամ տարրային) ոյժը կամ 2) արդիւնագործութեան հետ մասնակցութիւն չունեցող մի երրորդ անձի յանցանքը կամ 3) բացառապէս վնասուած անձի իր սեպհական մեղքը կամ զանցառութիւնը:

Եթէ դժբախտ դէպքի պատճառը երկուսի՝ թէ զործատիրոջ և թէ բանւորի՝ մեղքից է առաջ գալիս, այն ժամանակ վնասուած անձին տալիք թոշակի քանակութիւնը կարելի է պակասեցնել, մնալով նշանակւած թոշակի երեք քառորդից մինչ կէսի սահմաններում, նայելով վնասուածի մեղաւորութեան աւելի կամ պակաս աստիճանին:

Ամեն անգամ, երբ դժբախտութիւն է պատահում, զործատէրը պարտաւոր է իսկոյն իմաց տալ ոստիկանական իշխանութեան պառչածաւոր արձանագրութիւն կազմելու համար: Արձանագրութիւն կազմելիս ներկայ պիտի լինին զործարանատէրը կամ սրա ներկայացուցիչը, կամ զործարանի կառավարիչ տեխնիկոսը, բժիշկը կամ ֆելդշերը, ինքը վնասուածը (եթէ կարող է), անցքին ականատես բանւորները և, եթէ կարելի, զործին հմուտ մի կողմնակի անձն (էքսպէրտ): Կազմւած արձանագրութեան պատճէնները որւում են հետեւեալներին՝ 1) զործարանատիրոջ, 2) իրան վնասուածին կամ նրա ընտանիքի անդամներից մէկին և 3) այդ շրջանի զործարանական վերատեսչին:

Իւրաքանչիւր արդիւնագործական հիմնարկութեան մէջ պահւում է առանձին մի մատեան դժբախտ դէպքերի համար, որի մէջ նշանակւում են արձանագրութեան մէջ յիշած բոլոր փաստերը: Եթէ տեղի ունենայ այնպիսի դժբախտութիւն կամ առողջութեան վնասաբեր մի դէպք, որ առաջ բերէ աշխատելու ժամանակաւոր կամ յարատեւ անկարողութիւն (инвалидность), այն ժամանակ զործատէրը պարտաւոր է հոգալ վնասուած անձի բժշկելու ծախքերը և թէ ժա-

մանակաւորապէս կամ մշտապէս հիւանդութիւնից կրած նիւթական վնասը: Եթէ յայտնի աշխատելու կատարեալ անընդունակութիւն, այդ դէպքում վնասւած անձին ցմահ իբր կենսաթոշակ նշանակուում է նրա վերջին տարւայ տարեկան վարձագինը ամբողջութեամբ. իսկ աշխատելու մասնաւոր անընդունակութեան դէպքում այնչափ, ինչ չափով անկարող է լինում նա աշխատել այժմս, առաջւան դրութեան համեմատութեամբ: Վնասւած փոքրահասակ բանւորներին վարձատրութիւն տրվում է նոյն պայմաններով մինչև սրանց չափահաս դառնալը. իսկ չափահասութիւնից յետոյ վարձատրութեան քանակութիւնը որոշուում է նոյնտեսակ պարապմունքներում աշխատող բանւորների տարեկան միջին վարձագնով: Գործարանում ծառայող այն անձեր, որոնց տարեկան ռոճիկը 1200 ռուբլուց անցէ եղել, կստանան կենսաթոշակ հաշւելով այնպէս, իբր թէ 1200 ռ. է եղել ռոճիկը: Բժշկութեան վրայ դնացած ծախսերի վարձատրութիւնը որոշուում է տեղական բանւորական հիւանդանոցներից (քաղաքային, զէմնուային և այլն) ներկայացրած հաշւի համեմատ: Այդ վարձատրութիւնը չէ յատկացւում այն դէպքում, երբ գործատէրը զրգբախտ դէպքը տեղի ունենալուց յետոյ յանձն է առել վնասւածին իրա հաշւով բժշկելու կամ երբ վնասւած բանւորը իրաւունք է ձեռք բերել ձրի բժշկելու և կամ եթէ ձրի ընդունել է հիւանդանոցում: Բացի բժշկական ծախքեր հոգալը, այն դէպքում, երբ պատահած զոքաղղութիւնից առաջ է եկել մահ, կամ հէնց սկզբից աշխատելու անկարողութիւն կամ թէ ոյժերի նուազումն, գործատէրերը պարտաւորուում են նոյնպէս 1) Տալ թաղման ծախքերի համար ոչ աւելի քան 20 ռ. հասակաւորների և 10 ռ. փոքրահասակների համար. 2) Թոշակ տալ բանւորների մահից յետոյ և թէ նրա հիւանդութեան ժամանակ նիւթական վնաս կրող այն անձերին, որոնց ապրուստը հայթայթում էր հանգուցեալը և որոնք իրօք կարիքի մէջ կը լինեն:

Թոշակները բաշխում են հետեւեալ կերպով. 1) այրիին (կին թէ մարդ) արւում է ցմահ մի թոշակ, որ հաւասար լինի հանգուցեալի տարեկան վարձագնի 300/0-ին և այդ այն դէպքում, երբ այրին իր վատառողջութեան պատճառով անկարող լինի իր ապրուստը հայթայթել. թոշակատուութիւնը ընտհատուում է այրիի կրկին ամուս-

նանալովը. 2) երկու սեռի փոքրահասակ մանուկներից իւրաքանչիւրին տրւում է ծնողներից մէկի կենդանութեան ժամանակ հանգուցեալի վարձագնի 15% , իսկ կատարեալ որբերին մինչ 20% . Թոշակ տալը շարունակւում է մանուկներին մինչև 15 տարեկան դառնալը, իսկ աչնուհետև ընդհատւում է, և 3) հանգուցեալի ծնողներին մինչև 15% : Այս բոլոր թոշակների գումարը միասին չպէտք է անցնի հանգուցեալի վերջին տարւոյ տարեկան ամբողջ վարձագնի 60% -ից: 1200 ռուբլուց աւելի բարձր ռոճիկ ստացող հանգուցեալի ընտանիքի անդամները չեն կարող միասին աւելի քան 1200 ռ. թոշակ ստանալ տարեկան: Պատահարքներին զոհաճներից այն ընտանիքները, որոնք օտարահալածակ են և Ռուսաստանում չեն ապրում, թոշակ և նպաստ ստանալու իրաւունք չունին:

Եթէ պատուհասած բանւորը հէնց սկզբից կորցնելով աշխատելու կարողութիւնը և հետզհետէ նւազելով մի առ ժամանակ ապրելուց յետոյ է վախճանւել, այն ժամանակ ընտանիքին թոշակ նշանակւում է միայն այն դէպքում, եթէ իրօք մահը դժբախտութեան կամ վատաւողջութեան հետեանք է եղել. և այդ—ոչ աւելի ուշ քան երեք տարի դժբախտ դէպքից յետոյ: Մէկ էլ եթէ հանգուցեալը արդէն ամուսնացած է եղել մինչև դժբախտութիւնը կամ աւողջութեան փաստելը:

Վարձատրութեան տեսակի և քանակութեան որոշումը թողնւում է երկու կողմերի կամաւոր համաձայնութեան, որ պէտք է արտայայտւի պայմանների ձևով. այդպիսի պայմանագրերը համարւում են ուղիղ և վերջնական, եթէ վաւերացրած կը լինին զէմսուօի ¹⁾ զլխաւորի կամ հաշտարար դատաւորի ձեռքով, որոնց իրաւունք է տրւում հրաժարւել վաւերացնելուց այն դէպքում, երբ երեւաց որ պայմանագիրը կողմերից մէկի շահերը ակներև կերպով ոտնակոխ է արած: Եթէ փոխադարձ կամաւոր համաձայնութիւն կացանալու չլինի, այն ժամանակ վարձատրութիւնը նշանակւում է դատաւորի որոշման համաձայն այսպէս. 1) Հասանելի թոշակը տարեցտարի

¹⁾ Զեմսուօ կոչւում է նահանգական ինքնավարութիւնը Ռուսաստանում և գոյութիւն ունի ոչ բոլոր նահանգներում. Աովկասում նա գոյութիւն չունի:

կամ որոշեալ ժամանակամիջոցներին վճարւի ֆլատւած անձին կամ նրա ընտանիքին կամ (թէ 2) միանւազ տալով մի գումար, որը հանգուցեալի վերջին տարւայ տարեկան ամբողջ վարձագնից չպէտք է վեց անգամ աւելի լինի: Վարձատրութեան վերջին կերպը կարող է նշանակել դատաւորի ձեռքով բայց գործատիրոջ համաձայնութիւնը առնելու պայմանով:

Դժբախտ դէպքից առաջ վաղօրօք կատարած ամեն տեսակ դաշնակցութիւններ, որոնք նպատակ ունին սահմանափակելու բանւորների թէ վարձատրութիւն ստանալու իրաւունքները, թէ նրա քանակութիւնը, համարում են ապօրինի: Դժբախտ դէպքի, մահւան և պրոֆէսիական հիւանդութեանց համար վարձատրութեան վերաբերեալ բանւորների կամ նրանց ընտանիքների գանգատները կարող են, երկու կողմերի փոխադարձ համաձայնութեամբ, յայտնել իքննութիւն գործարանական զործերի համար հաստատուած տեղական նահանգական և քաղաքային ատեաններին, որոնք այսպիսի դէպքերում միջնորդ դատարանի դեր են կատարում: Ատեանների այնպիսի որոշումների մասին, որոնք ուժեղի կողմը պաշտպանելու համար կամ հակառակ օրէնքի են կատարւել, կարելի է գանգատով դիմել արդարադատութեան մինիստրին, որը անկանոն վճուած գանգատը յանձնում է քննելու ընդհանուր դատաստանական օրէնքներով:

Եթէ գործատէրը թոյլ է տալիս իրան անկանոնութիւն իրանից պահանջելիք թոշակի վճարների նկատմամբ, այն ժամանակ ֆլատւածի խնդրի համեմատ՝ նա անյապաղ պարտաւորւում է կանխիկ փողով կամ պետական կամ կառավարութիւնից ապահովւած տոկոսաբեր թղթերով ներկայացնել տեղական գանձարաններից մէկին թոշակաբաշխութեան համար անհրաժեշտ մի կապիտալ:

Արդիւնազործական ձեռնարկութեան նոր մարդու ձեռք անցնելու դէպքում, նախկին գործատիրոջ վրայ է ընկնում առաջուց որոշած թոշակի բաշխման պարտականութիւնը: Եթէ արդիւնազործական ձեռնարկութիւնը դադարի գոյութիւն ունենալ տիրոջ նիւթական անձեռնհասութեան պատճառով, այն ժամանակ ֆլատւածին կամ նրա ընտանիքին նշանակւած թոշակը առաջին կարգի պարտք է համարւում (անսինքն՝ բոլոր ուրիշ պարտքերից գերադաս-

ւում է թոշակաբաշխման բաւարարութիւն տալը): Իսկ եթէ գործատէրը կանաւորապէս ինքն է դադարեցնում ձեռնարկութիւնը, այդ դէպքում փաստածին կամ նրա ընտանիքին տրւում է նշանակւած թոշակի վեց ամսեայ միանւագ վարձատրութիւն լիովին: Հիմնարկութեան փակւելու դէպքում թոշակաբաշխումը ապահովւում է նոյն եղանակով, ինչպէս թոշակն անկանոն տալու դէպքում:

Վարձատրութեան վերաբերեալ զանգատներ սկսելու համար որոշւած է մի տարի ժամանակամիջոց, հաշւելով՝ եթէ փաստածի ընտանիքն է դատ սկսում, փաստածի մահւան օրից, իսկ եթէ ինքը փաստած բանւորն է սկսում, այն ժամանակ իրան հետ դժբախտ դէպք պատահած օրից կամ այն օրից, երբ պաշտօնապէս հաղորդւել է, որ բանւորի հիւանդութիւնը առաջ է եկել պրոֆէսիական պարտաւորութիւց: Եթէ, այդ միամեայ նշանակւած ժամանակամիջոցի ընթացքում, գործատէրը փաստածի կամ նրա ընտանիքի հետ բանաւոր համաձայնութիւն կայացնի և վերջը իր տւած խոստումից հրաժարւի, այն ժամանակ փաստածը կարող է զատարանի միջոցով վերանորոգել վարձատրութիւն պահանջելու կորցրած ժամանակամիջոցը:

Եթէ գործատիրոջ կամ նրա ծառայողների յանցանքի պատճառով առաջացած դժբախտ դէպքից փաստած բանւորը կամ ծառայող, որ և է օժանդակ կատարել անգամ լինելով, օգնութիւն է ստացել կամ ապահովագրւած է եղել դժբախտ դէպքերի կամ ասպահովող մի ընկերութեան մէջ և եթէ գործատէրը իր կողմից վճարներ է հասցրել չլիշեալ կատարելին կամ ապահովագրեալ բանւորների տեղ ապահովագրական ընկերութեան անդամավճարները ինքն է հատուցել, այդ դէպքում ևս գործատէրը սրտտաւորւում է ամբողջապէս վարձատրել փաստածներին, ինչպէս որ սահմանւած է. բացց այդ դէպքում իրաւունք է տրւում նրան կատարելից կամ ապահովագրական ընկերութիւնից փաստածին հոտանելիք վարձատրութեան մասը ստանալու բանւորի տեղ, չլիշեալ հիմնարկութեան ներկայացրած վճարների քանակութեան համեմատ: Այս կանոնները պէտք է կախւին արդիւնազորական հիմնարկութիւնների գրասենեակներում, այնպիսի տեղ, որ ամենքը տեսնեն. և թէ պէտք է տպւած լինին բանւորներին բաժանւած հաշւետետրերում:

Ինչպէս ընթերցողը կը նկատէ, ռուսական օրինագծի ուղղութեան վրայ նշանաւոր ազդեցութիւն է արել եւրոպական, զլխաւորապէս գերմանական օրէնսդրութիւնը: Օրինադիժը պարունակում է վերին աստիճանի համակրելի կէտեր. միայն սրտանց ցանկալի էր որ նա, ընդունելով պետական խորհրդից, զործադրէր իբրեւ օրէնք կեանքի մէջ և մեռած տառ չմնար: Այդ նոր օրէնքը, ինչպէս ցոյց է տալիս „Русск. Вѣд.“ լրագիրը, միջոցէ տալու իւրաքանչիւր տարի ամենաքիչը 35,000 թեթիւ վնասածներին ամբողջապէս առողջանալու, 5580 ծանր վնասածներին բժշկելու և 1400 սպանածների ընտանիքներին օգնելու. և այս թւերը, նոյն լրագրի ասելով, առանց չափազանցութեան կարելի էր համարձակ $1\frac{1}{2}$ անգամ բարձրացնել: Պարզ է ուրեմն թէ՛ նոր օրէնքը քանի՛ քանի՛ հազարաւորների կեանքը պէտք է ազատէ, քանի՛ թշուառացած ընտանիքների պէտք է նա օգնութեան հասնէ:

Սակայն չենք կարող չնկատել, որ ապահովացման մասնաւոր օրէնքները, ինչքան էլ մարդասիրական զգացմունքներով խմբագրւած լինին, ինչքան էլ զգալի գործնական օգտակարութիւն ներկայացնեն Ռուսիայի արդիւնագործութեան մէջ բանողների անմխթար վիճակի նկատմամբ, ապահովացման այդպիսի մասնաւոր օրէնքները, կրկնում ենք, ինչպէս բացմիցս փորձերը ցոյց են տուել Գերմանիայում, Շւեյցարիայում և այլուր, իրանց նպատակներին չեն հասնում շատ անգամ, բաւականացուցիչ հետեւանքներ չեն տալիս: Գործատիրոջ պատասխանատուութեան մասին օրէնսդրութիւնը աւելի թշնամանք է յարուցանում գործատէրերի և բանւորների մէջ քան թէ հաշտութիւն: Որքան էլ փոխադարձ յարաբերութիւնները տիրոջ և բանւորի մէջ հաշտ լինին, բայց և այնպէս գործատէրը, պատահաբք տեղի ունենալուն պէս՝ երբէք չի թոյլ տայ իրան այնպէս հեշտութեամբ թողակ տալու կամ վարձահատոցց լինելու: «Ներկայ սխտեմը, ասում է Է. Ֆորէր Շւեյցարիայի 1881 և 1887 թւականների ապահովացման օրէնքների վերաբերութեամբ, զրգրուում է գործատէրերին և բանւորներին մէկը միւսի դէմ ¹⁾»: Գոր-

¹⁾ Mémoire sur l'introduction en Suisse de l'assurance contre les accidents, par E. Forrer, conseiller national.

ծատէրը ամեն կերպ կը փորձէ դիմադրելու բանւորի պահանջներին և չկատարել իրան վրայ օրէնքով սահմանած պարտականութիւնը: Զոհը հարկադրւած կը լինի այն ժամանակ դատաստանական միջոցներին դիմել. որքան էլ թեթևութիւն տրւած լինի օրէնքով ֆինասւածներին իրանց դատը առաջ տանելու, բայց և այնպէս բանւորը մի բոպէ կանգ կառնի, կը տատանւի դատ վարելու, որը թերևս կարող է իր ապագայի համար ունենալ ծանր հետևանքներ: Եթէ զատ սկսի, այնուհետև նրան իրաւի անկարելի կը լինի մնալ նոյն գործատիրոջ հիմնարկութեան մէջ աշխատելու. կը գըտնի՝ արդեօք այլուր աշխատանք—յայտնի չէ. վերջապէս ո՞վ հեշտութեամբ կրնգունի ջախջախւածին իր գործարանում կամ արհեստանոցում: Յաճախ բանւորը աւելի բարւոք կը համարի մերժել օրէնքով նշանակած վարձատրութեան մի մասը կամ ամբողջապէս քան թէ կուզենայ հարկադրւած զգալ թողնելու աշխատանքը, որով ինքը պիտի ապրէ: Միւս կողմից դատական պրոցէսներն էլ կարող են յաճախ շատ երկարել: Պ. Ֆրորէր չիշում է իր աշխատութեան մէջ երկու պրոցէս, որոնցից մէկը տւում է երկու տարի, վեց ամիս և ինն օր, իսկ միւսը երեք տարի և երկու օր. դեռ այդ՝ Շւէյցարիայի պէս օրինապահ և պարտաճանաչ մի երկրում: Այսպէս երկար սպասողական դրութեան մէջ բանւորը կարող է յուսալ, որ կըստանայ վարձատրութիւն և այն էլ բաւարար վարձատրութիւն: Դժւար թէ: Ուրեմն ինչ է մնում անել.—փոխարինել մասնաւոր ապահովող օրէնքների սխտեմը՝ պետական ընդհանուր ապահովացման պարտադիր սխտեմով, բոլոր գործատէրերի համահաւասար գործակցութեամբ:

Երբ կը հիմնւի մեր մէջ մի այնպիսի հաստատութիւն, ինչպիսին մենք գտնում ենք ներկայումս Գերմանեայում, գէթ միայն այն ժամանակ կը վստահանանք սպասելու մեծամեծ գործնական օգուտներ աշխատող ժողովրդի կեանքում: Լսում է թէ Ֆինլանդի պ. մինիստրը արդէն նիւթեր է ժողովում այդ մեծ խնդրի մշակութեան համար: Թերևս մօտ ապագայում տեսնենք Ռուսաստանում ազգային արդիւնագործութիւնը բարեկարգւած, հազարաւոր աշխատող անհատների կեանքը ընդհանուր պարտադիր օրէնքով ապահովացրած՝ տիկնիկական աշխարում տեղիւնեցող վը-

տանգներին: Վաղ թէ ուշ կը լինի այդ—չգիտենք, միայն այդ օրինակիսի Ռուսիայի տնտեսական զարգացման և բանորրների վիճակի բարեփոխման համար մի նոր դարագլուխ:

Մինչև այդ օրինագիծը շատ քիչ բան է արւած մեզանում. չկայ և չէ եղել գործի մասնաւոր ինիցիատիւ. մինչդեռ եւրոպայի բոլոր երկիրներում հասարակութեան շունւոր աշխատող զատակարգերի վիճակը բարեփոխու համար հիմնւած են բազմաթիւ և բազմատեսակ մասնաւոր ընկերութիւններ:

Սակայն վերջերս աւելի ընկնող համակրելի մի երևոյթ է նշմարւում Ռուսիայի Պրիվիւսեան նահանգներում. գործարանատէրերը, հետեւելով արւմտեան երկիրներին, սկսել են այդտեղ հիմնել կասսաներ և իրանց ձեռքի տակ գտնւած բանւորներին օգնել՝ հիւանդութեան, պատահարքի, մահւան կամ այլ դէպքերում: Դեռ անցեալ տարի (1893) յունւար ամսին Պետրովսկի նահանգի գործարանական տեսչութեան ատեանը, ժամանակաւոր կանոններ մշակելով՝ ուղարկել էր այդ նահանգի գործարանատէրերին, որպէս զի սրանք մշակւած կանոններով ղեկավարեն բանւորներին օգնելով, մինչև որ Ֆինանսների մինիստրը այն տեսակ օժանդակութեան արկղներ հիմնելու համար կը մշակէր մի նորմալ կանոնադրութիւն՝ նոյն նպատակներին ծառայելու համար: Կարճ միջոցում ստեղծեց գործարաններում նոր կանոնների հիմունքներով՝ 30 չափ օժանդակող կասսաներ:

Բացի զրանից, իր ժամանակին Պետրովսկի գործարանական շրջանի տեսչութիւնը առաջարկեց գործարանատէրերին, որ իր կողմից ուղարկւած կանոնադրութեան հիմունքների համեմատ իրանք կարող են բարեփոխութիւններ մտցնել արդէն գոյութիւն ունեցող տեղական կասսաների կազմակերպութեան մէջ, և որ այդ անելուց յետոյ, թող շուտպէս գործարանատէրերը իրանց բարեփոխած կանոնները ղիտողութիւններով հանդերձ յետ ուղարկել ատեանին, որպէս զի սա ևս ներկայացնէ ֆինանսների մինիստրութեան ի հայեցողութիւն:

Պետրովսկի գործարանական ատեանի առաջարկութիւնը շատ շուտով արձագանք է գտնում ռուսական «Արդիւնագործութեան և աււտրի օժանդակող Լոճի ընկերութեան» կողմից, որը կազմում

է գործարանների բանւորներին օժանդակելու կասսաների նորմալ կանոնադրութեան մի ծրագիր, որն ուղարկւում է վերոյիշեալ տեսչութեանը: Վերջինս հաւանութիւն է տւել կազմած ծրագրին և, ինչպէս երևում է լրագիրների հաղորդած տեղեկութիւններից, Պետրովսկի տեսչութիւնը շուտով պէտք է ներկայացնէր մինիստրութեան՝ ի հաստատութիւն ¹⁾:

Ֆինլանդիայում նոյնպէս չարուցւած է բանւորներին ապահովելու խնդիրը: 1889 թիւն Հէլսինգֆորսում գործարանատէրերից և պետական հաստատութիւնների ներկայացուցիչներից կազմւեց մի յանձնաժողով, որը նպատակ էր դնում մշակել ծրագիրներ՝ Ֆինլանդիայի բանւորներին հիւանդութեան և ծերութեան ժամանակ ապահովացնող կասսաների վերաբերեալ: Յանձնաժողովը մօտերումն ներկայացրեց կառավարութեան հայեցողութեանը երկու ծրագիրներ, մէկը գործարանատէրերի պատասխանատւութեան մասին՝ բանւորների փնասելու կամ մահւան դէպքում, իսկ միւսը բանւորների համար թոշակատու կասսա հիմնելու խնդրի մասին, կառավարութեան տեսչութեան ներքոյ:

Այսպէս, Ռուսիայի մի քանի արդիւնագործային կենդրոններում բանւորների վիճակը ապահովելու խնդիրը օրւայ խնդիր է դարձել ներկայումս: Մեզանում մասնաւորապէս կոմկասում ²⁾ բնաւ ոչինչ չէ մտածւած, ոչինչ չէ արւած այդ ուղղութեամբ: Նաւթային և հանքային արդիւնագործութեան մէջ կոմկասում ներկայումս բանւորների սուար դասակարգ է արդէն կազմւած: Այցելեցէք Բաքու, Բալախան, Գէտաբէկ, Բաթում և այլ նաւթ-հանքային և արդիւնագործ կենտրոնները և զուք ականատես կը լինիք ամենավրդովեցուցիչ տեսարանների: Ռուսիայի մի քանի տեղերում մտածում են գործատէրերը օգնութեան կասսաներ հիմնելու. մեզանում այդ էլ չկայ ³⁾:

¹⁾ Թէ Լոձի ընկերութեան ալդ կանոնադրութեան ծրագիրը, որ բաղկացած է 27 լօղաձևներից և թէ Պետրովսկի ատեանի կանոնադրութիւնը ընթերցողները կարող են դանել Ручек. Вѣд. 1893 թ. 47 և 198 համարներում: Գ. Ղ.

²⁾ Տես Խմբագրական նկատողութիւն լօղաձևի վերջում: Խմբ.

³⁾ Վերջերս «Մշակ»-ին (ՁՅ 2) հաղորդւած էր Բալախանից հետեւեալ

Մինչև որ կառավարութիւնը կը ձեռնարկէ սահմանելու ընդհանուր պետական պարտադիր ապահովացման բարդ օրէնքը, մասնաւոր ինիցիատիւր չպէտք է մեռած մնայ մեղանում ընդհանրապէս: Իւրաքանչիւր հաստատութիւն իւր զարգացման աստիճաններն ունի. մինչև որ որոշեալ աստիճանը չանցնի մի բարձր կազմակերպութիւն, միանգամից նրա ստեղծելը և կեանք ստանալը կը հանդիպի շատ և շատ դժւարութիւններ: Չպէտք է մոռանալ ի հարկէ շատ ուղիղ նկատում է РУССК. ВѢД. լրագիրը Առձի ընկերութեան ծրագրի ասիթով խօսելիս, որ ամենակատարեալ միջոցը բանւորներին օգնելու՝ հիմնաւէ՛ է բոլոր բանւորներին (պետական պարտադիր) ապահովացման սկզբունքի վրայ, բայց մինչև այդ ժամանակ, մինչև երևի ոչ շուտ ապագան, երբ մեղանում ապահովացումը լայն գործադրութիւն կը ստանայ, մասնաւոր այդպիսի կասսաներ առանձին-առանձին գործարաններում կարող են իրանց բերեալ դերը խաղալ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ: Հարկ ենք համարում ներկայ ջոզւածի վերջին տողերին կցել հետեւեալ տեղեկութիւնը: Ռուսաստանում, որքան մեզ յայտնի է, կան երկու ընկերութիւններ, որոնք յանձն են առնում բանւորների և արհեստաւորների հաւաքական ապահովացումն: Դոքա են „Россия“ («Ռուսիա») և „Помощь“ («Օգնութիւն») ընկերութիւնները: Դոցանից „Россия“ մեծահարուստ ընկերութիւնը հաստատած է նաև մի մասնաձիւղ Անդրկովկասի համար, Թիֆլիսում: Եւ որքան մեզ յայտնի է, Բաքւի, Թիֆլիսի և Բաթումի գործարաններից շատերի բանւորները արդէն իսկ ապահովագրւած են այդ ընկերութեան մէջ, գործարանատէրերի կողմից: Յանկալի է որ յիշեալ ընկերութեան այդ գործառնութեան մասին տեղեկանքները «Մուրճին» հաղորդէին թէ որոնք են պայմանները և ինչ բնաւորութիւն է կրում այդ ապահովացումը:

ուրախալ լուրը.—«Մի խումբ ինտէլիգենտ անձերի ձեռքով մշակւած է «բանւորական օժանդակ կասսայի կանոնադրութիւն, որը շուտով Արմկասի լեռնային վարչութեան միջոցով պէտք է ուղարկւի Պետերբուրգ՝ հաստատութեան համար»: Այդ համակրելի ձեռնարկութեան առթիւ նոյն լրագրին տեղինք «Բանւորական օժանդակ կասսաներ» վերնագրով մի ջոզւած (տես «Մշակ» № 15. 1893 թ.): Գ. Ղ.

ԽՈՇՈՐ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ ¹⁾

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Խոշոր արդիւնաբերութիւնը հասել է Ներուպայում իր զարգացման գագաթնակէտին: Նա այնքան ծաւալւել է, մեծացել, որ նա է գլխաւորապէս կերպարանք տալիս Ներուպայի Հիւս. Ամերիկայի տնտեսական կեանքին: Խոշոր արդիւնաբերութեան զարգացմանը մեծապէս նպաստել են տեխնիկայի և գործադրական գիտութիւնների յառաջադիմութիւնը: Զինւած լինելով այս տեսակ դասական միջոցներով՝ խոշոր արդիւնաբերութիւնը սկսեց մանր արդիւնաբերութեան մրցելու եռանդը և ոյժը նւազեցնել: Վերջինս չէր կարող դիմունալ այս պայմաններին, որ երևան էր հանում տեխնիկական յառաջադիմութիւնը: Իսկ արդի եւրոպական արդիւնաբերութեան համար, որ լոկ կապիտալի աշխատանքին է ձգտում և սորա շնորհով է կատարւում, զարգացող և յառաջադիմող տեխնիկան պահանջում է խոշոր միջոցներ, այնպէս որ այն կապիտալները, որ ցրւած են, հաւաքւում են և կենդրոնանում մեծ ձեռնարկութիւնների մէջ: Կասկած չկայ, որ խոշոր արդիւնաբերութիւնը յաղթելով մանրերին՝ միակ տէրն է հանդիսանում ոչ միայն այն շուկաների վրայ, ուր արդիւնքները ծախւում են, այլ և այն շուկաների վրայ, ուր մարդկային ոյժը և աշխատանքն է վարձւում: Զէ որ խոշոր գործարանական ձեռնարկութիւնները իրանց կատարելագործւած մեքենաների շնորհով կարողանում են ապրանքները աժան

¹⁾ Համեմատելէք Ueber Wesen und Verfassung der grossen Unternehmungen. Von Gustaw Schmoller.

արդիւնաբերել: Սորա իրանց ապրանքներով մրցում են շուկաներում թանգ արդիւնաբերած ապրանքների հետ և հետևապէս պակասեցնում են ապրանքների գները, որ ասել է թէ իրանք են նշանակում ապրանքների գները և այսպիսով հետզհետէ վաւերում են շուկաներից մանր գործարանների արդիւնքները: Եւ ինչ է այս տեսակ իրերի հետեանքը: Լոկ տնտեսական տեսակէտից՝ խոշորացող արդիւնաբերութիւնը, հարկաւ, մի անժխտելի յառաջադիմութիւն է: Բայց հասարակական տեսակէտից չի կարելի միեւնոյնը պնդել: Եւ ահա թէ ինչու. մեծ ձեռնարկութիւնները կլանում են մանրերին, և այն բանւորները, որոնք մանր գործարաններում էին բանում և սոցա արդիւնաբերութեան համար զլիաւոր նեցուկն էին, կամ պէտք է գնան բանելու մեծ գործարաններում կամ, և սա յաճախ է պատահում, մնում են պարապ: Իսկ պարապ մնալու պատճառը հէնց նրանից է բղխում, որ խոշոր գործարանները, մոցնելով կատարելագործւած մեքենաներ, փոխարինում են մարդկային բանւոր ուժը:

Պարզ է, որ պարապ բանւորների քանակութիւնը այսպիսով անընդհատ պէտք է աւելանայ և շուկաները լցնի: Ով չի հասկանում, որ շուկաներում մեծ թւով հաւաքւած բանւորները միշտ պատրաստ կը լինեն բանելու այն վարձագներով, որ նոցա կ'առաջարկեն խոշոր գործարանատէրերը: Թէ որ աստիճան այսպիսի վարձագնով բանւորների հասարակական գոցութիւնը տանելի և արդար է, դարուս ամենամեծ խնդիրներից միւնն է, որի լուծելու գործը քաղաքակրթւած հասարակութիւնների պարտքը պիտի համարել: Այսօր իսկ Եւրոպայում հասարակական խնդիրը գտնում է իր յենման կէտը զլիսաւորապէս այն բանւոր շրջաններում, որոնք բանում են խոշոր գործարաններում: Շատանանք մի քանի օրինակներով, որոնք մեզ ցոյց կը տան թէ ինչպէս են մեծանում գործարանները խոշոր կերպով արդիւնաբերելու նպատակով:

Այսպէս 1874 թից սկսած մինչ 1880-ը ամբողջ Գերմանիայում հիմնւել են տարեկան 200 ակցիոներական մեծ ձեռնարկութիւններ: Անգլիայում 1886 թւին, միայն մի տարում, հիմնւել են 1809 մեծ ձեռնարկութիւններ, Ֆրանսիայում 1880 թւից մինչ 1886-ը ամեն տարի կազմւել են 3—900 խոշոր գործարանա-

կան և առևտրական ձեռնարկութիւններ: Առհասարակ 1880 թւից մինչ 1890-ը գործարանական ձեռնարկութիւնները ամբողջ Եւրոպայում մեծանալու հսկայական քայլեր են արել: Յիշած վերջին թւականներին մի քանի քարէածխային գործարաններ Գերմանիայում աշխատել են միանալ մի հսկայական ընկերութիւն կազմելու, որը պիտի բանեցնէր մօտ 100,000 բանուոր: Նոյն տեսակ մեծանալու երևոյթը նկատուում է Լոնդոնում: Այստեղ կազմել է հացթուխների մի ընկերութիւն, որ միացրել է 200 եղած հացթուխներին և պիտի 5 միլիոնի չափ քաղաքի բնակիչներին աժան հաց մատակարարէր: Ֆրանսիայի Սէն-Լուի քաղաքում 1889 թւին զարեջրի 18 գործարանները ձուլել են ի մի ընկերութիւն, որ իր գործերը վարելու համար նշանակել էր 70 միլիոն ֆրանկ: Իսկ է, բոլոր այս տեսակ խոշոր ձեռնարկութիւնները կազմած են և դարձեալ շարունակ կազմուում են ընկերական սկզբունքների հիման վրայ, սակայն դժբա կրում են այն մասնաւոր տնտեսութեան բնաւորութիւնը, որ նոցանից բոլորը ունէին առանձին-առանձին գործերով: Այդ ընկերութիւնները կազմած են կապիտալիստներից, որոնք միահամուռ ոյժերով իրանց կապիտալները շահեցնում են: Ուրեմն դարձեալ տնտեսապէս ուժեղները և տեխնիկապէս ու մտաւորապէս ընտրեալները հանդիսանում են խոշոր արդիւնաբերութեան մէջ տիրապետող, հրամայող, շահող և շահեցնող տարր, իսկ արդիւնաբերութեան մէջ գործող և աշխատող այն մասը, որ բաղկացած է բանւորներից, մնում է ստորագրեալ զրութեան մէջ: Այս վերջինը, ինչպէս յայտնի է, միայն բանում է, միայն արդիւնաբերում է, միայն ստեղծում է և իր տոկուն աշխատանքով և ոյժով արդիւնաբերած արդիւնքները յանձնում է փոքրաթիւ տէրերին, ստանալով սոցանից փոխարէնը միայն օրավարձ, որ հազիւ բաւականանում է իր օրւայ կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքը լրացնելուն: Ինչ ասել կուզէ, որ բանւորը բոլորովին զուրկ է միջոցից իր մտաւոր, բարոյական և գեղարեստական պահանջները լրացնելու: Ինչ ասել կուզէ, որ նոյն բանւորը բոլորովին միջոց չունի դժբաղդ պատահարների ժամանակ և իր մահից յետոյ իր ընտանիքը և որդիքը ապահովելու: Զէ որ այս զրութեան հետեւանքները պիտի ծանր և վնասակար լինին հասարակութեան համար:

Բայց որ արդի բանւորների դրութիւնը խոշոր արդիւնաբերութեան ասպարիզում ստորադրեալ և հպատակեող է, զա անկասկած պատմութեան զարգացման հետեանքն է: Սկզբում բանւորը եղել է ստրուկ աշխատող, որովհետեւ հնումը բոլոր տնտեսութիւնը հիմնւած է եղել ստրուկների աշխատանքի վրայ: Ստրկութեան ժամանակ բանւորը ինքն իրան չէր պատկանում: Սա իր տիրոջ սեպահականութիւնն էր և բնաւ իրաւունք չէր վայելում իր տաժանակիր աշխատանքի արդիւնքի վերաբերմամբ: Ստրուկը, կարծես, լոյս աշխարհ էր եկել ուրիշի գոյութեան համար: Ստրկութեան աստիճանից բանւորը անցաւ դէպի ճորտութիւն, որ իր տնտեսական կազմակերպութեամբ նախկինից աւելի բաւարար դրութիւն տեղծեց բանւոր դասակարգի համար: Ճորտ բանւորը արդէն հասաւ իր մարդկային ինքնաճանաչութեանը տնտեսական զործունէութեան ասպարիզում: Թէև ճորտը կապւած էր իր տիրոջ հետ զանազան տաժանելի պայմաններով, որոնք նրան ազատութիւնից զրկում էին, բայց և այնպէս նա սկսեց վայելել իր աշխատանքի օգուտները որոշ չափով: Պատմութեան ընթացքում ճորտութիւնն էլ ստացել էր փնասակար կերպարանք և քայքայիչ բնաւորութիւն. հետեապէս նա դարձել էր անտանելի, այնպէս որ բանւոր դասակարգը ամենայն իրաւամբ քանդեց բոլոր ճորտական կապանքները և ստեղծեց իր համար այն ազատ հասարակական և տնտեսական կացութիւնը, որ այժմս գոյութիւն ունի ամբողջ քաղաքակիրթ եւրոպայում: Շատ դարեր անցան, մինչև որ բանւորները ձեռք բերին ազատ տնտեսական կացութիւն: Նոյնպէս շատ ժամանակներ կանցնեն մինչև որ արդի ազատ բանւորները կ'անցնեն իրանց ներկայ դրութիւնից դէպի մի այլ հասարակական աստիճան, որ զերծ կը լինի այժմեան տնտեսական կազմակերպութեան պակասութիւններից: Կատարեալ ազատութիւն ձեռք բերելուց յետոյ, բանւոր դասակարգը երեւաց բոլորովին ուրիշ դրութեան մէջ: Բանւորը այժմս ազատ է գործելու, աշխատելու, մէկ տեղից միւս տեղ գնալու և վարձելու ում մօտ նա ուզենայ: Բանւորի և գործարանատէրի կամ հողատէրի հետ կապւում է, այսպէս ասած, ազատ պայման բանելու համար: Գործարանատէրը վարձում է բանւորին ինչպէս իր օգուտը պահանջում է. բանւորն էլ ազատ է վարձելու կամ ոչ և գնալու

գործարանատէրից, երբոր երկուսից մինը ուզում է: Մի խօսքով ստեղծւեց բանւորի համար տնտեսական գործունէութեան ազատ ասպարէզ, ուր նա իրաւունք ունի ընտրել իր համար այնպիսի պարապմունք կամ աշխատանք, որին նա իրան ընդունակ էր համարում: Ընդունակութիւնների և ոյժերի համեմատ աշխատանքի ընտրութիւնը յառաջացրեց բաժանմունք. իսկ այս վերջինի արդիւնքը այն էր, որ հասարակութեան մէջ սկսեցին կազմել և զարգանալ զանազան դասակարգեր:

Բոլոր այս նորագոյն պայմաններում մարդկանց զժար և անհնարին էր երևում տնտեսական ձեռնարկութիւններին ընկերական սկզբունքով ձեռք մեկնելու: Այս ձևի գործունէութեան համար անհրաժեշտ էին խիստ զիսցիպլինա, հպատակութիւն և այլ պայմաններ, որոնք պիտի թւային անտանելի և անժամանակակից, շնորհիւ ազատութեան իրաւունքին, որ ձեռք էր բերել դարերի ընթացքում կատարւած կռիւներից և ընդհարումներից յետոյ: Նորագոյն տնտեսութեան սխտէմը մեծ ասպարէզ բացեց նամանաւանդ տեխնիկապէս լաւ զինւածներին, ընդունակներին և տնտեսապէս ունեւորներին: Արդար՛ սոքա են, որ մատակարարում են արդիւնաբերութեան մեծամեծ դրամագլուխներ: Սոքա են, որ ստեղծում են մեծամեծ ձեռնարկութիւններ, որոնք անկասկած վայելել են տալիս անցեալ դարերում չտեսնւած բարիքներ: Բայց այս բոլորը անուում է գլխաւորապէս հարստանալու նպատակով, լոկ եսական շահերը աւելի առաջ ունենալով: Այդ նպատակին հասնելու համար արդիւնաբերող կապիտալիստները դիմում են ամեն տեսակ միջոցի: Այստեղ գործ են դնում շահադիտութիւն, մութ և անխիղճ այլ գործողութիւններ, վատնող մրցումն և յաճախ մենավաճառութիւն: Բանւորների հետ վարւելու կերպն էլ կախած էր գործարանատէրերի անձնական կամքից, որ զրեթէ անսահման էր տնտեսական ասպարիզում մինչ ներկայ 19-երորդ դարւայ կէսը: Գործելու այս տեսակ իրաւունքը և ազատութիւնը տրւած էր կապիտալիստներին օրէնքով, որոնցից նոյն իսկ բանւորը զուրկ էր, եթէ միայն սա կարողանար կապիտալիստի զրութեանը հասնել:

Ներկայ տասնեւիններորդ դարւայ կէսից յետոյ ձեռնարկութիւնները սկսեցին խոշորանալ և զրաւել իրանց մօտ բանւորների մեծ

Քանակութիւն: Այսպիսով բանւորները կուտակեցին մեծ քանակութիւններով խոշոր գործարանների շուրջը, նամանաւանդ այն մեծ գործարանների շուրջը որոնք գիւղերում են գտնւում. բանւորները կամայ ակամայ սկսեցին յարմարեցնել իրանց կեանքը, կացութիւնը և սովորութիւնները մեծ գործարանների պահանջներին, սոցա վարչութեան և կանոնների սխտէմին և բնւորութեանը, այնպէս որ ժամանակի ընթացքում բանւորների և գործարանատէրերի մէջ ստեղծւեց մի փոխադարձ կախում, որ թէ բարոյական և թէ տնտեսական է: Այժմ անժխտելի է, որ բանւորների բարւոք դրութիւնից կախած է գործարանների բարւոքութիւնը և փոխադարձապէս: Եթէ այս երկու դասակարգերի մէջ բարոյական և տնտեսական կապը և կախումն այնքան իրան զգալ են տալիս, ինչպէս ուրիշն չաշխատել բարելաւել նոցա մէջ եղած արդի լարւած յարաբերութիւնները, որոնցից ծագում է երկու դասակարգերի մէջ մի անեղանելի անդունդ: Իսկ այս վերջինը յառաջացնում է նոցա մէջ փոխադարձ ատելութիւն, անհաւատարմութիւն և, որ գլխաւորն է, մի անզուսպ կիրք միմեանց հարստահարելու: Ոչ ոք չէ ուրանում՝ ներկայ տնտեսական կազմակերպութեան բարիքները: Ամենամեծ և ամենաառաջին բարիքն այն է, որ քաղաքակիրթ մարդկութիւնը վայելում է ազատութիւն իր բոլոր գործերի մէջ: Հէնց միայն այս կողմից ներկայ տնտեսական կազմակերպութիւնը համեմատապէս մի մեծ բարիք է: Սակայն անսահման ազատութիւնը տնտեսական բոլոր գործառնութիւնների մէջ ունեցաւ սպասածին հակառակ հետեանքներ, որոնք մեծամեծ վնասներ յառաջ բերին և անարդարութիւններին տեղիք տւին: Ում չէ յայտնի, օրինակ, այն մեծ վնասը, որ ծագում է բանւորների գործադուլից Եւրոպայում բանւորների գործադուլը ստացել է բողոքի մի ձև, որին նոքա ղիմում են ստիպւած լինելով այն անարդար բանելու պայմաններից, որ նոցա առաջարկւում են գործարանատէրերից: Ի հարկէ բոլոր նմանօրինակ երևոյթները ցանկալի չեն և վնասակար են: Այս վերաբերութեամբ տնտեսական գիտութիւնը, լուրջ մամուլը և օրէնսդրութիւնները միաձայն են: Արդարեւ 19-րորդ դարւայ սիլբում չիշեալ տնտեսական ազատութիւնը մի հասկանալի պահանջ

էր: Այդ ժամանակ գիտութիւնը և օրէնսդրութիւնը մեծապէս աշխատեցին այդպիսի ժամանակակից հասարակական պահանջին բաւարարութիւն տալու: Իսկ 19-րդ դարւայ վերջում բացարձակ և անսահման ազատութեան վրայ հիմնւած տնտեսութիւնը այլ ևս միակ պահանջ չէ երևում: Շնորհիւ այս իշար դործ դրւած սիստէմի՝ բանւորների անձնական յարաբերութիւնները դէպի իրանց դործարանատէրերը լարւել, վատթարացել և հասցրել են բանւոր շրջանների դրութիւնը մի բաւականին ստոր աստիճանի անսպասելի կերպով և հակառակ տղատութեան զաղափարին: Այժմ Եւրոպայում մի ահագին խնդիր է դարձած նոյն իսկ այդ ազատութիւնը փրկելու և սորա անընդհատ զարգացող վնասակար կողմերը վերացնելու: Այս նպատակի համար հարկ է համարւում լաւացնել և վերանորոգել տնտեսական և հասարակական յարաբերութիւնները հրամայող և վարիչ շրջանների և բանող շրջանների մէջ: Սոցա հատկեցնելով՝ եւրոպական քաղաքակրթութիւնը մի մեծ դործ արած կը լինէր յետնորդ դարերի պատմութեան համար: Եւրոպական քաղաքակրթութիւնը բարոյական իրաւունք և միջոցներ ունի այս դարագլուխ կազմող դործին մի կերպով նպաստելու: Եւրոպացիք ընտելացել են ազատութեան և եղբայրսիրութեան զաղափարին: Սրանով նոքա տոգորւած են ահա մի դար է, թէև այդ իդէալին կատարելապէս հասնելու համար, հարկաւ, զեռ ևս շատ ժամանակներ կ'անցնեն:

Այսօր եւրոպական բանւորը պանդուխտ և թափառաշրջիկ է: Նա չէ կարողանում մի տեղում երկարատե փնալ—հաստատուելու համար, որովհետեւ նրան չէ յաջողւում իր միակ օրավարձով իրան համար մի զիրք ստեղծել, որ նրան ապահով կացուցանի: Բանւորների պանդխտութեանը նպաստում է նմանապէս կատարելագործւած մեքենաների ներմուծութիւնը, որոնք համարեա թէ արհեստի մէջ վարժւած բանւորների տեղ են բռնում: Այս հանգամանքը առաջ է բերում մրցումն բանւորների մէջ, ուր անվարժ բանւորները յաղթում են վարձելով դործարաններում շատ ցածր վարձագներով: Անշուշտ շատ տեղերում դործարաններ կան, որոնք իրանց յատուկ բնաւորութեամբ բանեցնում են միևնոյն բանւորներին տարիներ շարունակ: Այնու ամենայնիւ դոքա գրեթէ բացառութիւն-

ներ են կազմում և զործ ճարելու համար տեղափոխումն և թափառումն դարձեալ ներկայացնում են մի ընդհանուր երևոյթ:

Ուրեմն բոլոր խնդիրը նրանումն է կայանում, որ բանւորները ապահով դրութիւն ձեռք բերեն և զոհ չգնան այն հարատահարող հանդամանքներին, որ ներկայ տնտեսական կազմակերպութեան արդիւնք են: Եւ այս խնդիրն է, որին նւիրւած են տնտեսական դիտութեան գլխաւոր ներկայացուցիչները, որոնց մէջ գերմանական տնտեսագէտ Շմոլլէրը մեծ դեր է կատարում այդ վերաբերութեամբ իր առաջարկութիւններով: Շմոլլէրը իր նորադոյն գրւածքում լրջօրէն ուսումնասիրում է յիշեալ խնդիրը և կարծում է, որ կարելի է բանւորների և զործարանատէրերի մէջ հաշտութիւն կացացնել, ստեղծելով բանւորների համար օրավարձի այժմեանից աւելի արդար և բաւարար պայմաններ: Նա առաջարկում է մոցնել այնպիսի վարձատրութեան սխաւէմ, որ բանւորների օրավարձը բարձրացնէր աստիճանաբար համեմատ սոցյա տեխնիկական վարժութիւնների և երկարատե ծառայութիւնների: Միայն տեղ-տեղ Եւրոպայում նմանօրինակ վարձատրութեան սխաւէմը մոցրած է և ունեցել է բաւարար հետեւանքներ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այսպիսի վարձատրութեան սխաւէմը բաւարարութիւն է տալիս արդարութեան պահանջին: Երբոր արհեստի մէջ վարժ բանւորը աւելի վարձ է ստանում քան անվարժ բանւորը, երբոր մի զործարանում երկար տարիներ ծառայած բանւորը նոյնպէս աւելի է վարձատրւում քան քիչ ժամանակ ծառայածը, այն ժամանակ սպասելի է, որ բանւորները սերտ կապւած կը մնան զործարանների հետ և չեն ձգտիլ թափառելու մի տեղից միւս տեղ: Օրավարձի աստիճանաբար բարձրութիւնը այն հետեւանքը կ'ունենար, որ բանւորը չէր չուսահատուիլ իր ապագայի մասին: Սա կը յուսար, որ սա էլ կարող է այն աստիճան յառաջ գնալ, որ մի օր ձեռք կը բերի տուն ու տեղ, ընտանիք կը կազմի և ստիպւած չի լինիլ պատահարքներին ենթարկւելու: Բացի այս առաւելութիւնից՝ երկարատե մի զործարանում բանեւոյց՝ բանւորների մէջ կը ծագէ ընկերական ոգի և կապ իրանց տէրերի հետ, որոնց հասարակական պարտաւորութիւնն է իրանց ստորագրեալների շահերը պաշտպանելու, որպէս զի տէրերն ևս զերծ մնան իրանց շահերին սպառնող

այն վտանգից, որի երևալուն զլիաւորապէս նպաստում է բանւորների անապահով դրութիւնը:

Վարձատրութեան այդ սիստէմը յաջողութեամբ իրագործելու համար Շմոլլէրը առաջարկում է սահմանել խոշոր գործարաններում բանւորներից կազմած մասնաժողովներ: Սոցապաշտօնը կը լինի կանոնաւոր նիստերում իրանց շահերի և գործերի մասին խորհրդակցելի: Արդէն այսպիսի մասնաժողովներ գոյութիւն ունին մի քանի գործարաններում: Սոքա վերահսկում են բանւորներին, որպէս զի կարգ և լաւ բարքեր պահպանեն և արբեցողութեան դէմ առաջն առնելի: Սոքա խնամք են տանում գործարանի այն կանոնների մասին, որոնք վերաբերում են գործարանում պատահող զրտբաղդութիւններից զգուշանալուն և կարծիք են յայտնում այն հարցերի մասին, որ բանւորները յարուցանում են իրանց շահերի վերաբերութեամբ: Մասնաժողովները մասնակցում են նոյնպէս այն բոլոր գործերի մէջ, որոնք կատարւում են բանւորների համար բարեգործական նպատակով: Նկատելու արժանի է և այն ֆակտը, որ եղած մասնաժողովների պաշտօնավարութեան շրջանը հետզհետէ լայնանում է: Այսպէս 1886 թւին Գերմանիայում հիմնւեցին 5615 գործարաններում, զլիաւորապէս գործարանատէրերի նախաձեռնութեամբ, բանւորների համար հիւանդների զանձարաններ և օժանդակիչ և խնայողական զանձարաններ: Ի հարկէ բոլոր յիշած գործարանները չ'ունին բանւորների մասնաժողովներ: Նոցանից միայն մի քանիսը նազ թւով մոցրել են այդ հաստատութիւնը: Բայց ինչ գործարանում որ մասնաժողով կար, այնտեղ զանձարանների հետ կապւած են բանւորների համար հիմնւած կամ հիմնւելիք ճաշարանները, բնակարանները և բազնիքները, որոնք գտնւում են նոյնպէս մասնաժողովների կառավարութեան ներքոյ: Մասնաժողովները սկսել են մինչև անգամ տեղ-տեղ արդէն պատժական դատարանի դերը կատարել: Բանւորները յաճախ ուշ են գալիս գործարան բանելու, յաճախ դիտմամբ փչացնում են մեքենաները և հում նիւթերը, յաճախ գործում են առողջապահական կանոնների դէմ և այլն: Այս բոլոր դէպքերում բանւորները ենթարկւում են պատժի: Պատիժ կրելու ձեւն էլ այն է, որ պատժող բանւորների օրավարձից վերցնւում է մի չնչին մաս, բայց սրանից գոյացած

գումարը չի տրուում գործարանատիրոջ, այլ յատկացնում է բան-
ւորների օժանդակ-գանձարանին:

Առ հասարակ նկարագրած պաշտօնները վարող բանւորների
մասնաժողովները վերջին ժամանակներում բաւականին օգուտներ
են տւել բանւոր դասակարգին: Անհերքելի է, որ ողբա մի յայտ-
նի չափով նպաստած են բանւորական խնդրի լուծմանը: Եւ որով-
հետեւ սոցա գործունէութիւնը ունեցել է այդքան արդիւնաւէտ
հետեւանքներ, ուրեմն պէտք է ցանկալ, որ բանւորների մասնաժո-
ղովները բազմաճանաչ և սահմանաւոր բոլոր խոշոր գործարաններում:
Սա մի ժամանակակից պահանջ է, որ անյետաձգելի է դառնում:
Միայն թէ անհրաժեշտ է մասնաժողովների գործունէութիւնը լայ-
նացնել:

Այս պահանջի ձեւակերպութիւնը գտնում է Շմոլլերը հետե-
ւեալ կերպով.

Բանւորների եղած և հիմնւելիք մասնաժողովներին պէտք է
այսուհետեւ յանձնել այն գործը, որ վերաբերում է օրավարձի և
օրական բանելու ժամերի որոշման և կանոնաւորութեանը: Մաս-
նաժողովները չպիտի վճռեն ինքնակամ կերպով այդ նշանաւոր
խնդիրները: Նոքա յատկապէս խորհրդակցում են գործարանատէրե-
րի մասնակցութեամբ իրանց ընդհանուր շահերի մասին, որոնց
մէջ օրավարձի խնդիրը ամենանշանաւոր տեղն է բռնելու: Նոքա,
կարճ ասած, ծառայում են իբրեւ ամենահաստատ և գործնական
միջոց բանւորների և գործարանատէրերի մէջ ծագած վէճերը օրա-
վարձի վերաբերմամբ վերացնելու և մի համաձայնութիւն կայա-
ցնելու: Մասնաժողովները կարող են խօսել և կարծիք յայտնել մի
գործի սկզբունքների և սորա փոխւելու պայմանների մասին: Իսկ
գործարանատէրերից դարձեալ կախած կը լինի բանւորների շա-
հերը պաշտպանող գործը կատարելու, եթէ միայն զորա համար
համաձայնութիւն կը կացանայ մասնաժողովների և գործարանատէ-
րերի մէջ:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, սրանով գործարանատէրերի
իշխանութիւնը չի վերանում, այլ փոխւում են իշխանութեան
ձևերը և սորա հետ կապւած քարոյական պարտաւորութիւնները
ժամանակի պահանջների համեմատ: Գործարանատէրերը պէտք է

զգան և լրջօրէն մտածեն, որ իրանց գործունէութիւնը ոչ միայն հարստութիւն դիզելու և վաճելու, կեանք վարելու համար է, այլ որ նա մի շատ պատասխանատու պաշտօն է, որ մեծամեծ պարտաւորութիւններ ունի կատարելու հասարակութեան առջև: Ել չի կարելի բանւորների հետ վարւել իբրև լոկ աշխատանքի գործիքների հետ, իբրև մի մեռած մասսայի հետ, որ ամեն հրամանին և կոպտութեան հնազանդում է: Երբոր բանւորները միջոցներ կունենան իրանց շահերի մասին խօսելու և սոցա պաշտպանելու, երբոր իրաւունքների հաւասարութիւնը պայմանաւորւած կը լինի փոխադարձ շահերի պաշտպանութեամբ և խնայողութեամբ, այն ժամանակ միայն կարելի է սպասել և յուսալ ստոր դասակարգի բարոյական բարձրութիւնը, այն ժամանակ կը վերանան սպառնալիքը, վրէժը, ատելութիւնը և թշնամութիւնը երկու դասակարգերի մէջ, որոնք ծագում են վերջինների շահերի խիստ հակասութիւնից: Գործարանատէրերը չեն կորցնում իրանց դէրերը և իշխանութիւնը: Սոքա հաշտում են այն պայմանների հետ, որոնք ստիճալ ական են դառնում բանւորների հետ մինչև այժմ ունեցած չարաբերութիւնները աւելի արդար կերպով ձևափոխելու, որովհետև տնտեսական կազմակերպութեան զարգացման աստիճանը այս պահանջում է: Միթէ պահանջ չէր այն օրէնքը, որ Գերմանիայում 1889 թւին վերջնականապէս կանոնաւորեց բանւորների ապահովագրութեան գործը: Եթէ այս հաստատութիւնը իրականացաւ բանւոր դասակարգի համար, միթէ մի այլ հաստատութիւն չի կարող սահմանել, որով բանւորները մասնակցեն սեպհական շահերի պաշտպանութեան մէջ այն ձևով, որ համապատասխան կը գտնւի բանւորների արդի մտաւոր և բարոյական աստիճանին: Գործարանատէրերը և բանւորները — երկուսն էլ կոչւած են աջակցելու հասարակական խնդրի լուծմանը: Երկուսն էլ պարտաւոր են եւրոպական քաղաքակրթութիւնը փրկել սպառնացող յեղափոխական արհաւիրքից որ սպառնում է տապալել այն ամենը ինչ մարդկութեան համար սուրբ է: Հասարակական կեանքը շատ պաշար է տւել մարդկային գիտութեանը այս լուրջ եղրակացութեանը հասնելու: Մնում է գործը միայն օրէնսդրութեանը, որ պիտի կատարի այն ինչ որ կեանքը և յառաջադիմութիւնը պահանջում են:

Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ԵՐԻՅԵԱՆ, Ալէքսանդր.—«Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում: Մասն Ա. (1800—1832 թթ.): Թիֆլիս, տպարան Մ. Մարտիրոսեանի և ընկ.» 1894 թ.: Մեծ ութածալ. ԺՁ+658 երես, տառ № 12: Գինն է 2 ռ. 50 կոպ., ճանապարհածախսով 3 ռուբլի:

Մեր առջևը դրած փառաւոր հատորը բոլորովին գուշտ է հայոց սովորական հրատարակութիւնների շարքից: Սա մի պատմական աշխատասիրութիւն է, զորմ տասնեակ տարիների քրտնաջան աշխատանքի, գլուխ-գործ ժամանակակից հալ պատմագրութեան թէ նիւթերի առատութիւնով և թէ պատմածքի սիստէմականանութեան տեսակէտից: Պարոն Նրիցեանը, որը առհասարակ նորագոյն ժամանակների անցքերին տեղեակ անձի համբաւ ունի—մինչ ալթմ չէր ստեղծել մի խոշոր գործ, որով նա սերտ կապէր ժամանակիս պատմութեան գրականութեան հետ. իւր ներկալ գործքով, սակայն, նա ոչ միայն գալիս է իւր տեղը որոշելու ալզ գրականութեան մէջ, ալ և մի փառաւոր արձան է կանգնեցնում ռուսահայերի պատմական գրականութեանը 19-երորդ դարում:

Ճիշդ է, ալսպիտի կարծիք չալտնելու համար զլուշութիւնը մեղ պէտք է թեւադէր սպասել խոստացւած երկրորդ հատորին, բալց ալս առաջին հատորով ամբողջ գործքի ընդհանուր բնաւորութիւնը արդէն որոշւած կարելի է համարել. և նորանով մեծ գրականներէն տրւած որ առնալն պատմութիւնը՝ սկսած 1832-ից մինչ 1857 թւականը, որ ընդգրկում է Յովհաննէս Կարբեցու և Ներսէս Աշտարակեցու կաթողիկոսութիւնները, արժանաւոր շարունակութիւնը կը լինի ալս առաջին հատորին, թէ և խոստացւած երկրորդ հատորը պէտք է պարունակի նաև Մատթէոս, Գէորգ IV և Մակարի կաթողիկոսութիւնները:

Ալս առաջին հատորը բովանդակում է Յովսէփի, Դաւթի, Դանիէլի և Նիրհմի կաթողիկոսութիւնները և նոցա ժամանակակից ռուսահայոց

պատմութիւնը, որքանով անցքերը վերաբերում են քաղաքական կեանքին: Ընթերցողների ահազին մեծամասնութեան համար մեր դարու հաջող աչք չըջանի պատմութեան մանրամասնութիւնները գրեթէ կատարելապէս անդադար էին: Ահա ինչու ընթերցողների ընդհանրութեան համար Նրիցեանի պատմութիւնը նույնքան մի «չալտնութիւն» է որքան լալտնութիւն էր Բաֆֆրի «Խամսալի Մեւլիքութիւնները»: Դորա պատճառը անշուշտ պատմական գրածների մեծ սակաւութիւնն է և պատմական հետազոտութիւններին նւիրւած ձեռնհաս անձերի գրեթէ բացակայութիւնը:

Պարոն Նրիցեանը սկսում է իւր պատմութիւնը Յովսէփ արքեպիսկոպոսի կաթողիկոս ընտրւելուց 1800 թւականին: Այդ ժամանակ Էջմիածինը գտնւում էր զեռ ևս պարսից սահմաններում. բայց կարևոր է որ Յովսէփ կաթողիկոսի ընտրւելովն է առաջին անգամ սկսւում ռուսական քաղաքականութեան միջամտութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսների ընտրութեան և առ հասարակ Էջմիածնի գործերի վերաբերմամբ: Այդ հանգամանքը մէկն է գրքի մէջ շօսաբանած բաղմամբիւ ալ նշանաւոր կէտերից, և նորա զարգացմանը թուլ է տալիս լաւ հետեւելու պ. Նրեցեանի աշխատութիւնը: Մինչ աչք ժաժանակ կաթողիկոսի ընտրութիւնը, որ կատարւում էր Էջմիածնի միաբանութեան, ռուսահայոց առաջնորդների մասնակցութեամբ և Պոլսի ազգայինների հաւանութեամբ, ենթարկւած էր թէ պարսից և թէ տաճկաց պետութիւնների ազդեցու-

թեանը. դորա վրալ ալժմ եկաւ ու աւելացաւ ռուսաց քաղաքականութեան ազդեցութիւնը: Շնորհիւ աչք բանի, եթէ մինչ ալժմ նորընտիր կաթողիկոսին ճանաչելու համար հարկաւոր էր պարսից հրովարտակ, բայց մանաւանդ թիւրքաց Սուլթանի Ֆերմանը, ալժմ արտաքին կողմից տաճկական Ֆերմանը զեռ ևս մնալով իբր զլսաւոր պալման՝ դորա վրալ աւելացաւ ռուսաց կաթերական հաստատութեան թուղթը: Բայց նկատելու արժանի է, որ աչք կարգը հաղիւ տեկց մի տասենակ տարի, և գործադրւեց միայն Յովսէփի և Դանիէլի ընտրութիւնների համար, աչնպէս որ Դանիէլի լաջորդ Նիրեմի կաթողիկոսանալը կատարւեց ազգային ընտրութեամբ, բայց միայն ռուսաց հաստատութեամբ՝ առանց հետամուտ լինելու Սուլթանի Ֆերման ստանալուն, չնայած որ Էջմիածինը զեռ ևս ռուսաց հողի վրալ չէր և Պոլսեցի հալերին լաջողւեց աչնու ամենաչնիւ տաճկաց կառավարութիւնից թուղտութիւն ստանալ նոր կաթողիկոսի անունը չիշատակել: Նիրեմի լաջորդ Յովհաննէս Կարբեցու կաթողիկոսանալը կատարւեց, երբ Արարատեան աշխարհը (Նրեանի խանութիւնը) Էջմիածնով հանդերձ ռուսաց էր պատկանում: Այդտեղ մենք տեսնում ենք որ կաթողիկոսական ընտրութիւնը կատարւում է արդէն աւելի անմիջական ազդեցութեան ներքոյ ռուսաց տեղական (Վովկասեան) իշխանութեան և, ընտրութեամբ Էջմիածնի միաբանութեան, որին ներկալ է լիւնում ռուսաց կառավարութեան ներ-

կապացուցիչը. երկու կանդիդատները առաջարկուում են հալ աշխարհական աւագանիներին հաւանութեանը և ապա ռուսաց կապեր հաստատութեանը:

Այդ ժամանականից Տաճկական-Պարսկական կառավարութիւններին միայն հաղորդուում էր կատարած ակտի մասին:

Ռուսաց միջամտութիւնը 1800 թեականին արդարացնում էր ռուսաց տէրութեան կողմից նրանով, որ Ռուսաստանում ևս Հալերկային, կար նաև հալոց մի թեմ (Հաշտարխանինը, որովհետև այդ ժամանակ Բեսարաբիայի անկախ թեմ դեռ ևս չկար): Ապա այդ հանգամանքը աւելի ծանրակշիռ դառաւ, երբ Վրաստանը միացւեց Ռուսաստանին, իսկ Վրաստանում հաստատւած էր հալոց թեմ դեռ վրաց ժամանակ: Դորա վրալ չետոյ աւելացաւ Արարատիան աշխարհի նւածումը 1827—28 թ., որով արդէն իսպառ վերացաւ պարսից և տաճկական կառավարութիւնների ազդեցութիւնը և կաթողիկոսական ընտրութեան հաստատելու պահանջը նոցա կողմից:

Ռուսաց կառավարութեան միջամտութեանը կաթողիկոսական ընտրութեան մէջ դարուս սկզբում, անկասկած, մեծապէս նպաստել է այս հանգամանքը որ այդ ժամանակ հալ եպիսկոպոսների մէջ եղել է Յովսէփ արքեպիսկոպոս իշխան Արղութեանը, Ռուսաստանի հալոց թեմի առաջնորդը՝ ալն ժամանակաւ հոգևորականութեան մէջ այդ խոշորագոյն անձնաւորութիւնը, որը կաթողիկոսութեան բնական թեկնածուն էր

Ղուկաս կաթողիկոսի մահւանից չետոյ († 1799, դեկտ. 25): Եւ թէ որքան սերտ կապ կար ռուսաց միջամտութեան խնդրի և Յովսէփ անձնաւորութեան մէջ, այդ երևում է նրանից, որ ռուսաց առաջին միջամտութիւնը եղաւ նոյն ալդ Յովսէփի օգտին, ընդդէմ Էջմիածնի միաբանութեան տրամադրութեան, որը հարկադրւած եղաւ իր առաջին վճիռը չօգուտ (Տաճկահալ) Դանիէլի փոխել և սորա հետ միասին նաև Յովսէփին ընտրելի համարել, վերջնական ընտրութիւնը Պոլսեցիներին թողնելով: Եւ ալդ բաւական չեղաւ ռուսաց դեսպանի ջանքերով Դանիէլ և նորա կուսակիցները Պոլսում աքսորւեցին և Յովսէփը չաղթանակը տարաւ ահա այդ գնով:

Միջամտութեան ուժգնութիւնը պակաս սաստիկ չէր, բաց և աւելի աղէտալի էր՝ Յովսէփի չաջորդ Դաւիթ եպիսկոպոս Ղորղանեանի կաթողիկոսական խնդրում, ընդդէմ նոյն Դանիէլի և ընդդէմ Էջմիածնի միաբանութեան, ընդդէմ հալ ժողովրդի կամքի, բացառութեամբ սակալն Թիֆլիսի Դաւթեան կուսակիցների: Եւ միմիայն կալսր Ալէքսանդր I-ի անձնական արժանիքին պէտք է վերագրել, որ Դաւիթ-Դանիէլեան խալտառակութեանը վերջ տրւեց Դանիէլի հաստատութեամբ, թէև գործը դորանով իսկոյն չդադարեց:

Եւ միթէ սա մի պատահական բան էր, որ թէ Յովսէփի և թէ Դաւթի խնդրում համազգային տրամադրութեան հակառակ գործողները Թիֆլիսի հալ աւագանիներն էին? Անշուշտ դա պատահական չէր. չոյս-

Ներքը դրած վրաց արքունիքի և ռուսաց կառավարութեան պաշտպանութեան վրայ և ալդ ղորութիւններով ճնշումն դործ դնելով Նրեանի Սարգարի վրայ—Թիֆլիսի աւագաճեմները ցոյց տւին թէ ինչ հասկացողութիւն ունէին աղգալին ընտրութեան մասին և թէ ինչպէս էին նոքա իրանց զգացումներով կապւած մնացեալ հայութեան հետ։ Նուեթէ Յովսէփի ղէպքում կար մի անդիմադրելի հանգամանք—արքեպիսկոպոսի անձնական գերագահութիւնը, Գաւթի ղէպքում ալ խոսմ խոսառ բացակայում էր։

Գանիէլի վերջնական ընտրութիւնը և տէրութիւնների կողմից ճանաչելը, սակայն, մի մեծ բարդական չաղթանակ էր աղղի ընդհանրութեան համար։ Գանիէլը ընտրւած էր 1800-ին և չաջողեց ընտրւեցնալ Յովսէփից վետով—կրկին չաջողեց Գաւթի պատճառով։ Քաջեց սնուր անարդանքներ Գաւթի և Նրեանի խանի և պարսից Շահի ձեռքից—Բալց աղղի կամքը իւր չաղթանակը տարաւ, և Գանիէլը բարձրացաւ ղահը—ստիպւած հաւանութեամբ բոլոր երեք ղետութիւններին։

Գանիէլի չաջորդ Նիքիմի կաթողիկոսանակը եղաւ ղեռ ևս ալն ժամանակ (1809), երբ Էջմիածինը պարսից հողի վրայ գտանւելու պատճառով պարսից հաւանութիւնը անհրաժեշտ պալման էր, և երբ ղեռ կենդանի էր պարսիկների մոտերիմ ղահընկեց Գաւթի, որը նորից կարող էր ղլուխ բարձրացնել։ Բալց արղէն ալնքան ղղելի էր պարսից տիրապետութիւնը, ալնքան խախտ

ւած Էջմիածնի անդորրութիւնը և նոյնքան աւելի գերագահելի էր համարում ռուսաց համակրութիւնը ու համաձայնութիւնը ալդ խնդրում, որ ղեռ ևս Գանիէլի կենդանութեան օրով, նորա իսկ ցանկութեամբ Էջմիածնից խնդրք գնաց Պետերբուրգ, ռուսաց կայսրին՝ Ռուսաստանի թեմի առաջնորդ (Գաւթի թշնամի) Նիքիմի կաթիկոպոսին կաթողիկոս հաստատելու համար, որ և կատարեց արղէն Գանիէլի շուտահաս մահաւնից վետով։ Նու ալդ կատարեց առանց նախօրօք ղլտութեան Տաճկահալերի և առանց բանակցելու անգամ բարձրաղղն Գաւթի հետ։ Ալղալիսի վափուկ ղրութեան մէջ գտնւելով Պոլսի պատրիարքը և ամիրաները առանց ֆերմանի էլ կարողացան իրաւունք ձեռք բերել որ Նիքիմի կաթողիկոսի անունը ղիշւի Տաճկահալոց եկեղեցիներում։ Բալց ինչ վերաբերում է միջաղղալին իրաւունքին՝ Նիքիմի կաթողիկոս հաստատւելը մի կարեւոր պատմական բոպէ պէտք է համարել։

Պրն. Նրիցեանի ղիրքը, որ իւր սխտեմական պատմածքով առատ նիւթեր է տալիս կաթողիկոսութեան պատմութեան ալս և ալն մոմէտները իրանց պատմական շարադարութեամբ ղմբռնելու համար, իւր էջերի ամենամեծ մասը նւիրում է Նիքիմի կաթողիկոսութեան ժամանակին։ Նու ընական է ալդ. Յովսէփ, Գաւթ և Գանիէլ կաթողիկոսութիւն ևն անում միալն իննը—տասը տարի (1800—1809), միջղեռ Նիքիմի կաթողիկոսութիւնը տարածւում է եռապատի կաւելի երկար ժամանակամիջոցի վրայ, 1809-ն մինչ 1830 թւականը, Բալց

միաջն ժամանակամիջոցը չէ կարելորը, ալլ և հալոց պատմական • կեանքի շատ աւելի մեծ ուժգնութիւնը Եփրեմի ժամանակ և պատմական գրապրութիւններն անհամեմատ աւելի մեծ առատութիւնը:

Գրքի 658 էջերից 612-սը նւիրւած է ալլ ժամանակամիջոցին: Եւ պատմութեան ոգին կազմում է ոչ թէ Եփրեմ կաթողիկոսը, ալլ ալլ ժամանակաւ հալոց հոգևորականութեան և, կարելի է ասել՝ նաև բոլոր Ռուսահալոց իշխող ոգին՝ Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին, (լեւտովալ կաթողիկոս), ալլ զօրեղ անձնաւորութիւնը՝ որի գործունէութեան մասին ի մօտոյ ծանօթանալուն հնարաւորութիւն է տալիս պ. Նրիցեանի ներկալ աշխատութիւնը: Ալլ պատմութիւնը լիքն է նաև դրամատիկական բոլորներով. Ներսէսի կռիւը Թիֆլիսի աւագանների հետ, իբրև վրաստանի հալոց թեմական առաջնորդ, Ներսէսի կատարած դերը Ռուսական պարսկական պատերազմի մէջ 1826—28-ին, պարսկահալոց գաղթականութեան խնդրում, Ներսէսի և Կովկասեան տաղանդաւոր և զօրեղ կուսակալ Պատկիւնի ընդհարումները, ալլ ամենի գեղեցիկ պատկերացումը դարձնում են պ. Նրիցեանի գիրքը նաև լոկ ընթերցանութեան համար մի վերին աստիճանի հետաքրքրական պատմութիւն:

Պր. Նրիցեանը դուրս է բերում Ներսէս Աշտարակեցուն իբր մի հոգևորականի, զօրեղ և անընկճելի կամքով խելօք, հեռատես, և իբր մի մարդու, որի անձի մէջ կենդրոնանում էր իւր ժամանակաւ ազ-

գալին և եկեղեցական քաղաքակա-նութիւնը, բալց և շիտակութեամբ լարած ուսուց իշխանութեանը: Ներսէսի դէմ գործողները հալերից, աշխարհական թէ հոգևորական, մերկանում են պ. Նրիցեանի գրածքում որպէս ժամանակաւ չարիքներ կամ որպէս սոոր արարածներ: Այսպէս է մեր տպաւորութիւնը պ. Նրիցեանի գրածքից:

Իրողութիւն է նաև, որ Ներսէսը լինելով վրաստանի հալոց թեմական առաջնորդ, իրապէս ոչ միաջն ալլ թեմի գործերն էր կառավարում, ալլ և իշխում էր ս. Էջմիածնում, վալելելով Եփրեմ Կաթողիկոսի անսանձան հաւատը, անդամ սորա երկիւղածութիւնը, որի աչքում Ներսէսը մի տեսակ «նախախնամութեան մարդ էր» (l'homme providenciel): Նոյն իսկ Բեսարաբիա տեղափոխելով Ներսէսը շարունակեց իւր ալլ զերը կատարելատարածելով իւր հեղինակութիւնը նաև վրաստանի թեմի և Էջմիածնի վրա: Ալլ իշխանութիւնը ալլքան իրական էր, որ Էջմիածնի սինօդական կառավարութիւնը Ներսէսին, Բեսարաբիա, «ամենախոնարհ և ալտարարութիւններ» էր ուղարկում, տեղեկացնելով նորան պատահած անցքերի մասին, սպասելով նորա կարգադրութիւններին և մեծարելով նորան իբր «Գերամբարձ մեծանձնութեան Ատուածարեալ տեառն Ներսիսի՝ բարձր սրբաղան արքեպիսկոպոսի և ասպետի, ծաղրադոյն կառավարչի հոգևորական գործոց» (գրութիւն 1829 թ. Յունիսի 30):

Եւ իրօք, Եփրեմի օրօք՝ Ներսէս

արքեպիսկոպոս Աշտարակեցին հաջոց հոգևորական գործերի ծախագոյն կառավարչի դեր էր կատարում, թէ թիֆլիս և թէ լետոյ Բեսարաբիա եղած ժամանակ, չնայած Պասկելիչի անողոք թշնամութիւններին և հալածանքներին, ինչ էր ալդ, կաթողիկոսական իրաւունքների բռնադատումն (ուզուրպացիա) արդեօք? Պր. Ներիցեանի բերած նիւթերը բաւարար պատասխան են տալիս ալդ հարցին:

Ներսէսը իւր ալդ իրական իշխանութիւնը բանեցնում էր ոչ միայն գիտութեամբ Նփրեմ կաթողիկոսի, այլ և սա ինքն էր որ ամեն կերպ նպաստում էր Ներսէսի օգտին ճանաչել ալդպիսի հեղինակութիւն: Դեռ ևս 1822 թականին Նփրեմը հրաժարական տւեց կաթողիկոսութիւնից, ապաւինելով իրան Ներսէսին, որը ոչ միայն չուզեց օգտւել ինքը կաթողիկոսանալու, որպէս ալդ Նփրեմի ջերմ փափագն էր, այլ Ներսէսն էր որ աշխատեց և պահպանեց Նփրեմի օգտին սորա կոչումը և իշխանութիւնը, երբ իբր թէ հրաժարւած Նփրեմը Հաղպատի վանքումն էր առանձնացած: Ապա էջ 599 բերւած է Ներսէսին գրած կաթողիկոսի մի գրութիւնը 1828 թականից, որից պարզ երևում է թէ որքան անկեղծութեամբ նւիրւած էր Նփրեմը Ներսէսին: Ալդ գրութեան մէջ ևս Նփրեմը խնդրում է Ներսէսին «արտասօք հանդերձ» փութալ գալ ժամ չառաջ ի Հալապետական Աթոռ» մինչև մեռեալ իցեմ. զի անձամբ իսով օծեալ զմիայն արժանաւորդ ալամ Աթոռոյ՝

Հալապետ և Կաթողիկոս ընդհանուր ազգիս...»:

Պասկելիչի քաղաքականութիւնը, ճիշդ է, այլ վախճանի տարաւ, և Նփրեմի երկրորդ և վերջին հրաժարականից չետոյ դա՛ բարձրացողը եղաւ մի մարմնացած սև նախանձ՝ Կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսը, Պասկելիչի protégé ն. բայց վերուիշեալ ֆակտերը բաւականաչափ պարզում են աչն խնդիրը թէ ինչու էր Աշտարակեցին «ծախագոյն կառավարիչ» հաջոց հոգևորական գործերի Նփրեմի օրօք և թէ ինչ բնաւորութիւն ունէր ալդ հեղինակութիւնը: Եւ, պէտք է ասած, ոչ միայն պ. Ներիցեանի առաջ բերած իրողութիւններն են ալդ եղրակացութեանը բերում, այլ և ինքն պ. Ներիցեանը ալդպէս է մտածում: Նորա ալս առաջին հատորը մի տեսակ ապովեէող է Ներսէս Աշտարակեցուն, թէ և ոչ մի տեղ նա կողմնապահութեան մէջ իրան չի մատնում, թողնելով որ գովումէսաները իրանք փաստաբանութիւն կատարեն:

Երկրորդ հատորը սկսւելու է Յովհաննէս Կարբեցու կաթողիկոսութիւնից. բայց արդէն ալս առաջին հատորում պատմւածը ալդ անձի մասին գուշակել է տալիս թէ ինչ դատաստան է սպասում Նփրեմի չաջորդին:

Անշուշտ մենք այսքանով դեռ ևս չսպառեցինք աչն բոլոր կէտերը, որոնք չօչափւած են պ. Ներիցեանի գրքում: Եւ մեր նպատակն էլ չէր ալդ: Ընթերցողին է թողած ալդպիսի կէտեր որոնելը, որովհետև ներկայ գրքում խնդիրներ չեն չօչափ-

ւած, ալ միայն սիտէմական պատմութիւն է արած ժամանակի կեանքի: Բայց խնդիրներ ուսումնասիրելու համար ալ պատմութիւնը թէ նիւթեր է տալիս և թէ ուղեցուց է ծառայում: Պատմած առարկաների թուում չի չենք ռուս-պարսկական և ռուս տաճկական պատերազմները 1826—27—28 թթ., Պարսկահայերի և Տաճկահայերի գաղթը զէպի ներ

կալ Երևանի հաճաճը, Ալեքսանդրապոլ, Նոր-Բալաղէդ, Ախալցխա և այլն:

Ցանկանում ենք որ այս գործի շարունակութիւնը իրան երկար սպասել չտալ: Ուզում ենք հաւատալ հեղինակին որ երկրորդ հատորը լրջ տպւում է:

Ա. Ա.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԾԽԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Նրբ որ ընտրողական սկզբունքը արդէն այնքան խորն արմատներ է ձգել մի ժողովրդի հասարակական կեանքի մէջ, ինչպէս այդ կայ մեզանում, պէտք էր սպասել որ ընտրութեան կանոններն ևս վաղուց մշակւած լինէին և ընտրողական գործի կանոններին լաւ ընտելացած լինէր ժողովուրդը: Իրօք այդ այդպէս է, ընտրողական կանոնները դեռ ևս լաւ մշակւած չեն մեզանում, և խօսքս ոչ միայն սպազբւած կանոնադրութիւնների մասին է, այլ և ընտրողական աւանդութիւնների մասին: Այդ նորանից է, որ իսկական ժողովուրդը, թէև իւր անունից շատ ընտրութիւններ են կատարւել, բայց իսկապէս ինքը չի մասնակցել ընտրութիւններին: Ազգային խնդիրների մէջ մի ժամանակ ժողովրդի աւագանիներն են բանեցրել ընտրութեան իրաւունքը, շնորհիւ այն ազդեցութեան որ նոքա ձեռք էին բերած ժողովրդի լայն խաւերի վրայ և շնորհիւ այն կարեւորութեան, որ զանազան ժամանակներում մեր երկրում տիրած կառավարութիւնները նւիրում էին այդ աւագանի համարւած անձերին: Աւելի սահմանափակ շրջաններում՝ համայնական գործերում՝ տեղական հարուստները, տեղական աղաներն են բանեցրել նման ազդեցութիւն, և ժողովրդի ընտրութիւն համարւել է այս կամ այն աղայի կամքը, որի առաջ և խոնարհւել է նոյն այդ ժողովուրդը: Նւ շատ բնական է որ այդ ձևի ընտրութիւնները չէին կարող առաջ բերել մշակւած կանոններ: Ինչպէս որ պարզ էր ընտրութիւնը, նոյնքան և պարզ էր կանոնը. անհատի իրաւունքը ոչնչացած լինելով՝ հարկ չէր զգացւում կանոնադրութիւններ մշակելու, որոնցով իւրաքանչիւրի կամքի ազատ արտայայտութիւնը ապահովւած և ընտրողական խարդախութիւնների առաջն առնւած լինէր:

Այդպիսով պարզ է թէ ինչու անցեալից մենք չունենք ժառանգած ընդարձակ և հմտալից կանոնադրութիւններ, թէև ժառանգած ունենք ըտրողական սկզբունքի գաղափարը և ժողովելու սովորութիւնը: Ահա նաև պատճառը թէ ինչու մեր հին աւանդութիւններին յարած թէ աշխարհականները և թէ եկեղեցականները առհասարակ անհմուտ են նորագոյն հասկացողութեամբ առած ընտրութեան գործին և թէ ինչու այնքան թերի են ցայժմ եղած կանոնադրութիւնները:

Նոյնը պէտք է ասել նաև ժողովրդի ընդհանրութեան մասին, որը շատ տեղ դեռ պարզ գաղափար չունի ընտրողական գործի սրբութեան մասին և շատ անգամ հակառակ է ընտրութեան դաշխիճում իրան այնպէս պահելու, ինչպէս եթէ բազարում կանգնած խուռը բաղմուլիս մէջ վիճելիս լինէր:

Ընտրողական գործերի կանոնաւորման համար հետևապէս չպէտք էր ներշնչել հայկական անցեալից, այլ պէտք էր ներշնչել լուսաւորած Եւրոպայի տաճ օրինակներից: Եւ եթէ այսօր մեր երկրի հայերը կարողանում են որ և է կանոնաւոր ընտրութիւն կատարել, այդ լինում այն ղէպքերում, ուր եւրոպակիր ժմարդիկ կարողանում են հեղինակութիւն բանեցնել նոյն այդ ընտրողական ժողովներում: Մասնաւորապէս չիշատակելու է որ ընտրողական կարգերին հասարակութեանը վարժեցնելու համար մեծ դեր են կատարում պետութեան տաճ կանոնադրութիւններով հրահանգւող քաղաքային ընտրութիւնները, որոնց համար սահմանւած կարգ ու կանոնները օրինակելի են մնում բոլոր այլ տեսակի ընտրողական գործերի համար: Այդ կողմից դեր կատարում են նաև մեր այլ և այլ ընկերութիւնները, որոնք շատ թէ քիչ որոշ կանոնադրութիւններ ունեն:

Ռուսահայերիս մէջ եկեղեցական գործերի համար կանոնադրութիւններով հրահանգւելը կարելի է ասել որ սկսւում է 1836 թւականին հոգեւոր կառավարութեան համար տաճ կառավարչական պրոթեսիսիցով, իսկ Տաճկահայերի մէջ 1860 թւի Սահմանադրութիւնով: Այդ կանոնադրութիւններ սահմանում են կաթողիկոսները հատ-հատ դպրոցների համար, առանձին-առանձին: Եւ ամեն մի դպրանոց մեզանում մինչ այժմ էլ ունի իւր առանձին կանոնադրութիւնը: Տարբեր կանոնադրութիւններ ունէին սկզբում նաև

ծխական դպրոցները, մինչև որ նոցա մէջ միատեսակութիւն մոցրեց Մական կաթողիկոսը «Վանոնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց և Յրագիր առարկայից աւանդելոց ի նոցին» 1889 թւականին հրատարակած կանոնադրութիւնով:

Այդ կանոնադրութիւնների մէջ կան յօդաճներ նաև ընտրողական գործի կարգ ու կանոններին վերաբերեալ, բայց ոչ լիակատար կերպով: Բնական է այդ պատճառով թէ խիստ դատած՝ որքան թերակատար պէտք է եղած լինէին ծխական ընտրութիւնները, որոնք հիմք են կազմում թէ երեցփոխների, թէ դպրոցական հոգաբարձութիւնների և թէ կաթողիկոսական պատգամաւորների ընտրութիւնների համար: Ժողովուրդը, իւր ամբողջութեամբ, միայն ծխական ընտրութիւններին մասնակցելու հնարաւորութիւնն ունի, մնացածը թողնւում է իւր ընտրած պատգամաւորներին, բացի երեցփոխից, որը ընտրւում է ծխական ժողովրդից ուղղակի և ոչ պատգամաւորների միջոցով:

Զկային որոշ կանոնադրութիւններ ծխական ընտրութիւնների համար, և եթէ մի ժամանակ նոցա անհրաժեշտ կարիքը մեծապէս չէր զգացւում, այդ նորանից էր որ ընտրողական իրաւունքի կատարեալ զիտակցութիւնը չկար ժողովրդի խորը խաւերի մէջ: Եւ ծխական ընտրութիւններին մասնակցողները կազմում էին միայն փոքրաթիւ անձեր:

Բայց հանգամանքները փոխւեցին, երբ ժողովրդի աւելի խորը խաւերի մէջ սկսեց արթնանալ հետաքրքրութիւն դէպի մամուլի մէջ իրար հետ կռող կուսակցութիւնները: Պա դեռ ևս կատարեալ զիտակցութիւն չէր, բայց դա մի զարկ էր որ տրեց ժողովրդին իւր իրաւունքից օգտւելու. իսկ ընտրութեանը մասնակցելը մի կարեւոր և անհրաժեշտ պայման է ընտրողական կրթութեան ժողովրդի համար: Ժողովրդի այդ բուռն մասնակցութիւնը խորթ պիտի թւէր մեր հին կարգերին սովոր մարդկանց. չէ որ մենք արդէն վերը ասացինք թէ ընտրողական գործերի համար ներկայ ժամանակը, ներկայ սերունդները ինչ են ժառանգած հայկական անցեալից:

Որ եղան մարդիկ, որոնք իրանց գլուխները շշմած տեսան այդ նոր երևոյթից, դա հասկանալի է. մարդիկ իրանք իրանց կոչւած ղեկավարներ էին կարծում ժողովրդական կամ ազգային գործերին,

և յանկարծ այդ նոյն ժողովուրդը, նոյն ազգը գալիս է և «իւր ուզած» մարդկանց է ընտրում, ինքը ուզում է «կշռել» նոցա, որոնք ընտրւել են ուզում...

«Մուրճ»-ը շատ անգամ է առիթ ունեցել մեր ընտրողական գործերի մասին խօսելու: Վերջին անգամ տարաբախտաբար առիթ տուողը ոչ թէ մի ուրախալի երեւոյթ էր, այլ տխուր երեւոյթ, այն է թէ ընտրողական գործերի ծաւալումից գլուխ կորցրածները ինչ-պիսի ընթացքի են հետեւում այդ նոյն ընտրողական գործերը վտանգելու համար (տես «Ընտրողական գործերի վտանգումը» «Մուրճ» 1894 թ. № 2): Այդ յօդածի դրդմամբ տեղական մամուլը մի շարք յօդածներ գրեց. և մեր խաւարամիտների գրածները այնպէս էին, որ իսկի չէին էլ թագցնում այն թէ իրօք ինչ բաներ են երազում եղել նոքա: Ոքա իրանց յօդածներով հաստատեցին մեր վախը և կարծես ուզում էին ասել, թէ՛ դեռ սպասեցէք, դուք բոլորը չգիտէք թէ ինչն է ենք մտածում...

Այդ մամուլից կարծես չուզեց յետ մնալ ինքը «Արարատ»-ը: Կարծես ի պատասխան մեր յօդածի, նա իւր ապրիլի համարում տպեց, ճիշդ է, ամենեւին ոչ ընդարձակ յօդած, այլ մի շատ լակոնական ասացածք, որի համաձայն «Ձայները չպէտք է համարւին, այլ կշռւին»: Եւ այդ խօսքից աշխատեց իւր օգուտը քաղել «Արձագանք»-ը մի ընդարձակ առաջնորդող յօդածով: Խաւարամիտները իրանց հացին կարող քսւած տեսան «Արարատ»-ի մէջ տպած «իմաստալից» ասածւացքով: Որքան իրաւամբ—այդ թողնում ենք մի կողմ, բայց որ նոքա պատճառ ունէին իրանց ուժեղացած կարծելու—դա հաստատ է:

Եւ ահա, երբ մենք ասում ենք թէ ժողովուրդը իւր քւէով պէտք է «կշռէ» ընտրւել ցանկացողներին, մեզ գալիս ու ասում են թէ, ընդհակառակը՝ ժողովրդի տւած ձայները պէտք է կշռեն, և այդ կշռի մէջ իբր թէ «թիւը» գործ չունի կատարելու: Մենք ասում ենք թէ հասարակաց կարծիքը ինքը մի դատաստան է. այժմ գլուխները շշկլած մարդիկ գալիս ու պահանջում են որ հասարակաց կարծիքի վրայ պէտք է դատաստան անել, դատարան հիմնել. և ի հարկէ նոքա համոզւած են թէ հասարակաց կարծիքի վրայ բարձած դատարանի անպաւնները իրանք են լինելու...

Եւ ահա այդ չար գուշակութիւնների ամիսներումն է որ խորհրդաւոր եղանակով յետադէմ մամուլի օրդանները հաղորդում էին թէ Թիֆլիսի թեմի առաջնորդարանում պատրաստում է ծխական ընտրութիւնների մի կանոնադրութիւն:

Այժմ այդ կանոնադրութիւնը, բրոշիւրով տպւած, մեր առջին է. նա խորագրած է՝ «Կանոնք վասն ընտրութեան Հոգաբարձուաց Հոգևոր Ուսումնարանաց Հայոց թեմին Վրաստանի և Իմերէթի, տեաւք ի թեմական Առաջնորդէ»: Ստորագրած է՝ «Թեմակալ Առաջնորդ Հայոց Վրաստանի և Իմերէթի Գեորգ Կալիսկոպոս Սուրէնեանց»:

Մենք վերը տեսանք որ ծխական ընտրութիւնները երկար ժամանակ որոշ կանոնադրութիւն չունէին և ասացինք թէ ինչին պէտք է վերագրել այդ հանգամանքը: Տեսանք նաև որ ժողովրդի աւելի բուռն մասնակցութիւնը ծխական ընտրութիւններին՝ վերջին տարիների գործ է: Որոշ կանոնների կարևորութիւնը ուրեմն սկսել էր արդէն զգացւել: Եւ ահա զորանից յառաջացան տպւած առաջնորդական «Հրահանգներ», ու թառնական թւականների վերջերքից սկսած: Առաջին տպւած «Հրահանգը» պատկանում է Թիֆլիսի նախկին թեմական առաջնորդ Արիստակէս Կալիսկոպոս Սեդրակեանին: Նման «հրահանգ» հրատարակեց ապա նորա յաջորդը՝ այժմ հանդուցեալ Մամբրէ Եպ. Սանասարեան, այն է 7-ն ապրիլի 1891 թ. և յետոյ մի այլ հրահանգ կաթողիկոսական պատգամաւորի ընտրութեան համար: Թէ Արիստակէս Եպ. Սեդրակեանի և թէ Մամբրէի տւած հրահանգները շատ կարճ էին: Մուրճ-ի մշտական ընթերցողներին յայտնի կը լինի Մամբրէի տւած հրահանգը, որի թերութիւնների մասին բաւականին երկար խօսել ենք «Մուրճ»-ի 1891 թւականին ապրիլի համարում: Հրահանգը պարունակում էր ընդամենը եօթ յօդւած, ուր ինկատի չէին տառնւած մի շարք հանգամանքներ: Այդ պատճառով ընտրութեան կարգը բոլոր եկեղեցիներում միևնոյնը չէր լինում, որովհետև ամեն ծխական ժողով ինքն էր իւր վճիռներով լրացնում հրահանգի պակասորդները: Եւ մենք դեռ այն ժամանակ պահանջում էինք մի լիակատար կանոնադրութիւն, ուր ի նկատի առնւած լինեն ընտրողական գործի բոլոր

հանգամանքները: «Թողովներին մարդիկ գալիս են ընտրութիւններ կատարելու և ոչ թէ օրէնքներ սահմանելու, ասում էինք մենք, պահանջելով մի լիակատար կանոնադրութիւն («Մուրճ» 1891, էջ 533):

Թիֆլիսի ներկայ առաջնորդ Գէորգ Եպիսկոպոս Սուրենեանց կամեցել է այժմ մեր առաջը դրած «Կանօնք»-ներով այդ թերին լրացնել: Եւ իրօք, «Կանօնները» պարունակում են ոչ թէ եօթը, այլ 49 յօդած:

Չնայած դորան, ներկայ «Կանօնները» մի խառնափնդոր բան են ներկայացնում: Այստեղ մենք բացակայ ենք տեսնում հմուտ խմբագրի ձեռքը: Խմբագրական կողմից նոքա շատ ու շատ թերութիւններ են ներկայացնում: Այդ մենք կը տեսնենք ներքեւ, բայց դա ինչ և իցէ ուղղելի բան կը լինէր. խնդիրը աւելի ծանրակշիռ է դառնում, երբ արեւած որոշումները յարուցանում են նաեւ պրինցիպիական դժարութիւններ: Տեսնենք թէ ովքեր են ներկայանում այդ կանօններով՝ ծխական ընտրողի իրաւունք ունեցող:

Ում պէտք է համարել ծխական ձայնատու, ահա ամեն մի ընտրողական կանոնադրութեան ամենաէական կէտը:

Արիստակէս Եպիսկոպոսի տւած հրահանգը առաջին անգամ եկաւ վերացնելու մի շփոթութիւն, որ տիրում էր մինչ այն ժամանակ այդ խնդրում: Ծխական ընտրութեան մէջ կարելի էր տեսնել բուն ծխականին խառը ժամաւորի հետ: Որքան դա այժմ հասկանալի է, բայց մինչ այն ժամանակ, որոշ հրահանգի բացակայութեան պատճառով, յաճախ շփոթում էին ծխականին՝ ժամաւորի հետ: Այդ առաջին հրահանգում որոշւած էր, թէ մի եկեղեցում ընտրող լինել կարող է միայն նորա ծխականը, այսինքն նա որ այդ եկեղեցու քահանայի հովութեան մէջ է: Այսպիսով ժամաւորը, այսինքն նա որ սովորաբար մի եկեղեցի է յաճախում, բայց որի ծխականը չէ, չպիտի մասնակցէր այդ եկեղեցու ընտրութիւններին:

Այդ կարևոր էր Թիֆլիսի նման քաղաքում, ուր շատ դաւառացիք կան ժամ գնացող, բայց որոնցից շատերը սակայն ծխական չեն կամ չէին Թիֆլիսի որ և է եկեղեցու կամ քահանայի:

Շնորհիւ այդ հրահանգի, ծխական լինելը պարտաւորիչ լինելով ընտրողի համար, ծխականների թիւը Թիֆլիսում այժմ անկասկած շատ աւելի մեծ է քան մի տասնեակ տարի առաջ:

Հանդուցեալ Մամբրէ եպ. Սանասարեանի տւած հրահանգներում ևս այդ յօդւածը մնաց նոյնը: Ծխականի և ժամաւորի շփոթութիւնը ուրեմն արդէն առմիշտ վերացրած էր: Բայց այդ պահանջը որքան կարեւոր էր, նոյնքան էլ տարրական էր:

Իսկ այն, ինչ տարրական չէ, այդ միւս որոշումներն են ձայնաւոր ծխականի մասին:

Եւ ահա շփոթութիւնը մեծ էր նախկին հրահանգներում, և տարաբախտաբար նոյնն ենք տեսնում ներկայ «կանոնների» մէջ: Ընտրողը այստեղ հանդիսանում է ծխականը, որը 1) արական սեռին է պատկանում և 2) տարեկան է (§ 5), 2) եթէ մուճւած է ընտրողական ցուցակի մէջ (§ 5), 3) եթէ ազատ է եկեղեցական ապաշխարութիւնից, քրէական դատարանի ներքոյ չէ, եկեղեցական պաշտամունքներից մերժւած չէ և ով դեռ ևս ուսանում է (§ 6, կէտ ա, բ, գ, դ), 4) եթէ ազատ է եկեղեցական և դատաստանական պատիժներից և տուգանքներից (§ 8), 5) եթէ ընտրողը միակն է ժողովի մէջ իւր ընտանիքի անդամներից (§ 10), 6) եթէ ծխական է երեք տարուց ոչ պակաս (§ 11), կամ եթէ մէկ եկեղեցուց միւսն է տեղափոխւել տնօրէնութեամբ հոգեւոր իշխանութեան (§ 13), եթէ ծխականի ընտանիքը Թիֆլիսից դուրս տեղերում ծխական ընտրող չէ (§ 16), 8), եթէ նա ծխական քահանայ չէ (§ 19), 9) եթէ քահանայի հրաւիրատունով հրաւիրւած է ժողովի (§ 21):

Նախ ուշադրութիւն դարձրէք այն բանի վրայ, որ միմիայն իմանալու համար թէ ով է ընտրողը կամ ձայնատու-ծխականը՝ հարկաւոր է ոչ պակաս քան ութ իրարից բաժան և հեռու. յօդւածներ կարդալ: Դա պարզ նշան է որ կանոնադրութեան կազմողները իրանք որոշ դադափար չեն ունեցել գործը սկսելիս և շարա-յարել են յօդւածները առանց իրանց խիստ հաշիւ տալու յօդւածների իրար հետ ունեցած սերտ կապի մասին: Այդտեղ առնւազն երեւում է հմուտ խմբագրողի բացակայութիւն:

Բայց այդ չէ գլխաւորը: Կանոնադրութեան մէջ չեն պաշտպանւած ծխականի իրաւունքները:

Եւ արդեօք ամեն ինչ վտանգւած չէ արդէն նրանով որ քահանայի հրաւիրատոմսին այդքան վճռական նշանակութիւն է տրւած? Այլ ևս ինչ իրաւունքներից կարելի է լրջօրէն խօսել, երբ մի կանոնադրութեան մէջ կայ այսպիսի յօդւած՝

«§ 21. Յետ ստորագրելու զթիւ ընտրողացն, հրաւիրելոց և առաջիկայ եղելոց, եթէ թիւ առաջիկայիցն չիցէ պակաս քան զմի մասն ի հնդից համօրէն ցուցակադրելոցն, նախագահն խտկացուցանէ նոցա տեղիս: Այլ ք, որ ք ոչ են հրաւիրեալ, չունին իրաւունս մտանելու ի ժողովն և ներկայ լինելու»:

Իսկ 18-րդ յօդւածում աււած է թէ «հրաւէրք» խօսքը ինչպէս պէտք է հասկանալ: Դա այն հրաւէրքն է, որ անում է նախագահելու նշանակւած քահանան՝ հասցնելով ամեն մի ընտրող ծխականին իւր (քահանայի) ստորագրութեամբ վաւերացրած մի հրաւիրատոմս:

Ասացէք խնդրեմ, եթէ, մի յօդւածի համաձայն, պարտաւորիչ է հրաւիրատոմս ուղարկելը ամեն մի ընտրող ծխականին, էլ ինչ հարկ կայ մի այլ յօդւածով սպառնալ ընտրելու իրաւունք ունեցողին՝ ներս չթողնել ժողով, եթէ նա որ և է պատճառով «հրաւիրատոմս» ստացած չէ: Մենք հասկանում ենք և հաւանում ծխականին հրաւիրատոմսով ժողովի հրաւիրելը, բայց դորա հետ ծխականի իրաւունքներ կապել, — դա բոլորովին անհասկանալի բան է:

Անցեալի «հրահանգներից» ներկայ «Աանոնները» ուրեմն ժառանգել են այդ կէտը, չնայած որ մամուլը այդ մասին արդէն խօսել էր, և չնայած որ անցեալում հրահանգների այդ կէտը շատ թիւրիմացութիւնների տեղիք էր տւել: Ահա թէ երեք տարի առաջ մենք ինչ դանդաւան էինք անում այդ մասին՝ —

«Հրահանգը պահանջում է, ժողովի վաւերականութեան համար, ծխականների առնւազն մի հինգերորդի ներկայութիւնը: Բայց իսկապէս, և ինչպէս երևում է բոլոր եկեղեցիներում, նախ և միայն թէ արդեօք առանձին տոմսակներով հրաւիրւածները մի հինգերորդը ներկայ է եղել թէ ոչ: Կարծես թէ ընտրութեան մասնակցելու իրաւունքը ամեն ծխականին չի պատկանում, այլ միայն նրան, ում որ քահանաները բարեհաճել են առանձնապէս հրաւիրելու» (տես «Մուրճ» 1891 թ. № 4, էջ 534):

Ձնայած դորան, մենք կարող ենք վկայել որ յաջորդ ընտրութիւններին, մինչ ամենավերջին ժամանակներս, երբէք չհրահանգւեցին այդ կանոնով, և նախկին հրահանգների այդ կէտը ամենացն իրաւամբ անուշադրութեան մատնեց. ժողովի կանոնաւորութեան համար պահանջուած էր ոչ թէ հրաւիրւածների, այլ ծխականների թւի մի հինգերորդը:

Սակայն ինչ է նշանակում որ նախկին հրահանգների այդ անարդար և չիրագործուող կէտը մոծւած է ներկայ «կանոնների» մէջ: Դիտաւորութիւն է եղել դորանում թէ ոչ—դորա պատասխանը անշուշտ կը տրւի: Ուզում ենք հաւատալ որ դա էլ մէկն է այն անթիւ խմբագրական սխալներից և թերութիւններից, որոնցով այնքան լիքն է ներկայ կանոնադրութեան նախագիծը:

Մի այլ որոշում որ վտանգել է ուզում ծխականի իրաւունքը, դա այն յօդւածն է (§ 13), որով իբր թէ թեմական իշխանութիւնը կարող է մի ծխականի տեղափոխել մի եկեղեցուց զէպի միւսը: Հետաքրքրական է իմանալ թէ այդ որ իրաւունքով ով և իցէ կարող է այդպիսի կարգադրութիւններ անել: Թէ՛ դա ևս մի խմբագրական սխալ է?

Բայց անցնենք:

«կանոնք»-ի մէջ ահագին դեր է կատարում «ծխականների կամ ընտրողների ցուցակը»: Դա շատ բնական պահանջ է, որ ամեն մի ծուխ (մի եկեղեցու ժողովուրդ) իւր ծխականների ցուցակը պէտք է ունենայ, որպէս զի, ի միջի այլոց, այդ ցուցակով ստուգւին ծխական ընտրութիւններին մասնակցողների իրաւունքները: Մեր եկեղեցական ընտրողական գործերի համար ծխականների ցուցակներ ունենալու զտեղափարը նոյնքան նոր է, որքան նոր է կանոնաւոր ընտրութիւնների պահանջը: Գիւղերում և գաւառական քաղաքներից շատերում այդ պահանջը եթէ չի զգացւում, այդ նորանից է, որ այնտեղ ծխի անդամները իրար լաւ են ճանաչում: Այլ բան է Թիֆլիսում, Բագուում, Բաթումում, ուր ծխականների փոխադարձ ծանօթութիւնը շատ մակերևութային է: Այդ հանգամանքում ժողովներում յարուցւող այս հարցին թէ

այս ինչ անձը այդ եկեղեցու ծխականն է թէ ոչ՝—պատասխանողը լինում է քահանան, որի վկայութիւնը վճռողական է։ Նոյն-պէս մի գաղտնիք էր մի եկեղեցու ծխական ընտանիքների ընդհանուր թիւը տուհասարակ։ Միմիայն այս վերջին տարիները, երբ ծխական-ընտրողական գործը սկսեց ծաւալ ստանալ, այդ մութ աշխարհի վրայ մի յայտնի չափով լոյս սփռեց։ Թէ Արխատակէս եպիսկոպոս Սեդրակեանի և թէ Մամբրէ եպիսկոպոսի տուած հրահանգներում ժողովի կանոնաւորութեան պամար պահանջում էր «ցուցակագրւածների» կամ ծխական ընտանիքների մի հինգերորդը։ Գորանից բնականապէս ծագեց ծխականների ամբողջ թւի իմանալու պահանջը։ Բայց այդ բնական պահանջը լիակատար բաւարարութիւն չէր ստանում։ ամեն քահանայ աշխատում էր իւր ծխականների թիւը գաղտնի պահել, որպէս զի թեմական իշխանութեան առաջ մեծ ծուխ ունեցող, հետեւապէս հարուստ չերևայ։ Դա կապ ունի քահանաների, նիւթական ապահովութեան խնդրի հետ, և մենք առ այժմ բաւականում ենք իրողութիւնը յայտնելով։ Հետեւեալը սա էր որ հաւաստի կերպով մինչ այժմ էլ ոչ ոքին յայտնի չէ Թիֆլիսի ամեն մի եկեղեցու ծխականների թիւը։ Մնում էր հիմք ընդունել թիւը այն ծխական տների, որոնց անունները ամեն մի քահանայ ներկայացնում էր թէ կոնսիստորիային և թէ ընտրողական ժողովին։

Այդպիսի հանգամանքներում խօսել տպւած ցուցակների մասին—ինքն ըստ ինքեան աւելորդ է դառնում։ Թիֆլիսում, և երևի ամբողջ Անդրկովկասում և թերևս Ռուսաստանում, միակ հայոց եկեղեցին որ փորձ է արել ծխականների տպւած ցուցակ ունենալ, — դա Մոզնու ս. Գէորգ եկեղեցին է, որը մի ցուցակ տպեց 1889 թւականին։ Եւ այդ ցուցակն էլ, վերը բացատրած պատճառներով, լիակատար չէր. բազմաթիւ ծխական ընտանիքներ նորանում չէին յիշատակած։ Ոչ մի այլ եկեղեցի չհետեւեց նոյն իսկ այդ օրինակին, և ինքը Մոզնու եկեղեցին էլ յաջորդ տարիներում չհետեւեց իւր իսկ տուած օրինակին ու նորից չշտապեց աւելի լիակատար ցուցակ կազմելու։

Ահա ինչու ներկայ «Կանօնք»-ը այդ կողմից ըստ երևութին յառաջադիմութիւն է ներկայացնում։ «Կանօնք»-ը պարտաւորե-

ցնում է ամեն եկեղեցուն տպագրել ընտրողներին ցուցակը ամեն հինգ տարին մի անգամ, ամեն տարի տպածից ջնջելով դուրս եկածներին և ներմուծելով նորերին (§ 9):

Եւ այնուամենայնիւ ներկայ, «Վանօնքը» ոչ միայն բաւականաչափ բարեկարգութիւն չի մոնցում ծխականների ցուցակներ կազմելու դործի մէջ, այլ նոյն իսկ շփոթութիւն է գցում. «Վանօնքը» պահանջում է ոչ թէ «ծխականների» լիակատար ցուցակը, այլ միայն այն մարդկանց ցուցակը, որոնք այդ Վանօնքի համաձայն՝ ընտրող են ճանաչւում. և թէ ովքեր են ճանաչւում ընտրողներ—այդ էլ թողնւած է ծխական քահանաներին որոշելու: Եւ քանի որ բոլոր ծխականների ցուցակ չի լինելու, ուրեմն ոչ ոք էլ չի կարող ստուգել թէ որքան լիակատար է կազմւած նոյն իսկ «Վանօնք»-ի համաձայն ընտրելու իրաւունք ունեցողների ցուցակը...

Շարունակենք: Համաձայն 10-րդ յօդւածի՝ իւրաքանչիւր անբաժան գերդաստանի արական սեռի անդամներից (որոնք են օրինակ՝ Սարգիս և Միքայէլ Կիրակոսեան չափահաս եղբայրներ) միայն մէկը իրաւունք ունի մասնակցելու ընտրութիւններին: Եւ որովհետեւ ընտրողական ցուցակի մէջ ամեն մի գերդաստանից միայն մէկն է չարձանագրւած լինելու (ղիցուք միայն Սարգիսը), ուրեմն եթէ Սարգիսը ժողովին գալու չլինի՝ Միքայէլը չպիտի կարողանայ իւր գերդաստանի իրաւունքը բանեցնել. չէ որ երբ Սարգսի անունը մուծւած է ցուցակի մէջ՝ Միքայէլի անունը այլ ևս չի լինիլ ցուցակում. իսկ ցուցակում չիււած լինելը հիմնական պայման է ընտրելու իրաւունք ունենալու (տես § 5):

Բայց աւելի կարեւոր հարցը սա է թէ ինչու ամեն մի անբաժան գերդաստանի չափահաս անդամներից միայն մէկը իրաւունք պիտի ունենայ ընտրող լինել: Այդ որոշումը հիմնւած է գերդաստանական սկզբունքի վրայ, որը հին սկզբունք է և որի տեղը բոլոր յառաջաւոր ազգերի մէջ բռնել է անհատի իրաւունքը: Այո, կար ժամանակ երբ գերդաստանի մէջ աւագը ներկայացնում էր իւր թէ որդիների և թէ բոլոր կրտսեր եղբայրների կարծիքը և կամքը: Ամենքիս յայտնի է որ այդ հանգամանքը փոխւել է, և ոչ ոք այժմ չի զարմանում երբ եղբայրներից մէկը այս կարծիքի է, միւսը՝ այլ կարծիքի:

Նաև մի տան անդամների բաժանում կամ ոչ բաժանում լինելը ներկայումս այնքան էլ հեշտ չէ որոշելը որքան այդ կար նահապետական ընտանիքների ժամանակ:

Բացի այն որ սկզբունքը մենք չենք հաւանում, այդ տեսակ պայմանները միմիայն դժարացնելու են ընտրողական կարգին ցուցակներ կազմելու գործը, մանաւանդ որ այդ կատարելու է ձեռքով այն ծխական քահանաների, որոնք բոլորովին վարժ չեն օրինաւոր ցուցակներ կազմելու:

Փոխանակ այդ ամենի՝ պէտք է կանոնները փոխել այսպէս՝— պարտաւորացնել ծխական քահանաներին (պատժի սպառնալիքով) կազմել իրանց ծխականների լիակատար ցուցակը, լինեն ամեն մի ծխական ընտանիքում չափահաս արու զաւակներ [Թէ չլինեն ¹⁾]. ամեն մի №-ի տակ գրել հօր, իսկ եթէ սա կենդանի չէ՝ մօր անունը, չիշելով բոլոր չափահաս թէ անչափահաս արու բաց չպսակւած զաւակներին և շամուսնացած աղջիկներին, չիշելով դոնէ արականների ծննդեան տարին: Իրաւունք տալ ծխական ընտրութիւններին մասնակցելու բոլոր արականներին, որոնք առնւազն 25 տարեկան են: Հաշիւները չբարդեցնելու և վէճերի տեղիք չտալու՝ համար՝ հաշւի չառնել ծննդեան ամիսը և օրը, այլ միայն ծննդեան տարին (որի համաձայն, օրինակ, 1894 թւականին 25 տարեկան կը համարւեն 1869 թւականին ծնւածները): Իրաւունքից զրկել միմիայն նոցա, որոնք կորցրած կը լինեն քաղաքացիական իրաւունքները Ռուսաստանում:

Ամեն հինգ տարին մի անգամ այդ հիմնական ցուցակը նորից կը կազմւի ու կը տպւի, իսկ ամեն տարի հիմնական ցուցակին ձեռագրով կ'աւելացնւեն նոր ծուխ դրւածները և նորանից կը ջնջւեն թէ ննջեցեալները և թէ այդ ծխական ցուցակից դուրս եկածները, որպէս նաև աղջիկներից նոր ամուսնացածները: Բոլոր ամուսնացած արականները պէտք է առանձին ցուցակագրւեն, ապրում լինեն նոքա բաժանում թէ ոչ բաժանում իրանց ծնողներից կամ

¹⁾ Այդպիսի լիակատար ցուցակներ առանց այն էլ հարկաւոր են լինելու, երբ մեղանում կը մոցնւի «ծխական հոգաբարձութիւնների» օրէնքով որոշւած հաստատութիւնը:

եղբայրներից. որպէս նաև առանձին պիտի ցուցակագրեն նոքա, որոնք առանձին են ապրում, լինեն նոքա ամուսնացած թէ ոչ ամուսնացած: Տարւոյ ընթացքում ամուսնացած արականների անուաները կը ջնջեն հիմնական ցուցակից և նոր համարով կը գրեն ձեռագիր յաւելածի մէջ, եթէ ամուսնացածը նոյն եկեղեցու ծուխ կը փնայ:

Ունենալով ծխականների մի այսպիսի պարզ և լիակատար ցուցակ, այլ ևս աւելորդ կը լինի ունենալ մի առանձին զննորդական ցուցակ: Թէ ովքեր պիտի լինեն ընտրողներ—այդ կ'երեւայ նաև «ծխականների ցուցակից»:

«Կանոնը»-ը մի եկեղեցում ընտրող է համարում նոցա միմիայն, որոնք 3 տարի ծխական են եղած: Գուցէ զորանով ուղեցած են առաջն առնել ծխականների թափառականութեան, երբ յատկապէս մի որ և է ընտրութեան մասնակցելու նպատակով՝ այս կամ այն քահանայի մօտ ծուխ են գրում: Դա մի երևոյթ է, որ նկատելի է միմիայն այս վերջին տարիներս, որ և շատ հասկանալի է: Բայց, բացի այն որ դա մի ժամանակաւոր երևոյթ է, խնդիր է թէ թեմական կառավարութիւնը ունի արդեօք իրաւունք ծխականի իրաւունքներին այդպէս արգելք լինելու:

Ծխականի իրաւունքը սահմանափակել որ և է կերպ, կամ արգելք լինել այդ իրաւունքը բանեցնելուն թէկուզ մի օր—դա յամենայն դէպս «տեղական իշխանութեան» իրաւասութիւնից վեր բան է: Մենք կարծում ենք որ այդպիսի որոշում կարող է տալ միմիայն Վեհափառ Կաթողիկոսը բայց ոչ թեմակալ առաջնորդը: Դա երկրորդական խնդիր է և այլ առաջնակարգ. նոյնը կարող ենք ասել նաև այն որոշման մասին, որի համաձայն ամեն մի անբաժան գերդաստանից միայն մէկը իրաւունք ունի ընտրող լինելու: Գորանով զրկում է զերդաստանի մի այլ չափահաս անդամ ծխականի իրաւունքից: Ճիշդ է այդ որոշումը նոր է, այլ վերցրած է նախկին հրահանգներից. բայց այժմ ժամանակ է վերջապէս նաև այդ մասին խնդիր բարձրացնել: Եւ ահա մենք կարծում ենք որ այդ երկու որոշումները վեր են թեմական իշխանութեան իրաւասութիւնից. դոցա համար պէտք է անպատճառ Վեհափառ Կաթողիկոսի հաստատութիւնը:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ԿՈՆԴԱԿ ԱԹԸՂԵԱՆԻՆ

Մկրտիչ Ծառայ Յիսուսի Քրիստոսի և Ողորմածութեամբն Աստուծոյ Կաթողիկոս Ամենայն Հայոց Մայրազոյն Պատրիարք Համազգայն Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Եջմիածնի.

Ամեն. Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ Սրբազան Խորէն արքեպիսկոպոսի խնդալ ի Տէր:

Պարտիք հայրապետական համարիմք հրաւիրել զուշ Զերոյ Սրբազնութեան առ այն թէ սկսեալ ի սեպտեմբեր ամսոյ ամին անցելոյ, հայազգի բնիկք Բագրևանդայ, Մշոյ և այլ բազում տեղեաց Քուրքիոյ, Թողեալ զհայրենական տունս և զարտորայս իւրեանց առանց իրիք խնամոց, յերեսաց սովոյն և նօթութեան զաղթեալ եկին հասին այսօր ի սահմանս Ռուսիոյ հանդերձ ընտանեօք և զաւակօք իւրեանց յեղկելի թշւառութեան և չքաւորութեան, անխնամ և անապաստան և ի լրումն այս ամենայն թշւառութեանց, յանցանելն իւրեանց ընդ սահմանս Ռուսիոյ, պէսպէս չարչարանօք զանակոծեալ կողոպտեցան ի մարդախոշոշ քուրդ հրոսակաց համիտիյէ անւանեալ գնդին և կորուսին զոր ունէինն և զարդիս գտանին ի վշտալի անձկութեան:

Ահաւասիկ այսպիսի վիճակօք պատեալ պաշարեն զմեօք բազմաթիւ զաղթականք աղաւաղելի ժողովրդեանս, որոց աննկարագրելի և սրտատուչոր զրութեան անձամբ անձին ականատես եղաք, և զթշւառութենէ նոցին պատմագրել Զեզ մի առ մի ոչ զորէ գրիչ մեր, զմիտս և զսիրտ մեր ի նոյն սուգ և ի տխրութիւն համակեալ: Թէպէտ իսկզբանէ կառավարութիւնն Ռուսիոյ ոչ թոյլ տայր զաղթականաց անցանել և կամէր զնոսա անդր ընդ սահմանն ի բաց մերժել ի խստաշունչ պահու ձմերան, որով ի գագաթ թշւառու-

Թեան հասեալ ի կորուստ՝ ի մահ կործանելոցն հին արդէն. սակայն տեղեկացեալ մեր կարի ցաւակցութեամբ զոռապանս նոցա, վշտալի սրաիւ փութացաք ուր ուրեմն միջնորդեալ առ կառավարութիւնն Ռուսիոյ. և նահանգապետն Երևանայ, յետ ընկալնելոյ զթոյլութեան թիւնն ի բարձրագոյն իշխանութենէն, ծանոյց մեզ զհնարաւորութիւն առժամանակեայ բնակութեան ի գիւղս մինչ բացցին դրունք դարնանային եղանակաց առ ի վերադարձուցանել զնոսա անդէն ի տեղիս իւրեանց:

Ուստի իբրեւ Հայր հասարակաց փութամ յորդորել զՁեզ, որպէս արթուն հովիւ յանձնեալ Ձեզ հօտիդ և վշտաց վշտակից, զօրացեալ և արիացեալ յերկնաւոր Խնամակալէն փոքրկանցս այսոցիկ, միջնորդ և բարեխօս լինել առ Բ. Դուռն և հրաւիրելով զբարեհաճ ուշադրութիւն մեծի Կայսերն օսմ. պետութեան՝ առաջի առնել զաղիողորմ վիճակ ժողովրդեանս, հոգևոր որդւոց մերոց, և միանգամայն բացալայս առնել հանգամանօրէն զանցից, որոց հանդիպեցան թշուառացեալքն յերեսաց սովոյն և ի ձեռն համեալիցէ զնպին: Գաղթականքս այսոցիկ հաւատարիմ հպատակքն են ի դարաւոր ժամոնակաց հետէ օսմ. Գահոյիցն և արտասուօք և ողբովք, սովեալ և ծարաւի ստիպեալ եղեն թողուլ զհայրենիս իւրեանց, յուսացեալ այլ ուր զերծ մնալ մահւանէ: Արդ ժամ է հայրական խնամածութեամբ ջանալ ժողովել զուխարս ցրուելս և վտարանդիս ի ծոց հայրենի տան, ուր անդրստին ի տղայ տիոց վարէին զկեանս ընդ հովանաւորութեամբ Վեհ. Կայսերն: Յերեսաց սովոյն և հարստահարութեան եկեալ այսր առ գտանել ապաստան ինչ առժամանակեայ, իմացան և տեսին զի աստ ժողովուրդք բազումք են և գիւղք բազմամարդք, և հաւաստեալ գիտեմք թէ դոյզն ինչ մասն հողոյ իսկ ոչ կարացեն ստանալ զաղթականքս և անշուշտ եմք զի ի վերջոյ թափուր յամենայնէ, անհնարին լինիցի նոցա հայթհայթել զկեանս և լինիցին աստանդական թափառողք, կարօտ չորաբեկ հացի ի տար աշխարհիս, հեռի ի հայրենեաց և յետին չար քան զառաջին:

Նկարագրեալ Ձեզ զայս ամենայն անձկութիւնս, որք օր աւուր չաւելուն առ Մեզ, փափագելով փափագիմք տեղեկանալ և զհանգամանս և զգրութիւն Ձեր և առ հասարակ զներկայ վիճակ ժողովրդեանն Հայոց ի հայաբնակ գաւառս Թուրքիոյ: Ի լրոյ և ի լրա-

գրաց տեղեկացաք վասն սովոյն իշխելոյ զարդիս ի Կարին, ի Վան, ի Մուշ և յայլ տեղիս. սակայն անգիտակ եմք արդարեւ թէ տնօրինեալ իցէ արդեօք ստուգապէս օսմ. կառավարութեանն հասուցանել նաւովք զցորեան ի Պոնտոս առ սովեալս և կարօտեալս ի նիկոմիդիոյ և ի զանազան կողմանս և թէ զի՛նչ խորհի Տէրութիւնն Թուրքիոյ վասն թեթեացուցանելոյ և ամոքելոյ զծանրատար զրութիւն բազմաչարչար որդւոց մերոց:

Ուստի առաջարկեմք Ձերումդ Սրբազնութեան հաղորդել Մեզ զայս ամենայն մանրամասնօրէն ի գիտութիւն, որպէս զի երկուստեք ջան ի գործ ղիցուք ըստ կարելւոյն հասանել յօգնութիւն անմխիթար ժողովրդեանս, զի մի՛ յօգնաչարչար և բազմակարօտ հօտին Հայոց հովիւքս կարգեալքս անտարբերութեան շահեսցուք զհամբաւ, այլ զպարտիս մեր հատուցուք ազգիս ի տառապանս և նեղութեան իւրում, հաւատարիմ կացեալ բանին Երկնային օղնականին ամենեցուն թէ «Որովհետեւ արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք»:

Ողջ լերուք ի Տէր:

Մ Կ Ր Տ Ի 2

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գրեցաւ Կոնստան Եմ մարտի 1894 ամի Փրկչական և ըստ տոմարիս ՌՅԻԻ, ի Մայր Աթոռն Հայաստանեայց ի Ս. Եջմիածին, ի Վաղարշապատ:

ՍՈՎԸ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՐՈՒԱՆԴ ԴԱԶԱՐԵԱՆ

I

Այս անցեալ ձմեռը դեռ չէր հասել իր կէսին, երբ ամեն կողմից սկսեցին լուրեր տարածուիլ թէ Ալէքսանդրապոլի և, մանաւանդ, Կարսի շրջակայ գիւղերում հացի սաստիկ թանգութիւն կալ, սով կալ: 'Իրանից չետո՛ւ՝ տեղական մամուլի մէջ՝ պարբերաբար սկսեց մանր-մունր կերպով արծարծուիլ թէ՛ Տաճկա-Հալաստանումն էլ սով կալ և այլ պատճառով ահնաւորից սկսել է դաղթել ժողովուրդը: Այդ լուրերը և տեղեկութիւնները աչնքան թուուցիկ, հատ ու կտոր էին, որ ոչ ոք լուրջ նշանակութիւն չէր տալիս այդ ամենին:

Հեռաւոր դաւառներից և սահմանադիւրից եկած լուրերը սովի ու գաղթականութեան մասին չէին կարողանում չուզել գլխաւոր քաղաքներում, «լուսաւորութեան կենդրոններում» ապրող մարդոց: Մանաւանդ, որ ալստեղի մարդիկ ունեն իրանց սեփական պիտուքները և հոգսերը, իրանց քաղաքային կուլտուրական պահանջմունքները, որոնք աչնքան շատ, աչնքան բազմակողմանի են, որ կլանում են մեր «ինտելիգէնտ» հասարակութեան ամբողջ ժամանակը և ուշադրութիւնը...

Ընկած առօրեայ կեանքի մասնաւոր հոգսերի և պիտուքների ետեից, մեր հասարակութիւնը կարծես բոլորովին չազնցած է համարում իրան, և չի զգում իր վրայ աւելի հեռաւոր, վսեմ պարտականութիւններ...

Լրագրական լուրերի և թղթակցութիւնների մէջ կարդալով սովի ու գաղթականութեան մասին՝ մենք այդ ճակատագրական տեղեկութիւնների վրայ նայել ենք մեր սովորական տեսակէտով, մեր հետաքրքրութեան, հարցասիրութեան զգացմունքին բաւականութիւն տալու համար.— ուրիշ ոչինչ:

Այս տեսակ մոլորւած դրութեան մէջ էի և ես սովի ու գաղթականութեան մասին: Զատիկի տօները մօտենում էին: Ամբողջ Թիֆլիսը ցնծու-

թեան մէջ էր: Բնութիւնն էլ կարծես ուզում էր ներդաշնակ լինել մարդոց աշխուժ, տօնալին ուրախութեանը: Փողոցների ծառերը զարդարում էին կանաչ տերեւներով, պարտէզների ու այգիների կանաչ խոտը հրապուրում էր անցորդի տեսողութիւնը: Լաջն փողոցների ծառերին, ձիաքարշի կալարանների մօտ խմբած էին ծաղիկներ վաճառող երեսնաները և մանրիշակի, չապուլի և ուրիշ անուշահոտ ծաղիկների փունջերը թաքախների մէջ չարած, անդադար առաջարկում էին անց ու դարձ անող տի կիներին, օրիորդներին: Փողոցների աջ և ձախ կողմերում դասաւորած մագաղանների շարքերը փալլում էին ճոխութեամբ, առատութեամբ, շքեղ, թանկագին իրեղէններով, կտորներով, մթերքներով: Ամեն տեղ յուսկութիւն, ամեն տեղ լիութիւն, առատութիւն էր տիրում:

Բախտաւոր հասարակութիւնը ուրախ դէմքով, նոր դարնանալին զգեստներով՝ զբոսնում, անց ու դարձ էր անում «հրաշալի» քաղաքի փողոցների վրայ:

Ահա աշնալիսի մի օր, բոլորովին անսպասելի կերպով՝ Թիֆլիս եկաւ հեռու գաւառական մի անկիւնից՝—Վարսից՝ իմ ամենամօտ ընկերներից մէկը: Կարծես Աստուած ուղարկեց նրան՝ իմ մոլորութիւնը փարատելու համար: Ես երբէք չեմ մոռանալու նրա դէմքի հարազատ, բնական արտաւայտութիւնը, նրա անկեղծ հոգեկան լուզմունքը, երբ նա իմ հարցասիրութեանը բաւականութիւն տալու համար՝ սկսեց պատմել սովի ու զաղթականութեան մասին: Նրա բերնից դուրս եկած ամեն մի խօսքը ես կլանում էի ագահաբար, և միևնույն ժամանակ՝ բոլորովին ակամալ, անկախ որ և է դատողութիւնից՝ ես ենթարկում էի նրա ողեկան թարմութեանը, նրա մէջ եռացող կեանքի հոսանքին: Այո, նրա մէջ կեանքն էր խօսում: Կեանքը իր սովորական, անխարդախ գոյներով: Եւ որքան բարձր էր նա ալք րոպէին իմ աչքում, որպէս երանի էի տալի եւ նրան: Փաղաքային կեանքը, իր կուտուրական ոնոտի հոգսերով, մանր կրքիւրով ու ցանկութիւններով՝ բոլորովին պաշարել էր ինձ, և ես, «գլուխ կորցրածի պէս» չգիտէի թէ ինչի եմ ապրում և ի՞նչ ցանկանում... Իսկ նա, իմ ընկերը, ապրելով գաւառական հեռու մի անկիւնում, ունենալով անմիջական քարաբերութիւն կեանքի հետ, զգալով ժողովրդի ցաւերը և թշուառութիւնը իր սրտի մէջ, — որքան թաւմ, որքան առուգ, որքան աշխուժ է մնացել:

Նրա երկար պատմութիւնը խորը տպաւորութիւն արեց ինձ վրայ, վրաեց իմ արիւնը: Եւ ի՞նչ սոսկալի բաներ էր պատմում նա ժողովրդի կեանքից—սովեալ և զաղթական ժողովրդի: Ահա նրա պատմածը:

II

Անցեալ դարնան սկզբից՝ Կարսի նահանգում երեսցին տաճկահայ պանդուխտներ, իրանց ընտանիքներով, որոնք չունէին ապրուստի ոչ մի

միջոց և, թափառելով գիւղից դուրս, մուրացկանութիւն էին անում: Տաճկահայ բնտանիքների մեղ մօտ երեւալը ոչ ոքի չզարմացրեց. սովորական երևույթ էր աչդ: Ամենքին չալտնի էր տաճկահայերի տնտեսական վատ դրութիւնը և շատ բնական էր՝ աչդ դրութիւնից աղատուել ցանկացողներին՝ մեղ մօտ դաղթելը: Սակայն 1893 թիւը՝ տաճկահայերի վերաբերմամբ, մի առանձին, բացառիկ դրութիւն էր ստեղծել: Աչդ բացառիկ, անբարեկալից դրութիւնը ստեղծող պատճառների մէջ, միայն երաշտութիւնը չէր, որ առաջին տեղն էր բռնում...

«Սկսած անցեալ դարնանից մինչև լուսնար ամիսը՝ զնալով աւելի և աւելի սաստկանում էր գաղթականութեան հոսանքը դէպի մեր կողմերը: Ռուս տեղական նահանգական իշխանութիւնը իր գլխաւոր հօգտերից մէկն է դարձնում աչդ վտանգաւոր հոսանքի առաջ առնելը: Կարսի նահանգի երկրագործ ազգաբնակչութիւնը առանց այն էլ երաշտից սաստիկ վնասւած լինելով՝ մօտ $\frac{1}{2}$ միլիոն պուգ հացահատիկի կարօտութիւն ունէր, թէ ցանքի և թէ ուտելիքի համար: Ուստի տեղական իշխանութիւնը ամեն կերպ աշխատում էր, որ աչդ ժողովրդի վրա չաւելանալ մի նոր քաղցած բաղնիքի: Կարսի նահանգական ատեաններում համարեա ամեն օր ստացւում էին հեռագիրներ. «Գաղթական հայերի մի խումբ երեւոյ սահմանի վրա՝ 50 ընտանիքից բաղկացած: Դարձեալ երեւոյ մի խումբ 20 ընտանիք Բասենի կողմից: Դարձեալ 40 ընտանիք Ալաշկերտի կողմից:» Աւալսէս շարունակ հեռագիրներ հեռագիրների ետևից՝ իմաց էին տալիս գաղթականութեան նորանոր խմբերի մասին: Շատ անգամ աչդ հեռագիրների մէջ լինում էին և աւելացումներ թէ՛ գաղթականների խումբը զուրկ է ապրուստի միջոցից, հէնց աչսօր ուտելու հաց չունին. ինչ կարգադրութիւն էք անում, և ալն:

Աչդ ամսին Կարսում սառնամանիքը իր վերին աստիճանին էր հասել: Տնից մինչև բազար գնալիս, մարդու երեսի մագերից սառցի լուլաներ էին կախում: Աւալսէս աչդ եղանակին, աչդ սառնամանիքի ժամանակ՝ Ալաշկերտից դէպի Կաղզաւն, Բասենից դէպի Ղարազուռթ և Սարիզամիշ՝ հազ գիւղացին իր ահագին ընտանիքով, — որդիք, թոռներ, հարսներ, աղջիկներ, — բոլորն էլ կիսամերկ, բոլորն էլ քաղցից դալկացած, ցրտից կապտած՝ ոտքով իջնում են զանազան ժառերից ու բլուրներից մագլցելով, սալթաքելով... Աչդսէս շարունակ 3, 4, 5 օր ճանապարհ են գնում աչդ թշուառները, սարեր ու ձորեր են անցնում: Երբեք մօր գրկում ցրտից կապտել, կուշ է եկել և հազիւ կենդանութեան ձախեր է արձակում: Թշուառ մալրը սեղմում է նրան իր կրծքին և իր սեփական մարմնի տաքութիւնով աշխատում է փրկել էր զաւակին վերջնականապէս սառնելուց: Մնացած երեխէքը քաշ են գալիս մօր ետևից, իրանց կապտած ձեռնիկներով բռնած մօր, կամ հօր սառած փէշերը: Տղամարդոց բիսերը և միւրուքը սպիտակել

են եղեամնից և սատղի լուլաներից, արտաշնչած օդը խտրոյն սառչում է նրանց զլխի վերեւ, և նրանք դարձեալ շարունակում են ճանապարհը... ահա երրորդ օրն է, որ նրանք գնում են ալդ գծովալին ճանապարհը, երրորդ օրն է, որ փշուր հաց չեն դրել բերանները:

Բալց Բնչ էին անում նրանք տանը, իրանց հալրենի գիւղում, Չու-նէին մէթէ եզներ կող կթան, չուէին հաց, պանիր, իւղ, միս և ալւն,— չինականի առօրեալ անհրաժեշտ պարէնը: Ունէին, ալս 20—25 անդամից բաղկացած ճանապետական տան օճախը վառ էր միշտ: Լձկան եզներ, գութան, արօր ունէին նրանք: Ունէին տասնեակ կովեր, հարիւրաւոր ոչ-խարներ, ունէին հորերով ցորեն, գարի: Իւղ էլ, պանիր էլ, միս էլ՝ ամեն ինչ ունէին նրանք: Լի էր նրանց տունը, առատ էր նրանց սեղանը և միշտ պատրաստ ամեն թշուառի, ամեն անցորդի համար: Սակալն ալ գլաղ էր: Անցաւ ալդ ամենը և եկան ուրիշ տարիներ... Օր չի անցնում, որ աւազակ քիւրդը չալրի ալս կամ ալն հալի դէղը, չքչէ սրա կամ նրա ոչխարն ու կովը, չլկէ աղջկան ու տղին,— և ալդ միշտ, անխտիր չամառութիւնով:

Անուհետեւ սկսում է «լաց և կրճտիւ ատամանց»: Վալ նրան, ալն լանդուղն մարդուն, որ կը համարձակւի դրանց հանդիստը վրդովել, կամ դանդաղել կատարելու նրանց «պատգամները»...

III

«Ահա երեք տարի է, որ հալ գիւղացու առանց էն էլ անտանելի տնտեսական վիճակի վրայ՝ ծանրանում է ալս նոր դրութիւնը: Ծով լինէր կը չորանար, արև լինէր կը մարէր: Միալն հալի համբերութիւնը և ստացւածքը պիտի անհատնելի մնար: Ամբողջ ճաճկա-Հալաստանի հալ աղգաքնակութիւնը ալս բոպէիս ներկայացնում է մի զանգւած, մի մասսա, որ ստեղծւած է միմիայն վճարելու, աշխատելու, արեան քրտինք թափելու համար: Հալ գիւղացու աշխատանքի բոլոր արդիւնքը, նոյն խոկ նրա դրամազլութը—աշխատանքի գործիքները, գոմէշները, եզները, գութանն ու արօրը, վերջապէս՝ հողը,—գիւղացու կեանքի ալդ խարիսխը,—պէտք է ալսմ նադուլի, պէտք է փող դառնալ, որ չաղուրդ տրւի անվերջ պահանջներին, անվերջ հարկերին: Վճարիր հալ-կ ոչխարի, կովի համար, վճարիր հողի բերքի համար, վճարիր ծնած մանուկների համար, հալի, սագի, թռչունների համար, ծնած գառների, ուլերի, հորթերի համար: Տղւ կապալաւուն, վաշխաւուն, տուր զաւթիւններին, միւղիւրներին ու փաշալին,—ամենքին առանձին, բոլորին միատին: Վճարիր զինւորին ու քիւրդին, տաճկին ու փաղիչալին, դատաւորին, քննիչին, դատախազին—վճարիր մէկ խօսքով՝ մեծին ու փոքրին՝ վճարիր, անվերջ վճարիր... Մինչև երբ:

Նրաչառութեան ու անքերթութեան մի առանձին կարիք չկար, որ տնտեսապէս քաղքաւած ժողովուրդը սովի մատնէր: Այժմ նա սոված է. սոված են թէ գաղթականները և թէ տեղում մնացածները: Հաղարաւոր օջախներ, համբա տներ ալօր մարել, ջնջել են: Հալ գիւղացու չէն տունը, նահապետական պարգուծեամբ, իստակութեամբ, առաքինութեամբ մի ժամանակ լի ալդ սրբաւայրը, ալժմ աւերակ, բրիշակ է դառել, նրա կիսաւեր շինութեան չարկի տակ ալժմ պըպղած են քլւրդ կանաչք, և մի երկու քիւրդի լամուկներ ջիւլիթ են տալիս ընդարձակ տան երեսով, և մի գամբու շուն էլ դռան առաջն է պարկած: Ամաչացել է ամեն ինչ, չորացել, աւերակ է դարձել: Իսկ ռւր է ալդ տան տէրը, ռւր են նրա հարսներն ու աղջիկները, ջահիլ-ջիւան, առուպ աղէրքը:—Լարսի փողոցներում, Շիրակի, Կաղզւանի, Սողանլուղի գիւղերում՝ զլխակոր, ցնցոտիներով պատած՝ հաց են խնդրում...

Նախ քան գաղթելը նրանք իրանց վերջին ունեցած-չունեցածը ծախել, սաղացրել են. տուն, տեղ, արտ, անդաստան, կով, եղ, սէխար,— ամեն բան, եթէ մնացել էր քլւրդերի ասպատակութիւններից լետով՝ ծախել-պըծել է: Եւ ալդ ամեն բանից հրաժարւելով, թողնելով իր հալերնի երկիրը, իր հալրական ու պապական բոլոր աւանդութիւնները, թանգագին ճնշեցեալների գերեզմանները, հալ գիւղացին, իր չոքը դրած մի կտոր չոր հացի վրայ, գաղթում գալիս է օտար երկիր: Այժմ նա ոչինչ չունի իր հետ, բացի իր ընտանիքից և նրա պատուից: Այն, գաղթելով՝ նա ազատում է իր ընտանիքը քուրդի կամ թուրքի ճանկերից: Բայց ինչ է սպասում ալդ չարքաշ ընտանիքին գաղթելու ժամանակ, ձմրան ալդ անտանելի ցրտի, քաղցի և ուրիշ հալար տեսակ արտաքին վտանգների մէջ»...

IV

Ընթերցող, դուք չմոռանաք, որ այս ձեր կարդացածը վիպասանութիւն չէ. սրանք իրական դէպքեր են, որոնց նմաններով լիքն է հալ գաղթական և պանդուխտ ժողովրդի կեանքը: Հեռւից հեշտ է լսել և կարդալը: Մանաւանդ, երբ ալդ մեզ հասնում է գտած և ամփոփած կերպով: «Սով», «գաղթականութիւն» խօսքերը, ինքն ըստ ինքեան, առանց վերալիչեալ աղերսական մանրամասնութիւնների, ոչինչ չեն հաղորդում մեզ, ոչ մի տպաւորութիւն չեն անում մեր վրայ: Ալդ «լուկ խօսքերը», որ մենք լաճախ պատահում ենք լրագրութեան մէջ, մեղանում զարթեցնում են հետաքրքրութիւն, մեզ միջոց են տալիս մեծ մեծ խօսելու, դատելու... Բայց երբէք չեն զարթեցնում մեր մէջ զգացմունքներ, երբէք չեն շարժում մեր սիրտը: Ահա սրանով է բացատրւում այն տարօրինակ սառնութիւնը և «զլլտանտիզմը» որով մենք վերաբերեցինք դէպի ժողովրդական ալդ մեծ արհաւիրքը: Մեր կաշին հաստ է. մեզ բաւական չէ ասել թաք թաք

խօսքերը, նախադասութիւնները.—պէտք է աշխատել, որ աչդ խօսքերը, աչդ նախադասութիւնները խորը թափանցեն մեր հոգու մէջ, պէտք է մանրամասն պատկերներով, նկարագրութիւններով՝ կենդանացնել մեր աչքի առաջ ժողովրդի քաջած տանջանքները, լոկ աչն ժամանակ՝ երբ մենք ինքներս կը զգանք մեր մէջ ժողովրդի վիշտը, լոկ աչն ժամանակ, երբ մենք մեր երևակաւութիւնով, մեր գգացմունքներով կը կարողանանք տեղափոխուել՝ աղքատութեան, սովի, բռնութեան և տանջանքների աշխարհը,—մեզ համար մօտաւորապէս հասկանալի կը լինին ժողովրդի կարիքները և մեր պարտականութիւնները դէպի աչդ թշառ ժողովուրդը:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ ՔԱՐՈՋԸ ¹⁾

ՍԻՐԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ.

Մտիկ արէք էս օր Զեզ մի քարոզ խօսիմ, դուք էնպէս կարծում էք, որ քարոզ միայն վարդապետներ կուտան, որպէս թէ Քրիստոսի Աւետարան, Աստածաշուչ գիրք, մեր ճախնի ուրը Հալրապետաց խրատներ և ճառեր միայն վեղարաւոր վարդապետներուն առանձին շնորհւած է, նոքա միայն արտօնութիւն և պաշտօն ունին եկեղեցու բնմէն քարոզ խօսել:

Ոչ, էդպէս չէ. քահանան ճոճնչափ իրաւունք ունի ամէն ժամանակ քարոզ խօսել, խրատ տալ իւր գիւղական ու ծխական ժողովուրդին, ամէն տօնի և կիրակի օրերում. քանի որ մեր գիւղական ժողովուրդ աչնպէս կը լինի, որ տարիներով վարդապետի երես չեն տեսնար: Վարդապետներ երբեմն ամպի պէս կուզան ու կանցնեն, մի կաթիլ անձրև չեն թափեր մեր ցամքած երկրին վրայ: Հապա ով պիտի խօսի Զեզ Աստուծոյ բան ու պատւէրներ, Քրիստոսի Աւետարան, Առաքելոց և մարդարէից ընթերցւածներ, որ միշտ կը կարդացնին եկեղեցու մէջ և դուք միայն լսում էք և ոչինչ չէք հասկանում:

Շիտակ խոստովանելով կամաչեմ խօսելու, մեք քահանաներս էլ մեր կարդացած բան չենք հասկանում, որովհետև դպրոցի երես երբէք տեսած չեմք: Սորա համար Աստուծոյ բան ջրի ձախնի պէս կը լուի մեր ականջին. մեք եկեղեցու ախէն բղխած աչն կենդանի ջուրէն կարող չեմք խմել ու զովանալ: Ո՛հ աչնպէս պասքած ու ծարաւած դուրս կենեմք եկեղեցիէն, մեք և դուք. թէ քահանան, թէ ժողովուրդ՝ առհասարակ մի անապատ դարձած ենք, ուր երբէք ջուր չի կալ կամ աչնպիսի պինդ ու կորդ անմշակ մի երկիր եղեր է մեր սիրտ, զոր թէ վարել ուզեմք՝ մեր գոլթանի խօփ չի բանիր, ոչ միայն մեր, այլ և նոճն իսկ վարդապետի դաւազանի խովն ևս դժւարաւ կը վարէ:

Գիտէք դուք, ժողովուրդ, մեր քահանայից գոլթանի խօփ արդէն անպիտան և դուլ է, որովհետև ոչ դպրոցի հնոցի մէջ մտած են և ոչ էլ

¹⁾ «Արարատ», 1894, մարտի տետր:

կրթութեան կռանով ծեծւած ու միւսած են, մեք էնպէս իսամ երկաթ մնացած ենք, մեր խափ պողպատով զօղւած չէ: Հապա թնչպէս կարող եմք ժողովուրդի կորդացած ու խտացած երկիր վարել:

Այժմ ասացէք զո՛ւր, ժողովուրդ, աչս դատաստան ձեզ կը թողում, անցանքն ո՛ւմ է, երբ գիւղական քահանաներ տղէտ և անիմաստ են, անցանք եպիսկոպոսին է, որ կը ձեռնադրէ, թէ Էջմիածնալ բարձր Հոգեւոր Ատենինն է, որ կը թուլատրէ: Չէ ժողովուրդին է, որ կը թախանձէ, կը պահանջէ, համախօսական ժողովներ կը կազմէ, հարկւրաւոր ստորապրութիւններ թափում են խնդրագրին վրայ, վաւերական կնքով էլ զրոշմնով խմբովին զիմում են Էջմիածնալ զուռը, աչսպէս խօսում են:

Ե՛ւ Հալիկ, հոգուդ մեռնինք, եկեր ենք քահանալ կողմէնք, ահա բերեր ենք մեր գիւղի տիրացուն, որ քահանալի գաւալ է, մեր գիւղի մէջ ծնած է, մեք իւր մանկութենէն գիտենք սորա վարքն ու բարք, պարկեշտ է, հի՛շ ու խոնարհ է, վաղուց ի վեր եկեղեցւոյն կը ծառայէ, դպրութիւն կանէ, պատարագիչ քահանալին սպասաւորում է և ալին, մեզ չատ ու բաւական է:

Հալիկ գիտնալով որ ամեն օր քահանալի ձեռնադրութեան խնդիր կալ, մի ձեռնադրութեան Մաշտոց մօտ պատրաստ է, խկոցն մի Աւետարանի գլուխ բանալով տիրացուն ձեռք կուտալ. զու տեսնաս էն ժամանակ մեր տիրացուն կերպարանք, վախեն ասեմ թէ ամօթէն, երեսներ կսկսեն կարմրել. բայց Հալիկ իւր ներողամիտ բնաւորութեամբ կը քաջաւերէ, տիրացուն կսկսի չամր ու կակաղելով Աւետարանին մի քանի տուրքեր կարդալ:

Հալիկ տեսնելով տիրացուն խեղճութիւնը, կը դառնալ զէպի ներկայացուցիչ ժողովուրդ, ուր ես էլ պատահամբ ներկալ գտնւեցալ. տեսէք թնչ ասաց Հալիկ ժողովուրդին. «Դուք աչս տիրացուն բերած էք և կուզէք ձեր գիւղին համար քահանալ ձեռնադրել տամ, բայց ահա տեսաք զու, որ ձեր տիրաւուն Աւետարան կարող չէ կարդալ: Հապա եթէ եկեղեցւոյ խորհուրդներ հարցնեմ կամ փորձեմ թէ կարդացած Աւետարանի մտքեր կը հասկնալ, ինչ պիտի անէք: Դուք չգիտէք միթէ որ Սինօղի բարձր Ատենը մի վճիռ արձանագրելով հրատարակած է, որ աչսուհետեւ անուսուհմն, անդպրոց, տգէտներ քահանալ չձեռնադրեն»:

Դուք աչժմ մտիկ արէք, ժողովուրդ, Հալիկին խօսքեր և գիւղական ժողովրդին արդար փաստաբանութիւն:

Հալիկն սկսեց մի երկար ճառ խօսել իւր ընտանի և բնական ոճով, թէ քահանալի կոչումն թնչ բարձր նշանակութիւն ունի և թէ նորա պաշտօնին պարտականութիւն քանի մեծ է, թէ նորա մտքի ճրագ պէտք է լոյս ունենալ որ ձեզ լոյս տալ: Դուք չգիտէք որ քահանան գիւղական ժողովրդի աղն է, ձեզ համ պիտի տալ. եթէ քահանան էլ ժողովրդին պէս

իւր տղիտուութեամբ և վարքով անհամ լինի, թնչ կը լինի, ժողովուրդին հետ միասին անհամ և անպէտք դառնալով, ալ ևս քրիստոնէութեան համ հոտ չի մնար իւր մէջ, միայն սոսկ անունով քրիստոնեալ կը լինի, իսկ գործքով բոլորովին հեռացած քրիստոնէութեան ճանապարհէն:

Դուք չգիտէք, որ քահանայն ձեր հոգևոր հովիւն է, որ պէտք է արթուն լինի մտքի աչքով և գիշեր ցերեկ հսկէ ձեր վրայ ինչպէս պահապան հրեշտակ, որպէս զի դուք չմոլորիք քրիստոնէութեան ուղիւ ճանապարհէն: Կը հարցնեմ ձեզ, դուք ձեր անբան ոչխարներ լիմար և ապուշ հովւթն կը չանձնէք. չէ որ ամեն կերպով կաշխատիք սրտոնս, ճարտար և փորձառու հովիւ ձեռք բերել, որ ձեր ոչխարներ լաւ գիտնալ արածել, արթուն աչքով գալերէն պահպանել, երբեմն ևս հիւանդ ոչխարներուն դեզ ու դարման անել: Դուք երբ աջալի հոգածութիւն կանէք ձեր ոչխարներուն, ինչո՞ւ համար ոչինչ փութ չունիք ձեր հոգևոր հովիւներու ընտրութեան համար. բաւական է որ քահանայի զաւակ լինի, հոգ չէ թէ բարի անուն և բարի վարք չունի և ալն: Դուք էնպէս կարծում էք, որ քահանայութիւն մի ժառանգութիւն է և վախճանած քահանայի որդին իրաւունք ունի ժառանգել անպատճառ իւր հօր երկցութեան պաշտօն: Թողունք ալս. չո՞ք զարմանալի է, որ շատ ծերացած քահանաներ, ամեն ջանք ի գործ դնում են, որ իրենց կենդանութեան ժամանակ ձեռնադրել տան իրանց որդիք թէ արժանաւոր լինին թէ անարժան:

Վերջապէս ձեր բերած տիրացուն շատ տղետ է. քահանայ լինելու ուսումն չունի, լաւ է որ առանց քահանայի մնաք, քան թէ տղետ քահանայ ունենաք. տարէք, փոխեցէք մի ուրիշ արժանաւոր ուսեալ տիրացու բերէք. ևս իսկոյն ձեռնադրել կուտամ:

Այժմ դուք մտիկ արէք, տեսէք մեր գիւղացի ժողովուրդ թնչ պատասխան կուտան Հալրիկին:

Է՛ Հալրիկ ջան, թնչ զիւրութեամբ խօսում ես, միթէ չգիտես մեր խեղճ գիւղացի ժողովուրդին հալ. մեք տարիներով սպասելով հազար ճորով ձեռք բերած ենք ալս տիրացուն, որ գիւղի ծխական զպրոցէն ելած ծաղիկն է, և քիչ. շատ ժամակարգութեան մէջ վարժ: Միշտ մեր քահանային օգնական եղել է, առանց ուրախ նսրկաւագութիւն կանէ, քսրոզներ կը խօսի, բուրվառ կանէ, շարականներ և տաղեր կերգէ, ձայն շատ անուշ ու քաղցր է. աջալիէն աւելի էլ թնչ պիտի, մեզ համար շատ ու բաւական է:

Մի բան էլ, Հալրիկ, ալս տիրացուն գիւղին մէջ ծնած ու մեծցած լինելով իրեն վարքն ու բարք մեղի չախնի է. ինքն պարկեշտ, համեստ ու հեզ մարդ է և մի քանի զաւակներու հայր. մի լաւութիւն էլ ալս է. որ մեզ համար շատ շահաւոր է, երբ քահանան բնիկ մեր գիւղացի լինի. նա հողաբաժին կունենալ գիւղին մէջ. մեք ալ ևս չենք պարտաւորիլ:

նոր բաժին տալ: Մի բան էլ, Հալրիկ, ներողութիւն տուր խոստովանաբար խօսիմք:

Մեք աղքատ չքաւոր գիւղացի եմք. շատ անգամ պատահում է, որ մեր քահանայի իրաւունքը շատ չենք վճարեր. խեղճ քահանայն մկրտութիւն արեր է, պսակ է դրեր, մեռել է թաղեր, ամիսներով կերկարածգեմք. կան մեր մէջ ծովսեր, Աստած իրանց խղճմտանք տալ, որ քահանայի հախ բոլորովին կուտեն:

Է՛ չալրիկ, հիմի դու դատաստան արա, եթէ մեր քահանան մեր բնիկ գիւղացի չլինի և մեք երթամք շրջեմք և մեծ դժարութեամբ գլտնեմք մի շատ արժանաւոր անձն, որ կանոնաւոր դպրանոցէ ելած բարձր ուսումն ունի, աղաչենք ու պաղատենք թէ արի մեր գիւղին քահանայ եղիր: Տէս քնչ կը պատասխանէ: Ես եթէ քահանայ լինիմ, կերթամ քաղաքացւոց քահանայ կը լինիմ, որ ուսումն և կրթութիւն ունին և իմ պատիւս ճանաչում են, թէն ինքն գիւղացի է, տրեխ ոտք գնացեր մտել է դպրոց, բան է սորվեր, փիլիսոփայ դարձել, իւր միտք բարձրացեր, վերացեր մինչև ամպեր հասել է, էլ երբ կը խոնարհի, կը զիջանի գիւղական ժողովրդին քահանայ դառնալ:

Ահա սորա համար է, Հալրիկ, որ մեք մեր ազէտ տիրացւով գոհ պէտք է լինիմք, քանի որ ուսեալ, արժանաւոր անձը մեզ համար շատ հազադիւտ և թանկ է: Այսպէս մեք խեղճ գիւղացիքս ամեն կողմէ անբաղդ եմք. մեր ճակատագիրն գուցէ աչսպէս է, մեք ազէտ, մեր քահանան էլ պէտք է մեզ նման ազէտ լինի: Եթէ թուլ տաս, Հալրիկ, գիւղացի կուպիտ խեղճով մի փիլիսոփայութիւն անենք: Մեզ էնպէս կը թւի, որ ազէտ ժողովրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր և բնական կերպով չեն չարմարիր իրարու: Երբ ժողովուրդ ազէտ է, քնչպէս կարելի է, որ արժանաւոր և ուսեալ քահանային պատիւն ու չարք ճանչնալ:

Ահա զորա համար է, ասաց Հալրիկ, ես կուզեմ, որ դուք սուրբ Գրոց հմուտ և լուսատու քահանայ ունենաք, որպէս զի իբրև ճրագ լուստալ ձեզ և ձեր խաւարին տգիտութիւն փարատէ: Գուք միթէ չէք լսեր և չէք հասկնար Աւետարանին աչն պարզ խօսք, որ ասում է. «Ոչ կարէ կուր կուրին առաջնորդել և ալին»: Գուք ձեր բերնով կը խոստովանիք թէ մեք տգիտութեամբ կուր եմք, կը հաւանիք որ ձեր հովիւ, ձեր առաջնորդն էլ ձեզ նման անպէտ և կուր լինի. սորա վախճան գիտէք ուր կերթալ,—թէ առաջնորդող քահանան և թէ ժողովուրդ ի միասին խորխորատին մէջ կիչնան:

Հալրիկ, Գու էլ աչնչափ ազէտ մի կարծեր զմեզ, որ մեք ձեր առած աղբ բարի և օգտակար խրատներ կարող չեմք հասկնալ. շատ լաւ կըմբռնեմք, վասն զի գիւղացիքս առջի ժամանակներու պէս աչնչափ ազէտ պարզամիտ չենք, որչափ կը կարծւինք. լաւն ու վատ, չարն ու բարին գիտենք որոշել:

Բալլը ինչ անեմք, վարանած ու շարած ենք: Դու էլ զիտես, Հալրիկ, որ ուսեալ և արժանաւոր ընծալացու չունիմք, չունիմք, չունիմք. առաջ ժամանակ չէն ու պալծառ վանքեր մի-մի կրթարան լինելով մեզ համար ընտիր-ընտիր քարոզիչ վարդապետներ և արժանաւոր քահանաներ պատրաստում էին. ալժմ ալ վանքերու շատեր աւերակ դարձան, ափսոս մի քանի վանքեր հազիւ մնացած են, որոց մէջ մի մի խեղճ վարդապետ տրւած են իբրեւ պահապան:

Հալրիկ, մեք դարմանում ենք, երբ Դուք դպրոցական և արժանաւոր տիրացու պահանջում էք մեզմէ. միթէ ալք պարտքն մերն է, կամ թէ ժողովուրդ պարտական է սուրբ եկեղեցւոյ սպասաւորութեան պէտք լեցնել, չէ որ ալք պարտք բոլոր վիճակաւոր առաջնորդաց պատկանում է, որոց ջանք պիտի լինի միշտ եկեղեցւոյ հոգևոր պէտքեր հոգալ և պատրաստել: Խսկ ամենամեծ պարտիք Մալր Աթոռին է, որուն ձեռք լինելով Բարձրագոյն Տեսչութիւն, կարող է ամեն բան տնօրինել և կարգադրել, մեր վանքերու մէջ ընծալարաններ չլինել տալ և մեզ համար քահանայացու պատրաստել:

Տեսնում էք, Հալրիկ, դեղադէզ պարտքերը կուգան վերջապէս կը դիւլին ձեր վրայ, գիտէք որ գիւղական աղքատիկ ժողովուրդ իւր կեանքի և հացի համար միայն կարող է հոգալ. եթէ մեք առանց հովի մնամք, Աստուծոյ առաջ պատասխանատուն մեծ չովիւն է: Ահա մեր տղէտ տիրացուն կառնեմք կերթամք, թող փակ մնալ մեր եկեղեցւոյ դուռը, երեխաներ մնան առանց մկրտութեան, մեռելներ առանց թաղման, ժողովուրդն էլ առանց ժամու և պատարափի. մեր մարմնական կեանքն արդէն անմխիթար ու դառն է, միայն հոգևոր կեանք, եկեղեցին, քահանան, Աւետարան, քրիստոնէական հաւատք և երկնից արքայութիւն մեր մխիթարութիւնն է. եթէ բարձւի մեզմէ և մեք խալաւ զրկւինք հոգեկան մխիթարութենէն, ալ ևս մեզ ինչ կը մնալ,—ապրել Հալաստանեալց եկեղեցւոյ մէջ միայն սոսկ անունով քրիստոնեակ:

Ներկայացող ժողովուրդին ալս վերջի լուսահատ և սրտառու խօսքերը լսեց Հալրիկ ու լռեց: Նստեալ որ նորա շիրտ խոր դգացումով լեցւեցաւ, վասն զի խոր ապաւորութիւն թողեց նորա հոգւոյն վերայ և ձգեց զինք մտահոգ թախծութեան մէջ:

Ահա ինչ որ տեսալ և լսեցի Նշմիածնալ Վեհարանին մէջ, պատմեցի ձեզ, ժողովուրդ, ալք քահանայ խնդրող գիւղացիք իրանց շատախօս փաստերով անմեղադիր և արդար են: Գիտէք, ժողովուրդ, աշխարհիս ամեն դասակարգի մարդիկ թէ հոգևորականք և թէ աշխարհականք, իւրաքանչիւրն իւր աստիճանին և պաշտօնին համեմատ պարտքեր ունի կատարելու, բալց ոմանք շատ անգամ թողլով իրանց պարտք՝ միշտ պահանջում են, որ ուրիշներ իրենց պարտք կատարեն:

Լսեցիք որ զիւղացի ժողովուրդ պահանջում էր հոգևոր Տեսուչէն, որ իւր պարտք տեսչութենէն կատարէ, կամ ձեռնադրել տալ իւր ներկայացուցած տիրացուն և կամ երբ քննելով չի հաւնիր, կասէ տգէտ է, ուսումն չունի, անարժան է և ակն, թող ինքն ուսնալ և արժանաւոր ընծաւացուն պատրաստէ մեզ համար: Այն, ժողովուրդին այս պահանջն արդար է. բայց միթէ հոգևոր Տեսչութիւն ևս նոյն ժողովուրդէն պահանջներ չունի կամ դուք ինքնին զգալով չէք մտածում, որ դուք էլ ձեր չափով ու վիճակով ձեր բաժին պարտքեր ունիք կատարելու: Եթէ ասէք մեք տգէտ անգիր, անուսումն չինական ենք, ոչ խորհել զիտենք և ոչ զգալ. մեք մեր վարուցանով զբաղած դառն աշխատութեան մէջ, մարմնով և հոգւով ընկճւած՝ դաշտի մշակներ եմք և ակն:

Ահա Արշէն Երէց անդադար խօսելով, քարոզելով պիտի զգացնէ ձեզ, թէ ինչ է ձեր պարտիք և երբ զիւղական ժողովուրդ լսելով իմանալ և զգալ իւր պարտուց նշանակութիւնը, ակն ևս չի կարող չքմեղս լինել թէ անգէտ եմ, ուսման համն ու ճաշակ չեմ առեր, չգիտեր:

Սիրելի ժողովուրդ, ես գրելով և քարոզելով քո ճաշակ պիտի բանամ: Այժմ աչքանս բաւական է, դարուն եկած է, երգում է ճախրակ մանիկ, լըծէ լըծէն. երթանք՝ ես դէպ ի դպրոց իմ դաս, դուք դէպ ի դաշտ ձեր գութան:

Ուժ և չաջողութիւն մաղթում է ձեզ՝

ԱՐՇԷՆ ՆՐԷՑ

ՈՎ ՀԱՒԱՏԱՅ ¹⁾

«Արարատ» ամսագիրը մարտի համարում տալիս է ընթերցող հասարակութեան մի զիւղական քահանայի քարոզ, որի բովանդակութիւնն արժանի է ամեն մի հալի խորին ուշադրութեան իր չօչափած խնդրի պատճառով — ալդ՝ ժողովրդին ուսեալ և արժանաւոր քահանաներ տալու ժամանակակից կենսական խնդիրն է:

Բար. Արշէն երէցը ընդունելով քահանայի քարոզչական պարտքը և իրաւունքը և խոստովանելով՝ թէ քարոզելու համար էլ քահանան պէտք է ուսեալ լինի, ալն ինչ ալդ սուրբ պաշտօնը դրաւել և գրաւում են մեր եկեղեցիներում տգէտները և անուսները՝ ըստ երեւոյթին կամենում է հոգևոր վարչութիւնը մի կերպ արդարացրած լինել ազգի առաջ աշխարհի ձեռնադրութիւններ թող տալուն համար: Առաջինք ըստ երեւոյթին, ըստ որում արժ. երէցը սրոշ կերպով չէ բացատրում իր միտքը, պարզ չէ ասում ալն, ինչ որ ընթերցողն ինքը եզրակացնում է:

«Ժողովուրդ, գոչում է աէր Արշէնը, ալս դատաստանը ձեզ կը թողում. չանցանքն ո՛ւմ է, երբ գիւղական քահանաներ տգէտ և անիմաստ են. չանցանք եպիսկոպոսին է, որ կը ձեռնադրէ, թէ լքմիածնալ բարձր հոգևոր Ատենինն է, որ կը թուլատրէ: Չէ ժողովրդին է, որ կը թախանձէ, կը պահանջէ, համախօսական ժողովներ կը կազմէ, հարկւարաւոր ստորագրութիւններ թափում են խնդրադրին վրալ, վաւերական կնքով էլ դրոշմելով»:

Նախ քան ապացուցանելը թէ որչափ սխալ է ժողովրդին մասնակից համարել տգէտների ձեռնադրութեան մեղքին՝ կարևոր ենք համարում մի համառօտ հալեացք ձգել անցեալի վրալ:

Սովորաբար՝ երբ հասարակական բնաւորութիւն կրող մի խնդիր է չարուցում, չաջողութիւնը կախւած է լինում համակրութեան ալն չափից, որով ինքը հասարակութիւնն է վերաբերում դէպի նա: Արքան էլ օգտակար և ողմիտ լինի մի պահանջ, որքան էլ իրանց կրթութեամբ, խելքով և զգացմունքով բարձր կանգնած լինեն նրա չարուցանողները, սլսու ամենաալն նրանց աղաղակը կը մնալ ձալն բարբառու չանապատի, եթէ ինքը ժողովուրդը՝ դեռ չէ զգում պահանջածի կարևորութիւնը:

¹⁾ «Մշակ» 1894 թ. № 41:

Արժանաւոր, բանիւրուն քահանաներ ունենալու պահանջը չարուց-
ւել է Ռուսահայոց մէջ, եթէ շատ հեռու չերթանք, գոնէ զարուս երկրորդ
կիսի սկզբում: 60—61 թւականին Մ. Նալբանդեանցն էր գրում Տ. Մատ-
թէոս կաթողիկոսին. «Առ մեզ ամենաւն կացութիւն անպիտան՝ պիտանի
համարի առ հոգևորականութիւն»): ձիշտ նոյն ժամանակին էր, որ ազգիս
ներկայ վեհափառ Հայրապետը չըջած լինելով իբրեւ վարդապետ Կովկասի
հայոց մէջ և հանդիպած Մ. եպիսկոպոսի Տաթևի վանքում ձեռնադրած
քահանաներին՝ իր «Արծիւ Վասպուրականի» թերթում լոյս ընծայեց մի
փոքրած իբրեւ բողոք անարժանների ձեռնադրութեան դէմ: Այդպէս և ու-
րիշ մի քանիսները: Սակաւն անհատների ձայները, բողոքները ցանկալի
արդիւնքը չէին տալիս, ըստ որում ժողովուրդն անապրեր էր:

Անցնում է 15—20 տարի: Մի կողմից մամուլը, միւս կողմից մտա-
ւոր զարգացման և լաւաշաղիմութեան հալ հասարակութեան դանազան
դասակարգերի մէջ արագ ծաւալ առնելը՝ մասնաւորների բողոքն ու պա-
հանջը դարձնում են ժողովրդական: Այս բանին նպաստում են մանաւանդ
70—80 թւականների թէ վիճակներում և թէ ու. Նշմրածնում կատարած
ձեռնադրութիւնները: Ժողովուրդը տեսնում է, թէ որպիսի ալլանդակ չա-
փեր է առնում տղէտ և անբարոյական անձինքների ձեռնադրութիւնը, և
նրա զայրութիւն աչնքան բուռն և խիստ է լինում, որքան մեծ է լինում և
գալթակղելի մի կողմից անուս, անարժան հովիւների գունդազունդ երե-
ւիլն եկեղեցիներում ¹⁾ և միւս կողմից՝ աղպիսի ձեռնադրութիւններին
տեղի տուող քառամեկի շարժառիթը—սիմոնականութիւնը ²⁾: Հոգեւոր իշ-
խանութիւնը նկատում էր և մամուլի մէջ շարունակ կարդում ազգի ալլ
զայրութիւն և անբաւականութեան արտայայտութիւնները: Տ. Գեորգ Գ.

¹⁾ 1889 թ. սինդիկն ուղղած իմ մի ընդարձակ լալտարարութեան
մէջ խօսելով ալլ ժամանակում կատարած քահանայական ձեռնադրու-
թիւնների մասին՝ մի ծանօթութեան մէջ ասել եմ. «Ոչ իշխեմ և ոչ ցան-
կամ լիւրաւունս ապագալ պատմարանի միջամտել վասն ցուցանելոյ ասդէն,
թէ որչափ բազմացան տրոտնջք և անբաւականութիւնք չաղլի վասն
ձեռնադրութեանց անպատրաստ անկիրթ քահանայից անհամար բազմու-
թեամբ ի 1868—1882 ամսն. և որչափ գործ բարոյական և մտաւոր չա-
ռաջաղիմութեան ժողովրդեան պետադարձ կալաւ ընթացս ի վնաս և ի հար-
ւած եկեղեցւոյ չերեսաց աղպիսեաց քահանայեց, զոր բուժել և ոչ հարիւր
ամբ դօրեացեն»): Այս լալտարարութիւնն ալ կարեւոր լաւեւածներէ հետ
մօտիկ ժամանակում կը հրատարակենք առանձին գրքով:

²⁾ Այս օրերս վաղարշապատում լալտուեց 1882 թւին գրած պալմա-
նաձև մի մուրհակ, որ գրած և ստորագրած է հանգուցեալ Ստեփան Գէմիր-
ձեանցի ձեռքով: Բովանդակութիւնն է. «Տալիս եմ ալլ ձեռագիրը Վա-
ղարշապատաւնակ Ա...ին առ ալլ, որ ստացալ նորանից... տիրացուների
ձեռնադրութեան համար հինգ հազար բուբլի. եթէ նորանք չձեռնադր-
ւեն, պարտաւոր եմ չիշեալ գումարը վերադարձնել»:

կաթողիկոսի վերջին տարիներում տիրացուներն ալ ևս Նրեանում կամ Վաղարշապատում չէին ձեռնադրում, ալ Սեանի, Գեղարդի և ալ վանքերում, ուր ժողովուրդ չէր կարող ներկայ լինել և տեսնել թէ եկեղեցու սքանչելի խորհուրդը որպիսի մարդկանց վրա է կատարում:

Որչափ էլ եկեղեցու ներկայացուցիչները լոծարակամ չկամենալին ու չաղրութեան առնել ժողովրդի պահանջը, որքան էլ խոյ տալին նրա ձայնը լսելուց՝ այսու ամենապէս բոլորովին արհամարել անցնել չէին կարող. և ալ ճշման հետեանքն ալն է լինում, որ ժամանակ առ ժամանակ ժողովուրդը գոհացնելու, կամ աւելի ճիշդ կը լինի ասել՝ նոյն ընթացքը արտաքնադարձար ձեակերպութեամբ շարունակելու փորձեր են լինում:

Հանգուցեալ Գեորգ կաթողիկոսը, որ 1868 թւին սինոդին տւած կոնդակով ցաւ ի սիրտ ծանուցանում էր թէ «Յալին արկեալ զբարոյական հանգամանս հոգեւորական դասուց, չորոց առաւել Լախին բարոյական կենդանութիւն ազգին մերոյ և զարգացումն նորա ի կրօնական Աստուածաշատութիւն... տեսաք ածեալ լալն բարձր և երկնաւոր սուրբ կոչումն (քահանայութեան) զտգէտս, զանարժանս և զարատաւորս իսկ... և ի տեղիս տեղիս նշմարեցաք զթիւ ճոցին անցեալ զանցեալ քան զչալին»։ Երեք տարուց չետոյ 1872 թւին յունւարի 27-ին տւած մի կոգակով ոչ թէ ալ ճանցեալ զանցեալ թիւը կարճելու պատուէր է տալիս, մինչև որ իր հիմնած հեմարանը և չորս թեմական դպրոցներն ազգին սան ուսեալ եկեղեցականներ, ալ գտնելով՝ որ «Առաջնորդք վիճակաց... մանաւանդ Նրեանալ վիճակի, լակամալից ստիպեալ ի կարեորութենէ քահանայի, առաջի առնեն զձեռնադրելի անձինս ի Սինոդ առ ի ընդ զհոգեւոր պէտս ժողովրդեան, բալց տեսանելով մեր, զի փոխանակ ի լառաշարիմութիւն անդր փութացուցանելու զժողովուրդն բարոյական կրթութեամբ, որ ըստ օրէ տգիտութեան տան պատճառս, զանուսումն ե զտխմարս ձեռնադրելով ի քահանայ, պատւիրում է, զիտէք ինչ. տիրացուներին ուղարկել վանքերը, ու սովորեն քահանայական գիտելիք, չնալած՝ որ ինքը կոնդակ տուող շատ լաւ գիտէր, թէ մեր վանքերը բարոյական սրպիսի անկման են հասել և նրանցում նստող վանահայրերի համար ուսումն և գիտութիւնը վաղուց դարձել են շռայլութեան առարկաներ: Բալց և աջնպէս տիրացուները զալիս էին «վանական դպրոցների վկայականներ» ձեռքերին և ձեռնադրում էին: Մի նմուշ տալու համար ալ վանական վկայականներից, վերցնենք մի օրինակ: Անցնալ տարի Նրեանի կոնսիստորիան միջնորդում է ձեռնադրել քահանայ Պարուխ գիւղի մի տիրացուն, որին սինոդն ինքն հարցաքննելով և տգէտ գտնելով՝ մերժում է: Թեմ, իշխանութիւնը տիրացուն ուղարկում է Սեանալ վանքը կրթելու և ուսանելու. և ահա ալ օրերս մտնում է սինոդ վանքի վանահօր մի վկայականը, որի մէջ ասուալ է թէ՛ լիջեալ տիրացուն, քառասուն օր մնալով վան-

քում՝ ուսել է քահանայապատշաճ բոլոր գիտելիքը. և այդ վկայութեան հիման վրայ էլ կոնսիստորիան կրկրնում է իր միջնորդութիւնը ձեռնադրութեան համար: Յալսնի է նմանապէս և ալն տխոր հռչակը, որ ստացաւ մի քանի տարի առաջ Երեանում իբր լացեաժ ընծայարանը, որտեղ գիւղական տգէտ և սոպուռ տիրացուներ մի քանի ամիս քարշ դալով՝ արձակում էին իրանց տները փիւրնն ուսներին, իբրեւ պատրաստածներ «ի քահանայապատշաճ գիտելիս»:

Այդ էլ ժողովուրդ հանգստացնելու միջոց էր: Այդպիսի միջոցներ են հղել և ալն բացատրութիւնները, որ երբեմն-երբեմն լուել են եկեղեցու բեմից: 1878 թ. մի եպիսկոպոս ձեռնադրելով հինգ քահանաներ, դարձաւ դէպի ժողովուրդը հեռեկալ խօսքերով. «Արեւի ժողովուրդ. դուք հիմա կը մտածէք, թէ քահայէս կարելի էր ալ տգէտ գիւղացիներին քահանայ ձեռնադրել: Գիտէք, որ Առաքեալներն էլ տգէտ, անուսում մարդիկ էին. բայց երբ հոգեւոյն սրբոյ շնորհքն իջաւ նրանց վրա՝ նրանք դարձան Աւետարանի քարոզիչներ և աշխարհի իմաստուններին չաղթող գիտուններ: Որովհետեւ սրանք էլ ալսօր ձեռնադրութեան միջնորդութեամբ ստացան նոյն շնորհքը, սպա ուրեմն և կը լինին եկեղեցու արժանաւոր հովիւներ»: Իսկ երեք-չորս տարի առաջ մի ուրիշ ձեռնադրող, ներկալացնելով ժողովրդին եօթը ձեռնադրւածներինց ամեն մէկի մտաւոր և բարոյական թերութիւնները՝ ասել էր. «Աս անպարտ եմ ալսպիսիներին ձեռնադրելու համար. ժողովուրդն ընտրել է, հոգեւոր ծալրագոյն իշխանութիւնը հրամայել է ձեռնադրել. ես ալ հրամանը կատարեցի ալսօր»:

Ժողովուրդը գիտում էր ալ բոլորը և խորը խոցում. նրա համար ակնյայտնի էր ալսպիսի դրութեան տալիք դառը հետեանքն իր պաշտելի մարդ եկեղեցու համար: Աս նա 1885 թւին իր զգացած խիստ անբաւականութիւնն արտայայտելով ս. Էջմիածնի մէջ պատգամաւորներին բերանով՝ կամեցաւ եկեղեցու վարչութեան ղեկը չանձնել ալն անձին, որ դեռ չատ վաղ իր թերթում պախարակել էր անարժանների ձեռնադրութիւնը և իր 'Գրախտի ընտանիքում'՝ չորդոր և պատէր էր կարդացել հալ ժողովրդին ընտրել ուսեալ, բանիբուն և բարեբարոյ քահանայացուներ: Այդ նրան չաջողեց:

Թէ դրանից չեսոյ ձեռնադրութիւնների դործն ինչ չափ ու ձև առաւ, արդէն պարզել է 1892 թւի փետրւարի «Արարատը». Այդ լուսահատական դրութեան վերջ տեց ս. Էջմիածնի սինօղը իր շաջաբերականով, որ ուղղեց թեմական իշխանութիւններին 1892 թւի չունիսի 26-ին:

Նոյն թւի մալիսի 5-ին կատարելու էր նոր կաթողիկոսական ընտրութիւն: Այս անգամ ազգն աւելի բուռն կերպով արտայայտեց իր կամքը և ընտրեց ալն մարդուն, որից ակնկալում էր իր եկեղեցասէր փառագոյների իրագործումն: Աս ահա ալսօր, երբ հալրապետական գահի վրայ բաղմել է

«Արծիւ Վասպուրականի» խմբագիրը և «Գրախտի ընտանիքի» հեղինակը, ալսօր, երբ հասած պէտք է համարենք, աչն բաղձալի ժամը, երբ պէտք է իրագործւած տեսնենք ազգի կողմից չարուցւած հասունացրած և Վահափառի սրտին մօտիկ կենսական մեծ խնդիրն առանց որ և է դժւարութեան, չանկարծ «Արարատի» էջերում երևում է Տ. Արշէն երէցի քարոզը, որ կարծես թէ նպատակ ունի ասելու, թէ ինչպէս կարելի է սղէտներին մերժել, եկեղեցուց հեռացնել, քանի որ ընտրողը ժողովուրդն է: Ի՞նչ անի հոգևոր իշխանութիւնը, երբ ժողովուրդը «կը թախանձէ, կը պահանջէ, համախօսական ժողովներ կը կազմէ, հարիւրաւոր ստորագրութիւններ թափում են խնդրագրին վրա, վաւերական կնքով էլ գրոշմելով», — ճիշդ աչն մտքով, ինչ որ չաչնեց մի եպիսկոպոս իր քարոզի մէջ, որպէս տեսանք փոքր ինչ վերը:

Սակաչն ալ խօսքերը, մի եպիսկոպոսի բերանից են լսել թէ մի երէցի, բարեբաղդաբար շատ թուլ, շատ անզօր են արդարայնելու հոգևոր վարչութիւնը, եթէ վերջինս իրան նեղն ընկած կը համարի թախանձանքների հանդէպ, և կուցած լինելով եկեղեցու իսկական շահերը պաշտպանելու՝ կը զիջանի նրանց հակառակ գնալ:

Մենք շատ լաւ ենք ճանաչում հալ ժողովրդին, քաղաքացուց սկսած մինչ գիւղացին. գիտենք նրա թէ գովելի և թէ պախարակելի կողմերը, և եւբէք մեր խիղճը չի ների մեզ նրան մեղադրելով արդարայնիւ մեր թուլութիւնը և պարտազանցութիւնը: Հալ գիւղացի ժողովրդին ներկայումս դուք աչնքան էլ սղէտ մի կարծէք, որ նա անընդունակ լինի ըմբռնելու ձեր անկեղծ խօսքի նշանակութիւնը: Փորձեցէք մի կողմից իշխանական իրաւունքի և կամքի վաչելուց սահմանի մէջ մնալ և միւս կողմից հասկացնել, բացատրել նրան, թէ սղս կամ աչն խնդրում նա սխալւում է, կամ ինչ որ թախանձում, պահանջում է, միատակար է իրան—և նա պարտաստ է հլու հպատակութեամբ լսել իր եկեղեցականին: Նուրն է նա և արժանաւոր քահանալ ունենալու խնդրում: ճիշդ է, մէջտեղում կը մնան մի քանի թախանձողներ, բալց զրանք գիւղական ժողովրդի չամառութեան ներկայացուցիչներ չեն, ալ առաջարկւած տիրացուի հալր ու եղբալր, քաւոր սանահալր, աներ ու խնամի, կամ մահուդ չուխալ սոտացող լեղւանի գիւղացի, որ վարձել եկել է և սմնաւն օր գլինետանը տիրացուի հալուով ուտում և խմում է միաչն փատտաբանելու համար: Եւ հաւատացած կացէք, որ ալ մարդիկն են, որոնք գիւղական համախօսական թերթեր են կազմում «հարիւրաւոր ստորագրութիւններ թափում են, կնքով էլ գրոշմելով», բալց մի կարծէք, կամ կարծել տաք, թէ զանազան ճանապարհներով ձեռք բերւած ալ թերթերն իսկապէս բուն ժողովրդի կամքի և ցանկութեան արտաչալտութիւններն են, ալ ճնշում գործող մի քանի հարտահարիչներ ի կամ շահախնդիրների պատրաստաներ,

ու թէ համագումար ժողովներում, ալ տնէ տուն մանածելով, և չատ ան-
գամ էլ անգրագէտ գիւղացու անունը առանց նրա խնդրելու և գիտու-
թեան դրած: Ահա տալիս ենք ձեզ աղպիսի հաղարաւոր թերթերից մէկի
օրինակը: 1889 թվին Նոր-Բալագէտի Զաղալու գիւղի ժողովրդի անունով
մատուցում է Նրեանի կոնսիստորիալին բաղմատորագիր մի խնդիր,
իրանց համար երկրորդ քահանայ ձեռնադրելու մի տիրացուի, խնդիրքի
մէջն էլ, ի հարկէ, վկայած է քահանայացուի «բարեբարութեան» մասին,
աչնպէս, ինչպէս Արշէն երէցը լսել է մի քանի գիւղացիների վկայութիւնն
իրանց բերած տիրացուի լաւ վարք ու բարքի մասին¹⁾), Տիրացուն ձեռնա-
դրում է: Հաղիւ երեք տարի անցած՝ Նախկին քահանայացուի բարեբարութե-
թիւնը վկայող ժողովուրդը բողոքում է սինոդին քահանայացածի անբա-
րութեանութեան դէմ, լանցանքների թւում դնելով և աչնախնները, որոնց
մէջ քահանան ճանաչւած է եղել շատ վաղուց: Բողոքն իշխանութեանը
մատուցանելու համար ժողովուրդը համախօսական վճռով ընտրում է եր-
կու հաւատարմատար: Համախօսական է, չէ. հասարակութեան միաձայն
վճռի անունով են խօսելու ալդ մարդիկ չէ. թուրք տանուտէրն էլ թուր-
քերէն ստորագրել և «վաւերական կնքովն էլ դրոշմել է» չէ. բաւց տեսէք
բանն ինչուսն է: Բոլոր գիւղացիների անունները, «վասն վերոգրեալների
անգրագիտութեան», ստորագրել են երեք մարդիկ. բաւց մէկը՝ 25 ան-
գրագէտների անունների կէսը ուրիշ ձեռքի գրչով է գրած. լսող, մի քա-
նի գիւղացիների անունաղղանունները գրած են երկու տեղ, առանձին
առանձին երեսների վրայ. մի ուրիշը չորս տեղ և ալն:

Ահա ձեզ «հարկաւոր թափած ստորագրութիւններ»:

Սոն տարաւ «Մշակի» 3-րդ համարում կարդացինք մի աչնախի
լուր, Աստաբախանից՝ «Օրւալ հետաքրքրութիւնը մեզանում կազմում է
առաջնորդական խնդիրը: Զգալով անաչառ, եռանդոտ և անկաշառ առաջ-
նորդի կարեւորութիւնը, հետաքրքրում են նրանով, թէ ով կը նշանակւի
մեր վիճակի կառավարիչ», ըստ որում ժողովրդի համար չահաւէտ խնդիր-
ների կարգում կալ և «կրթւած հոգեւորականների խնդիր». աչն ինչ «տղէտ
քահանաները սունկի պէս բուսել են նրանում վերջին տարիները»: Աստ-
րախանի թեմի հալ ժողովուրդը քաղաքներումն է բնակւում և մտաւորա-
պէս զարգացած է. բաւց ալդ նոն զարգացած ժողովուրդը աչնքան տկա-
րացել, կորցրել է իր իրաւունքը և ձալնի նշանակութիւնը, որ չնայած՝
թէ քահանայի ընտրողն ինքն է, դարձեալ մի անաչառ և անկաշառ
առաջնորդ պէտք է լինի, որ նրանց տալ կրթւած հոգեւորականներ: Նրբ

¹⁾ Աղպիսի վկայութեամբ երկու երեք ամիս առաջ խաթունարիս
գիւղում պիտի ձեռնադրէր մի տիրացու, և հարկ եղաւ սուրհանդակ ու-
ղարկել գիշերը, որ ձեռնադրութիւնը չկատարւի:

աստորախանդին ալս տեղն է հասել, գիւղացու թախանձանքն է, որ հարկադրում է տգէտներ ձեռնադրել:

Վերջապէս՝ գիւղական ժողովրդի համախօսական թերթերը, եթէ մի րոպէ ենթադրենք թէ կանոնաւոր են կազմած, ինչ պարտաւորիչ նշանակութիւն ունեն հոգևոր իշխանութեան համար. նրանք ընտրողների կամքի արտապատկութիւններ են, իսկ աչգ կամքի օրինաւորութիւնը և ապօրինութիւնը քննելը և հաւանութիւն կամ մերժումն տալը իշխանութեան իրաւունքն է. ալլապէս—չկալ իշխանութիւն.—Արշէն երէցը շարունակելով իր քարոզը՝ ասում է, թէ միանգամ պատահարար գտնւելով վեհարանում ալն ժամանակ, երբ գիւղացիները բերել էին մի տիրացու, Վահագնաւ Վաթողիկոսը տիրացուն Աւետարան կարդալ տալով և կմկմալը տեսնելով դառնում է գէպի գիւղացիները և ասում, թէ՛ ձեր տիրացուն տգէտ է, թէ՛ քահանան, ժողովրդի հովիւը, նրա առաջնորդողը, նրա մօտքի ճրագն և աղը լինելու բարձր կոչումն ունենալով՝ պէտք է ուսեալ լինի: Բայց գիւղացիք պատասխանում են. թէ՛ «մեր տիրացուն գիւղի մէջ ծնած ու մեծցած լինելով՝ իրեն վարք ու բարք մեզի չափունի է. մի լաւութիւն ևս մեզ համար ալս է որ մեզի համար շատ շահաւէտ է, երբ քահանան մեր գիւղացի լինի, նա հոգաբարձին կուճենալ գիւղին մէջ. ալ ևս չենք պարտաւոր չոր բաժին տալ. թէ՛ մենք աղքատ չքաւոր գիւղացի ենք. շատ անգամ պատահում է, որ մենք քահանայի իրաւունք չուտ չենք վճարեր և քահանան համբերում է. թէ՛ ուսում առած մէկը, թէ՛ նոյնպէս գիւղացի և գիւղից տրեխով գնացած՝ գիւղացիների հրաւերին, որ գալ իրանց քահանալ լինի, կը պատասխանէ. ես եթէ քահանալ լինիմ, կերթամ քաղաքացւոց կը լինիմ, (հետաքրքիր է իմանալ, թէ բարեկ. Արշէն երէցը լսած է արդեօք, որ մի գիւղի ժողովուրդ ընտրել է ձեմարանից զուրս եկած երկու երիտասարդների և որանք չօժարութեամբ լանձն են առել նրանց. համար քահանալանալ), որ ուսումն և կրթութիւն ունին և իմ պատիւս ճանաչում են. թէ՛ գիւղացի կոպիտ խելքի փիլիսոփայութեամբ՝ մեզ աչնպէս կը թւի, որ տգէտ ժողովրդի նշատ ուսեալ քահանալ չի կալիր և բնական կերպով չեն չարմարի իրար»:

Այստեղ արդէն կանգ ենք առնում, որովհետեւ պատասխանելու պէտք չենք տեսնում. մենք միայն ստորագծեցինք վերջին տողերը, որ ընթերցողի խորին ուշադրութիւնից չվրպեն նրանք. «Արարատ»-ի էջերում փալլող աչ տողերը ապագալ պատմաբանի համար հատորներ կազմելու նիւթ տուղ գանձ են:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՂԻԱԿԵԱՆՑ

ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՅԱՆԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

(Արշէն Լըէցի քարոզի առիթով) ¹⁾

Ընդհանրապէս քահանաների և մասնաւորապէս գիւղական քահանաների խնդիրը վաղուց զբաղեցնում է մեր մամուլին և հասարակութեանը: Աերջերս ալդ խնդիրն ընդհանուր ուշադրութիւն գրաւեց, առօրեայ խօսակցութեան նիւթ դարձաւ, երբ («Արարատ») ամսագրում լոյս տեսաւ Արշէն Լըէցի իմաստալից քարոզը: Բնդհանուր պահանջ է, որ քահանաների ներկայ կազմը վերափոխւի, ու ուսեալ մարդիկ քահանայական կոչումը ընդունեն: Ալդ պահանջը չարունակ 25—30 տարուց աւելի է, որ անում է մամուլը, կրթած հասարակութիւնը, նոյն իսկ իրանք հոգեւորականութեան ներկայացուցիչները, մինչդեռ իրականութեան մէջ դործի դրութիւնը մնում է նոյնը, ձեռնադրում են դարձեալ կրթութիւնից զուրկ մարդիկ: Մամուլի և հասարակութեան ցանկութիւնը պաշտօնական ձև ստացաւ 1892 թւին, երբ լոնիսի 17-ի չըջաբերականով սինոդը հրաման արձակեց՝ քահանայ ձեռնադրել որոշ չափով կրթութիւն ստացածներին: Մենք կը բերենք ալդ չըջաբերականն ամբողջապէս, որպէս զի ընթերցողը տեսնի, թէ կարո՞ղ են արդեօք ալլալիսի կարգադրութիւնները բարեփոխել գիւղական քահանաների ձեռնադրութեան դործը:

«Յունիսի 17. Սինոդը արժան դատելով կարգադրեց, որ Նախ, աչսուհետև ինչպէս քաղաքներում նոյնպէս և գիւղերում, ուր կը լինի ոչ պակաս հարիւր տանից, ընտրում են և կարգում են թեմական զպրոցներում և Մալր Աթոռի ձեմարանում աւարտողներից և ալլալիսիներին փոքր ի շատէ ապրուստի ապահովութիւն տալու համար, գիւղերում, ուր բնակչաց թիւը կը լինի 150 տուն, կարգւի մի քահանայ և որչափ ձեռնհաս կը լինի հովեկու իւր ժողովրդին, ուրիշը ձեռնադրել իբրև ընկեր. իսկ աչն գիւղերում, ուր կը լինի 250—300 տուն, կարգւի երկու քահա-

¹⁾ «Արձագանք» 1894 № 45:

Նալ: Այն գիւղերում, որոնց բնակիչների թիւը 100-ից պակաս կը լինի, բաւց վաթսուներից նազ, կը կարգւին թիմական դպրոցների չորրորդ և հինգերորդ դասարանների կրթութիւն ունեցողներ, իսկ եթէ ոչ, աջնպիսիները, որոնք ինքնակրթութեամբ ձեռք բերած կը լինին քահանայապատշաճ հմտութիւն: Այդպիսիներին ևս որոշելու է զգուշատը քննութեամբ, որ պարտաւոր են անել վիճակների առաջնորդները և կոնսիստորիաների անդամները: Երեանալ թեմի քահանայացուները միայն քննելու են Սինոդում: Իսկ աչն գիւղերում, որի բնակիչների թիւը 50-ից պակաս է, եթէ վերոյիշեալներից ցանկացողներ գտնուին, կը ձեռնադրուեն, իսկ եթէ ոչ, հարցաքննութեան համեմատ:

Մի կողմ ենք թողնում շրջաբերականի առաջին մասը, որ վերաբերում է քաղաքներին և մեծ գիւղերին: Ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում շրջաբերականի երկրորդ մասի վրայ, որ վերաբերում է 100 տանից և 60 տանից պակաս բնակիչ ունեցող գիւղերին: զժարութիւնը ծագում է հէնց աչն ժամանակ, երբ խօսքն ալդպիսի գիւղերի մասին է: Առանց վիճակագրական տեղեկութիւնների համարձակ կարող ենք ասել, որ մեր գիւղերի երեք քառորդ մասը ալդ կարգին են պատկանում, և շրջաբերականը թուլ է տալիս ալդպիսի գիւղերի վրալ ձեռնադրել թեմ: դպրանոցների չորրորդ դասարանից աւարտողներին և աչնպիսիներին, որոնք ինքնակրթութեամբ ձեռք բերած կը լինին քահանայապատշաճ հմտութիւն: Այս որոշումը չափազանց անորոշ է. շրջաբերականը չի պարզում, թէ ձեռնադրելին որ առարկաներից ինչ չափով պէտք է իմանալ, որ համապատասխան համարւի. քահանայապատշաճ հմտութիւնը որոշելը կախած կը լինի հարցաքննողի կրթութեան աստիճանից, պահանջներից կամ տեսակէտից. շրջաբերականը քննելու իրաւունքը տալիս է վիճակաւոր առաջնորդներին և կոնսիստորիաների անդամներին, որոնց մեծամասնութեան կրթութեան աստիճանը, պահանջները և քահանայապատշաճ հըմտութեան վրալ ունեցած չափը շատ լաւ կարծի է ընթերցողներին: Պարզ է որ նոքա քահանայապատշաճ հմտութիւն ստացած կը համարեն տգէտ տիրացուներին և նորա մասին նպաստաւոր վկայութիւն կը ներկայացնեն Սինոդին: վերջինս էլ հնարաւորութիւն չունենալով անձամբ ասուգելու քահանայացուի արժանաւորութիւնը, պէտք է հիմնել իրան ներկայացած վկայութիւնների վրալ և ձեռնադրութեան հրաման տալ: Այդ եղանակով քննութեան էին ենթարկում և ձեռնադրութեան հրաման ստանում նախքան ալդ շրջաբերականի լոյս աշխարհ տեսնելը. դարձեալ առաջնորդները կամ կոնսիստորիաների անդամները քննում էին տիրացուին և արժանաւոր կամ անարժան գտնում, իսկ եթէ գտնուում էին ձեմարանից կամ թեմ. դպրոցներից ցանկութիւն կառնողներ, ի հարկէ

պէտք է առաւելութիւնը նրանց տրւէր: Այսպիսով ուրեմն, 1892 թվի լունիսի չրջաբերականը գիւղական քահանաների ձեռնադրութեան գործն ամենին չի բարեփոխում: Մեր կարծիքով Սինոդն ուրիշ կերպ վարել չէր էլ կարող. նա չէր կարող միանգամից պատ քաշել ինքնակիրթ տիրացուների առաջ, քանի որ այդպիսի կարգադրութիւնը կը մնար անիրագործելի: Ս. Սինոդը աչս դէպքում սահմանափակում է իր պահանջները զիջանելով իրականութեան առաջ: Խնչ է ներկայացնում իրականութիւնը:

Քահանաներ չատ են հարկաւոր, իսկ քահանայական ասպարէզ մշտնել ցանկացող որոշ կրթութեան տէր մարդիկ չատ քիչ կան, եղածներն էլ գերադասում են քաղաքները: Խւրաքանչիւր տարի ամբողջ Ռուսահայոց համար միջին թւով 30—40 քահանայի պահանջ կա: 1891 թվի հոկտեմբերից մինչև 1892 թվի նոյեմբեր ամիսը զանազան տեղերից ներկայացել է Սինոդին մօտ ութսուն քահանայացւի գործ. զրանցից մերժւել են մեծ մասը. ձեռնադրութեան իրաւունք են ստացել 32 հոգի: Բացի զրանից շատերը մտել են հոգևոր տեսչութեան մէջ իբրև եկեղեցու սպասաւոր: Ձեռնադրութեան իրաւունք ստացողներից երկուսը միայն ձեռնաւորանից են, բաց չեն աւարտել. մէկը ձեռնադրւել է Բաթումի պէս քաղաքի վրայ, որ գրաւիչ կողմեր չատ ունի, միւսը պէտք է ձեռնադրւէր Դիլիջանի վրայ, որ չատ գաւառական քաղաքներից աւելի չարմարութիւններ ունի կրթւած մարդու համար: Մնացած 30-ից 5-ը եղել են զբարանոցներում. աւարտել են թէ ոչ, չաւանի չէ. 25 հոգի անորոշ կրթութեան տէր անձինք են ¹⁾: Սինոդը, երևում է, այդ տարի խիստ ընտրութիւն է արել և ձեռնադրութեան իրաւունք է տւել միմիայն անհրաժեշտ կարիք եղած տեղերի համար, բաց և աջնպէս ստիպւած է եղել 25 անորոշ կրթութիւն ստացած մարդկանց ձեռնադրել: Այստեղ որ չենք կարող նոյնպիսի վիճակագրական տեղեկութիւնների ներկայացնել մի քանի տարիների համար հասկանալի կը լինի, որ ուրիշ կերպ չի էլ կարող լինել: Ս. Էջմիածնի ձեռնարանից տարեկան միջին թւով աւարտում են 8—10 հոգի. զրանից մի մասը կուսակրօն հոգևորական պէտք է դառնան. ձեռնարանի գլխաւոր նպատակն այդ է. կուսակրօն հոգևորականներ պատրաստելու ուրիշ հիմնարկութիւններ մենք չունինք: Մի մասն էլ կերթան արտասահման կամ Ռուսաստան աչս կամ աչն մասնագիտութեան մէջ կատարելագործւելու. մնացածները մեծ մասամբ ուսուցիչ կը լինին թեմական և ծխական դպրոցներում: Մեծ բան է, եթէ տարեկան մի, շատ շատ երկու ձեռնարանականներ քահանայ դառնան, նրանք էլ ի հարկէ կը գերադասեն քա-

¹⁾ Տեղեկութիւնները քաղւած են 1891 և 92 թւականների «Արարատներից»:

ղաքները: Ներսիսեան դպրանոցից տարեկան աւարտում են միջին թւով 15 հոգի: Շուշու և Երեւանի թեմական դպրանոցներից 6—7-ական, ընդամենը Անդրկովկասի երեք դպրոցներից տարեկան միջին թւով աւարտում են 25—30 հոգի: Նախջեանի թեմ. դպրանոցը բացառիկ զրութեան մէջ է. աշնտեղից աւարտողները մեր կողմը չեն անցկենում. նոքա մնում են Նախջեանում կամ տարածւում են Առաքառտանի հալարնակ տեղերը, իսկ ալդ տեղերում գիւղական աղգաբնակութիւն համարեա թէ չկալ. ալդ պատճառով ալդ դպրանոցի մասին չենք խօսում: Ի նկատի ունենալով, որ դպրոցաւարտներից մի քանիսը կը շարունակեն բարձրագոյն ուսում տա-նալ, բաւական մեծ մասը ուսուցիչ կը լինին ծխական դպրոցում, և ալդ կարևոր է, քանի որ մեր դպրոցներում անհրաժեշտ են Հայոց միջին դպրոց-ներում կրթւած և ապա ուսուցչական արտօնութիւն ձեռք բերած ուսու-չիչներ, ի նկատի ունենալով, որ մի քանիսն էլ, գուցէ մեծ մասը, զսնա-զան, գլխաւորապէս ընտանեկան հանդամանքներից ստիպւած, կընտրեն աւելի շահաւէտ ասպարէզ առեւտուրական և արդիւնաբերական աշխարհում. կը մնան հազիւ 5—6 հոգի, որոնք կը ցանկանան քահանայ լինել: Այս թիւը, համեմատելով քահանաների պահանջի հետ, շատ քիչ է, ուստի հոգևոր իշխանութիւնն ստիպւած է ալդ դժւարութեան առաջ խոնարհել, և գիւղերն առանց քահանայի չթողնելու համար՝ ձեռնադրել աշխարհայիններն, որոնք ինքնակրթութեամբ առ ոտս ալս ինչ եպիսկոպոսի կամ ալն ինչ քահանայի ձեռք բերած կը լինին քահանայապատշաճ հմտութիւն, որ նոյն է, թէ ձեռնադրել ազգա տիրացուներին, ինչ ասել կուզէ, դրանց մէջ խիստ ընտրութիւն անելով: Գործի դժւարութիւնները վերացնել չեն կարող ոչ մամուլի բացաղանջութիւններն ու արդար զալույթը, ոչ կրթւած հասարակութեան շատ անգամ անհաշիւ բողոքը, ոչ սինոդի չրջաբերականները, ոչ էլ հոգևոր բարձրագոյն իշխանութեան բարի ցանկութիւններն ու կամքը: Քանի որ հոգևոր իշխանութիւնը ազդու միջոցներ չէ ձեռք առել քահանաներ պատրաստելու՝ քանի որ մամուլն ու հասարակութիւնը չեն ցոյց տուել գիւղական կեանքի պահանջներին համապատասխան քահանաներ պատրաստելու միջոցները և գործնականապէս չեն նպաստել ալդ միջոց-ների իրագործմանը, չրջաբերականները կը մնան մեռած տառ, իսկ մամուլի անորոշ պահանջները լօղս կը ցնդեն: Դեռ 1876 թւին «Մշակը» իրաւացի կերպով նկատում էր. «Բաւական է, ինչ որմինչև աւսօր գրեցին, քննեցին, բաւական է, որչափ որ չարձակեցան հոգևորականների դէմ, որովհետև դրանով մենք մեր նպատակին չենք հասնելու. պահանջելուց առաջ տանք, որ կարողանանք չետ պահանջել: Եթէ հալ ժողովուրդը սի-րում է, պաշտում է իւր առաքելական սուրբ եկեղեցին, կամենում է իւր եկեղեցու համար արժանի հոգևորականներ և իր համար օրինակելի առաջնորդ ունենալ, թող պատրաստէ լաւ հոգևորականներ, անտարբեր

Հմնայ գէպի իր եկեղեցին և հաւատը... պինդ և միաբան պաշտէ և պաշտ, պահէ Լուսաւորչի Աթոռը, ալն ժամանակ նա իր պարտաւորութիւնը կատարած կը լինէր, կունենար իրաւունք պահանջելու և մենք կունայինք եկեղեցու արժանի պաշտօնեաներ» ¹⁾).

Անցել է համարեա քսան տարի, և մենք ալսօր ամենայն իրաւամբ կարող ենք նոյնը կրկնել, ոչ ալն պատճառով որ ալժամ հունինք եկեղեցու արժանաւոր պաշտօնեաներ, ալ ալն պատճառով, որ միջոցներ չենք գործ դրել ալղպիսի պաշտօնեաներ ունենալու: Թէ մեզ հարկաւոր են ուսեալ քահանաներ, ալնքան պարզ է և անլիճելի է, որ մենք զարմանում ենք, երբ դեռ ալժամ կան մարդիկ, որոնք տաքացած պաշտպանում են ալղ միտքը, կարծես մի նոր ճշմարտութիւն են չափում: Ալստեղ հալեացքներ յարբերութիւն չի կարող լինել. բոլոր կուսակցութիւնները միաձալն պնդում են, թէ ուսեալ քահանաներ՝ պէտք են. հալեացքներ յարբերութիւնը նրանում է, որ ուսեալ ասելով զանազան մարդիկ զանազան կերպ են հասկանում: Ուսեալ բառը ինքն ըստ ինքեան անորոշ նշանակութիւն ունի. իւրաքանչիւր չըջան պահանջում է իրան համապատասխան պատրաստութիւն, ուսում: Ուսեալ բժիշկը տգէտ է զատեր պաշտպանելում, ինչպէս և ուսեալ փաստաբանը հիւանդ բժշկելում. ուսեալ ուսուցիչը տգէտ է իբրեւ ճարտարապետ, մեքենագէտ և ընդհակառակը. ուսեալ փիլիսոփան, պատմաբանը անընդունակ են իբրեւ քաղաքական գործիչ, ուսեալ գիւղատնտես-կենդանաբանը անպէտք իբրեւ գրագէտ—հրապարակախօս և ալն: Ժողովրդի որոշեալ դասակարգի մէջ գործելու կամ որոշ պէտքերը հոգալու համար անհրաժեշտ է ալղ դասակարգի պէտքերի համապատասխան պատրաստութիւն: Գիւղական կեանքը ունի իւր առանձնապատուկ պայմաններ և գիւղական ժողովրդի մէջ գործելու ու պիտանի լինելու համար պէտք է ալղ պայմաններին համապատասխան պատրաստութիւն ունենալ, և ոչ թէ ընդհանրապէս ուսեալ լինել:

Գիւղական կեանքի գլխաւոր չարիքը աղքատութիւնն է. զրա պատճառը մի կողմից հողի պակասութիւնն է, միւս կողմից գիւղացու սպիտութիւնը գիւղատնտեսական գործնական գիտելիքների մէջ: Գիւղացին պապերից սովորած եղանակով է մշակում հողը, նոյն հողի վրայ նոյն սերմերը ցանում են չարունակ, նոյն եղանակով է մշակում ալղին, պարտէզը, նոյն միջոցները գործ դնում ալղիների և ծառերի զանազան հիւանդութիւնների դէմ, կամ ոչինչ միջոց չի գործ դնում, նոյն արդիւնքն է ստանում կենդանիներից, կաթից և ալն:

Ժողովրդական գիւղատնտեսական գրւածքները և մամուլի մէջ չաճախ հրեան եկող գիւղատնտեսական լօղածները չեն կարող բարւոքել

¹⁾ 1876 թիւ № 92.

գիւղացու տնտեսական նեղ վիճակը, քանի որ ալը գրաւածքներն ու լօղ-
ւածները ժողովրդի մէջ չեն էլ տարածուում, գիւղացին չի կարգում, կար-
դացածն էլ չի հստկանում և չի գործադրում: Հալ գիւղացին կասկածո-
տութիւնից, վախկոտութիւնից թէ խելօքութիւնից, երբէք փոփոխութիւն
չի մտցնում իւր կեանքի և պարապմունքների մէջ, մինչև որ փորձով
չհամոզւի, թէ նորն անպաւանօգտակար է հնից: Հետեանքի անորոշու-
թիւնը նրան կաշկանդում է: Պարապմունքների եղանակի մէջ փոփոխու-
թիւն մտցնելու համար անհրաժեշտ է գիւղական հասարակութեան ան-
դամ դառնալ, վարել, ցանել, մշակել լաւագոյն եղանակով, փորձով ցոյց
տալ նորի առաւելութիւնը: Այլապէս հազար լօղւածներ գրին ու բրօշիւ-
ներ տարածեն, դրական հետեանքի չեն հասնիլ: Մեր գիւղատնտեսներին
զաւազան պատճառներով չի լաջողում բոլոր դեմը գիւղերում և օգտակար
լինել իրանց մասնագիտութեամբ: Քահանան, լինելով գիւղական հասա-
րակութեան ռնքաժան անդամ և ի պաշտօնէ կապւած լինելով գիւղի հետ,
կարող է նպաստել տնտեսական կեանքի բարւոքմանը, եթէ դրա համար
պատրաստութիւն ունենալ:

Գիւղացին հողաբաժանութեան և ջրաբաժանութեան կռիւների պատ-
ճառով, ընտանեկան և հասարակային վեճերով, առնելիք տալիքի գործե-
րով շարունակ քաշ է գալիս դատարաններում և ատենական տեղերում,
գիւղական տանուտէրի դռնից սկսած մինչև նահանգապետների ղիւանա-
տները: Ատենից ատեն անցնելով նա հարստահարում է, կեղեքւում է.
Նրա սփլտութիւնից օգուտ են քաղում բարեկամ և խորհրդատու ձևացող
փողոցային վատտաբանները, որոնք շատ անգամ գիւղացիներին իրար են
խառնում, դատեր են ստեղծում, որպէս զի մէջտեղում իրանք չահլին:
Օգուտ է և բարիբար հանդիսացող գիւղացի կամ քաղաքացի վաշխա-
ռուն: Գիւղացին ընկնում է պարտքերի տակ, պարտատէրը տուն տեղ
ծախել է տալիս, իրեղէնները ածուրդի է հանում, կինն ու երեխաները
մնում են արևի տակ, և աչս բոլոր զրկանքներին նա ենթարկւում է,
որովհետև օրէնքից ոչ մի տեղեկութիւն չունի և չկալ մի սրտացաւ ան-
կեղծ բարեկամ, որ նրան առաջնորդէ, խորհուրդ տալ, որ գիւղի համալ-
նական շահերը պաշտպանել կարողանալ: Այստեղ բացւում է գիւղական
քահանայի համար գործունէութեան մի նոր ատպարէզ:

Գիւղերում տարափոխիկ հիւանդութիւնները, զանազան ախտերը
լաճախակի կրկնւող երևութիւններ են և բաղմամբիւ զոհեր են տանում. դրա
պատճառը մի կողմից հակաառողջական կենցաղախորտութիւնն է, միւս կող-
մից բժշկական միջոցների կատարելաւ բացակայութիւնը: Այդպիսի դէպ-
քերում գիւղացին շատ անգամ զխմում է պառաւական դեղերի, նրա մէջ
զօրանում են նախապաշարունակներ:

Մենք չենք վստահանում հերքել աւանդական միջոցների նշանակու-

թիւեր, մանաւանդ ալն միջոցները, որտեղ դեր է խաղում հաւատը, քանի որ վերջին տարիներս գիտութիւնը հաստատում է, որ հաւատի ազդեցութիւնը շատ մեծ է բժշկական տեսակէտից. սակայն և ալիպէս անհրաժեշտ է առողջապահական կենցաղավարութիւն և բժշկական գործադրական գիտելիքներ մանաւանդ համաճարակ հիւանդութիւնների ժամանակ. Գիւղացին միանգամայն զուրկ է աղպիսի ծանօթութիւններից. գիւղական քահանան մեծ փոփոխութիւն կարող է մտցնել գիւղացու առողջապահական կեանքի մէջ և գործնական խորհուրդներով նպաստել հիւանդութիւնների ժամանակ:

Այսպէս ուրեմն, գիւղական կեանքում պիտանի լինելու համար անհրաժեշտ է պատրաստել վերոյիշեալ գիտաւոր չարիքների դէմ մաքրուելու և քահանան որ ամեն չարմարութիւններ ունի աղ պանելու, պէտք է ծանօթ լինի գիւղատնտեսական, իրաւաբանական և բժշկական առողջապահական գիտելիքների հետ ալն չափով, որքան հարկաւոր է գիւղացու առօրեայ կեանքում գործադրելու համար. Իւրաքանչիւր գիտութիւն ունի իւր տեսական և գործադրական կողմը. մեր վիշաճ գիտութիւններից իւրաքանչիւրը հիմնւած է մի քանի գիտութիւնների վրայ, կամ կապւած է մի քանի գիտութիւնների հետ. Հարկ չկայ, որ քահանան խմանալ աղ բոլոր գիտութիւնները. բաւական է որ նա ծանօթ լինի գործադրական միջոցների հետ: Մենք կարծում ենք որ դրա համար ևրկար տարիներ միջոցների հետ: Մենք կարծում ենք որ դրա համար ևրկար տարիներ չեն պահանջում. երեք տարեայ ընթացքում քահանայացուն ուրիշ առարկաների հետ զուգընթացաբար կարող կը լինի աղպիսի գիտելիքներ ձեռք բերել:

Մենք ալտեղ չենք խօսում կրօնի, լեզուի, պատմութեան և առհասարակ միջին ուսման անհրաժեշտութեան մասին, քանի որ աղ լեզու ըստնքեան հասկանալի է և անմիջապէս կապւած է քահանայի կոչման հետ:

Թեմ. ղպրանոցներից աւարտողները կատարելապէս պատրաստ չեն գիւղական քահանայի գործունէութեան համար. նոքա աւելի համապատասխան են քաղաքներում քահանայ լինելու, որովհետեւ ալնտեղ աղպիսի կարիքներ չկան, և եթէ կան, գործողներ էլ շատ կան բոլոր աս պարէզներում: Հոգևոր իշխանութիւնը կամ պէտք է թեմական զբոսանոցների ծրագրի մէջ համապատասխան փոփոխութիւններ մտցնէ, կամ նոր ղպրաներ հաստատել չափապէս գիւղական կեանքի պահանջներին համապատասխան քահանաներ պատրաստելու համար: Թեմական զբոսանոցներից միմիայն քահանայացուներ չեն դուրս գալիս, ալ և ուսուցիչներ և առհասարակ միջին կրթութեան տէր անձինք, որոնց մէջ լինում են և ուսումը շարունակողներ: Բացի դրանից թեմական զբոսանոցները, լինելով քաղաքներում, չարմարութիւն չունին գիւղատըն:

տեսական գործնական պարապմունքների և ընդհանրապէս գիւղացի ժողովրդի առօրեայ պէտքերին ծանօթանալու համար, ուստի անհրաժեշտ են նոր դպրոցներ առանձին ծրագրով, որի ընդհանուր ուղղութիւնը մենք աշխատեցինք որոշել, մանրամասնութիւնները թողնելով մամուլին և հոգևոր իշխանութեանը: Այդպիսի դպրոցների ամենալարմար տեղն են մեր վանքերը:

Հալոց նշանաւոր վանքերը գտնուում են հալաբնակ գաւառների կենտրոններում և ապահոված են ընդարձակ կալածներով: Այդ տեղերում ապագայ քահանայացուները ամեն չարմարութիւն կունենան գործնականապէս գիւղաանտեսութեամբ պարապելու: Բացի զրանից վանքերում գիւղատնտեսութիւնը ծաղկելով, բարևար ազդեցութիւն կունենալ շրջակայ գիւղերի տնտեսական վիճակի բարւոքման վրայ: Քանիցս խնդիր է չարուցել գաւառներում գիւղատնտեսական դպրոցներ բաց անելու՝ գիւղական ազգաբնակչութիւնը տնտեսական ճգնաժամից ազատելու համար: Այդ նպատակին կը ծառայեն մասամբ վանքերում բացած դպրոցները: Մենք շարունակ դանդատուում ենք որ վանական կալածների արգիւնքը կորչում է, ոչ մի նպատակի չի ծառայում, ինչ աւելի նպատակաւար գործադրութիւն կարող է լինել, քան նպատակ ժողովրդի տնտեսական և մտաւոր-բարոյական կեանքի բարւոքմանը: Թւարկմացութիւն չէ արդեօք որ այսօր, երբ հոգևոր իշխանութիւնը ձեռնարկում է վանքերում դպրոցներ հիմնել, որով իրադարձւում են մեր վաղուցայն ցանկութիւնները, չորս կողմից ձռնիչ ու աղաղակ է բարձրանում, թէ ինչ հարկաւոր են վանական դպրոցներ, ինչացու են թեմական դպրոցները և ալլն և ալլն. կոյր հակասութիւններ չեն արդեօք այդ բացականչութիւնները մեր մամուլի և հասարակութեան մի մասի կողմից:

Վանական դպրոցները մի ուրիշ գործնական առաւելութիւն ևս ունին: Մեղանում չաճախ լուծած նկատողութիւնները, թէ ուտեալ մարդիկ գիւղ չեն գնում, չեն սաղում գիւղական հասարակութեան, անմիտ խօսքեր չեն, ալ շատ խոր հիմք ունին: Այսպէս է ալ ժամ իրողութիւնը և այդ հանգամանքն ունի իւր հոգեբանական պատճառները: Մեր երիտասարդները շարունակ վիճում և ճարտար կերպով ապացուցանում են գիւղական ժողովրդի մէջ մտնելու և գործելու անհրաժեշտութիւնը: Սակայն նոյն երիտասարդները խմբւում են քաղաքներում, մինչև անգամ խորշում են դաւառական փոքր քաղաքներից և վազում են կենդրոն տեղեր, Թիֆլիս, Բաղու, մանաւանդ այդ տեղերում մի քանի տարի ապրելուց չեւոյ նրանց համար անտանելի է թւում գաւառական քաղաքներում կամ գիւղերում ապրելը, Շատերը իբրև ուսուցիչ գնում են գիւղերը, ան էլ անճարացած, երբ աւելի լաւ տեղ չեն գտնում, չուսալով, որ չարմար դէպքում գիւղից կազատւին, իսկ քահանայական պաշտօնով ցմա՛հ գիւղի հետ կապել ան-

տանելի է թւում: Մեղադրենք արդեօք աղախաններին: Մեր կարծիքով աղախէս քարոզող երիտասարդների մեծ մասն անկեղծ համոզւած են իրանց ասածի անհրաժեշտութեան մէջ, զաղափարներով ձգտում են ղէպի գիւղը, ցանկանում են օգտակար լինել ժողովրդին, բալց նրանց գաղափարներն ու ցանկութիւններն անզօր են տարիների ընթացքում կազմակերպւած, մարմին ու արին դարձած հակումների ու սովորութիւնների առաջ: Մանկութիւնից սկսած ապրելով և սովորելով քաղաքներում, ենթարկւելով քաղաքի կեանքի բաղմատեալ տպաւորութիւններին, նրանց մէջ զարդանում են և հաստատւում առանձին հակումներ. ընկերական շրջանը, իրանց նման մարդկանց հասարակութիւնը, ընթերցարանը և ընթերցանութիւնը, քաղաքակիրթ աշխարհի հետ շարունակ չարաբերութիւն պահպանելը, լրագիրը, թատրոնը, հասարակալին զւարճութիւնները և առհասարակ կեանքի բաղմաթիւ հրապուրիչ հանդամանքները նրանց համար կենսական պահանջ են դառնում: Նրանց մէջ կան շատերը, որոնք տեսականապէս նուէն իսկ մերժում են աղ պահանջները, բալց երբ ընկնում են ալնախի տեղեր, որտեղ վերոյիշեալ հանդամանքները չկան, չուտով ձանձրանում են, մի անորոշ սրանեղութիւն են զգում. և աղ բնական է, նոցա մէջ իրանց կամքից, գիտակցութիւնից և ստացովի գաղափարներից անկախ խոր արմատներ են ձգել քաղաքի կեանքի և տպաւորութիւնների ազդեցութեան տակ առաջ եկած հակումները, և զաղափարները շատ թույլ են նրանց ուժը խորտակելու համար:

Գիւղական կեանքի դժւարութիւնները տանելու, գիւղացի ժողովրդի մէջ ապրելու և գործելու համար անհրաժեշտ է զգացումներով և հակումներով կապւած լինել աղ կեանքի հետ, սիրել գիւղացուն և նրա սպարապմունքները: Աղախէս է ներկայացնում իւր հերոսին ուսա չաչտի վիպագիր Պոտապենկոն «Կաղափարական քահանայ» վէպի մէջ: Արիւն ընտրում է գիւղական քահանայի ասպարէզը, որովհետեւ սիրում է գիւղացուն, նրա պարապմունքը, գիւղական կեանքը. սիրում է ալն պատճառով, որ մանկական և պատանեկան տարիներն անց է կացրել գիւղում, բնաւորութիւնը կազմակերպւել է գիւղական կեանքի ազդեցութեան տակ, ուստի և մալրաքաղաքի կեանքը նրա վրայ ոչ մի ազդեցութիւն չի անում. ալն տեղրաքաղաքի կեանքը է վարում և զգում է պալմանական, նա մի տեսակ առանձնական կեանք է վարում և զգում է պալմանական, չինծու կեանքից: Մեր մէջ դժբաղդաբար փոքր ի շատէ մեծ քաղաքում ուսում առած գիւղացի երիտասարդներն էլ չեն կարողանում գիւղ վերադառնալ, շատ շուտ են ընտելանում քաղաքի կեանքին: Գուցէ կը լինին և շատ ուրիշ պատճառներ. մենք ցոյց ենք տալիս իրողութիւնը. ալն երևոյթը շատ վաղուց նկատել են նրանք, որոնք կեանքի մակերևոյթը միալն չեն տեսնում, կամ ուրիշի ակնոցներով չեն նալում, ալ գիտելու և իրողութիւնները գնահատելու ընդունակութիւն ունին: Դեռ 1874 թւա-

կանին հանգուցեալ Գրիգոր Արծրունին «Մշակի» էջերում քարոզում էր. «Մենք անդադար կրկնում ենք, որ քահանայի մանաւանդ զիւղական քահանայի համար աւելի չարմար է միջին ուսումնարանի ուսումը, ... քան թէ Աստածաբանական բարձր ճեմարանական ուսումը»: Բարձր ուսումը հեռացնում է մարդուն զիւղական սոգէտ հասարակութիւնից, մանաւանդ մեղանում, որտեղ բոլորս կարծում ենք թէ կոչւած ենք աւելի մեծ դեր խաղալու քան զիւղական քահանայի համետ ասպարէզը, որ տեղ չի կարիլի թմրուկ ածել, չարած դործեր ի լուր աշխարհի հռչակել, երիտասարդութեան վարիչ շանդիւսանալ, կուսակցական պաշտօններ մղել, ընտրել, ընտրել և փաղէլ: Այս միտքն ալոր, իբրեւ իրականութեան պատկեր, իբրեւ նոյն իսկ մի տեսակ բողոք իրականութեան դէմ, արտաբերւած ենք տեսնում «Արարատի» էջերում. ահա չորս կողմից կրքեր են լուրում, արտոնչ, զաւրոյթ, նոյն իսկ հեգնութիւն ուղղւում են Արշէն Երէցի հասցէին, որ իւր մի փոքրիկ նկատողութեամբ ցոյց տւեց թէ որքան ընդունակ է կեանքի խորը զիտելու, ճշմարիտ իրականութիւնն ըմբռնելու:

Ամիրտինք մեր խօսքերը:

Գիւղական քահանաների ձեռնադրութեան խնդիրն անորոշ պահանջներով, սովորական բացաղանջութիւններով, միշտ իսկ Սինոդի շրջաբերականներով բարւոքեւ չի կարող. Փոխանակ ընդհանրապէս ուսեալ քահանաներ պահանջելու, մասուլը և հասարակութիւնը պէտք է պահանջեն և նպատեն, որ հոգեւոր իշխանութիւնը հիմնէ սուսնձին ծրագրով դպրոցներ, որտեղ պատրաստում են զիւղական հասարակութեանն օգտակար լինելու ընդունակ քահանայացուներ: Այդպիսի դպրոցների ամենալարմար տեղը վանքերն են, իսկ մինչև այդպիսի դպրոցների բարեկարգելը հոգեւոր իշխանութիւնն ստիպւած կը լինի ձեռնադրել աւնպիսններին, որոնք ինքնակրթութեամբ ձեռք բերած կը լինին քահանայապատշաճ հմտութիւն, վերջիններիս մէջ էլ խիստ ընտրութիւն անելով:

Մ. ՂԱԶ.

ՀԱՅՈՑ ՍԵՄԻՆԱՐԻԱՆԵՐ ԵՒ ՔԱՅԱՆԱՑԱԿԱՆ ԽՆԴԻՐ ¹⁾

Դեռ ալս դարւալ երեսնական թւականներին հալոց եկեղեցու համար կրթւած պաշտօնիկներ պատրաստելու մեծ պահանջ է զգացել. ալդ նպատակով Պոլսոյի իրաւունք էր տւել մեր հոգեւոր վարչութեանը լուրաքանչիւր թեմում մի մի սեմինարիա բանալ: Գլխաւորապէս ալդ նպատակով հիմնւած լինելով մեր սեմինարիաները, ալնու ամենալին, կարծես հիմա էլ raison d'être չունեն, անհրաժեշտութիւն չեն, երկնքի և երկրի մէջտեղ են կախւած...

¹⁾ «Մշակ», 1894, № 48.

Ամեն մի ուսումնարան գրաւում է ուսանելու համար ցանկացողների որոշ թիւ, նաեւ թէ ապագայում որ ասպարիզի համար պարտաւորեցուցիչ է ալդ ուսումնարանից աւարտած լինելը. ամեն մի քաղաքակրթւած երկրում իբրեւ սկզբունք ընդունւած է, որ բժիշկը, քննիչը, ուսուցիչը, ինժեները պէտք է ոչ միայն որոշ միջին, ալ և բարձր կրթութիւն ստացած լինեն. և քանի որ ալլապէս ալդ ասպարիզները խափանւած են, ուստի գիմնազիական կամ բնալական ցենզը պարման է sine qua non: Հասկանալու է, որ իբրեւ անհրաժեշտութիւն ալդ ուսումնարանները տարուց տարի բազմանում են, չրջանաւարտները շատանում, իրանք ուսումնարանները բարեկարգւում: Նոյնը և հոգեոր ասպարէզ ընտրողների համար: Հեռու չգնանք օրինակների ետեւից և վերցնենք Ռուսաստանը, ուր քահանայից պահանջւում է սեմինարիական ցենզ, իսկ հոգեոր իերարխիալի պաշտօնեաներից՝ չաջորդից, վիճակաւորից՝ նաև հոգեոր ճեմարանից աւարտման վկայական: Ռուսաց սեմինարիաները հոգեոր ասպարիզ ընտրողների համար իբրեւ պարտաւորեցուցիչ կրթական հիմնարկութիւններ մի անհրաժեշտութիւն են, ուստի թւով ալ մօտ 55 են, իսկ չրջանաւարտների թիւը իւրաքանչիւրից լինում է տարին 30—87 հոգի: Չնայած որ ռուս «մուծիկը» աւելի գրագէտ և կրթւած չէ հալ գիւղացուց, ահառ ամենաչնիւ ռուսաց սեմինարիաներից աւարտած երիտասարդները չեն «խորչում գիւղերում քահանայ լինելուց», ուստի և հարկ չէ լինում «թերուաներով» գիւղերը լցնելու հարցը պաշտպանելու:

Իսկ մեզ մօտ... որ քահանայիցն է պահանջւում ոչ միայն սեմինարիական, ալ որ և է ցենզ, և ներկալ պալմաններում ո՞վ քահանայ ձեռնադրւելու ալմեան դիւրին ճանապարհը թողած՝ գլուխը կը ցաւացնի քահանայանալու համար ոչինչ նշանակութիւն չունեցող սեմինարիական ցենզ ձեռք բերելու: Ի՞նչու էք դարմանում, որ մեր սեմինարիաներից չրջանաւարտների թիւը 5—10 հոգուց չէ անցնում:—Ի՞նչ է սպասում մեր սեմինարիան աւարտողին. ծխական դպրոցում ուսուցչութիւն և արտասահման՝ ուսումնի շարունակելու, իսկ քահանայացւի համար սեմինարիական ցենզը մի չռալութիւն է, քանի որ շատ և շատ դիւրին ու կարճ ճանապարհ կալ... հարցրէք մեր թեմականներին... Հիմա ծխական դպրոցի ուսուցիչ լինելու համար սեմինարիան աւարտելն էլ բաւական չէ, իսկ արտասահման գնալ հաղարից մէկին կաջողւի: Գուցէ սեմինարիա կը մըտնեն՝ գիտութիւն ձեռք բերելու, հէնց գիտութեան համար, բաւց քանիսը: Ի՞նչու ռուսաց սեմինարիաներում աւարտողների թիւը 87 և աւելի է լինում. ինչու ռուս գիւղերում կրթւած քահանաներ կան. մի քիչ մտածեցէք և ինքներդ կը հասկանաք, թէ ինչու մեզ մօտ ալ է իրականութիւնը:

Միւս կողմից. թնչ է սպասում քահանային. 1) տնտեսական անապահով, ստորացնող դրութիւն. պէտք է խրաքանչիւր անգամ ծխականին ձեռք մեկնել՝ ընտանիքով սովից չը մեռնելու համար. 2) պէտք է անպայման հլու լինել, անհատական իրաւունքից զրկել և կատարելապէս կախած լինել իշխանաւորից, որի կամաւականութեան դէմ օրինական արգելքներ չկան: Ուրեմն քահանային մի սարսափելի տնտեսական-բարոյական միջնավայր է սպասում, իսկ աղապիտի միջնավայրը միայն ստոր զարգացման և պահանջների մարդկանց կարող է գոհացնել...

Մի 15—20 տարի առաջ մեր ծխական դպրոցների ուսուցիչների թէ. ցնցը և թէ դրութիւնը աւելի լաւ չէր, քան հիմա քահանաներինը. բայց տեսէք սխտեմատիկաբար առաջ տարած սուտեմական ցինզի պահանջը թնչ փոփոխութիւններ առաջ բերեց: Ո՛ւր են թերուս տիրացուները, խալիփաները և աղա-հոգաբարձուների աչս կամ աչն տգէտ ազգականները ուսուցչութեան պաշտօնով. դրանց մեծ մասը չքացել են, իսկ միւսները անհետանալու վրաջ են: Նւ որովհետեւ աղ սխտեմատիկական պահանջի չնորոյով ալժմ ուսուցչական դասը կաղմւած է համեմատաբար աւելի զարգացած անհատականութիւն ունեցող և կրթւած անձերից, ուստի և ուսուցչի շարգը օրից օր բարձրանում է ժողովրդի աչքում, բարձրանում է տնտեսական ազահովութիւնը և ծագում են նորանոր խնդիրներ՝ աւելի բարելաւելու նրանց վիճակը, թէ տնտեսապէս և թէ բարոյապէս: Միջնավայր և անձինք, դրանք իրար հետ սերտ կապւած բաներ են. լաւացրէք միջնավայրը—ջոկողութեան օրէնքով լաւերը կը մտնեն նրա մէջ, կամ խիստ ընտրութիւն կատարեցէք, և կը լաւանալ միջնավայրը, որովհետեւ լաւ պատրաստւած անձինք իրանք կ'առաջացնեն պալմաններ ին պատակաւարմար փոփոխութիւն: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ կուսակրօն հոգևորականութեան համար, որից ընտրւում են հոգևոր վարչական պաշտօնեաներ, պակաս անհրաժեշտ չէ կրթական բարոյական ցնցը, որովհետեւ ոչինչ աչնպէս վեասակար չէ, որչափ իշխանութիւնը տգէտ և անբարոյական մարդու ձեռքում: Բարեփոխեցէք քահանայական ալժմեան տնտեսական-բարոյական միջնավայրը և միւս կողմից խիստ ընտրութիւն արէք և սեմինարիաները կը ստանան *raison d'être*, նրանց շրջանաւարտների թիւը մի քանի տասնեակների կը հասնի և ամեն մի գիւղ կ'ունենալ «ուսեալ քահանայ»: Ի՞նչու գիւղական ծխական ուսումնարանը ունի ցնցով ուսուցիչ, իսկ նոյն գիւղը քահանայ չունի. ինչո՞ւ քաղաքները լի են կրթւած ուսուցիչներով, իսկ քահանաներով՝ ոչ: Ուրեմն բաւական չէ ասել թէ՝ «ուսեալ երիտասարդը գիւղ չէ գնում քահանայի պաշտօնով», ալ պէտք է իմանալ բուն պատճառը, որ ալ է, քան մեկնում են:

Մօտ 60 տարի բացւած սեմինարիաների գոլութեան անհրաժեշտու-

թիւնը չըմբռնած, նրանց տնտեսական—ուսումնական վիճակը չբարեկարգած՝ մտածել վանքերում ընծալարանների բանալու մասին, —նշանակում է մի սկսած գործ կիսատ պուտ թողնել և մի ուրիշին ձեռնարկել: Եւ միթէ վանքերը աւելի չարմարութիւնների ունեն միջնակարգ ուսումնարանների պահելու, քան քաղաքները, ուր ունենք սեմինարիաներ: Եթէ ընծալարանների նպատակը պէտք է լինի տիրացուներին միայն եկեղեցական ծիսակատարութեան մէջ վարժեցնելը, ալն ժամանակ իզուր է սպասել, որ նրանք ժողովրդի համար «ճրագներ» դառնան, «որոնք կը փառատեն խաւարը»: Չենք կարծում, որ իրականութիւնը ապացուցի, որ հարկւրաւոր գիւղեր անքահանայ են. ընդհակառակն կարելի է ասել, որ հարկւրաւոր եկեղեցիներ թուլ աւելի քահանաներ ունեն, քան թէ հարկաւոր է, և եթէ մի քանի տեղեր ճիշդ որ քահանաներ չկան՝ ալք բացառական դրութիւնը իբրեւ ընդհանուր օրէնք առաջ բերելուց շատ հեռու է:

Մեզ ասում են. «միջին դարերում ամբողջ գիտութիւնը վանքերումն էր կենտրոնացած». թնչ անհնք. միթէ հիմա էլ նոյնն է. կամ տասնեակ դարերում մարդկութեան պատմական-հասարակական կեանքի պայմանների փոփոխութիւնները ձեզ համար գոյութիւն չունեն: Կենտրոնացրէք ձեր ուշադրութիւնը ունեցած սեմինարիաների վրայ, բացէք դեռ գոյութիւն չունեցողները, միայն թղթի վրայ մի ընդունէք նրանց անհրաժշտութիւնը, ալ և կեանքի մէջ, և հաւատացէք, որ կունենաք շատ և շատ ուսեալ քահանաներ: Իսկ ո՞վ կարող է հակառակ լինել, որ բարեկարգւեն մեր վանքերը, ո՞վ հակառակ կը լինի, որ կարգ ու հաշէտութիւն մտնի ոչ միայն մեր վանքերի, ալ և բոլոր գործերում. ո՞վ կարող է հակառակ լինել, որ ալն վանքերում, ուր չարմարութիւն կա՝ ծխական դպրոցներ բացեն հարևան գիւղերի համար:

Սեմինարիաներ ունենք քահանաներ պատրաստելու, քահանաներ չունենք սեմինարիաներից աւարտող,—ահա իրողութիւնը, որի պատճառը, լուսով ենք, մասամբ պարզեցինք: Ենչո՞ւ ոչ միայն գիւղերում, ալ և քաղաքներում ուսեալ քահանաներ չունենք, նոյնպէս մասամբ պարզեցի:

Եւ հաւատացած ենք, եթէ հաշուցանքի, բղաւոց-ճղաւոցի, և անւանարկութեան փոխանակ լուրջ խելքով, փառտերի հիման վրա համեմատական եղանակով ուսումնասիրէր քահանայական խնդիրն էլ. ինչպէս ամեն մի հասարակական խնդիր, հիմա մեր գործերը աչպիսի ողորմելի վիճակի մէջ չէին գտնւի:

Շուշի:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄՈՒՄ ¹⁾

Ոչ մի վիճակ, չենք կարծում, աչքքան խղճալի լինի և աչքքան աչքաժ, խորոված տգէտ բաղմաթիւ քահանաների կողմից, որքան Վարազդը՝ 16,000 ծովա ունեցող թեմը, բացի քաղաքներից, որ ասել է 200 գիւղ կամ եկեղեցի, ունի 220 քահանայ, իւրաքանչիւր քահանայի վրա ընկնում է մօտաւորապէս 60 տուն, իսկ մօտ քսան գիւղ ունի երկու-երկու քահանայ։ Կան աչք լոպէիս և տառնաչափ տիրացուներ, որոնց երգւեալ փաստարանները ամեն օր հոգևոր իշխանաւորների ղռները ծեծում են և կեղծ մղկտանքներով հաւատացնել տքնում, թէ՛ մեռելները փառելին, քահանայ չկալ, աւէք մեզ քահանայ։ Բաւց... քաղաքումս ամիսը, մինչև իսկ չաբաթը մի քանի անգամ սուռկի պէս երեւում են գիւղական քահանաներ, որոնք զանազան խաբեբաչական միջոցներով ձեռնադրւել են աչք և աչք գիւղերի վրա, բաւց ժողովուրդն աչք սօր միանգամաւն չէ ճանաչում նրանց։

Փաստերով խօսենք։

Ո՞վ չէ պատահում ամեն օր ճարտարեցի տէր-Ստ. Վարդապետեանին, որ Մոմնա գիւղի վրա ձեռնադրւել է և աչքօր ժողովուրդը նրան չէ ճանաչում, իսկ ինքն ամեն օր մաշում է առաջնորդի և կոնսիստորիալի ղռները և ժողովուրդ խնդրում։

Ո՞վ կարող է ուրանալ, թէ Մեղրեցոյ եկեղեցու լուսարար Բարսեղը չէ ձեռնադրւել խժարերդ գիւղի վրա և աշխատողներ չկան նրան քաղաքի եկեղեցին բերելու։

Եւ մինչև աչքօր նա անծով է։

Ո՞վ չէ տեսել ոմն Մամիկոնեան նորընծալ քահանային, որ ձեռնադրւել է մի գիւղի վրա, որի անունը չենք լիշում, իսկ գիւղացիք բանից տեղեկութիւն չունեն և աչքօր խեղճը մնացել է սոված իր բաղմամարդ գերդաստանով։

Ո՞վ չտեսաւ երկու շաբաթ որանից առաջ Մօսէս անունով մի ութսուն տարեկան ծերունու, որ ժառանգում է իր հանգուցեալ քահանայ որդու ծովսը՝ քահանայ ձեռնադրւելով շնորհիւ աչք հանգամանքի, որ աչքօր ամեն մի ախանջ լսել է և ամեն մի բերան խօսում է, աչք է՝ որ

¹⁾ «Մշակ» № 46, 1894։ Սկզբից մի քանի տող դուրս թողած։ Խմբ.

նրա որդին էջմիածնումն է ծառայում, իսկ հայրը, թէկուզ էլ անգրագէտ, փափաղել է քահանայ դառնալ և ապա մեռնել... Աշխարհի սկզբից մինչև այսօր սա տարօրինակ երևույթ չէ՞ համարում. ո՞վ է տեսել, որ որդու մահից փախչելու նրա դահլ ժառանգէ հայրը:

Այս դառամեալ նորընծան հինգերորդ քահանան է ալն գիւղի մէջ, որի վրա նա ձեռնադրւեց, իսկ վեցերորդը ձեռնադրւեց նրանից հինգ օր ցետոյ: Չէ՞ք հաւատում, կամե՞նք քահանաների անուճները մէկ-մէկ վիշենք, — տէր-Լուսատուր, տէր-Պետրոս, տէր Յովհաննէս, տէր-Պօղոս, տէր-Մուսէս և տէր-Կրիզոր, իսկ գիւղը՝ Կուսապատ:

Մենք նմուշի համար առաջ բերեցինք աւստեղ շատերից մի երկու փաստ, որպէս զի մեր առածը սուտ չհամարեն նրանք, որոնց չատկու թիւնն է միշտ ստել և կեղծել, գուռալ և գոչել՝ թէ հալհոյեցին մեզ, որբապղծեցին ժողովրդի ազնիւ զգացմունքները, չարձակեցին հողևորու կանուլթեան դէմ... Ապա ինչ, ծածկել վէրքը, որ փախ մարմնի մորթու տակ և ապականէ ամբողջ կազմը:

Եթէ Վարաբաղի թեմին ախօրւանից սկսած ամենաքիչը քսան տարի քահանայ չտան, եղածը նրան հերիք է և ոչ մի տրտուճ չի չարուցանի որ և է հասարակութիւն, միայն թէ չգրգռեն նրան տգէտ տիրացուների բարեկամները և հոգեոր իշխանութեան դուռը չը ղրկեն:

Զոր է միանգամայն շտապել հաւատ ընծալելու հասարակութեան ալն ներկայացուցիչներին, որոնք առաջին անգամ առաջնորդարանի ղռներն են մաշում. պէտք է մտնել, անձամբ մտնել ժողովրդի մէջ և չափել նրա ցաւը. ալն ժամանակ կը տեսնէք, որ հնար կալ տգիտութեան դէմ մաքառելու չարեան գիւղն ունի երկու քահանայ, իսկ քահանայ խնդրող գիւղը հինգ վերտոյի վրա է կանգնած ալգ գիւղից: Քահանայ ունեցող գիւղը քառասուն ծուխ է, իսկ մօտիկ գտնւած 10—15 տուն ունեցող գիւղը քահանայ է խնդրում: Սև սրանք համարում են զժաւորութիւններ:

Անարդարութիւն է կաշառքով տգէտ քահանաները բազմացնել ու միւլքը ժողովրդի վրա դցել:

Շուշի:

Տ.

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԸ

ՍՈՒԼԴՈՒԶ ԵՒ ՍՈՎՈՒԶՐՈՒԼԱՂ ԴԱԽԱՌՆԵՐՈՒՄ ¹⁾

Հրաւիրում եմ ուշադրութիւն Պարսկա-քրդաստանի խուլ ան-

¹⁾ «Շաւիղ», 1994 թ., № 16, Յօդւածից, որ խորագրած է «Սուղուզ և Սովուչբուլաղ գաւառները», դէն ենք դցել սկզբի մի քանի տողերը: Խմբ.

կիւններում ընկած մի քանի հալածակ գիւղերի վրայ, որոնք տարիներէ ընթացքում զուրկ են մնացել ուսումնարանից, քահանայից ու ու է ազգային մի հաստատութիւնից: Մի ազգաբնակութիւն, որ հասնում է մինչև 1900 հոգու Սուղուղ և Սովուջբուլաղ գաւառներում, չէ ունեցել մինչև այսօր ոչ մի ազգային դպրոց, կանոնաւոր քահանայ և եկեղեցի: Եթէ ունեցել է քահանայ, թիւը երկուսից վեր չի բարձրացել, ինչպէս որ այժմ է: Բայց երկու հոգի քահանայ ինչպէս կարող են 17 ցիրուցան գիւղերի, Սովուջբուլաղ քաղաքի և Միանդուար աւանի վրայ միանգամից վերահասութիւն անել:

17 գիւղից երեքը միայն ունին եկեղեցի, դրանց զոներն էլ դժբաղդաբար տարին 12 ամիս կապ են ու կապ:

Խղճալի է ամեն կողմից նոցա դրութիւնը, նոքա չգիտեն իրենց մայրենի լեզուն, խօսում են թրքերէն ու քրդերէն: Նրանց մեռելը թաղւում է առանց քահանայի Ձատիկ տօն օրերը անցնում են նոյնպէս առանց քահանայի, ուրեմն և իրենց կեանքում անհաղորդ են մնում Տիրոջ Ընթրիքին: Նիւթական սաստիկ անձուկ միջոցները մի կատարիալ խաւտառակ քառս են դարձրել նրանց ներքին ընտանեկան-տնտեսական վիճակը: Նիւթական ալդ անտանելի դրութիւնը լաճախ ստիպում է նրանց թողնել մայրենի կրօնը և ընդունել սիւննի կրօնքը: Ալդ ցաւալի երեսութը մի սովորական բան է դարձել:

Իսկ տգիտութիւնն ու խաւարամտութիւնը պատել են նրանց մտքի ամբողջ հորիզոնը:

Այս ցաւալի իրողութիւններէն լիտու, մասնաւորապէս հրաւիրում եմ ալդ կողմերի վրայ «Աէր» ընկերութեան և թեմիս առաջնորդ նորին սըրբազնութիւն Սուքիաս Արքեպիսկոպոսի ուշադրութիւնը:

Թող չմոռանան նոքա, որ ալդալիս տեղեր շատ լուրջ ուշադրութեան արժանի են:

Այսօր դրանց վիճակը մի տաղնապի մէջ է. եթէ այս մի քանի տարւալ ընթացքումն էլ չունենան աւելի քահանաներ, նամանաւանդ դպրոցներ և չբարոքւի նրանց նիւթական խիստ ընկած վիճակը, անկասկած, թող հաւատան ընթերցողները, որ նոքա կը ձուլւին քուրդ ու թուրք տարրի մէջ:

Նախ քան նամակս վերջացնելը, կրկին և կրկին դիմում եմ չիչեալներին բարձի թողի չանել ալդ սուրբ պարտականութիւնը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Ե Կ Ա Տ Ե Ր Ի Ն Ո Ղ Ա Ր Ի Յ

1894 թ., 14 ապրիլի:

Ով որ մօտաւորապէս մի տասը տարի առաջ տեսել է Նկատերինո-
ղար քաղաքը և նորից տեսնելու լինի, մեծ փոփոխութիւն պէտք է գտնի.
անպատճառ կը նկատի, որ քաղաքը մեծ քաղեր է արել դէպի լաւը,
դէպի առաջդիմութիւնը թէ ուսումնական, թէ առևտրական և թէ կա-
ռուցւած հոլակապ հիմնարկութիւնների վերաբերութեամբ: Ապագային
թողնելով վերոյիշեալների մասին մեծաւարդ «Աւերձ»-ի ընթերցողնե-
րին ծանօթացնելը, առ ալժմս գրում եմ քանի մի դէպքերի մասին,
որոնք տեղի ունեցան մօտաւոր անցեալում տեղիս հալ փոքրաթիւ հասա-
րակութեան շրջանում: Ներկալ թւականին վերջացաւ հին հոգաբարձու-
ների պաշտօնավարութեան շրջանը. աչս պատճառով ընդհանուր ժողով
կալացաւ, որտեղ ընտրւեցին, հիների փոխանակ, ձալների մեծամասնու-
թեամբ պ. պ. Պ. Պետրոսեան ու Ա. Մամիկոնեան (վաճառականներ). իսկ
անձնափոխանորդներ—Կ. Քէչէճեան և Մ. Սրմաքեչեան: Աչս ժողովին
ներկալ էին 85 հոգի: Ամսիս 10-ին մի ալ ժողով կալացաւ տեղիս ծխա-
կան ուսումնարանի դահլիճում նոր երեցփոխան ընտրելու նպատակով:
Աչս ժողովը առաւել բազմամարդ էր, ներկալ էին 182 հոգի. նոր երեց-
փոխան ընտրւեց վաճառական պ. Սարգիս Խարաղիլէեանը 107 ձալով:
Իմ կարծիքով ընտրութիւնը շատ աջող է, որովհետեւ հասարակութեան
մէջ պատւաւոր դիրք ունի, վերին աստիճանի ընթերցասէր է, օգտակար
նորութիւններին հետևող և լաւ գործերի խրախուսող և քաջալերող անձ-
նաւորութիւն է: Հասարակութիւնը համոզւած է, որ նոր երեցփոխանը
կաշխատի եկեղեցու վերանորոգման գործը շուտով վերջացնել և սրա օրով
տեղի չեն ունենալ սովորական անկարգութիւնները, որոնց մասին աւելի
լաւ եմ համարում լռել:

Նոր երեցփոխի համար հաշվետեսներ ընտրեցին պ. պ. Ար. Շապովան, Պե. Սալադեան և Մ. Քաթենիքեան, որոնք Նոյնպէս պատուաւոր վաճառականներ և եռանդուն մարդիկ են:

Մօտ ժամանակներումս ալտեղ բացեց մի գրադարան-ընթերցարան, որ բաւականին հարուստ է լաւ լաւ գրքերով, ստացում են թիֆլիսից երկու օրագիրներ և մտադիր են ստանալ «Մուրճ» ամսագիրը: Լուր է տարածել, որ տեղիս հայերը ցանկանում են Կովկ. հալոց Բար. ընկերութեան ճիւղ ունենալ ալտեղ: Մօտ ժամանակներում կունենանք հեռախօս (տելեֆոն), ելեքտրական լուսաւորութիւն և ջրանցք: Կաշխատեմ ալտեհետեւ շարունակաբար տեղեկութիւններ տալ ալտեղի ղէպքերի մասին պատական «Մուրճ»-ի ընթերցողներին:

Թ.

P. S. Ալտեղ էլ երբեմն երևում են մեծ ապատիւ մուրացկաններ, որոնք հասարակութեանը զղւեցնելուց չետոյ հեռանում են, թողնելով իրանց փոխանորդներ՝ սկսած զործը շարունակելու: Մի օրինակ. չունարի 14-ին մի պարոնի անւանակոչութեան տօնն էր, որտեղ բաւականին մեծ թւով հիւրեր կալին. սրանցից մէկը ներկա էղողներէց, առանց բացառութեան, երեքական ռուբլի հաւաքեց, չգիտեմ ինչ նպատակով. երբ նրանից հարցնում էին թէ ինչ բանի համար է, պարոնը պատասխանում էր թէ «վերջը կիմանաք»: Մինչև ալժմ մեղ չալտնի չէ թէ ինչ եղաւ մեր տւած փողերը, որ մօտ 60 ռուբլի կը լինի:

Թ.

II

ԵՍԵՆԹՈՒԿԻ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐԸ

(Մենք ստացանք Մոսկաւից, բժիշկ Մ. Զերնովից հետեւալ նամակը, գրւած ռուսերէն, որի թարգմանութիւնը ահայ):

Մեծարգոյ պ. Խմբագիր. Թույլ տւէք չուտալ, որ Դուք չէք զլանալ Ձեր համակրութիւնը և պաշտպանութիւնը Եսսենթուկի հասարակաց ձեռնարկութիւններին և չէք թողնիլ մեր ընթերցարանը առանց Ձեր չար գելի հրատարակութեան լքնթացս ամառաւ ամիսների 15-ից մալխի մինչ մէկն օգոստոսի:

Եսսենթուկի հասարակաց հաստատութիւնները ղեռ ևս չեն հասել աչն նիւթական անկախութեան, որով նոքա կարող լինէին ապրել առանց բարի և ղէպի նոցա լաւ տրամադրւած անձերի օգնութեան: Մտաւ լիսնելով 1891 թ., մի բժշկի նախաձեռնութեամբ, կամաւոր նւիրաբերու-

թիւններով, դռքա, շնորհիւ նորա եռանդին, ներկայումս ունեն լաւ գրադարան ուսաց և ֆրանսիական լաւագոյն գրականական շարադրութիւններից բազմացած, մանկական գրքերի բաժանմունքով, և մի հասարակաց աշխարհ, որը հիւանդների համար ամառաւին ակումբի տեղ է ծառայում: Այդ աշխարհը կապալով է վերցրած մի քանի տարով և շարմարեցրած է ամեն տեսակ խաղերի և երեսանների թէ հասակաւորների պարապմունքների համար, սկսած կրօնէսից և գիմնաստիկալից մինչև շախմատը և հրացանաձգութիւնը: Այս բոլորը թողնւած է լաճախողներին ձրի օգտելու համար և սարքուած է ու պահպանուած կամաւոր նւէրներով: Սկսած 1891-ից մինչ 93 թւականը նւէր տալուց է 2605 ուրբլի, մսխւած է 4282 ու, պարտք մնում է 1677 ուրբլի:

Բայց ամենից շատ ժողովրդականութիւն վայելում է հիւանդների չրջանում ընթերցարանը, որը իւր դրութիւնով պարտական է բացառապէս համակրութեանը և բարութեանը օրագիրները և ամսագիրները, հրատարակիչների և խմբագիրների: Մենք Ձեզ միշտ առանձնապէս շնորհակալ ենք ի դիմաց մեր բոլոր պացիէնտների: Մեզ ուղարկում են մինչ 40 հրատարակութիւններ Ռուսիայի զանազան կողմերից, բայց մանաւանդ արեւմտեան նահանգներից:

Ներկալ սեզոնից Նսենթուկը հարստանում է մի նոր հասարակական հիմնարկութիւնով: Մեղանում բացւում է գիտական բժշկական լաբորատորիա՝ մանրադիտակսն և քիմիական հետազոտութիւնների համար: Նորան կառավարելու համար հրաւիրւած են երկու բժիշկ, որոնցից մէկը մասնագէտ քիմիկոս է, ալն է Մոսկուայի համալսարանի լաբորանտը: Այսպիսով հիւանդին ուսումնասիրելու և նորան դիտելու դործը Նսենթուկում զրւած կը լինի գիտութեան նորագոյն պահանջների համեմատ:

Եւ առհասարակ այս տարւանից կովկասեան Հանքալին Զրերի համար նոր չրջան է սկսւում:

Միշտ աւելի ու աւելի է վիշում թէ ինչ է գրեւ նոցա մասին չաւտնի եւրոպական հեղինակութիւն Ժ. Ֆրանսուա իւր ղեկուցման մէջ Պարիզի գիտութիւնների ակադեմիայում:

«Ոչ մի տեղ աշխարհիս երեսին չկալ մի ալնքան բազմաւորութիւն, համեմատապէս փոքրիկ տարածութեան վրալ ալնքան բազմատեսակ, զեզեցիկ, առողջացնող աղբիւրներ, որքան կովկասեան Հանքալին Զրերի չրջանում (1876):

Ալթմ աւելի ու աւելի ցաւում են, թէ քանի քանի միլիոն ուրբլի է վճարում Ռուսիան Եւրոպայի կուրորտների (բժկական տեղերի) բարգաւաճման և պահպանութեան համար: Մինչ 50 հազար հոգի ամեն տարի մեր հաւրենակիցներից բժշկւում են ալնտեղ, իրանց հետ տանելով մինչ 50 միլիոն ուրբլի (ենթադրելով մի հոգու համար 1 հազար ուրբլի) (տես Бюл. врача, 1894 թ. № 3):

Նւ վերջապէս ալս տարի բժշկները մատուցին Պետական կալաճ-
ների մինիստր պ. Նրմուլովին մի ղեկուցում, որի մէջ նոքա պարզեցին
Նսենթուկի կուրորտի բոլոր կարիքները հետեւեալ կէտերում.

- 1) Շինել մի նոր վաննալի շինութիւն բաւական թւով վաննաներով:
 - 2) Շինել հիդրօպատիկական տուն բոլոր նորագոյն դուշերով, աւա-
ղաններով, շոքիով և ալլն և ալլն:
 - 3) Շինել կուրզալ՝ վատ եղանակին ժամանակ անցկացնելու բոլոր
լարմարութիւններով:
 - 4) Արքունական ճաշարանը տալ կապալով ոչ թէ մի ալ մի քա-
նի մի տարով չուսալի անձի, պաշմանով որ նա մատակարարէ աժան և
լաւ ճաշ (որ շատ հեշտ է, քանի որ աչնտեղ միսը ծախուում է ֆունտը
6 կոպ., 5 բաժակ կաթը 4 կոպէկ և ալլն):
 - 5) Մաքրել և տալ հասարակութեանը օգտւելու արքունական մրդա-
լին ալլին, (որ ցալժմ անմատչելի է և տրւում է կապալով 100 ռ.-ով):
Անտառ գցել Снеговая гора կոչած սարը և միացնել պառկի հետ: Աւելի
լաւ է ծաղկանոցներ պահել և ալլն:
 - 6) Ննթարկել աչն շրջանը, որի մէջ բնակւում են հիւանդները,
առանձին ճարտարապետական և սանիտարական կանոնների և հեշտաց-
նել մասնաւոր նախաձեռնութիւնը մասնակցելու համար կուրորտի կեն-
սական լարմարութիւնների զարգացնելու գործին:
- Պ. Մինիստրը խոստացաւ ինքը լինել ալս տարի Նսենթուկում և
չալանեց լիակատար համակրութիւն կուրորտի կարիքներին:

Զեղ չարգող Մ. ԶԵՐՆՈՎ,

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ՅՕԳՈՒՏ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՍԱԼՆԵՐԻ ՆԵՒ ԵՐԵՒԱՆԻ ՈՒ ՂԱՐՍԻ Նահանգ-
 ների ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԻ մինչ ապրիլի վերջը եղած են հետևեալ
 չափնի նւիրաբերութիւնները.

- 1) Հալոց Բարեգործական Ընկերութեան խորհրդի միջոցով՝ մինչ ապրիլի
 30 հաւաքած է 6460 ուրբլի և 600 պուդ ցորեն, որի համար
 Ընկերութեան խորհուրդը հրատարակել է երեք անգամ հաշիւ,
 առաջինը 711 ուրբլու (հանգանակութիւն մի խումբ երիտա-
 տարոջների աջակցութեամբ, տ. Վ. Ալիխանեանի.) և 50 պուդ
 ցորենի. երկրորդը՝ 2271 ուրբլու և երրորդը՝ 2810 ուրբլու և
 610 պուդ ցորենի. Այդ վերջին երկու անգամաւ մէջ մասնակցել
 են. 1) Թիֆլիսի մի խումբ կանաւք—1000 ուրբլի. 2) Թիֆլիսի
 փիթուխան և ընկ. առևտրական տունը—1000 ու. 3) Բաքւից
 Ա. Մատուրեան—100 ու., 4) Թիֆլիսում տիկ. Ն. Առաքելեանի
 ձեռքով հանգանակած 115 ու., 5) բժիշկ Վ. Արծրունու հան-
 գանակած 26 ու., 6) Մնացական Խոշունց 20 ու., 7) Յովհ.
 և Աբր. Բունիաթեաններ 10 ու., 8) Բաքւից պ. Աբելեանի
 ներկայացումից 512 ու. 20 կ., 9) Պետերբուրգում կապացած
 Էրեկովից և պատուաւոր տոմսակներէից, ուղարկւած պ. Գ.
 Կաղուբեանի միջոցով—773 ու., 10) Թիֆլիսում օրիորդներ Վ.
 և Ն. Փոնտուխանների և ալոյց ձեռքով հանգանակած 770 ու.,
 11) Օրիորդ Պապուկեանի կոնցերտից—400 ու., 12) Բաքւից,
 պ. Վաչեանի ուղարկածը «Մշակի» միջոցով—109 ու., 13)
 Ղազարի աւանից, տ. Ա. Օհանջանեանի ձեռքով հանգանակած
 —118 ու. 50 կ., 14) Թիֆլիսում տ. Շ. Սուլիսեանի ձեռքով
 հանգանակած—105 ու., 15) Թիֆլիսի հեռադրատան ծառայող-
 ներից, իբր իրանց ռոճկի ամսական տոկոս 23 ու. 11 կ. 16)
 Ստաւրոպոլից պ. Բարսեղ Խոբլարեանցից 610 պուդ ցորեն:

Հալոց Բարեգործ. Ընկերութեան խորհրդին հասցրած է
 ուրեմն զրամով — — — 6460 ուրբլի,
 և ցորենով — — — 610 պուդ.

- 2) Թիֆլիսի Առևտր. բանկը, ուղարկեց Վեհ. կաթողիկոսին 3000 ռուբլի.
- 3) » Փոխ. վարկի Ընկեր. » » » 1000 »
- 4) » Բաղաք. » » » » 1000 »
- 5) Նոր-Նախիջևանից տեղական չաջորդ Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեանի հանգանակած և Հայոց Բարեգ. Ընկ. Երևանի ճիւղին ուղարկած — — 1000 »
- 6) Երևանի թատերասէրների ներկայացումից տրւած է Հ. Բ. Ընկերութեան Երևանի ճիւղին — — 61 »
- 7) Տիկին Տէրեան Ղորղանեանի Թիֆլիսում տւած կոնցերտի արդիւնքը, ուղարկւած է Վարս Հ. Բ. Ը. տեղական ճիւղի նախագահ հ. Նահապետ վ. Նահապետեանին 667 »
- 8) «Մշակ» լրագրին ուղարկւած է մինչ վերջն ապրիլի — 3052 »
- 9) Երևանում կազմած պարահանդէսի արդիւնք, լանձնած Հ. Բ. Ընկ. Երևանի ճիւղին — — — 1358 26 կ-
- 10) Բաքւից եղած ժողովարարութիւն, որի արդիւնքը ուղարկւած է Կաղզւանի ձրի ճաշարանին — 512 »
- 11) Բաքւից, Առաքել Ծատուրեան, Վեհ. կաթողիկոսին — 1000 »
- 12) Թիֆլիսից, Գէորգ Յակոբեան ուղարկել է Վեհ. կաթողիկոսին մարտին 150 պուդ ցորեն, ապրիլին 100 պուդ ցորեն, ընդամենը ցորեն — — — 250 պուդ.
- 13) Թիֆլիսի ծխական դպրոցների ուսուցանողների հանգանակած և Վեհ. կաթողիկոսին ուղարկած — 1034 ռուբլի.
- 14) Հանգուցեալ Յովսէփեան Անդրէասի կտակով Վեհ. կ.ին 50 »
- 15) Փրիդոնեան Գրիգոր և եղբայրը. Վեհ. կաթողիկոսին 500 »
- 16) Թիֆլիսից պ. Մարտիրոս Սարգսեան Նունուխարեանց՝ Վեհ. կաթողիկոսին աւելւր — — — 600 պուդ.
- 17) Աստրախանից, օր. Խօջաւեանի կոնցերտի արդիւնք 400 ռ. և հանգանակութիւն 300 ռ. ուղ. Վեհ. կաթ. 700 ռուբլի.
- 18) Թիֆլիսից, Կուսանաց վանքի միաբանութիւնը. Վեհ. կաթողիկոսին — — — — 200 »
- 19) Թիֆ. թատերասէրների ներկայացումից Վեհ. կաթող. 1326 »
- 20) Շուշուց, Խ. քահ. Սկանդարեանցի ժողովածը, ուղարկած Վեհ. կաթողիկոսին — — — 102 »
- 21) Շուշուց հասարակական ժողովարարութ. Վեհ. կաթ. 2000 »
- 22) Աստրախանից, բժ. Առստամեանի նախաձեռնութեամբ հանգանակած. Վեհ. կաթողիկ. — — — 1500 »
- 23) Թիֆլիսի թեմակալ Առաջնորդի միջոցով.
- ա) Զատիկի ճրագալուց երեկոյեան գանձանակով ժողովւած է Թիֆլիսի եկեղեցիներից (կոպէկները չհաշւած)՝ Վանքի մայր եկե-

- դեցում 150 ռ., Նաթթուղում—23, Կաթողիկէ—39, Ս. Սարգիս—18, Զրկինանց—102, Նորաշէն 30, Հրեշտակապետաց—5, Քարափի—9, Քամուկենց—100, Ս. Նշան—16, Շամքորեցոց—92, Զորաբաշի—18, Էջմիածնեցոց—42, Լուսաւորիչ—1, Խոջիվանքի—7, Բեթղեհէմ—19, Կուկիոյ Նորաշէն—26, Զուղուրէթ—5, Զիգրաշէն—60, Թանդուեանց—58, Ս. Կարապետ—13, Ս. Մինաս—24, Վերալի—4, (Մոլնիում դանձանակ չնըւեց). իսկ ընդ ամենը — — — 848 ռ. 30 կ.
- բ) Թեւաւի դործակալից ստացւած — — — 220 »
- գ) Գանձակի փոխանորդից ստացւած է—ծխական պարոններ, տրիկներ, և քահանաների ձեռքով հանգանակած — — — 890 ռ. 3 կ.
- դ) Ծխականների հանգանակութիւն Թիֆլիսում՝ Նաթթուղի եկեղեցու ծխականներից, պ. Ռէտէրի ձեռքով — — — 56 » 70 »
- Զրկինանց եկ. ծխակ. պ. պ. բժ. Ս. Անանեանցի, իշխ. Բ. Արղութեանի, Ն. Աթաբէգեանի ձեռքով առ ալժմ ժողովւած է — — — 500 »
- Զուղուրէթի եկ. ծխականներից — — — 1 »
- Քամուկենց եկ. ծխականներից, պ. պ. Բ. Մելիք. Ղարաբեգեանի և Գրիգ. Վարդանեանի ձեռքով 198 »
- Ս. Կարապետի եկ. ծխականներից — — — 54 »
- Մոլնու եկեղեցու ծխականների մի մասից պ. պ. բժ. Մ. Շահպարտեանցի և Ա. Արամեանեանցի ստանալով — — — 473 »
- 24) Նոր-Նախիջևանից և Ռոստովից, հանգանակութիւն Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեանի (աջակցութեամբ Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ պ. Մինաս Պալապանեանի և Ռոստովի դործարանատէր պ. Սերովրէ Անանեանի) Վեհ. Կաթողիկոսին — — — 5055 »
- 25) Նոր Նախիջևանից, հանգանակութիւն պ. պ. Զարրիսեանի և Գ. Ալաճալեանի, Վեհ. Կաթողիկոսին — — — 1080 »
- 26) Ստաւրապոլից, Տիրուհի (Լուդկիա) Պապովեան, Վեհ. Կաթողիկոսին — — — 2000 »
- ՎԵՀԱՓԱՌ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՐ, ուղեկցութեամբ Ներսէս եպ. Խուրաւերդեանի, Սահակ վարդապետ Ալմատեանի, պ. Խորէն Խրիմեանի և մի քանի ուրիշ աշխարհականների, ներկաւ ապրիլի 19-ին ձիով մեկնեց ու Էջմիածնից և ալցիկից Օշական զիւղը, ապա անց-նելով Ղլլթա զիւղով, ուղեկցութեամբ բազմաթիւ ձիաւորների

և ոստիկանական պրիստաւի՝ ալցելեց կաթողիկոսների Բիւրական ամարանոցը, ապա Փարպի և Աշտարակ գիւղերը: Օշականում Վեհափառը ալցելեց ս. Մեսրոպ թարգմանչի նորակառույց եկեղեցին և քարոզ խօսեց: Աշտարակում Վեհափառը ընդունեց հալոց և արքունական տարրական դպրոցները աշակերտներին և ուսուցիչներին, հոգևորականութեանը և ժողովրդին: Ապրիլի 22-ին Վեհափառը կառքով վերադարձաւ ս. Էջմիածին:

ԲԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԳԻՐԸ. Ի նկատի առնելով խնդրի կարևորութիւնը և նորա բազմակողմանի քննութեան պահանջը, «Մուրճ»-ի ներկա համարում, Ներքին տեսութեան մէջ, առջ ենք տալիս մեր ամսագրից դուրս երևեցած չօգւածներին և նկատողութիւններին, քահանայական խնդրի մասին, ընտրելով նոյա միջից աչնպիսիները միայն, որոնք աւելի կամ փոքր չափով ուշադրութեան արժանի են: Նոյնպէս կը վարենք նաև ապագայում, և աչնպիսով «Մուրճ»-ի մէջ ամփոփւած կը լինեն աչ խնդրի մասին չափանած բոլոր շատ թէ քիչ ուշադրութեան արժանի հալեցակէտերը և նորան վերաբերեալ նիւթերը: Մեր ընթերցողներին լղելով «Մուրճ»-ի 1893 թ. № 6-ի վրայ, ուր աչ խնդիրը մենք գրել էինք Վեհափառ Կաթողիկոսի գալու առիթով, որպէս նաև «Մուրճ»-ի անցեալ համարի վրայ (1894 թ. № 3), ուր աչ խնդիրը նորից շօշափել էինք Արշէն երէցի չօգւածի առիթով, ամսագրիս ներկա համարում արտասույթեամբ առաջարկում ենք մեր ընթերցողներին Արշէն երէցի «Գիւղական քահանայ քարոզ»-ը, Արիստակէս եպ. Սեդրակեանի չօգւածը ամբողջապէս, որպէս նաև մի քանի ալ չօգւածներ և նկատողութիւններ, որ լոյս են տեսել ցալժմ:

ԿՐԾՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ. Ռուսաց „Церковныя Вѣдомости“ (Եկեղեցական լրագիր) թերթը հաղորդում է թէ Տրապիզոնի բնակիչներից 100 ընտանիք խնդիրք են մատուցել Պոլիս, չունաց պատրիարքին, չափանելով իրանց ցանկութիւնը օրթողոքութիւն ընդունելու և որ չունաց սինոդը հրամանագրել է Տրապիզոնի չունաց առաջնորդին՝ կատարել խնդրատունների խնդիրքը:

ԾԽԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄՈՒՄ. Թիֆլիսի առաջնորդ Գէորգ եպ. Սուրենեանց մալիսի 7-ին առանձին հրաւերքով իւր մօտ ժողով գումարեց, նորա քննութեանը ենթարկելու համար կանխապէս մի մասնաժողովի կողմից կազմած ծխական հոգաբարձութիւնների կանոնագրութեան նախագիծը, հրահանգելով աչ մասին տրւած պետական կանոններից:

ներկա էին մօտ երեսուն հոգի: Գլխավորութիւնը ալս է, որ ամեն եկեղեցու ծխականներ, իրանց ընդհանուր ժողովներում ընտրեն 3—12 հոգի ծխական հոգաբարձուներ, որոնք պէտք է օգնեն երեցփոխին եկեղեցու բարենորոգութեան համար, խնամք տանեն աղքատ ծխականներին, օգնութեան դան քահանաների որբերին, իրանց կողմից օգնեն դպրոցի հոգաբարձութեան, պահպանեն հանգստարանները, հիմեն հիւանդանոցներ և ալլն: Ընդհանուր ժողովը ալս ամենի համար կարող է ծխական տուրք նշանակել, և միայն տուրք տուողները աշխատեալ կը մասնակցեն ընդհանուր ժողովներին:

Հրաւիրւածները քննութեան առնելով նախագծի լօղւածները, ի միջի ալ աւելի մասնաւոր փոփոխութիւնների, ընդունեցին որ նախագիծը կարօտ է լրացման ալս մտքով, որ բացի ծխականների ընդհանուր ժողովներից, պէտք է ստեղծել նաև մի ալ ընդհանուր ժողով՝ բաղկացած Թիֆլիսի բոլոր ծխական հոգաբարձուների նախագահներից, որոնք նիստեր կունենան թեմակալ առաջնորդի նախագահութեամբ ալն խնդիրների մասին, որոնց առարկալ ծաւալը (գերեզմանանոց, հիւանդանոցներ և ալլն) վեր է մի եկեղեցու ծխական հոգաբարձութեան գործելու նեղ շրջանակից:

ՈՐՆ Է ԱՆՀԻՄՆ՝ «Մուրճ»-ի նախորդ համարում մենք, ամսագրիս նոյն ալս բաժնում, մի համեմատական գնահատութիւն էինք արել «Արարատ» ում տպած Արչէն երէցի քարոզին և «Մշակ»-ում տպած Արիստակէս եպ. Սեդրակեանի (Ով հաւատաց) լօղւածին: Մենք գտել էինք որ Արիստակէս եպ. Սեդրակեանի լօղւածը, իւր էական մասերում, չնայ գրւածքի բանակուական ձևին, լաւ հաշտում է Արչէն երէցի լօղւածում դուրս բերած Հալիկի հպացոյցների հետ, ցոյց էինք տւել նաև գլխաւոր տարբերութիւնը: Իսկ իբր ընդհանուր եղրակացութիւն՝ «Ով հաւատաց»-ը լրացուցիչ գրւած էինք նկատել Արչէն երէցի «Գիւղական քահանալի քարոզ» լօղւածին:

Մեր ալս դատողութիւնը մենք պահպանել ենք նաև մինչև ալսօր, ընդդէմ մեր մամուլի բոլոր մնացած օրդանների, որոնցից «Մշակ»-ը, հակառակ մեր սպասածին՝ ամենեին չուղեց ի նկատի առնել Արչէն երէցի գրւածքի արժանաւորութիւնները, իսկ «Նոր-Գար» ու «Արձագանք»-ը, ինչպէս և վաղել էր նոցա, ոչ միայն արժանիք չդրան Արիստակէս եպիսկ. Սեդրակեանի վերին աստիճանի կարեւոր լօղւածում, ալ և նորա արժանաւորութիւններն իսկ լանցանքներ հուշակելով՝ պիղծ

ինսինուացիաներով նորան հալածանքի մատնելու թելադրու-
թիւններից անգամ չեա չքաշեցին:

Ահա աւագէս միակողմանի կերպով տրամադրւած թեր-
թերից երկուսը՝ «Մշակ» մէկ կողմից, «Արձագանք»—միւս
կողմից, բոլորովին անտես առնելով աչն, ինչ մեր արած նկա-
տողութիւնների մէջ ամենակարեւորն էր, տարբեր նպատակ-
ներով արտատպեցին մեր ասածից միմիայն աչն մի քանի
տողերը, ուր մենք ցաւ էինք չալտնել որ Արիստակէս եպիսկ.
Սեղրակեանը գիւղացիների խօսքերը առանց ալ և ալուժեան
նա և Հալրիկին է վերագրել: Մենք զուլս չենք դնիլ («Ար-
ձագանք»)-ի հետ, դա զուր կերպով վատնւած աշխատանք
կը լինի մեր կողմից: Արտատպելով «Մուրճ»-ից միայն անդ
տողերը, «Արձագանք»-ը չատուկ նպատակներ ունէր, որոնց
մաքրութեանը հաւատացող է ճարում ալդ թերթը, բարեբաղ-
դաբար առանց որ և է չաջողութեան:

Ալ է «Մշակ»-ը, որը արտատպից նոյն տողերը—բալց
միայն մեր ասածը հերքելու համար:

«Մշակ»-ը «անհիմն» է համարում մեր ասածը, հրաւիրում
է մեզ նորից կարգալ Արիստակէս սրբազանի լօղւածը համոզ-
ւելու համար, որ ալդ լօղւածում «գիւղացու պարզ փիլիսոփա-
լութեամբ սոքէս ժողովրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր»
և ալն խօսքերը գիւղացիներին են վերագրւած. և ալդ ապա-
ցուցանելու համար նա ցոյց է տալիս չակերտների սկիզբը և
վերջը, որոնց մէջ ամփոփւած են միայն գիւղացիների արտա-
սանած խօսքերը:

Ինչ միամտութիւն! «Մշակ»-ի ալդ խօսքերը մեզ զար-
մացնում են, և մենք, արդարը խոստովանած, չէինք սպասում
թէ «Մշակ»-ը կ'աշխատի ուրանալ մի բան, որ լոյսի չափ պարզ
է: Սրբ մենք ասում էինք թէ գիւղացիների խօսքերը վերա-
գրած են նա և Հալրիկին, մենք չատ լաւ ինկատի ունէինք
բոլոր չակերտները, գիտէինք որ աչն խօսքերը նա և Արիստա-
կէս եպ. Սեղրակեանի լօղւածում գիւղացիներին են վերագրւած,
թէ և արտագրւած էին բնագրից ոչ կատարեալ ճշտութեամբ.
Բալց մեր ասածը սա էր, որ գիւղացիների ալդ խօսքերը նա
Հալրիկին են վերագրւած. ճիշդ է, ալդ մասին մենք ապացոյց
չէինք բերել, բալց միայն աչն պատճառով, որ ապացոյցի
կարօտ չէինք համարում ալդ:

«Մշակ»-ը ալժմ հարցնում է մեզ թէ «ալդ որտեղից է
զուրս բերել «Մուրճ»-ը թէ գիւղացիների խօսքերը (Արիստա-

կէս եպ. Սեղրակեանի լօղածում) վերադրւած են նաև Հայ-
րիկին» (Տես «Մշակ» № 44):

Մեր պատասխանը սա է, որ մենք ալդ դուրս ենք բերել
Արիստակէս եպիսկոպոսի լօղածի ամենավերջին տողերից, ուր
հեղինակը, գիւղացիների կարծիքները պիւղական քահանայի որ-
պիսութեան մասին առաջ բերելուց լետոյ՝ ընթերցողի համար
անհասկանալի ձևով վերջակէտ է դնում և աչնպիսի դարմանք-
ներ լալտնում, որ լոյսի պէս պարզ երևում է թէ հեղինակը
գիւղացիների լալտած մտքերը նաև Արչէն երեցին և կամ
նոյն իսկ Հալրիկին է վերադրում: Շատ կարելի է, որ Արիստա-
կէս եպիսկոպ. Սեղրակեան հիմնաւոր պատճառներ ունի ալդ-
պէս վարելու, բայց թէ ինչու նա ալդպէս է մտածում՝ ալդ
քացատրւած չէ «Ով հաւատաց» լօղածում: Բայց որ միայն
ալդպէս պէտք է հասկանալ նորա լօղածի վերջին տողերը,
— ալդ մասին ոչ մի կասկած չպէտք է արտապատել:

Տարաբախտաբար «Մշակ»ը, շատ լաւ զգալով մեր նկատու-
ղութեան հիմնաւոր լինելը՝ աշխատել է մի բան ծածկել—որ
չպէտք է ծածկէր, մանաւանդ որ դորանից լետոյ՝ նա մի շարք
լօղածներ և նկատողութիւններ տպեց, որոնք անիմաստ կը
լինէին եթէ «Մշակը» մեր նկատողութիւնը անկեղծօրէն ան-
հիմն դտած լինէր...

Ոչ, փոխանակ տպածի իմաստը ծածկելու, ինչպէս ալդ
փորձել է անել «Մշակի» խմբագրութիւնը (մի վարմունք, որի
համար լօղածի հեղինակ Արիստակէս եպ. Սեղրակեանը բնա-
կան է որ պատասխանատու չի կարող լինել), մենք սպասում
ենք որ հրապարակ հանեն աչն իրողութիւնները, որոնք հիմք
են ծառայել սրբազան Արիստակէսի առաջին անդամից անհաս-
կանալի տողերին: Նորագոյն իրողութիւնների մերկացումը
կը փարատէր շատ տարակուսանքներ և, բացի ալդ, դորանով
խկական ծառայութիւն մատուցւած կը լինէր ալժմ հերթական
դարձած քահանայական ինդրին: Իսկ կարևորը—հէնց ալդ է:
Իսկ մինչև հակառակը ապացուցող իրողութիւնները հրապա-
րակ կը հանեն և կը լուսաբանեն, մենք կը մնանք մեր հա-
ւատի մէջ որ Հալրիկը իրանից լետոյ թողնելու է իւր բա-
րոյական և մտաւոր մակերևութով աւելի բարձր քահանա-
յական դասակարգ, քան ինչ նա է ալժմ: Դորա դրաւա-
կաններից մէկը հէնց աչն է, որ նա ինքը իւր օրգանում,
«Արարատում», հրապարակախօսութեան սուարկայ է դարձնում
քահանաների ինդիրը և դորանով հրաւիրում ամենքին՝ ալդ

խնդրի ընթացք տալուն մասնակից լինել, Քահանաների մասին միշտ գրել է, բայց դորանից օրակարգի խնդիր դարձնելը կատարում է միայն ալօօր, շնորհիւ Արշէն երէցի լօղւածի: Մենք ալդ հանդամանքը շատ բարձր ենք գնահատում, որպէս շատ բարձր ենք գնահատում ճան ահն, որ ինքը Հալւիկը շատ բարձր գաղափար ունի քահանայի կոչման մասին:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. Տարեկան տպած հաշւից, որ ստացւել է մեր խմբագրութեան մէջ, երևում է հետևեալը: 1893 թ. Ընկ. վարչութիւնը ունեցել է 23 նիստ և մի խառն ժողով ս. Նշանի ուսուցչական խմբի հետ: Ընկերութեան հաշուով պահւող ս. Նշանի եկեղեցու մի դասարանեան օրիորդաց դպրոցում աշակերտուհիներ եղել են 99 հոգի, (6 ով աւելի քան 1892-ին), որոնցից 61 հոգի վճարել են տարեկան 6 ռուբլի թոշակ, իսկ 38 հոգի ընկերութիւնից ստացել են հասոյթներ դասական պատուքների համար: Մալխի քննութիւններին աւարտել են 11 հոգի վկայականներով, Ուսումնարանի վրա ծախսւել է 2580 ռ. 20 կոպէկ):

Ընկերութեան հիմնած Վար ու ձևի ուսումնարանում (հիմնած 1888-ին), եղել է 68 աշակերտուհի և 12 ազատ ուն. կնդիրներ, որոնցից 8-ը վճարով (ամսական 3 կամ 4 ռուբլի), իսկ 4-ը ձրի: Աւարտել են 1893-ին 9 հոգի (4-ը վարպետահու և 5-ը վարպ. օգնականի վկայականներով), որոնցից մէկը մնացել է դպրոցում օգնականի պաշտօնով:

Ընկերութիւնը, որպէս չափնի է, հաստատած է ճան խոհարարական դասընթացք, որ տեսում է երկու ամիս, և տարւալ ընթացքում հետևապէս մի քանի անգամ կրկնւում է՝ նորանոր ունկնդիրների համար: Ընկերութիւնը ալդ կուրսերին չատկացրել է տարեկան 300 ռուբլի միայն, և դործը պահպանւում է աշակերտող օրիորդների և տիկիներին վճարներով (25-ական ռուբլի, կան և ձրիներ): Հաշւի մէջ ալդ կուրսերի մասին մանրամասնութիւններ չկան:

Վար ու ձևի դպրոցի տեսչուհին է տիկին Վ. Ռոտինանց, որի նախաձեռնութեամբ հիմնւած են և նորա ձեռքով կառավարւում են ճան խոհարարական կուրսերը:

Ընկերութիւնը իւր տարեկան ժողովն ունեցաւ ապրիլի 23-ին, որի շարունակութիւնը չնաձգւեց մինչ մալխի 3-ը վարչութեան նոր անդամուհիներ ընտրելու համար: Ընտրութիւնները կատարւեցին 116 հոգու մասնակցութեամբ և թեմակալ առաջնորդի նախագահութեամբ: Առաջին անգամ ալդ

ընկերութեան մէջ իրար հետ մրցում էին ընտրեալների երկու ցուցակներ: Յաղթութիւնը մնաց հին վարչութեան կողմնակիցների կողմը:

Քւէարկւեցին վարչութեան անդամութեան համար վեց հոգի որոնցից ընտրւեցին՝ տիկիններ՝ Սոֆիա Բաբայեան (87 սպիտակ), Ն. Թալիրեան (83 սպ.), Կատ. Եւանգուլեան (82 սպ.), Իշխ. Մարկում Բէկթարէգեան (80 սպ.): Հին անդամուհիներից չորսը դեռ ևս մնում են իրանց պաշտօնում մինչև չորս ամեալ ձառաջութեան լրացնելը:

Փոխանդամութեան համար քէարկւեցին և ընտրւեցին տ. տ. Յարութիւնեան, Խուղավերդեան, օրիօրդներ՝ Ն. Խատրսեան, Մ. Մատինեան և Վ. Փոնտոյեան:

ՆԻՒՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 1) Մարգար Պապովեանի վախճանւելով՝ զօրութիւն է ստանում նորա թողած կտակը, որով նա չատկացրել է 100.000 ռուբլի Նոր-Նախիջևանում հիմնելիք մի երկրորդ արհեստադիտական դպրոցին և 50.000 ռ. Ս. Էջմիածնին:

Ստաւրապոլցի Մարգար Պապովեանը՝ որ հաւանական է թէ ներկայիս ռուսա-Հալերի մէջ ամենահարուստ մարդն էր, վախճանւեց ներկա ապրիլի 16-ին Պետերբուրգում, հոգեկան հիւանդութիւնների հիւանդանոցում, ուր նա Սաւաւապոլից նոր էր փոխադրւած հոգեկան հիւանդութիւն ստացած լինելու պատճառով: Հանգուցեալը երկու անգամ էր պսակւած. առաջին կնոջից որդի չունեցաւ. 68 տարեկան հասակում նա, 1889 թւականին, նորից ամուսնացաւ մի երիտասարդ աչրիի հետ, որից սւնեցաւ մի աղջիկ և մի տղա: Զրկելով իւր բոլոր մօտ ազգականներին, 1893-ին շինւած կտակով հանգուցեալը իւր կնոջը չատկացրել է իւր մի մեծ տան եկամուտը (տարեկան 3000 ռուբլի), 500.000 ռուբլի թողել է իւր աղջկանը, մնացած իւր տղին, որ ալժմ երկու տարեկան է: Ժառանգները կ'ստանան իրանց բաժինները չափահասութեան հասնելով: Թողած կարողութիւնը հաշւում են 6—8 միլիոն ռուբլի:

2) Ներկա ապրիլին վախճանւած (Թիֆլիսեցի) Յովհաննէս Էմինեանցի աչրին նւիրել է Թիֆլիսի Էջմիածնեցոց ս. Մարիամեան օրիորդական դպրոցին (Հաւաքար թաղում) 500 ռուբլի:

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ Թիֆլիսում: Քառաձաչն երգեցողութեան տարածողը հալերիս մէջ պ. Կարա-Մուրզան, Էջմիածնի ճեմարանում պաշտօնը թողնելուց և ապա Նոր-Նախիջևանում մի քանի կոնցէրտներ տալուց լետու, մօտ երկու ամիս է ինչ Թիֆլիսում պատրաս-

տում և կազմակերպում էր մի մեծ երգեցիկ խումբ՝ մի քանի կոնցերտներ տալու համար։ Այդ նորակազմ խումբը բաղկացած մինչ 70 հոգուց երկու տոնից, ապրիլի 23-ին, ղեկավարութեամբ պ. Կարա-Մուրզա՛ի տեղ իւր առաջին կոնցերտը արքունական թատրոնում։ Խմբին մասնակցող օրիորդները և կանաչք, թւով շուրջ 20 հոգի, կրում էին Ախալցխայի հագուստ։ Երգեցին 12 երգեր, որոնցից առաջին բաժնում՝ Բամբ որոտան (պ. Դաւթեան և խումբը), Տէր-կեցո ղՀալս (պ. Բարխուդարեան և խումբը), Զարթիր սիրտ իմ վշտահար (խումբը), Մալր-Արաքսի (պ. Զամբարեան և խումբը), Հասօի եղները (պ. Ն. Մատինեան և խումբը), Որ վառեցեր (խումբը), երկրորդ բաժնում՝ Նաւատորք (Դաւթեան և խումբը), Լոռիկ (Բարխ. և խումբը), Գացէք տեսէք ո՞վ է կերել զէծ (երկու խումբ), Որ մահկանացուն (Զամբարեան և խումբը), Մուկուչ աղբէր (Բարխուդարեան, Գ. Յակոբեան և խումբը)։ Երգերի մէջ ամենից շատ չափողութիւն ունեցան ժողովրդական երգերը, իսկ սոցա մէջ՝ մանաւանդ Լորիկը («Պաղ աղբիւր»), որի մէջ առանձին շնորհք ցուց տեղ երիտասարդ տներ պ. Բարխուդարեանը։ Վերջինիս ձայնը—tenore di grazia—փոքրիկ ձայն է, բայց զիւրեկան, և որ զլիաւորն է՝ երգիչը ցուց տեղ երգելու շնորհք։ Միւսներէից աչքի էր ընկնում պ. Դաւթեան, որը սակալն իւր ուժեղ ձայնի հետ չէր միացնում երգելու դրաւչութիւն։ Իսկ պ. Զամբարեանը բոլորովին զուրկ երևաց երաժշտականութիւնից։

Երկրորդ համերգը տրւեց ապրիլի 30-ին, ահն Նպատակով, որ արդիւնքի կէսը չատկացնէի Հայոց Բարեգ. Ընկերութեան, սովեակները օգտին։ Երգեցին 15 երգեր. նորերն էին՝ «Անի քաղաք», «Ալիկիկա», «Չմեռն անցաւ», «Առաւօտեան թռչնոց երգեր», «Կռռնակ», «Աչծեանն», «Օրօրոցի երգ», Լերմոնտովի (ռուսերէն լեզուով), «Բողբ բարձր սալբի չինար», «Հով արէք» և «Անցան սարեր», «Զինչ ու զինչ տամ լողոր դուն», «Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի»։ Երկրորդ համերգում մասնակցում էին նաեւ խումբը և սոյն երգիչները, բացի պ. Զամբարեանից, բայց մասնակցութեամբ տիկ. Հեղ. Առաքելեանի։

Պր. Կարա-Մուրզա՛ի համերգներից Թիֆլիսի հասարակութեան մի մեծ մասը առաջին անգամ առիթ ունեցաւ ծանօթանալու հայկական երգերի հղանակների, բայց մանաւանդ ժողովրդական երգերի հետ։ Ոչ ժողովրդականներից համեմա-

տապէս ամենապաշտօններն էին «Բաւ է եղբարք», «Չարթիր սիրա իմ», «Որ վառեցեր»:

Օգտուում ենք առիթից մի քանի խօսք ասելու պ. Կարա-Մուրզայի իրա մասին: Պէտք է ասել որ Նորա նկատմամբ մեղանում արդէն սկսել է հասարակաց կարծիք կազմել: Դա զարմանալի չի թւիլ, եթէ նկատի առնելու լինեք որ այս տառը տարւալ ընթացքում, այն ժամանակից ի վեր երբ նա կովկասում սկսել է գործել, մինչ ալժամ մօտ 80 համերգ է տւել, ինչպէս ալք երեսաց վերջին համերգի աֆիշալից: Նորա գործելու ահագին եռանդը ամեն տեղ մեղանում հանդիպել է համակրող շրջանների, որոնք ողևորւել են քառաձայն երգեցողութեան գաղափարով և լարդանքով են վերաբերւել դէպի գործը: Տարիներ ընթացքում սակաւն պ. Կարա-Մուրզան լարուցել է իւր դէմ նաև թշնամանքներ, իսկ համակրողների շրջաններում քննադատներ: Հանգամանքը սա է որ պ. Կարա Մուրզայի երգեցիկ խմբերը վարժուում են ոչ ձայնագրութեան, այլ միայն լսողութեան վրայ, խմբերն ևս մշտական չեն, այլ փոփոխական և բաղկացած են սիրողներից: Այդ հանգամանքներում բուն երաժշտական երգեցողութիւնը զարգանալ չի կարող, հետևապէս ալք կերպ գործը իւր կողմը չի կարող զրաւել յոցա, որոնք երգեցողութեան մէջ Նուրբ երաժշտականութիւն են որոնում, իսկ մասնակցողների մէջ՝ երաժշտական կրթութիւն: Եւ ահա զորանից ծագում է մի այլ հարց—թէ արդեօք ինչնէ ալք կերպ խմբական երգեցողութեան օգուտը և ինչ ապագայ ունի նա: Զուտ երաժշտական տեսակէտից դատողների պատասխանը չատնի է թէ ինչ կը լինի—կատարեալ դատապարտութիւն: Եւ սակաւն մենք գտնում ենք ալք եղբայրութիւնը իբր հետեանք խաբուսիկ տրամաբանութեան: Որովհետեւ պ. Կարա-Մուրզայի նկատմամբ խնդիրը ուղիղ չէ դրած: Նորա նկատմամբ հարցը չպէտք է դրած լինի այնպէս թէ որքան բաւարարութիւն է տալիս նա չկուպի երաժշտագէտին, այլ թէ որքան նա ազգին օգուտ է տալիս: Մի երգ երգուում է ոչ միայն չկուա անցած երգչի բերանով, այլ և ամբողջ ազգի: Հապ ազգը սովոր է միաձայն երգին, այլ ևս չենք խօսում նորա կանոնաւորութեան մասին, որ կրիտիկալի գիմանալ չի կարող: Երգելու նոր ձև մտցնել ազգի մէջ, ահա թէ ուր է տանում պ. Կարա-Մուրզայի գործունէութիւնը: Նա պրոպագանդիստ է—և ալք է նորա ուժը. աշխտղ, ուր ժողովուրդը գաղափար անգամ չունի քառաձայն երգեցողութեան մասին, Կարա-Մուրզայի լատուկ տա-

դանդը կարողանում է կատարեալ հում ձաշներից խմբական օգտակար ձաշեր պատրաստել, նոցա ամբողջութիւնը հմուտ դաստորութեամբ նոյն հասարակութեան առջև դնել և նոյն ժողովրդի երգերը իրան լսեցնել աւելի ներդաշնակ ձևով: Որ դրանով ժողովուրդ է կրթում—ինչ կասկած կարող է լինել այդ մասին: Շնորհիւ Կարա Մուրզաների—ոչ թէ հատ. հատ մարդիկ, այլ ամբողջ մի ազգ մի-երկու սերունդների ընթացքում պէտք է երգելու մի նոր, աւելի կատարեալ, ձև իւրացնի և իւր ժողովրդական երգերը բեղնաւորել սովորի բոլորովին այլ ծաւալով քան մինչ այժմ եղած է:

Այդ գործունէութիւնը—առաքելութիւն է, որին շատ սակաւները միայն ընդունակ են, իսկ հազերիս մէջ Կարա Մուրզաները ոչ միայն սակաւ են, այլ նա միակն է և հիմք էլ չկալ լուսաւու թէ նորա տաղանդով մի երկրորդը շուտով կունենանք:

Մենք կարծում ենք ուրեմն որ այ. Կարա Մուրզայի դերը ոչ միայն կատարւած է, այլ և մնում է նրան կատարելու: Նորա երգեցիկ խմբերը օգտակար ծառայութիւն են արել և կը շարունակեն օգտակար լինել: Թէրես հարկ կալ ալփմանից մի փոփոխութիւն մտցնել նորա ընդունած սխառմի մէջ, և այդ փոփոխութիւնը մեր կարծիքով աչն պէտք է լինի, որ նա աշուհէտն ունենալ աշխատակիցներ չաջող երգիչներից զոնէ մի մի հոգի ամեն մի հիմնական ձաշի համար: Այդ պայմանով նորա կոնցերտների բաղդը կախւած չի լինիլ պատահական և կասկածելի արժանիք ներկայացնող սուօ երգիչներից: Պրն. Կարա Մուրզայի գլխաւոր ղեկավարութեամբ՝ նոքա կօգնեն նաև խմբերը վարժեցնելու: Այդպիսով կոնցերտները նաև երաժշտական տեսակէտից վաստակ կունենալին:

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ օրիորդաց դպրոցի մասին «Մուրճ» ի անցեալ համարում հաղորդած տեղեկութիւնների առիթով, նոյն դպրոցի նախկին և ալփման հոգաբարձուներից բժշկապետ պ. Միք. Շահպարտեանցը խնդրում է ուղղիլ ալս սխալը, թէ լիչւած 24.000 ռուբլու ֆոնդի տոկոսներով ոչ թէ 10 որդեգրուհիներ պէտք է պահեն նոյն ուսումնարանում, այլ երեք որդեգիրներ Մոսկւայի խղարեան ձեմարանում. իսկ երբ այդ ֆոնդը կազմւած կը լինի քարւանսարայի արդիւնքներից, հոգաբարձութիւնը պէտք է սկսի կազմել մի երկրորդ ֆոնդ՝ 10 որդեգրուհիներ պահելու համար Մարիամիան-Յովնանեան օրիորդաց դպրոցում:

ՊՐ. Գ. ՂԱՐԱՋԵԱՆԻ լսողածը որ վերջանում է «Մուրճ»-ի ներկայ համարում, հիղինակի համաձայնութեամբ շուշեցի պ. Արշակ Օհանեանց իւր վրայ է վերցրել արտատպելու առանձին բրտշիւրով, զուտ արդիւնքը չատկացնելով սովեալների օգտին Գրքուկը օրերս չոյս կը տեսնի:

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԻՆ. Կրկնուղ զէպքերի պատճառով մենք նորից ստիպւած ենք խնդրելու Թիւրքալի մեր բաժանորդներին, որ դրամ ռուբլիներն մեզ պատւիրած (ապահովագրած, recom-mandée) ծրարների մէջ, ալ ուղարկեն դրամական ծրարների մէջ: Թիւրքալի պատի ծառայողները, իմանալով որ սկսուիւած նամակներով դրամ է ուղարկուած, ճարպիկութեամբ բաց են անում ալ ծրարները, դրամը գողնով լիւրցնում են և նորից ծրարները կպցնում են, թողնելով սակաւն հետքեր: Բաց պատճառ ալ բանի համար պատասխանատու չլինելով դրամը կորչում է ուղարկողի և հասցէատիրոջ համար: Արդու ամիս առաջ ապալիսով կորաւ Կերասունից մեզ ուղարկւած 12 ռուբլի, այս ամիս՝ Կ. Պոլսից ուղարկւած 3 ռուբլին:

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ՏԱՌԵՐԻ ՀԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ. Բոլոր նոքա, ովքեր տպագրական գործով են զբաղւած, լինեն նոքա հեղինակներ, հրատարակիչներ, խմբագիրներ, սրբագրողներ, գրաշարներ և տպարանատէրեր, — աւելացրէք դոցա վրայ նաեւ բոլոր ընթերցողներին, դոքա ամենքը միաձայն կը վկայեն հայերէն հին տիպարի տառերից ոմանց մեծ անլարմարութիւնները: Անլարմարութիւններից ամենակարեւորը ալն է որ շատ տառեր իրար նման են աչքին, որ սրբագրութեան ժամանակ՝ շատ անգամ չի լինում ջոկել ուղիղը սխալից: Հետեանքը լինում է ալն, որ մաքուր տպագրութեամբ շատ տպագրական սխալներ են մնում, անհամեմատ աւելի, քան ալ դեռ տեսնուած է եւրոպական լեզուներով տպած գրքերում: Ահա ալն տառերը, որոնք ներկայացնում են ալն նմանութիւնը իրար հետ. ա և տ, գ և դ, զ և ղ, շ և չ, ս և ո: Բաւական է որ սրբագրական թերթերում ալ տառերը շատ մաքուր տպւած չլինեն, որպէս զի չիոթութիւնը անխուսափելի լինի:

Ալն անլարմարութիւնը հեռացնելու համար՝ պէտք է ձեռք վերառնել հին տիպարի տառերից և նոցանից ամեն մէկին մի որ և է բնորոշ և աչքի ընկնող գիծ չատկացնել և ոչ թէ նոցա զանազանելու դերը թողնել աչքին հազիւ տեսանելի բարակ գծիկներին:

«ՄՈՒՐՃ» Ը ԶՐԻ ԿԱՐԴԱՅՈՂՆԵՐԻՆ: Մեզ ամեն կողմերից ստույգ տեղեկություններ են հասնում թէ «Մուրճ»-ը բազմաթիւ ընթերցողներ ունի հաւաքեալ քաղաքներում: Մինչև իսկ բաժանորդներից շատ շատերը տրտունջներ են լսւում ալն հանգամանքի համար, որ իրանց օրինակները ձեռքից ձեռք անցնելով կորչում են և որ իրանք շատ անգամ ստիպւած են լինում աւելի ուշ կարգաւ քան նոցա ձեռքից խլող ձրի ընթերցողները: Խմբագրութիւնը ի հարկէ, միայն ուրախութիւն կարող է զգալ որ «Մուրճի» ընթերցողները ալըքան շատ են. բայց ինչ անուն տանք ալն բանին, որ ալըքան պատրաստակամութեամբ ուրիշի բարիքից օգտւողները ալնքան զղացմունք չունին որ հասկանան թէ ուրքան վաշել է, երբ նոցա միջից բաժանորդ գրեւէ կարողացողները տարիներ շարունակ կարդում են ամսագրի մեծ դեֆիցիտների մասին և, աչնուամենայնիւ, զլանում են բաժանորդ գրելու և ամսագրի հրատարակութիւնը նիւթապէս ապահովելու: Մենք զիտենք որ ամեն ոք աշխատում է իւր ծանօթների մօտ իւր ալը վնասակար վարմունքը որ և է կերպ արդարացնել,— բայց տգեղ վարմունքը տգեղ էլ կը մնայ...

«ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿ» լուսատիպ պատիւերի համար, վիեննայի «Հանդէս Ամսօրեակ»-ին հասցնելու համար ստացած ենք՝ 1) Մերից պ. Միք. Մխիթարեանից 2 օրինակի համար 2 ռուբլի (հասցէ՝ Мервъ, Закаспійск. обл., Михайлу Павловичу Мхитаряну, 2) Դերբենդից, պ. Կ. Ղազարեանից 2 օրինակի համար 2 ռ. (հասցէ՝ Дербентъ. Учителю городск. училища Константину Назаряну, 3) Ատտարից, պ. Դ. Շահպազեանից 1 օրին. համար 1 ռ. (հասցէ՝ Астара, Бакуб., Леяк. уѣздъ, Г-ну М. А. Агаронову, для передачи Г. Шахбазяну):

«ՄՈՒՐՃԻ» ԱՊԱՌԻԿՆԵՐԸ: Ամսագրիս բաժանորդներից նոցա, որոնց վրայ ապառիկ կալ, խնդրում ենք շտապէն շուտով ալն հասցնել խմբագրութեանս:

† ԿՈՄՍ ՖՈՆ ՇԱԿ: Ապրիլին մեռաւ Հռոմում 79 տարեկան հասակում կոմս Ադոլֆ Ֆրիդրիկ ֆոն Շակ, գերմանացի լատին բանաստեղծ և արեւելագէտը: Նա ուսել էր համալսարաններում իրաւագիտութիւն և ուսումնաւարտելուց լատի ճանապարհորդեց Խաղիալում, Եգիպտոսում, Սիրիալում, Թիւրքիալում, Բոնաուտանում և իսպանիալում: Ապա վերադառնալով հայրենիք՝ հաստատուեց Միւնխէնում և սկսեց հրատարակել իւր գլխաւոր

աշխատութիւնները՝ «Պատմութիւն գրականութեան և գրամատիկական արհեստը արաբների մէջ խաղանիւթում և Սիցիլիայում: Բացի այդ նա զբաղւեց թարգմանութիւններով պարսկերէնից և, ի միջի ալլոց, թարգմանեց Ֆիրդուսի՛ի ոտա հաւորներից շատերը:

† ՆԻՆՕՇԻԻԼԻ: Ներկայ ապրիլի 29-ին Օգուրգէթի գաւառում վախճանւեց երիտասարդ վրացի վրպասաւ խոնարհ ինդորսկա, աւելի լատնի Նինօչիլի անունով: Նորա վէպերի նիւթը վերցրած են գիւղական կեանքից: Համարում էր տաղանդաւոր վրպասաւ: ՆԻԼԱՌ-ՄԻԻԼԻՆԻ, որի անուրդով ծախելու մասին անցեալ ամիս հաղորդել էինք, դատարանի վճռով մնաց Առաքել Մատուրեանին և բաքւեցի Հաջի Զէյնալ Աբդին թաղիի վրայ 205.000 ռուբլով:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԳԵՐ

- 1) ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Խ.—«Յաւելած Նղիշէի Պատմութիւն վարդանանց ըստ Անձնացեաց օրինակի ռուս-հայերէն բառգրքին»: Մոսկւա, տպ. Բ. Բարխուդարեանի, 1893 թ. գինն է ?:
- 2) ՍՄԱՅԼՍ-ից Ստեփանէ, Խորէն ծ. վ.—«Ինչպէս պէտք է ապրել բաղդաւոր լինելու համար» (Արտատպած «Արարատ» ամսագրից)՝ վաղարշապատ, տպար. Ս. Կաթուղիկէ Էջմիածնի, 1894 թ., գինն է ?:
- 3) CARRIÈRE, A. — „Nouvelle sources de Moïse de Khoren. Etudes critiques. Supplément“. Vienne, imprimerie des Mechitharistes. 1894 թ., գինն է 1 ֆլորին կամ 2 կրոն:
(Պրոֆեսոր Ա. Կարրիէր.— «Մովսէս Խորենացու նոր աղբիւրներ»: Յաւելած):
- 4) ՀԱՅՈՅ ՀԱՅՐԻԿ.—«Պապիկ և Թուռիկ»: Գիւղական ժողովրդի թուռնիկներու համար: Տպար. Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, գինն է 60 կոպէկ:
- 5) OHANIAN, Christophe. — „Contribution à l'étude des affections hérédosiphilitiques de l'oeil.—Tèhse inaugurale présentée à la Faculté de Médecine de l'Université de Genève pour obtenir le grade de docteur en médecine.—Genève, impim. J. Stander. 1894 թ.:
- 6) ԱՐԱՔՍ, հինգերորդ (1893 թ.) տարւաչ երկրորդ գիրքը: Ս. Պետերբուրգ, տպ. Լիբերմանի: Գինն է 2 ռ. 50 կոպ. (խսկ 2 զբրքի բաժանորդագինն է 3 ռ.):
- 7) ԷՐԼԷՆՎԷՅՆ. Ս. Թարգմ. օրիորդ Ն. Խ. Յովհաննէս Յուս. Հրատար. Խարկովի հալ ռուսաւորների: Թիֆլիս տպ. Մ. Ռոտինեանցի: 1894. գինն է 5 կոպ.:

- 8) ՀՈՖՄԱՆ, թարգմ. Տիրուհի Կոստանեանցի.—«Գալ» թիֆլ. 1894, տպ. Շարաձէի, գինն է 3 կոպ.
- 9) ՕՍՏՐՈԳՈՐՍԿԻ, թարգմ. Տիրուհի Կոստանեանցի.—«Լիր Արքայ» թիֆլ. 1894, տպ. Շարաձէի, գինն է 5 կոպ.
- 10) ՕՍՏՐՈԳՈՐՍԿԻ—«Տիրուհի աղջիկ» (ժողովրդական ամանդութիւն) և Գէորգ ԿՐԱՅԲ—«Փլատ» թարգմ. Տիրուհի Կոստանեանցի, թիֆլ. տպ. Շարաձէի, 1894, գինն է 5 կոպ.
- 11) Հեղինակ ?, թարգմ. Տիրուհի Կոստանեանցի.—«Մեր պապի գաւազանը» թիֆլ. 1894, տպ. Շարաձէի, գինն է 5 կոպ.
- 12) Հեղինակ ?, թարգմ. Տիրուհի Կոստանեանցի.—«Փռւղթ և հին դռքեր» թիֆլ. տպ. Շարաձէի, 1894, գինն է 5 կոպ.
- 13) АБРААМЯНЦЪ, Н. В.—«Руководство торговой, керосиновой, нефтенной и неаппаратной бухгалтерии по двойной итальянской системѣ». Съ приложениями. Баку, тип. Арора, 1894 г. գինն է 3 ռ. 50 կոպէկ.

1848

Received of the Treasurer of the

Sum of \$100.00

for the purchase of

the same

for the use of

the same

for the use of the same

for the use of the same

for the use of the same

for the use of the same

for the use of the same

for the use of the same

for the use of the same

for the use of the same

for the use of the same

for the use of the same

„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 ԹԻՍՎՆԻ ՀԱՍՍՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար գիմել՝

ԽՐԱԳՐԱՏՈՒՆԸ { Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր դորձակալութիւններին՝

ԲԱՔՈՒ. — Տպարան «Արօր»:

» պ. Նիկ. Աբրահամեան:

ԷՋՄԻԱՅԻՆ. — Արսէն արեղայ Դլաճեան:

ԲԱԹՈՒՄ. — պ. Սարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Ծովհաննէրի):

ՌՈՍՏՈՎ և ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆ. — Եղբ. Պ. և Դ. Ունանեաններ:

ՇՈՒՇԻ. — պ. Գէորգ Դարաջեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — պ. Քրիստ. Բաշինջաղեան, Гостинный дворъ.

ՄԱՐՍԷՅԷ. — պ. Սիմէօն Միրզայեանց: Rue St. Jacques № 86:

ԽՐԱԳՐԱՏՈՒՆԸ զտանուում է Թիֆլիս, Վեղիաժնեան փողոց, տուն № 8